ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆԵԱՆ
(Լ Ա Ս)

ՀԱՐՑԱԿԱՆԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՎԷՊ

I

891.99
Ա-74

Փ Ա Ր Ի Զ

LIBRAIRIE ORIENTALE
H. SAMUELIAN
51, RUE MONSIEUR-LE-PRINCE
PARIS VIe — DAN. 88-65

Ереванский политехнический институт
Гос. Библиотека
ZUER-Арм.ССР
им. А. Мясникяна

99 128

891.99
Ա-74

01 JAN 2009

19 NOV 2010

ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆԵԱՆ
(Լ Ա Ս)

ՀԱՐՑԱԿԱՆԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՎԷՊ

I

Փ Ա Ր Ի Զ

15.02.2013

20450

ՀՍՍՀ-ԱԳԱ ՍՍՌ
Գ. Մեսրոպի անվան

24777.59

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԳԸ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-ԱՊՇ ԳԱՊ
Ա. Մասեանի անվ.

1

« Բարձր լեռներից, խոր խոր ձորերից այն կողմ, կարկաչիւն ու պաղ աղբիւրի կողքին, մեն մենակ ցցուած մի ծառ կար: Երկնքի պէս բարի, դմբուխտի պէս կանաչ, խորհրդաւոր ու մելամաղձոտ նռան մի ծառ:

« Մենակ էր նռան ծառը: Ձմրանը՝ տերեւաթափ, աղբիւրի կողքին իբր միակ պահապան, ամառը տերեւախիտ իր հովանու տակ անցորդներին հանդիստ տուող, իբր չքնաղ հանդրւան: Մենակ էր նռան ծառը՝ մենակ ու անբեր, տխուր ու խորհրդաւոր: Իր դմբուխտ կանաչութիւնը երբեք չէր զարդարւում կարմիր ծաղիկներով եւ իր բարձր ճիւղերը երբեք չէին կռանում պտուղների ծանրութիւնից: Ու ոչ ոք չգիտէր, թէ ինչի՞ համար էր բուսել նա այդտեղ եւ թէ ինչի՞ էր սպասում:

« Գիւղից քաղաք իջնող ճամբորդները նստում էին իր շուքի տակ, աղբիւրի ջուրը ջրով լցցւում եւ նորից իրենց ճամբան շարունակում: Որսի ելած իշխանաղուններները ցատկում էին իրենց ձիերից, ճակատները թրջում, ձիերը ջրում: Ու մէկ-մէկ էլ դէրվիշն էր դալիս յոգնաբեկ ու փոշոտ, ցուպը յենում ծառին, կռանում աղբիւրի վրայ, կուշտ-կուշտ խմում, փառք տալիս Արարչին:

« Ու մարդիկ դոհ էին: Միայն սպիտակահեր երկտակուած ծեր մի կին, որ ամեն գարնան այցելում էր մե-

նաւոր ծառին, կանգնում էր քիչ հեռու, դիտում նրա զմրուխտ կանաչութիւնն ու գլուխը դառնօրէն օրօրում, միայն նա էր դժգոհ:

« Բլուրի հակառակ լանջին, գիւղից շատ հեռու ընկած փայտեայ խրճիթում էր ապրում սպիտակահեր պառաւը, իր ճերմակ այծի հետ միասին, մենակ ու տխուր:

« Ամեն գիշեր խրճիթի փոքրիկ պատուհանին պլպլում էր ձէթէ մի ճրագ ու լուսաւորում մոլորուած ճամբորդների ուղին:

« Մենակ էր ու տխուր սպիտակահեր պառաւը:

« Մէկ-մէկ փոշոտ ճամբորդներ էին գալիս, թարմ կաթ խմում, շունչ առնում ու շարունակում իրենց ճամբան: Մէկ-մէկ էլ ճնճղուկներն էին գալիս, տանիքին փռած չորթանը կոտրում:

« Ու ոչ ոք չգիտէր, թէ ի՞նչի համար էր ընկել նա այդտեղ, ի՞նչի էր սպասում:

« Բայց մի անգամ էլ արեան խոշոր մի կաթիլ դոդաց ծառի զմրուխտ տերեւների մէջ: Պառաւը աչքերը չռեց, արծաթ վարսերը հարթեց: Ճի՞շտ էր, աչքերն իրեն չէի՞ն խաբում.—

« Նռենին ծաղիկ էր բացել, արեան չիթի պէս կաս կարմիր մի հատիկ ծաղիկ:

« Ու պառաւը դարձաւ աղբիւրի ամենօրեայ այցելուն: Այծիկի վզին պարան կապած՝ քշեց, եկաւ բլուրի հակառակ լանջին, նստեց ժամերով, հսկեց օրերով, մինչեւ որ ամառն անցաւ, աշունը եկաւ եւ նուռը հասաւ...

« Նուռ... բայց ի՜նչ նուռ. թափանցիկ ու փայլուն, նման կարմիր ապակուց շինուած գնդակի, որ կարծես վերջալոյսից պոկուելով՝ եկել, թառել էր ծառի, աշնան անխարդախ ոսկեգոյն բոցերի մէջ: Տիեզերքից նետուած կրակէ մի գունդ, որ ցերեկն արեւի ճառագայթների տակ վառւում էր կարմիր լապտերի պէս եւ գիշերը մրցում լուսնի գեղեցկութեան հետ:

« Ու մի օր էլ, երբ գլուխն այծիկի մէջքին դրած ժպտում էր, յանկարծ կլոր ու փայլուն մի գունդ վերից ուղիղ իր գիրկն ընկաւ:

« Պառաւը վերցրեց այն, դդւեց, համբուրեց, եւ արցունքները գլոր-գլոր թափուեցին իր խորշոմած աչքերից, ընկան նռան վրայ, ծծուեցին նրա յղկուած կեղեւից ներս եւ ծառից նոր պոկուած ու տակաւին թարմ վէրքից, գուրս եկաւ հրեղէն մի աղջիկ, ոսկեթել մազերով, սեւ ու խոշոր աչքերով, կարմիր-կարմիր, նռան հատիկ շրթներով, վարդագոյն ականջներով ու բրնձէ ատամներով:

« Աղջիկը թեւը կոտրած թիթեռի պէս թփրտաց, թփրտաց, ապա նորից յետ մտաւ պտուղի մէջ ու ոսկէ գլուխը նռան անցքից դուրս պահած՝ սկսեց խօսել.

« — Հեռո՛ւ, հեռո՛ւ աշխարհներից եմ գալիս ես: Երկար էր իմ ճամբան... մերթ գեփիւռի թեւին, մերթ ճառագայթի ծայրին ու մերթ անձրեւաբեր քամիների թեւերի մէջ... Կապոյտ էր մեր երկիրը, անհուն էր մեր երկիրը: Ու երբ Աստուած ինձ ուղարկեց նռան ծաղկի բաժակի մէջ, դդացի թէ որքա՜ն նեղ է ձեր աշխարհը: Այսպէս է, մեզանից իւրաքանչիւրը իր ճամբան ունի գծած: Ես տունդ կուլեմ, այծդ կը ջրեմ ու կը լինեմ քեզ աղջիկ, դու եղիր ինձ մայրիկ: Բայց միայն նուռը չպէտք է ուտես, որովհետեւ նրա մէջ է իմ կեանքի թաղաւորութիւնը, այնտեղ է որ ես ամեն գիշեր պէտք է փակւեմ, կորւեմ աշխարհից ու ապրեմ իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, իմ կապոյտ երկնքի մէջ:

« Ու հրեղէն աղջիկը ներս քաշեց իր ոսկէ գլուխը:

« Օրերն անցան: Եւ ո՛վ գիտէ, թէ որքան ապրեցին պառաւն ու հրեղէն աղջիկը իրենց միայնակ խրճիթում, բլուրի հակառակ լանջին:

«Ամեն առաւօտ ոսկեթել աղջիկը դուրս կը դար նռան միջից, կը հագնէր սովորական մարդկային հագուստներ, տունը կը մաքրէր, կար կը կարէր, այծը կը ջրէր ու դիշերը յետ կը քաշուէր իր կարմիր ապարանքը:

«Բայց մի օր էլ չար անցորդները դայթակղեցին թաղում դրուած նռան դեղեցկութիւնից ու մինչ պառաւն ու աղջիկը դրսում այծն էին կթում, նրանք սրեցին իրենց դրպանի կեռ դանակները, վար առին նուռն ու անդթօրէն ճեղքեցին այն... Կարմիր յակինթ հատիկները դուրս ժայթքեցին ու ցրուեցին խրճիթի մէջ, քաղցր հեղուկը, մարդկային արեան պէս տաք ու վարդագոյն, ներկեց անցորդների ձեռքերն ու հագուստները... Եւ նրանք վայրագօրէն քրքջացին...

«Բակում կանգնած հրեղէն աղջիկը ցնցուեց, ու կաթով լի փարչը վայր ընկաւ ձեռքից ու փշրուեց:

«Եւ դաշտի միայնութեան մէջ մնաց միայն վայտաշէն խրճիթը, ուր ամեն դիշեր աղօտ լոյսով պլպլում էր ճէթի մի ճրագ մոլորուած անցորդների համար ու հրեղէն աղջիկը՝ սպիտակած մազերով ու խամրած աչքերով, դլուխը այծի մէջքին դրած մենակ ու տխուր:

«Մէկ-մէկ յողնած ճամբորդներն էին դալիս նրա մօտ, թարմ կաթ խմում, չունչ առնում ու շարունակում իրենց ճամբան, մէկ-մէկ էլ ճնճղուկներն էին դալիս տանիքը փռած չորթանը կտցում:

«Ու ոչ ոք չդիտէր, թէ ի՞նչպէս էր ընկել նա այդ-տեղ եւ ինչի՞ էր սպասում»:

Փոքրիկ Անուշի սիրած հէքեաթն էր այդ, նռան ծառի կլոր, յաւերժ կրկնուող հէքեաթը, որ տատը՝ խոտարարոյ, հրամայող, բայց միշտ բարի ու ժպտուն տատն Անուշի, պատմում էր իր թոռներին: Տան մէջ տատը իր առանձնասենեակն ունէր եւ ձմեռայ ցուրտ դիշերներին, երբ ամեն մի սենեակում թիթեղեայ վառարանն էր ճաթ-

ճատում ու վառ բոցեր նետում իր առջեւ, այդ սենեակում քուրսին էր իշխում: «Խաս-կանաչ» վերմակով ծածկուած, վրան նախշուն մի շոր, շորս բոլորը հաստլիկ բարձեր եւ օթոցներ: Խորոված ցորենից պատրաստուած աղանձ, չամիչով ու սխտորով խառը, փոքրիկ, սպիտակ տոպրակի մէջ միշտ դրուած էր լինում քուրսու տակ, տատին մօտիկ անկիւնում: Ինքը նստած փափուկ օթոցին, մէջքը յենած բարձերին, դուլպայ էր հիւսում ու պատմո՛ւմ, պատմո՛ւմ:

Անուշը շատ էր սիրում իր տատին:

Սիրում էր իր քուրսին, իր աղանձի համար, իր խոշոր կազմուածքի, խիստ աչքերի, դլխին խփած ակներով քորոցի ու՝ մանաւանդ իր հէքեաթների համար:

Եւ ի՞նչ հէքեաթներ ասես, որ չդիտէր Անուշի տատը: «Ոսկէ կովի», «Արեւ աղջկայ», «Մոմէ մայրիկի» հէքեաթները: Բայց ամենից սիրունը «Թաւար Ղուշի» հէքեաթն էր: Եւ ամեն անդամ երբ հերթը հասնէր դրան, տատը լրջօրէն կը նայէր թոռնիկներին, ապա Անուշին իր գիրկը կառնէր, կը շոյէր նրա մետաքսանման վարսերը, փոքրիկ դոգնոցի դրպաններն աղանձ կը լցնէր եւ իր անհունօրէն բարի ժպիտը հաւաքելով բիբերի մէջ՝ կը սկսէր.

«Թաւար ղուշ, սիրո՛ւն ղուշ...»

Եւ այսքանը բաւական էր գերելու ունկնդիրների ողջ էութիւնը:

Կիրակի օրերը, երբ բոլորը հիւր էին դնում, Անուշը մնում էր տանը, տատի մօտ: Ձմեռայ երկար իրիկունները, ոտքերը քուրսու տակ, դլուխը յենած տատիկի ուսին, Անուշը սիրում էր լսել նրա պատմութիւններն իր անցեալի մասին, մինչեւ որ քունը տանէր: Անուշը դիտէր արդէն որ իր տատը հօթ քոյր է ունեցել, որ ինքը եղել է ամենից խելօքն ու դեղեցիկը, որ իր աչքերը եղել են

«Ամեն առաւօտ ոսկեթել աղջիկը դուրս կը դար նռան միջից, կը հագնէր սովորական մարդկային հագուստներ, տունը կը մաքրէր, կար կը կարէր, այծը կը ջրէր ու դիշերը յետ կը քաշուէր իր կարմիր ապարանքը:

«Բայց մի օր էլ չար անցորդները դայթակղեցին թաղում դրուած նռան դեղեցկութիւնից ու մինչ պառաւն ու աղջիկը դրսում այծն էին կթում, նրանք սրեցին իրենց դրպանի կեռ դանակները, վար առին նուռն ու անդթօրէն ճեղքեցին այն... Կարմիր յակինթ հատիկները դուրս ժայթքեցին ու ցրուեցին խրճիթի մէջ, քաղցր հեղուկը, մարդկային արեան պէս տաք ու վարդագոյն, ներկեց անցորդների ձեռքերն ու հագուստները... Եւ նրանք վայրագօրէն քրքջացին...

«Բակում կանգնած հրեղէն աղջիկը ցնցուեց, ու կաթով լի փարչը վայր ընկաւ ձեռքից ու փշրուեց:

«Եւ դաշտի միայնութեան մէջ մնաց միայն վայտաշէն խրճիթը, ուր ամեն դիշեր աղօտ լոյսով պլպլում էր ճէթէ մի ճրագ մոլորուած անցորդների համար ու հրեղէն աղջիկը՝ սպիտակած մազերով ու խամրած աչքերով, դլուխը այծի մէջքին դրած մենակ ու տխուր:

«Մէկ-մէկ յողնած ճամբորդներն էին գալիս նրա մօտ, թարմ կաթ խմում, չունչ առնում ու շարունակում իրենց ճամբան, մէկ-մէկ էլ ճնճղուկներն էին գալիս տանիքը փռած չորթանը կոցում:

«Ու ոչ ոք չդիտէր, թէ ի՞նչպէս էր ընկել նա այդտեղ եւ ինչի՞ էր սպասում»:

Փոքրիկ Անուշի սիրած հէքեաթն էր այդ, նռան ծառի կլոր, յաւերժ կրկնուող հէքեաթը, որ տատը՝ խստարարոյ, հրամայող, բայց միշտ բարի ու ժպտուն տատն Անուշի, պատմում էր իր թոռներին: Տան մէջ տատը իր առանձնասենեակն ունէր եւ ամեն մի սենեակում թիթեղեայ վառարանն էր ճարճատում ու վառ բոցեր նետում իր առջեւ, այդ սենեակում քուրսին էր իշխում: «Խաս-կանաչ» վերմակով ծածկուած, վրան նախշուն մի շոր, չորս բոլորը հաստլիկ բարձեր եւ օթոցներ: Խորոված ցորենից պատրաստուած աղանձ, չամիչով ու սխտորով խառը, փոքրիկ, սպիտակ տոպրակի մէջ միշտ դրուած էր լինում քուրսու տակ, տատին մօտիկ անկիւնում: Ինքը նստած փափուկ օթոցին, մէջքը յենած բարձերին, դուլպայ էր հիւսում ու պատմո՛ւմ, պատմո՛ւմ:

Անուշը շատ էր սիրում իր տատին:

Սիրում էր իր քուրսին, իր աղանձի համար, իր խոշոր կազմուածքի, խիստ աչքերի, դլխին խփած ակներով քորոցի ու՝ մանաւանդ իր հէքեաթների համար:

Եւ ի՞նչ հէքեաթներ ասես, որ չդիտէր Անուշի տատը: «Ոսկէ կովի», «Արեւ աղջկայ», «Մոմէ մայրիկի» հէքեաթները: Բայց ամենից սիրունը «Թաւար Ղուշի» հէքեաթն էր: Եւ ամեն անդամ երբ հերթը հասնէր դրան, տատը լրջօրէն կը նայէր թոռնիկներին, ապա Անուշին իր գիրկը կառնէր, կը շոյէր նրա մետաքսանման վարսերը, փոքրիկ դոգնոցի դրպաններն աղանձ կը լցնէր եւ իր անհունօրէն բարի ժպիտը հաւաքելով բիբերի մէջ՝ կը սկսէր.

«Թաւար ղուշ, սիրո՛ւն ղուշ...»

Եւ այսքանը բաւական էր գերելու ունկնդիրների ողջ հուժիւնը:

Կիրակի օրերը, երբ բոլորը հիւր էին գնում, Անուշը մնում էր տանը, տատի մօտ: Ջմեռայ երկար իրիկունները, ոտքերը քուրսու տակ, դլուխը յենած տատիկի ուսին, Անուշը սիրում էր լսել նրա պատմութիւններն իր անցեալի մասին, մինչեւ որ քունը տանէր: Անուշը դիտէր արդէն որ իր տատը հօթ քոյր է ունեցել, որ ինքը եղել է ամենից խելօքն ու դեղեցիկը, որ իր աչքերը եղել են

մէկ–մէկ արեգակներ, երեսը կլոր լուսնի նման, մազերը սեւ ատթ, յօնքերը կամար, բոյն էլ բարձր՝ չինարի նման...

Տատիկը պատմում էր իր հօր հարստութիւնից, սնդուկ–սնդուկ ոսկիներից, ուղտերի քարաւաններից:

— Ամեն կիրակի, մեր տան բակի մէջ, չունեւորներին բուռ–բուռ դրամ էին բաժանում: Ամբողջ Թաւրիզը ճանաչում էր քո պապին: Մէկ ինքն էր, մէկ՝ էս քաղաքը,— պատմում էր տատը՝ Անուշի գլուխը շոյելով:

Պատմութիւններից աւելի Անուշին հրապուրում էր փոքրիկ մի արկղ, որին տատը մաֆալ էր անուանում, եւ որ խնամքով թաղցած էր մեծ մի սնդուկի անկիւնում: Արկղի մէջ պահւում էին տատի թանկարժէք զարդերը:

— Տատի՛կ, տատիկ, բաց արա մաֆարդ,— գրկում էր Անուշը նրա գլուխն ու աղերսանքով նայում աչքերի մէջ:

Տատիկը զիջում էր անմիջապէս: Հանդիսաւորապէս հանում էր վզից կախած փոքրիկ մի բանալի, բացում էր զգուշութեամբ մեծ սնդուկն ու հանելով արկղը՝ դնում էր քուրսու վրայ: Ինչե՞ր ասես չկային այդ արկղի մէջ՝ մատանիներ, ապարանջաններ, օղեր, ոսկէ գօտիներ, բայց ամենից շատ Անուշը սիրում էր փայլուն, կարմիր ակներով զարդարուած մի մանեակ... Ա՜խ, եթէ իրենը լինէր...

— Տուր, տատիկ, տուր մի քիչ խաղամ...

— Հա՛ կը տամ, բալիկ, ի հարկէ, կը տամ. երբ որ մեծանաս, կը տամ, հապա՞: Ասում էր տատն ու երագկոտ վերսկսում էր յիշել իր անցեալը՝ «սնդուկ–սնդուկ» բաժինքը...

— Տասնեւհինգ տարեկան էի որ ամուսնացայ եւ իբրեւ բաժինք տասնեւհինգ մեծ–մեծ սնդուկներ — եաղտաներ, լի աշխարհիս ամեն բարիքով, հետս առած էս տունը բերի: Ի հարկէ հիմա շատ բան միտս չի: Երկու ձեռք մետաքսէ անկողին, երկու արկղ ոսկի զրամ, տասներկու ձեռք կարած զգեստ, տասներկու ձեռք չկարած փեշ, մի հովանոց, որ այն ժամանակ քչերն ունէին, մի ֆիլաջա զառով զարդարուած, մէկ ուրիշը՝ առանց զառի: Երեք զոյգ չուստ, վրան կանեով նախշած, մի հատ մեծ զորդ, մէկ ուրիշը՝ մի քիչ փոքր, մէկ ուրիշը աւելի փոքր:

Ողջ Թաւրիզը սիրում ու յարգում էր Բեհեզ տատին: Իր հանդարտ ու թովիչ բնաւորութեան, իր թաւիշ աչքերի համար էր, որ նա ստացել էր այդ անունը:

— Բեհեզ տատը, Նուրաբենց տան սիւնն է, նրա հիմքը, ասում էին բոլորը ու հանդիպելիս առիթ չէին փախցնում դէթ մի քանի բոպէ կանգ առնել, լսել նրա անուշ ու համոզեցուցիչ ձայնը, նայել նրա մաքուր ու ազնիւ դիմագծերին ու բարձր ուղղաձիգ հասակին:

Հին, շատ հին ու մեծ մի զերդաստանի շառաւիղ էր Բեհեզ տատը, մէկն այն մեծ ու նահապետական ընտանիքների, որ ապրում են Թաւրիզում: Բոլորը պատմում էին նրա պապի առնական գեղեցկութիւնից, նրա խնջոյքներից, հրաւէրներից եւ որսի գնալու սովորութիւններից:

— Այո՛, մի բարակ միտս ա: Մէկ կողմում գուռնա, դհոլ ու քեամանչա, միւս կողմում՝ երկար սփռոցներ, դետնին փռած, սեղեակի մէկ ծայրից մինչեւ միւսը: Պապը, երկար բեխերով, խաս շորերը հագին, սեղանի գլխին կը բազմէր. մէժմէհիններով փլաւ կը բերէին, հետն էլ օղի ու գինի, նռան օշարակ ու վարդաջուր: Է՛հ, էն ժամանակները լաւ ժամանակներ էին. ամեն ինչ առատ էր, մարդկանց սրտերը մաքուր, մտքերը պայծառ էին...

Սակայն, Բեհեզ տատը չէր գժգոհում իր ներկայ կեանքից:

— Նուբարիս արեւը շատ լինի։ Լաւ է, շատ լաւ է. աշխարհը իմը-քոնը չէ. այսօր կանք, վաղը չկանք։

Այնտեղ, ուր լայն փողոցը զարդարուած էր երկշարք բարձր ծառերով եւ որոնց տակից մեղմիկ կարկաչով հոսում էին զոյգ առուակներ, այնտեղ էր գտնուում Նուբարի տպարանը։

Ամառ ժամանակ, երկար այդ ծառուղին տարօրինակ հրապոյր ունէր։ Ցատուկ ջրկիրներ ամեն երեկոյ, մեծ տիկերը կողքերից կախած, ոտաբոբիկ, թեթեւ քայլերով գալիս էին յատկապէս այդ ծառուղին ջրելու։ Արեւի կիզիչ տաքութիւնից չորացած քարերն ու հողը, թարմ ջրից այնպիսի բուրմունք էին տարածում, որ անցորդները՝ քաղցր հաճոյքը երկարացնելու համար, յենւում էին ծառերին, աչքերը գցում առուակի հոսող ջրին ու մնում անշարժ։

Գարնան՝ բացուած ակացիաների բուրմունքից, թաքուն, քուն մտած զգացմունքներ էին արթնանում անցորդների մէջ ու երիտասարդները մելամաղձոտ երգեր սուլելով, երկինք էին նայում՝ արեւ կամ դիշեր ժամանակ աստղեր փնտրելով սուերախիտ ճիւղերի արանքից։ Իսկ աղջիկները, ծովի յատակի խխունջների պէս, անդին մարգարիտներ իրենց հրոտ սրտերի մէջ թաղցրած, խորհրդալի ու քնքոյշ ժպիտով, անցնում էին գլխիկոր ու լուռ, կարծես միշտ ունկնդիր ներսից եկող սքանչելի մի երաժշտութեան։ Նրանց քայլածքի ու պահւածքի մէջ յուզող ու հմայող մի բան կար, որին իրենք իսկ անգիտակից էին։

Արեւելեան ճաշակով զարդարուած խանութների շարքը կեանք ու գարթութիւն էր տալիս ծառուղու բնական գեղեցկութեան։

Քաղցրաւենիների խանութի տէրը, ցուցափեղկերը զարդարում էր գունաւոր թղթերի մէջ փաթաթուած ծաղկամաններով, մրգավաճառը՝ ամեն տեսակ պտուղներ առատօրէն զամբիւղների մէջ լցրած և կանաչ տերեւներով զարդարած, շարում էր խանութից դուրս, դռան առջեւ պատրաստած, փայտեայ յատուկ թաղերի վրայ։ Ներսում, դռների եւ պատերի վրայ խաղողի ողկոյզներ էին կախւում եւ տախտակների վրայ ուղիղ գծով շարւում էին ճմերուկներ, սրանց վրայ՝ կլոր սեխեր, սեխերի վրայ՝ խնձորներ եւ խնձորների գլխին՝ մէկ-մէկ հատ ընկոյզ...

Զարդանկարչական այս ձեւը յատուկ էր գրեթէ բոլոր մրգավաճառներին։ Ցաճախ պտուղների արանքում դրւում էին երկարաւուն կամ կոնաձեւ շշեր, վարդի ջրով լեցուն։

Աջ ու ձախ ընկած խանութների այս շարքում դրտնւում էր եւ Նուբարի տպարանը։

Կանաչ մահուդէ երեսով դրասեղան, վրան կազմարարական մամուլ, ամեն տեսակի ու գոյնի մատիտներ, փոքրիկ երկրագունդ ու խոշոր մի թանաքաման՝ կարմիր ու սեւ թանաքների, ուռած ապակէ ամաններով։ Պատին ամրացուած էր հեռախօսը — հաղորդիւտ առաւերութիւնն ու պատիւը «Փարիզ» տպարանի։

Ամեն անգամ, երբ Նուբարը ծխախոտը շրթունքներին, մօտենում էր հեռախօսին ու պտտեցնում աջ կողմի պտուտակը, դանդահարելու համար՝ կէս ժամի չափ յենւում էր պատին, մատով սեղանի երկրագունդն էր դարձնում, շուռ-մուռ տալիս, Ռուսաստանից Աւստրալիա անցնելով, Աւստրալիայից-Ամերիկա թռչելով, մինչեւ որ վերջապէս ականջի մէջն սկսում էր խստալ։

— Աղա՞... ձայնում էր Նուբարը ժպտալով:

— Բալի աղա, հնչում էր ծոյլ ու զանդաղ պատասխանը:

— Աղա, մարքեա՞զ դըր... կենտրո՞նն է...

— Բալի աղա, մարքեազ դըր:

Տիրում էր երկար դադար: Նուբարը մի քանի քաղցր խօսքեր էր փոխանակում կենտրոնի Ծառայողի հետ, յետոյ խնդրում էր մէկայնել իրեն ցանկացածի հետ:

Անցնում էր մէկ ուրիշ կէս ժամ: Այս անգամ Նուբարը նստում էր աթոռին, հանդարտօրէն ծխում ծխախոտը, շոկում սեղմիչ գործիքի պտուտակը, կարգի դընում սեղանը... ձայնում էր, կանչում Ներսից դրաչարին, կարգադրութիւններ անում, մինչեւ որ վերջապէս...

— Աղա՞...

Տպարանի իսկական դարդը սակայն մեքենան էր, մեծ ու ծանր անիւով տպող մեքենան, որ պատրաստում էր խոշորակազմ, առողջ, բարձր ու թիկնաւէտ Բագրատը: Ծանր անիւը դառնում էր դառնում, տպած թերթերը մէկ-մէկ իջնում վերում էին տախտակին· մեքենավարն անթարթ աչքերը յառած մեքենային՝ նայում էր ուշադրութեամբ, յետոյ հաւաքում թերթերը մի կողմ դնում· դրաչարները շտապում էին, յուզւում... վայ թէ յանկարծ մի սխալ չպատահէր, մէկի ձեռքն անիւի տակ չմնար, թերթերը չցրուէին, լաւն չմոռացուէր...

Նուբարը սիրում էր իր գործը: Թղթի, գրի գործ էր, յառաջադիմական գործ էր· վաղը-միւս օրը Եւրոպայից ապսպրած նոր, աւելի կատարելագործուած մեքենան կը դար, կը հասնէր, գործը կընդարձակուէր...

Աշխարհ տեսած ու ճամբորդած մարդ էր Նուբարը, գիտէր լեզուներ ու չէր դժուարանում իր գործերը կարգադրելու մէջ:

Տպարանի գործերից դուրս էր սակայն, որ Նուբարը ապրում էր իր իսկական, իր սեփական կեանքով, եւ այդ կեանքն իր ընտանիքն էր, իր տունն ու պարտէզը:

Գեղեցիկ էր Նուբարենց պարտէզը: Կարծես, ապակեայ ծաղկամանի վրայ նկարուած տեսարան լինէր — լայն փեղկերով լուսամուտներ, երկյարկանի սպիտակ շէնք: Բակից դէպի պատշգամբն ի վեր մագլցած զանգակածաղիկներ՝ պարզ ու կրքոտ: Տանիքի վրայ շինուած փայտեայ տաղաւար, խաղողի փարթամ որթերով զարդարուած:

Ամեն առաւօտ, շատ կանուխ, Նուբարն իջնում էր պարտէզ: Կանգնում էր մի բոպէ, պտտեցնում աչքերը ծառերի ու ծաղիկների վրայ, և նրա հոգին լցւում էր անհուն բերկրութեամբ: Ցնծուղը ձեռքին, հոգածութեամբ մօտենում էր ամեն մի թուփի, զննում էր, հիանում եւ երանութեամբ լի ժպիտը փայլում էր իր սեւ աչքերում: Կատուն պոչը ցցած, մռռալով, հետեւում էր նրա խրաքանչիւր քայլին, մէկ-մէկ թաթը բարձրացնելով շոյում էր ծաղկամանների ծայլիկ թփերը ու նոյնպէս ժպտում: Մեծ թթենու հովանու տակ, Նուբարի կինը, Մանին, նախաճաշի սեղանն էր պատրաստում ու գունաւոր ծաղիկներ փռում ճերմակ սփռոցի վրայ: Դեղին, փայլուն ինքնաեռը խորհրդաւոր ու երազուն եղանակներ էր յօրինում ու լցնում լռութիւնը: Իսկ վերի լուսամուտից, բացած վարդերի արանքից, կարմիր մի վարդ մազերին՝ յստակ աչքերով, Վարդենու գանգրահեր գլուխն էր երեւում:

Բարձրից, կապոյտ ու ջինջ երկինքն էր խօսում կարծես, այնքան պայծառ, այնքան թափանցիկ, որ իր մէջ երեւում էր անդրադարձումը սպիտակ տան, ծառերի ու ծաղիկների, յասմիկների ու զանգածաղիկների... Գեղեցիկ, առեղծուածային խորհրդանիշներ, որ լռութեան մէջ թանձր, իմաստալի ելեւէջներով, ինքնաեռի գոլորշին

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZՍՍՌ-Արմ.ՍՍՌ
Ա. Մ. Մասիսյան

շու, կատուի մռռոցի, ծաղիկների բուրմունքի եւ Վարդենու յատակ հայեացքի հետ միասին, գնում էին, խառնուում անհունին:

Անհունն այդ բակի մէջ էր:

Անուշը սիրում էր, երբ իր հայրիկը ցնծուղով ծաղիկներն էր ջրում: Ու երբ լսում էր հօր ոտքերի ձայնը պարտէզում, լուսամուտի տակ, անմիջապէս վեր էր ցատկում, շտապ հագնուում ու սլանում էր պարտէզ:

Պարտէզը Անուշի համար սովորական մի ծառաստան չէր, որի ստուերների տակ իրենք թէյ էին խմում, օգտուում ծառերի պտուղներից եւ վայելում բազմազոյն ծաղիկների անուշ բուրմունքը: Պարտէզի ամեն մի անկիւնը իր յատուկ խորհուրդն ու նշանակութիւնն ունէր Անուշի համար: Իր լսած հէքեաթների բոլոր հերոսներն իրենց տեղն ունէին պարտէզի մէջ եւ ապրում, կանչում էին գանազան թագաւորներից: Ահա թփերի միջից երեւացող Վարդենիի դլուխը — «Երկնքի արեւ աղջիկը», ջրամբարի մութ աստիճանները — սատանաների եւ դեւերի թագաւորը, բակի անկիւնի մեծ քարի տակ ապրող երկարամարմին միջատները, որ այնքան նման էին «սադահ մոդէսներին»... Ահա խնձորենին ու նշենին, որոնցից իւրաքանչիւրը մի հէքեաթ ունի իր բնին պարուրած, եւ մանաւանդ, բակի կենտրոնում հպարտ թարձրացած նռան ծառը, իր աչք այրող կարմիր ծաղիկներով:

Գարնանային մի դեղեցիկ առաւօտ էր:

Անուշն արդէն արթնացած վազվզում էր պարտէզի փոքրիկ արահետներով, Նուբարը նոր էր վերջացրել ծաղիկների ջրելը, Տիգրանն իրեն յատկացրած անկիւնում

մարդանք էր անում, Բեհեղ տատը, Մանին եւ Վարդենին նստել էին արդէն թէյի սեղանի շուրջ ու զրուցում էին դրկից հարեւան Վասիլ խանի հետ: Մէկ էլ դռան բախիչը երեք անդամ զարկեցին: Անուշն խսկոյն վազեց՝ դուռը բանալու:— Իր բախելու եղանակից բոլորն էլ զգացին, որ եկողը նամակաբերն էր...

— Ներս կանչիր, Անուշ. ներս հրամմեցէք, պարոն Սէթ,— ձայնեց Նուբարը վարից:

Ու փողոցի դռան սանդուխներից, հսկայ մի կապոց թեւի տակ, ծանրաքայլ վար իջաւ Սէթը:

Երկար տարիներ էր արդէն, որ Սէթը Թաւրիզի նամակաբերն էր, հմուտ, փորձուած նամակաբերը, որ ճանաչում էր բոլոր ընտանիքներին, ծանօթ էր բոլորի սովորութիւնների հետ եւ գիտէր թէ ո՞ւմ, ե՞րբ եւ ո՞ր տեղ կարելի էր հանդիպել նամակը յանձնելու համար: Զնայած իր առաջացած տարիքին, սպիտակած մազերին, նամակաբեր Սէթը դեռ շատ աշխոյժ էր եւ առանց դժուարութեան կրում էր թեւի տակ իր պաշտօնի խորհրդանիշը՝ ծանր պայուսակը՝ լի նամակներով ու թերթերով: Մի պակասութիւն ունէր միայն Սէթը, բայց այն էլ այնքան կարեւոր չէր իր պաշտօնը լաւ կատարելու տեսակէտից... Սէթը կարդալ գրել չգիտէր: Իրեն յանձնուած բոլոր նամակների վրայ գանազան նշաններ էին դետեղուած՝ նամակատիրոջ հեշտութեամբ գտնելու համար: Նամակատնից նամակներն իրեն յանձնելիս, կարդում էին անունները ու Սէթը արագօրէն, իրեն միայն յայտնի նշաններ էր գծում ծրարների վրայ ու պայուսակը լեցուն փողոցից փողոց անցնելով, ամենայն կանոնաւորութեամբ բաժանում էր նամակները: Գոլմա Գրիգորենց նամակների վրայ կաթսայ էր նկարում, քահանայի նամակները խաչով զարդարում: Նուբարենց նամակների վրայ մի լապտեր էր գծում, ի նշան փոքրիկ այն լոյսի, որ Նու-

բարենց դռան գլխի լաստերը աղօտ կերպով արձակում էր գիշերուայ մթութեան մէջ։

— Ա՛յ բարեւ, պարոն Սէթ... գալդ բարի... դու մեր բոլորի սիրելի հիւրն ես։

Սէթը գիտէր, որ Նուբարն անհամբերութեամբ էր սպասում իր որդու՝ Զաւէնի նամակներին, որ տարիներից ի վեր Ռուսաստան էր մեկնել, կրթութիւնը շարունակելու համար։

— Աստուած գլուխենայ, պարոն Նուբար, բոլորի նամակները թողած, քեզ մօտ եմ վազել... բարեւ ձեզ... Աստծոյ բարին։ Սէթը ցած դրեց պայուսակն ու նամակը մեկնեց Նուբարին։

Բոլորն ուրախ եւ անհամբեր դիտում էին թէ ինչպէս Նուբարը պատռում էր ծրարը, բացում քառակուսի ծալած թուղթը։ Մանին, դորձը թողած, մօտեցել էր Նուբարին ու նրանք երկուսով կարդում էին նամակը, երջանիկ ծնողների հպարտ սիրով լցած, աչքերը արագութեամբ տողից տող սահեցնելով։

— Ի՞նչ ա գրել, Նուբար,— հարցրեց Վասիլ Խանը, երբ Նուբարն ընթերցումը վերջացնելուց յետոյ նամակը յանձնեց Տիգրանին։

— Մէկ տարի, մէկ տարի միայն, Խան, եւ ես համալսարանաւարտ տղայ կունենամ։ Յետոյ երկրորդը կունենամ... Մանի կօնեակի շիշը բեր... հիւրերիս մի լաւ հիւրասիրեմ... Ռուսական թերթերին յօդուածներ է տալիս... գիտական յօդուածներ... Յետոյ էլ Տիգրանս կը գնայ...նորից մի քանի տարի նեղութիւն, բայց յե՞տոյ.. յետոյ... Վասիլ Խան, Աստուած պահի քո գաւակներին, բոլորն էլ պատուով արուռով մարդիկ են, բայց թոռդ, Վասիլ Խան, Ներսէսը, նա պիտի դառնայ ձեր տան սիւնը, նա պիտի լոյս տայ ձեր տան խաւարին, հասկանո՞ւմ

ես, Վասիլ Խան։ Մանի ջան, ինքնաեռը նորոգել տուր... Վարդենի, կօնեակ լցրու... լոյս պիտի բերէ...

— Ի՞նչ է գրում մեր Ներսէսից, Նուբար։

— Գրում է, որ Ներսէսին գրամ ուղարկէք... տղան քննութիւնների մէջ է, շատ դիրք է հարկաւոր, շատ գրամ է հարկաւոր։ Վարդենի, կօնեակ լցրու Սէթին։

Սէթը, կարծես չէր մասնակցում ընդհանուր խօսակցութեան, կոթնած մի ծառի, նա ուշադրութեամբ դիտում էր Տիգրանին, որ խորասուզուել էր եղբօր նամակի ընթերցման մէջ։ Տիգրանը կարծես զգալով իր վրայ Սէթի հայեացքը, յանկարծ ընդհատեց ընթերցումը եւ մի վայրկեան նրանց աչքերը հանդիպեցին իրար։

— Էհ, Վասիլ Խան, համեցէք, պարոն Սէթ, մօտեցիր եղբայր։ Դիտես ինչ, Վասիլ Խան, ուսումը կեանքի հիմքն է։ Ցիշում ես չէ՞, իմ բարեկամ Նազարին... նա, որ եղաւ առաջին ուսանողը, որ հակառակ իր նեղ պայմաններին, ճեղքեց ամեն դժուարութիւն, գնաց Եւրոպա, կրթուեց, դարդացաւ ու վերջն էլ գրեց իր այն գեղեցիկ գիրքը՝ «Դաստիարակութիւն Հայոց»։

— Ցիշում եմ, ի հարկէ որ յիշում եմ։

— Այդ գրքի մէջ, շարունակեց Նուբարը, իմ բարեկամը խօսում է յառաջադիմութեան նշանակութեան մասին, քաղաքակրթութեան ու դաստիարակութեան արժէքի մասին, աղգի եւ մարդկութեան համար։ «Առաջին ծիծեռնակը, ասում է նա, իր բոյնը չինում էր այնպէս, ինչպէս չինում է այսօր։ Մեր օրերի ծիծեռնակների բոյները, Նոյի տապանի ձեղունի մէջ չինուած բոյներից աւելի լաւ չեն... Մինչդեռ մարդը օր օրի վրայ լաւն է չինում, որովհետեւ մարդու համար յառաջադիմութեան ճամբաներն անսահման են»։

Նա երկար մի հայեացք ձգեց Վասիլ Խանի վրայ։

— Անհատը, Վասիլ Խա՛ն, որչափ իր կարողութիւնները մշակէ, միտքը զարգացնէ, իր գործերի մէջ հմտութիւն եւ յաջողութիւն կունենայ: Անհատի յառաջադիմութիւնը, ասում է Նաղարը, որչափ մեծ լինի, այնչափ այդ անհատի բնածին զօրութիւնը կաւելանայ եւ գոյութիւնն աւելի կապահովէ: Մասնաւորից ընդհանուրի եւ անհատից ազգի անցնելով, կարելի է ուրեմն ասել, որ մի ազգի զօրութիւնը կը կրկնապատկուի իր արած յառաջադիմութեան համեմատ: Եւ այսպիսով է, որ ազգի ազատութիւնն ու գոյութիւնը կապահովուէ, Վասիլ Խան: Երկար դարեր պէտք եղան, մինչեւ որ մարդս, կամաց-կամաց հասաւ տառերի գիւտին, յետոյ տպագրութեան, տպագրական մեքենաներին: Եւ այսօր քաղաքակրթած երկիրներ կան, Վասիլ Խան, ուր ծաղկում, բազմանում են գիտութիւնները, կատարելագործւում են մեքենաները:

Նուբարի առանձնասենեակում, սեղանի գլխին կախուած կար աշխարհագրական մեծ մի քարտէս:

Ամեն օր, գործից վերադառնալիս, բոլորին սիրալիր ու բարի ողջունելուց յետոյ, Նուբարը սովորութիւն ունէր երկար կանգ առնել այդ քարտէսի առջեւ: Այնտեղ, թղթի վրայ տարածուած լայնածաւալ Ռուսաստանը, կապտաւուն Ֆրանսիան, Գերմանիան շոյում էին նրա մտքերը:

Լոյս եւ քաղաքակրթութիւն...

Իսկ լոյսն ու քաղաքակրթութիւնն այնտեղ էին, կապոյտ եւ վարդագոյն տարածութիւնների վրայ... Քաղաքակրթութեան ծարաւ այդ հոգին դադար չունէր:

— Արեւելքը խեղդում է մարդու միտքը, Վասիլ Խան, եւ նրան ստրկութեան է վարժեցնում: Պէտք է ամեն կերպ աշխատել չփւել օտար եւ զարգացած ազգերի

հետ, նրանց լեզուն, գրականութիւնը սովորել, գիտութիւնը սովորել:

— Շատ կը լինի, Նուբար, մի՛ լցրու:

— Խմի՛ր, Վասիլ Խան, էս մէկին էլ խմիր Զաւէնիս կենացը:

— Այո՛, Նուբար ջան, էդ ուսում ասածդ մեծ զօրութիւն է որ կայ: Տես՝ ես ուսեալ մարդ չեմ, բայց ներսումս մի ձայն կայ, որ ինձ միշտ նոյն բանն է ասում...

— Ես երջանիկ եմ, Խան, շատ երջանիկ, որ զաւակներիս աչքերը բացւում են կեանքի առաջ:

— Աչքերը մի՛ ասա, մտքերն ասա՛: Մենք խաւար մնացինք, խաւար էլ կերթանք: Կեանքի դաղտնիքը մեզ համար մութ մնաց, աշխարհը հանելուկ...

— Աշխարհը հանելուկ... մինչ այնտեղ լոյս կայ, գիտութիւն կայ... Մարդիկ երկինքն են խուզարկում, աստղերը գիտում, տեսակ-տեսակ հնարագիտութիւններ են անում, միշտ նոր ու յառաջադէմ դաղափարներ յղանում...

Ու երկու բարեկամները կեանքի, իրենց համար անհասկանալի մնացած երեւոյթների ու դաղտնիքների առաջ անգօր, լցնում են կօնեակի նոր ու նոր թաժակներ:

— Ես մէկին էլ լոյսի ու յոյսի կենացը, ու դաւաթները դարկում են իրարու:

Նուբարը չիմացաւ թէ ինչպէս մեկնեց Սէթը, ինչպէս անից դուրս եկաւ Տիդրանը, ինչպէս Բեհեղ տատը բարձրացաւ իր սենեակը ու Մանին դնաց խոհանոց ծառաներին պատուէրներ տալու: Պարտիզում մնացել էր փոքրիկ Անուշը միայն, որ ծառի տակ նստած, յամառօրէն աշխատում էր կատուի պոչին մի ժապաւէն կապել:

Արեւը բարձրացել էր արդէն: Նուբարը գործի պիտի գնար ու երկու բարեկամները թեւ թեւի տուած՝ դուրս եկան բակից:

2

— Հայրիկ, աստղերն ի՞նչ են։

— Հայրիկ, լուսինը ո՞վ է։

Պարզըկայ գիշերին, տանիքի վրայ խփած ճերմակաթեւ վրանը ողողած է լուսնի արծաթ լոյսով, ամենքից հեռու, ամենքից կտրուած, բաց երկնքի տակ։ Վրանի առաջ, թեք ընկած փափուկ բարձերին, Նուբարն Անուշի գլուխն է շոյում։

Այսպէս է փոքրիկ Անուշը։ Հարցերի տարափից ոչ ոք հանգիստ չունի տան մէջ։ Տիեզերքը նրա համար լի է խորհուրդներով։

— Աստղերն Աստծոյ աչքերն են, բալիկ։

— Իսկ Աստո՞ւած։

— Աստուած ամեն տեղ է։ Մեր վրանի սպիտակութեան, լուսնի լոյսի, քամու սուլոցի ու նաեւ լսո՞ւմ ես, բարդիների խշշոցի մէջ...

Անուշը լսում է, բայց լաւ չի հասկանում... Նրա սիրտն ինչ որ տխրութիւն է զգում, միտքը դադարում է աշխատելուց եւ հալւում, խառնւում է լուսնի արծաթ լոյսին, իսկ փոքրիկ մարմինն ուղղակի մի կէտի է վերածւում։ Կա՞յ, թէ չկա՞յ...ու չի կարողանում ըմբռնել ոչինչ։ Բակի հսկայ թթենին, իր լայնատարած ճղները երկարացնելով, սպառնում է մտցնել նրա բիբերի մէջ եւ այնտեղ ներսում՝ հոգու մէջ, ինչ որ մի բան է կատարւում...

— Հայրի՛կ, հայրի՛կ, վախենում եմ,— զոռում է Անուշն ու փաթաթւում հօր պարանոցին։ Նուբարը նրան իր գիրկն է առնում, քաղցր խօսքեր շշնջում ու յորդորում է քնել։ Քնքոյշ ու սիրող հայր էր Նուբարը։ Այսպէս իր գրկի մէջ էր մեծացրել ու հանդստացրել նա բոլոր իր զաւակներին։ Ամեն գիշեր անձամբ ստուգել էր, որ չլինի թէ բացւեն ու մրսեն, ամեն առաւօտ, դեռ անկողնու մէջ, ջերմագին համբուրել էր նրանց ու բարի առաւօտ մաղթել։ Դպրոցական շրջանի առաջին տարիներին համբերութեամբ հետեւել էր, որ դասերը լաւ պատրաստեն. ու պատւիրել էր յարգել եւ սիրել իրենց ուսուցիչներին։ Երեխաները, սիրուց բացի, յարգանքի զգացմունք ունէին հանդէպ իրենց հօր՝ նրա արդար, ճշմարտախօս բնաւորութեան, նրա յաւէտ դէպի լաւը, դէպի բարձրը ձգտող հոգու ու յառաջադէմ մտքի համար։

Նուբարի կինը, Մանին, սեւ աչքերի մէջ անդրադարձած աստղերի խորհուրդով, պտղատու ծառերի իմաստալի խշշոցով, արեւի ամենէն կիզիչ ճառագայթներով, իմաստութեամբ ու երազներով լի, արեւելքի անխարդախ մի էակ էր։ Գարունը բացւելուն պէս, նրա ննջարանը լցւում էր ծաղիկներով, վարդերի փնջերով ու ծաղկամաններով։ Աշնանը, խաղողի հսկայ կողովները դատարկւում էին բակի, սենեակների սեղանների վրայ։ Տան մէջ այս ու այն կողմ, փոքրիկ զամբիւղների մէջ, զարդարւած աշնան ծաղիկներով, ամեն տեսակ պտուղներ էին դրւում։

— Ինչ կայ, իրը կարդարանք, աւելի գեղեցիկ քան պտուղներն ու ծաղիկները, ասում էր Նուբարը յաճախ։

Նուբարենց տունը փոքրիկ տաճար լինէր կարծես.— Բեհեղ տատը, հեռու ժամանակներից մնացած, տան կըրակի պահապան, Մանին՝ սիրոյ ու բեղմնաւորութեան

գեղեցիկ աստուածուհի։ Նուբարը՝ օջախի երջանկութեան նուիրուած մի քուրմ։

Անուշն ապրում էր իրենց ծաղիկների բուրմունքով շրջապատուած, իրենց ծառերի սաւերների հովանու տակ ու դիշերները, հօր դրկի մէջ պառկած, նայում էր երկնքին ու մտածում... Նրան թւում էր, թէ կեանքի մէջ, ա՛յն ինչ որ ինքը տեսնում, լսում ու շօշափում է, այդ բոլորը չէ ,այլ կան բաներ, որ ինքը զգում է՝ ինչ որ դերբնական մի զգացմունքով եւ որոնք սակայն աչքի համար տեսանելի չեն։ Եւ իրօք, հայրենուկը չէր, որ մի օր պատմում էր իրեն «մեղնից լաւերի» մասին... Կան ուրեմն մարդիկ — « մեղնից լաւեր », որոնք չեն երեւում մեզ։ Ապրում են, շրջում մեզ հետ եւ սակայն մենք նրանց չենք կարողանում տեսնել։

« Ոսկեգանգուր մի տղայ, մի օր եկաւ, մեր դուռը թակեց,— պատմում էր Հարսնուկը,— ու մայրս դեռ տեղից չելած, դուռը հրաշքով, ինքնիրեն բացուեց։— Եկել եմ ձեզ ծառայ, ասաց ոսկեգանգուր տղան ու ներս մտաւ սենեակ։ Դու մի ասի թէ, մեղնից լաւերից է։ Մօրաքոյրս խակոյն գլխին ասեղ մտցրեց, որ տղան չվախչի։ Տղայ, ի՞նչ տղայ, գեղեցիկ, հնազանդ, հիւնար-միւնարով։ »

— Ցեսայ ի՞նչ եղաւ,—հարցրեց Անուշն անհամբեր։

— Ցեսայ, մի օր ասեղը գլխից դուրս եկաւ...

— Ո՞ւ...

— Ու տղան չքացաւ։ Հապա՛, շատ բաներ կան, որ մենք չենք տեսնում ու չենք լսում...

Անուշը հաւատում էր դրան։ Նա զգում էր, որ օդը լցուած է անտեսանելի էակներով, որ ամեն առարկայի մէջ աներեւոյթ մի ոգի է ապրում, որ ծառերի սլսլոցը, թէեւ անհասկանալի լեզուով, բայց զանազան բաներ է պատմում, որ վարդերի թերթերի միջից դիշերները երաժշտութեան ձայներ են գալիս ու որ աստղերի շողերի հետ ինչ որ բան է թափւում երկրի վրայ։

Ահա լուսամուտները շւարած հնազանդութեամբ դիտում են աշխարհը... Ու թւում է Անուշին, որ նրանք դիտեն ամեն բան, այո՛ դիտեն, բայց վեղկը վեղկի վրայ փակած, իրենց ապակէ աչքերն են պսպղացնում միայն։

— Մեղնից լաւերը, որտե՞ղ են քնում, հայրի՛կ։

— Մեղնից լաւը չկայ, աղջիկս, մենք ենք լաւը։

«Հայրս երեւի չի իմանում»,—մտածում էր Անուշն ու աչքերը փակ լսում հեռուից եկող ծանօթ խշշոցը գոյդ բարդիների։ Նա մի քիչ հանդստանում է։ Կոպերը կամաց-կամաց ծանրանում են, գլուխը ընկնում է կուրծքին ու մտքի մէջ պահելով լուսինը, քամին, բարդիների խշշոցը եւ հայրիկի գոյդ խոհուն աչքերը, քնում է վերջապէս՝ խորը, բայց հանելուկներով լեցուն ուղեղով։

Անուշն առաջին տարին էր, որ դպրոց էր գնում եւ այդ տարեայ առաջին օրն անջնջելի էր մնացել նրա յիշողութեան մէջ։

Առաւօտը շատ կանուխ էր։ Հայրիկը կանչեց Անուշին իր առանձնասենեակը, ձեռքը դրաւ գլխին, վերցրեց սեղանի վրայից կարմիր կազմով մի դիրք ու տուաւ նրան։

— Այսուհետեւ դու դպրոցական ես, ու անսպասելի կերպով աւելացրեց,— համբուրի՛ր դիրքդ։

Հօր խոհուն ու լուրջ դէմքը, պատին կախած աշխարհագրական քարտէսը, գրասեղանի վրայ դրուած դրքերը, տարօրինակ ակնածանք ներշնչեցին Անուշին, որ գոյդ ձեռքերը մեկնելով առաւ իր անդրանիկ դասագիրքը ու երկիւղածութեամբ համբուրեց կարմիր կազմի վրայ փորուած ոսկէ տառերով — «Մայրենի լեզու»։

Երբ առաջին անգամ հայրիկը փոքրիկ աղջկայ ձեռքից բռնած դպրոց տարաւ, կարմիր դասագիրքը թեւի տակ սեղմած, ինքն էլ կարմիր դրքի կազմի պէս, նա

վախով նայեց ուսուցիչներին, հարցական ու երկչոտ հայեացքով: Բայց բարի ու ժպտուն դէմքը դաստիարակի մօտեցաւ նրան, թեւերը լայն բացուեցին ու գիրկն առնելով տարաւ դասարան: Այստեղ ցոյց տուաւ նրան սեւ քարեւտախտակը, որի վրայ կաւիճով նկարեց մի թռչուն, ասաց դրեց նրա անունը եւ նստեցնելով իր ծնկերին, նայեց ճիշտ աչքերի մէջ ու հարցրեց.

— Դու գիտե՞ս թէ քո աչքերը ինչո՛ւ են սեւ:

— Ո՛չ:

— Որովհետեւ դու հայ ես: Այստեղ դու պիտի սովորես քո մայրենի լեզուն: Յետոյ կը մեծանաս ու խելօք մարդ կը դառնաս:

— Ու աչքերս միշտ այսպէս սեւ կը մնան, այնպէս չէ՞:

Դաստիարակը ծիծաղեց, յետոյ գլուխը շոյելով տեղաւորեց նրան իր նստարանի վրայ:

Անուշը գպրոցական էր այլեւս... ու այնպէս գոհ էր, այնպէս երջանիկ: Շականակագոյն, ծալք-ծալք կարած համազգեստ ունէր նա, սեւ շալէ գոգնոցով, ճերմակ, փոքրիկ օձիք եւ հագուստի գոյնով ժապաւէն մազերի ծայրին:

Անուշի գպրոցական ընկերը փոքրիկ մի որբուկ էր, հագիւ ինը տարեկան, նիհար, գունատ դէմքով, ցաք ու ցրիւ եկած կարճ կտրած մազերով: Խորհրդաւոր ու վայրենի արտայայտութեամբ մի տղայ, շաղախած ու պըղտոր դիմագծերով, որին Նուբարը եկեղեցու բակից առել ու տուն էր բերել:

Փոքրիկ Ռուբիկը շատ տարօրինակ տղայ էր... Առաջին օրերին, Մանին հագիւ էր կարողանում նրան տանը պահել: Բանտարկուած այծիկի պէս, ադամ սարերի սովոր, տան չորս պատերը նեղ էին գալիս կարծես իր հոգուն:

— Բաց թողէ՛ք ինձ, բաց թողէ՛ք ինձ,—գոռում էր անդադար, փակ դռան առաջ կանգնած, ոտքերով գետինը հարուածելով: Յետոյ սկսեց խուսափել, հեռանալ տնեցիների աչքերից ու թաղնուել զանազան մութ անկիւններում: Մէկ-մէկ մագլցում էր ամենաբարձր ծառերի կատարները ու այնտեղ ճղների մէջ թաղուած մնում մինչեւ երեկոյ: Մէկ-մէկ բակում, չան բնում էր կծկուում ու աչքերը լայն բացած՝ դիտում բակը:

Երկար շարչարանքներից յետոյ սակայն, վերջապէս, յաջողուեց ընտելացնել այդ փոքրիկ վայրենուն եւ նա շուտով Անուշի հետ միասին, թեւ-թեւի սկսեց յաճախել դպրոց:

Ռուբիկը շատ շուտով սկսեց կարդալ, բայց դրական լեզուն նրա համար հասկանալի չէր, և բառերը պէտք էր նրան նախ իր բարբառով բացատրէին: Եւ երբ տանը, դաս սովորելիս, Անուշն ու նա կողք-կողքի նստած բարձրաձայն կարդում էին «ատամ, մատ, մատիտ»ը, Անուշը աշխատում էր բացատրել նրան ա՛յն, ինչ որ ինքը հասկացել էր արդէն:

կը-ա-տը ու
տը-ու-նը
ո-չը-խը-ա-րը

կարդում էին նրանք ու մէկ-մէկ նկարներին նայում: Մի օր էլ, ճիշտ նոյն էջը բազմաթիւ անգամներ կարդալուց յետոյ, Ռուբիկը կարծես նոր արթնցածի պէս, սկսեց լրջօրէն երկար ու բարակ նկարներին նայել ու բառերի վանկերը դանդաղօրէն իրար կցել՝ թափանցելու համար խօսքի նշանակութեան մէջ:

Ոչ-խար, ոչ-խար... կրկնեց ու... լոյսը մէկէն կաթեց՝ կարծես, միտքը պարզուեց:

— Վայ, տե՛ս է՛, մեր ղոչն ա, մեր ղոչն ա, գո-

ռաց յանկարծ ու դատապիրքը չրթունքներին սեղմելով, սկսեց աղահուլթեամբ համբուրել ոչխարի նկարը... Համբուրեց, համբուրեց, նայեց, նորից վանկերն իրար կցելով կարդաց ու նորից համբուրեց: Ցետոյ ամեն ինչ մէկ կողմ նետելով, երեսի վրայ ընկաւ գետնին ու սկսեց բարձրաձայն լալ:

Անուշը քարացած դիտում էր այս տեսարանը: Նոր ու անծանօթ, անբացատրելի մի զգացմունք արթնացաւ նրա մէջ... Նա նայեց գետնին կծկուած փոքրիկ տղային, մէկ կողմ նետած գրքին, ու ահա Անուշն առաջին անգամ կեանքի մէջ, զգաց, որ սրտի խորքից մի բան դանդաղ բարձրացաւ ու սկսեց խեղդել կոկորդը: Անուշը վիշտ զգաց, անծանօթ, բայց խոր, շատ խոր վիշտ...

Ու յանկարծ ժայթքեց... Իր գիրքն էլ նետելով նրա գրքի վրայ, Անուշը փուեց գետին ու սկսեց էլ աւելի՛ բարձր լալ:

Այդ օրւանից սկսած, Անուշն այլեւս Ռուբիկին մենակ չէր թողնում:

Մի առաւօտ Անուշն աչքերը բանալով, կողքի փոքրիկ անկողինը դատարկ գտաւ: Ռուբիկը չկար: Անմիջապէս ցատկեց տեղից, արագ մօտեցաւ պատուհանին ու տեսաւ, որ պարտիզի մի անկիւնում Ռուբիկը, Ջրով լի փոքրիկ դոյլը ձեռքին, ինչ որ բան է ջրում, ապա կռանում, ձեռքով զգուշօրէն հողն է հարթում ու փայտիկներ տնկում: Անուշը մօտ վազեց:

— Այդ ի՞նչ է,— հարցրեց համարեա չշնչալով:

— Սո՛ւս... զետնախնձոր եմ ցանել: Կը բուսնի, կը տեսնես: Հայրիկս այսպէս էր անում... այնտեղ... Ու նրա չաղախուած դէմքի վրայ ժպտանման մի բան երեւաց:

Այնուհետեւ ամեն օր, մի քանի անգամ Ռուբիկը գնում էր գալիս, պտտւում էր ցանած անկիւնի շուրջը, ձեռքով հողն էր հարթում, փայտիկները նորոգում ու յաճախ թեք ընկնելով բակի աղիւսների վրայ, մնում էր անշարժ՝ երագուն աչքերը հողին յառած:

Մի օր Ռուբիկը հարցրեց Անուշին.

— Դու չգի՞տես ինչ է կոտորածը:

— Ո՛չ:

— Ա՛յ, այնտեղ, լեռներից այն կողմ... Երբ մեծանաս, ինձ պէս դառնաս կիմանաս: Ին լեռների ետեւում են կոտորել: Ես դանակս սրել սլիտի տամ, հենց որ մէկը դռնից ներս մտնէ, փորը կը մտցնեմ ու կը սպանեմ, որ քեզ ձեռք չտան. սուր կը կապեմ, հրացանն ուսս կառնեմ: Այս փոքրիկ դանակս էլ քեզ կը տամ:

Անուշը սկզբում վախենում էր Ռուբիկի այդ տարօրինակ ծրագիրներից: Ճիշտ է, Ռուբիկն մեծ էր իրենից, բայց եւ այնպէս Անուշը շատ էլ վստահութիւն չունէր նրա վրայ: Ռուբիկը մի փայտ ինքն առած, մէկն էլ Անուշի ուսին դնելով, ոտքերը գետնին խփելով «մէկ-երկու, մէկ-երկու» գոռալով, ժամերով քայլեցնում էր նրան ու մէկ-մէկ էլ, անսպասելիօրէն յետ դառնալով, ամբողջ ուժով «բուհ» էր անում եւ փայտը հրացանի պէս վրան բարձրանում... Անուշը վախից կուչ էր գալիս եւ «հրացանը» վար նետելով ուզում էր փախչել:

— Չէ, մի՛ փախիր, չպէտք է փախչել: Ես քեզ քաջութիւն եմ սովորեցնում:

Այսպէս, զարմանալի տղայ էր Ռուբիկը:

Բայց ինքը՝ Անուշը, է՛լ աւելի զարմանալի յատկութիւններ ունէր:

Ցանկարծ, ինքն էլ չգիտէր թէ ի՞նչու եւ թէ ի՞նչպէս, տանից փախչելու եւ անյայտութեան մէջ կորսուելու փափաքը համակում էր նրան: Ճաշից յետոյ տան մէջ իշխող հանդստից ու խաղաղութիւնից օգտուելով, նա կամացուկ դուրս էր գալիս բակ եւ ծառերի ու խո-

ղողի որթերի մէջ պատսպարելով, զգուշօրէն հասնում էր դէպի փողոցի դուռը տանող աղիւսէ աստիճաններին... Դժուարութեամբ բանալով երկաթեայ ծանր փականքը, անմիջապէս նետւում էր դուրս, թեքւում անկիւնի նրբուղին ու ձեռքերն ազատօրէն ճօճելով, սկսում էր քայլել անծանօթ փողոցներով, մեն մենակ:

Այսպէս պատահեց մի օր, երբ քշած անծանօթ ներքին մղումից ու ոգեւորւած, Անուշը գնաց, գնաց հեռացաւ իրենց տնից եւ ո՞վ գիտէ պիտի կորչէր, եթէ յանկարծ դէմը չելնէր խոշոր կազմւածքով մէկը...

— Է՛, փոքրիկ, ի՞նչ գործ ունես հեռու այս թաղերում: Ո՞ւր ես գնում:

— Գնում եմ կորչեմ:

Մարդը խոժոռ-խոժոռ նայեց նրան:

Գրիգորիյ Եւանդուլիչն էր, ռուսերէն լեզուի իրենց տնային ուսուցիչը... Նա կռացաւ, գրկեց Անուշին: Անուշը դայրացաւ: Փոքրիկ ոտքերով անդադար նրա հագուստները փոշոտելով, եւ բռունցքներով գլխին հարւածներ իջեցնելով, փորձեց ազատւել նրա գրկից, մինչ Գրիգորիյ Եւանդուլիչը շտապ քայլերով եւ առանց ուշադրութիւն դարձնելու նրա չարութիւնների վրայ, հասցրեց Անուշին իրենց տուն եւ կիսաբաց դռնից ներս մղելով, դուռը վրան ամուր փակեց:

Անուշը դէմքը ծամածռած՝ գոռաց դռան ետեւից.

— Հացին կասեն խլեր, ջրին՝ վաղա,
հացին-խլեր, ջրին-վաղա:

Յետոյ կիսախաւար նրբանցքի անկիւնում երկար ժամանակ կուչ եկած մնաց, վիրաւորւած ինքնասիրութեամբ եւ անպատմելի դայրոյթով լեցուն:

Այդ օրւանից էր, որ Անուշը սկսեց մենակութիւն փնտրել իրենց տան մէջ:— Լինել հեռու, հեռու բոլորից, լինել կորսւած ու մենակ...

Նուրբարենք ունէին մի երկրորդ բակ, հաւերի եւ հնդկահաւերի համար: Անուշը գնում էր այդտեղ, մի կերպ տեղաւորւում հաւաքնի յետեւում եւ մնում էր անշարժ: Ստւերաշատ մի ակացիա, կռացած ճիւղերով, նրան կատարելապէս անտեսանելի էր դարձնում: Այս թագստոցից Անուշը սիրում էր դիտել թակը, մեծ ընկուզենին եւ անմշակ թողած ծաղկանոցը, որտեղ ամեն տեսակի բոյսեր կային՝ սկսած աւելից մինչեւ դաշտի դեղնաւուն մանրիկ ծաղիկները, կապուտակ անմեռուկներ ու ծծմօրներ: Դիտում էր հաւերին, դունաւոր փետուրներով զարդարւած աքլորներին, պատի վերեւ շինւած աղաւնիների բներին, որոնց միօրինակ կտկլտոցն օրօրում էր նրա, ո՞վ գիտէ թէ ինչից վրդովւած հոգին: Արծաթափայլ ամպերի կտորներով զարդարւած երկինքը այս հաւարնից էր, որ ամենից աւելի գեղեցիկ էր երեւում Անուշի աչքին:

Մեծ սենեակում, պահարանի ու անկողնու ծալքի մէջտեղ նեղ մի անցք կար: Այդ էլ Անուշի թագստոցներից մէկն էր: Ցաճախ կծկւում էր նա այդ անցքի մէջ, ձեռքերը գնում երեսին, գլուխը յենում ծնկերին ու մըտածում էր, մտածում... Եւ թւում էր նրան, որ մի ձայն կանչում է իրեն, հեռո՛ւ հեռուներից եկող մի ձայն, որ այնքան մօտիկ էր հնչում իր ականջին... Կարծես մէկը, ծաղկաւէտ դաշտերից, ձեռքերն ականջներին դըրած՝ գոռում էր, կանչում,—«արի՛, արի՛, արի՛»...Կամ, անրատ մի երգ, հինաւուրց երգի մոռացւած մի կանչ, երկնքի անծայր կապոյտից կախւած անտեսանելի շեփորներից թրթռալով, գալիս էր իջնում հոգու վրայ: Եւ յանկարծ կարօտի թախիծը պատում էր Անուշի էութիւնը, նա տենչում էր նորից վախչել, գնալ հեռու, հեռո՛ւ... Որքա՜ն տխուր էր այդտեղ: Եւ ինչո՞ւ էր այդքան տխուր: Մի դուցէ իր ծնողները հարազատ չէին:

Իրենն, ո՞վ գիտէ, ո՞ր փողոցի անկիւնից են գտել. խղճացել են վրան ու իրենց մօտ բերել, ինչպէս Ռուբիկին... Նրան գոնէ եկեղեցու բակից են բերել, իսկ իրե՞ն... Ո՛, իրենն, քաղցրաւէնի վաճառողի խանութի մօտի անկիւնից են գտել: Այո՛, այո՛, ինքը լաւ է յիշում: Ցուրտ ու անձրեւոտ մի գիշեր էր: Մայրիկն ու հայրիկը փաթաթուած էին իրենց տաքուկ վերարկուների մէջ: Մայրիկը մորթ էլ ունէր ուսերին եւ կարմիր թաւիշ հագուստի ծայրը երեւում էր վերարկուի տակից: Հայրիկը, փղի գլխով, շաղանակագոյն փայտ ունէր ձեռքին: Եկան, մօտեցան իրեն, նայեցին երկա՛ր ու մինչ ինքը կիսաքուն վիճակի մէջ էր, գրկեցին ու տուն տարան:

Նուբարենց տան վարի սենեակում մի խումբ հայդուկներ էին ապրում: Իրենց երկարավիզ կօշիկներով, բրդոտ փափախներով ու սեւ եռանկիներով այդ մարդիկ, Անուշի համար ոչ այլ ինչ էին, եթէ ոչ հէքեաթային հերոսներ:

Անուշը կարծում էր, որ այդ հայդուկները ոչ ուտում էին, ոչ խմում՝ ուղած վայրկեանին մատով օդն էին ճեղքում ու հրեղէն մի ձի գալիս կանգնում էր դռանը: Նրանցից ամենագեղեցիկը ու ամենաքաջը՝ Արտօն, ցատկում էր ձիու մէջքին, բաշը ձեռքն առնում եւ Անուշը համոզուած էր, որ քաղաքից դուրս գալուն պէս, նա այլեւս ամպերը պատռելով է, որ պէտք է թռչի: Ո՞ւր էր գնում այդ հերոսը, ի՞նչու համար էր գնում, Անուշը չգիտէր, սակայն, զգում էր, որ գաղտնի ու անհրաժեշտ է իր գործը:

Մի օր էլ նրանց բորբոքուած ու տաք խօսակցութիւնից Անուշն իմացաւ, որ հեռո՛ւ-հեռո՛ւ, բարձր սարերի եռեւում մի սիրուն, շատ սիրուն երկիր կայ, որի ջրերը արծաթի պէս պսպղուն են, սարերը միշտ ձիւնի պէս ճերմակ են եւ որ այդ երկրի մարդիկ իրենց՝ հայդուկների պէս՝ քաջ ու գեղեցիկ են եւ ունեն հրեղէն ձիեր:

Հարսնուկ բաջին ասում էր, որ եթէ Անուշը կարողանար նստել արեւի ճառագայթի պոչին եւ ողջ գիշեր նրա վրայով վեր բարձրանար, կը հասնէր հայդուկների պատմած այդ սիրուն երկրին:

Անուշը լսում էր Հարսնուկին, բայց տարակուսում էր, որովհետեւ տատի պատմածներից նա գիտէր, որ արեւը մի աղջիկ է, երկար փայլուն վարսերով աղջիկ, որի աչքերն այնքան կրակոտ են, որ շողերը նայողի բիբերի մէջ ընկնելով, արգելում են իրեն տեսնել, իսկ լուսինը սիրահար տղայ, ընկած անվերջ փնտռտուքների մէջ, օր ու գիշեր վազում է վազում ու չի կարողանում հասնել Արեւին եւ այդ պատճառով, այնքան մելամաղձոտ է իր դէմքը: Անուշը գիտէր, որ աստղերը Արեւ աղջկայ հիւսերի զարդերն են, որ նա քուն մտնելիս քանդում է ու ցրում իր կապոյտ վերմակի վրայ:

— Այնտեղ բոլորը հայեր են, ասում էին հայդուկները:

Հապա իրենք ինչո՞ւ էին այստեղ, ինչո՞ւ իր ծնողները, իր տատը, ինքն այն երկրում չէին: Բայց կեանքի առեղծուածը նրա համար մնում էր անլուծելի:

Հեռու այդ երկրի կարօտը սակայն առկայծեց Անուշի հոգում: Ու ամեն գիշեր, հենց որ ճրագը մարէր, նրա երեւակայութեան կծիկը կը քակուէր...

Մեծ ապակէ մի կառք, լծուած երկու գոյդ ոսկեբաշ ձիերով, կը դար, կը կանգնէր նրա մահճակալի մօտ: Անուշը կը բարձրանար, կը նստէր ապակէ նստարանին եւ ձիերը օդը ճեղքելով, լուսնի ճիշտ մօտից կը թռցնէին

նրան բարձր սարերի ետեւ գտնուող հայդուկների սիրուն երկիրը: Լա՜յն, անսահման լայն մարգագետնի վրայ կիջնէին: Գետնի վրայ գտնուող մեծ մի դուռ անձայն կը բացուէր ու պսպղուն աստիճաններով կիջնէին հէքեաթային մի քաղաք: Կանաչ փայլփլուն ծառեր զարդարուած ոսկեգոյն մրգերով, դունաւոր, թափանցիկ թերթիկներով ծաղիկներ, սփռուած բարձր, կանաչ խոտերի մէջ, հաղարաղոյն թռչուններ ու թիթեռնիկներ: Հեռուում, ցցուած բարձր բարդիների տակ, սեւ եաւունջիներ ուսերին, միմի հրեղէն ձիու սանձից բռնած, արձանի պէս վեհ ու գեղեցիկ, դէպի անհունութիւնը նայող աչքերով հայդուկների խմբեր:

Բայց Անուշի ստեղծած այս գեղեցիկ երազը մի օր յանկարծ փշրուեց: Հարեւան փոքրիկ բակի մէջ մի ռումբ պայթեց... Գանկն, ասացին, փշուր-փշուր է եղել, ուղեղը մինչեւ առաստաղ է հասել...

Նուբարենց յոան հայդկուները երազի պէս չքացան:

Այդ օրն Անուշն ամբողջ տունը տակն ու վրայ արեց: Գնաց նախ նրանց սենեակը, յետոյ բարձրացաւ վեր, տատի սենեակի պահարանները քննեց, սեղանատան բաղմոցների տակ նայեց, իջաւ մառան, մտաւ խոհանոց, սակայն, հայդուկները չկային ու չկային:

— Ի՞նչ եղան, ի՞նչ եղան նրանք,— հարցնում էր Անուշն այս ու այն կողմ ընկած, բայց նրան պատասխան տուող չկար:

Իր մենակութեան մէջ հիւսած երազները, տատի հէքեաթները, Ռուբիկի խաղերը, ոչի՛նչ, ոչինչ չէին փոխարինում այն սքանչելի երազին, որ կապում էր Անուշին հայդուկների հետ:

Սկզբում նա փորձեց նկարագրել Ռուբիկին հրեղէն ձիու վրայ ցատկող ու բաշը իրը տանձ ծառայեցնող իր հերոսին, որ «ա՛յ, այնտեղից, կապոյտ-կապոյտ երկնքի միջից, կրակ ու բոց թափելով երկրի վրայ, թռչում էր, է՛ն, դէպի էն սիրուն, էն ոսկի քաղաքը...»

— Մէկ-մէկ էլ գիշերն ինձ էլ իր գիրկն էր առնում ու մենք միասին թռչում, թռչում էինք...

Ռուբիկը լսում էր, լսում ու թերահաւատութեամբ լեցուն աչքերով գլուխն էր շարժում:

Ա՛խ, ոչ ոք, ոչ ոք Անուշին չէր հասկանում... Եւ ամեն անգամ, երբ նստած տատիկի ծնկին կամ հայրիկի գրկում, իր անվերջ հարցերի տարափն էր թափում նրանց գլխին — թէ ինչո՞ւ ծառերն ու ծաղիկները չեն խօսում, ինչպէ՞ս են պատմում նրանք իրենց մտածմունքները, ինչո՞ւ ոչ ոք փիսիկի լեզուն չի կարողանում խօսել — Անուշը վերջ ի վերջոյ հասնում էր միշտ նոյն հարցին՝

— Նրանք ի՞նչ եղան, հայրիկ, ի՞նչ եղան նրանք:

— Ո՞վքեր, Անուշ:

Ու Անուշը երկու ձեռքերը բարձրացրած իր գլխի վրայ, բրդոտ փափախի ձեւն էր ցոյց տալիս:

— Գնացին իրենց Անուշների մօտ:

Այս պատասխանը սակայն, Անուշին չէր գոհացնում ու նա դեռ երկար չպէտք է հանգստանար, եթէ չպատահէր անսպասելի մի դէպք:

Շատ անգամներ Անուշը նկատել էր արդէն, որ Համբարձում հօրեղբայրը, երբ իրենց մօտ էր գալիս, յաճախ իջնում էր մառան ու երկա՜ր մնում էր այնտեղ: Ի՞նչ կար արդեօք մութ այդ մառանի մէջ: Հետաքրքրութիւնը պաշարել էր Անուշին: Նա սկսեց զգուշօրէն հսկել հօրեղբօր մուտքն ու ելքը, հետեւել նրա իւրաքանչիւր քայլին: Եւ մի օր էլ, երբ նա եկաւ, վերցրեց պատից կախուած մառանի բանալին եւ դուռը բանալով իջաւ գետնայարկ, Անուշը աննկատ ներս սողաց նրա յետեւից ու անմիջապէս պահուեց կարասների ետնքում:

Պահուեց ու սկսեց դիտել:

Մինչ հօրեղբայրը մառանում կանգնած, մատիտը ձեռքին, ապաւինած փոքրիկ լուսամուտի ազօտ լոյսին, զբաղուած էր ինչ որ թղթի ընթերցանութեամբ, Անուշը տեսաւ, որ աստիճաններից մառան է իջնում անծանօթ մի մարդ... բարձրահասակ ու յաղթանդամ: Երբ հասաւ հօրեղբօր մօտ, կռացաւ ու անկիւնից վերցնելով սեւ մի եափունջի փռեց դեռնին:

Եափունջի՞... Անուշի սիրտը թրթռաց: Ո՞վ գիտէ, գուցէ մառանի խորքում եւ հրեղէն ձիեր կային պահուած...

Կծկուած, անշարժ, շունչը բռնած շարունակեց մնալ նա իր թաքստոցում, որտեղից պարզ երեւում էր, թէ ինչպէս նրանք մէկ-մէկ չոգեցին եափունջու վրայ, փայտեայ մեծ մի արկղի առջեւ, ինչպէս բացեցին արկղը, ինչպէս անծանօթը հանեց մի հրացան, տնտղեց, քննեց, յետոյ հօրեղբայրը մատիտով նշան արաւ իր թղթի վրայ. յետոյ հանեցին երկրորդ հրացանը, երրորդը, չորրորդը... ամեն անգամ կռանալիս, յաղթանդամ անծանօթի երկար ու սեւ մազերի խուրձն ընկնում էր ճակատին եւ կիսախաւարի մէջ ուրուագծուած իր դէմքը տարօրինակ արտայայտութիւն էր ստանում:

Երկար մնաց Անուշը դաղտնի այդ անկիւնում՝ հըմայուած եւ ինքնամոռացութեան մէջ ընկած... Վերջապէս յոգնեց... Սկսեց դուրս փախչելու մասին մտածել: Կամաց ուղղուեց նստած տեղը, կօշիկները հանեց բռնեց ձեռքը եւ... Բայց առաջին իսկ քայլին սայթաքեց: Նրանք անմիջապէս յետ նայեցին, ու մինչ Անուշը դեռին ընկած, վախեցած աչքերով նայում էր, անծանօթը յանկարծ սկսեց ծիծաղել ու մազերի խուրձը թեւով յետ ղցելով ճակատից՝ մօտեցաւ նրան:

— Այդ դո՞ւ ես, չարաճճի, ասաց նա ու գրկեց Անուշին ու սկսեց համբուրել, շոյել, գգւել կարօտած

մէկի պէս: Ու ահա Անուշը յանկարծ ճանաչեց... Արտօն էր... Երկաթավիզ կօշիկների, փափախի ու հայդուկի տարազի փոխարէն, նա հագել էր հայրիկի նման հագուստներ ու ածիլել էր բեխերն ու մօրուքը:

Անուշը դուրս պրծաւ Արտօի գրկից ու նետուեց պարտէզ: Այնտեղ անմիջապէս դէմ-դիմաց եկաւ փիսիկին ու նրա մռռան գլուխը սեղմելով փոքրիկ ափերի մէջ, սկսեց բարձրաձայն ծիծաղել: Կատուն զարմացած նայում էր փոքրիկ իր թարեկամուհուն:

— Նրանք եկել են, փիսո, նրանք այստեղ են, մեր մառանումն են...

3

Այն դպրոցը, ուր յաճախում էին Նուբարի երեխաները, ունէր քառակուսի մի բակ, երեք կողմից շրջապատուած սալայատակ շէնքերով: Բանդուտած աստիճաններ, դասարաններ, իրենց յաւիտեան ծխացող վառարաններով, վայտեայ հաստաբակ նստարաններ ու սեղաններ, հնացած ու խամրած վերարկուներով աշակերտներ, դաղափարական ու անձնուէր ուսուցիչներ, դեռուններով լի ջրամբար ու երեք հսկայ բարդիներ:

Երեք հսկայ բարդիներ··· որ նպանքով ու զոհունակութեամբ օրօրում էին իրենց արծաթ գլուխները, անպատմելի կարօտներ արթնացնելով մատաղ սրտերի մէջ, որ աշնան կարմիր ու դեղին, բոցի պէս վառուող չորացած տերեւներ էին սփռում բակի քարերի վրայ, որոնց խըշխշոցը թափանցիկ հոգիների մէջ անբացատրելի երաժըշտութիւն էր ստեղծում, երազներ հիւսում, տենչեր արթնացնում:

— Я кто такой ?

— Ես ո՞վ եմ: Ես գoսպոդին ուսուցիչն եմ:

Այսպէս էր սկսում Գրիգորիյ Եւանգուլիչը, հայոց դպրոցի ռուսերէն լեզուի ուսուցիչը, իր դասը:

— Это есть карандаш.

Աշակերտները միաձայն կրկնում էին՝ կա–րան–դաշ:

— Հասկացա՞ք:— Ու նա շարունակում էր բարձր բռնած պահել կարմիր խոշոր մատիտը եւ աջ ու ձախ ցոյց տալով մնում էր հիացած աւանդելու իր ձեւի վրայ:

Բարձրահատակ, դլուխն ուսերի մէջ թաղուած մի մարդ էր Գրիգորիյ Եւանգուլիչը, անյիշելի ժամանակներից եկած Ռոստովից թէ Ղրիմից, որ մեն մենակ ապրում էր Թաւրիզում, դպրոցին մօտիկ, կիսախարխուլ մի տան մէջ: Նրա դռանը փակցրած կեղտոտ ու դեղնած մի այցետոմսի վրայ գրուած էր՝

Գրիգորիյ Եւանգուլիչ կարապետով·
մասնաւոր դասեր եւ ամեն տեսակ ռուսերէն
ապսպրանքներ: Մտէ՛ք:

Նրա անձնական կեանքի մասին դոյութիւն ունէին տարբեր տեսակէտներ: Ոմանց կարծիքով Գրիգորիյ Եւանգուլիչը տուն վերադառնալով, խկոյն մտնում էր անկողին: Մինչ ուրիշների կարծիքով, ընդհակառակը, Գր. Եւանգուլիչը մինչեւ լոյս գիրք էր կարդում եւ այդ էր պատճառը, որ յաճախ նրա աչքերը կարմրած ու կոպերը ուռած էին լինում:

Աշակերտներն առանձին որեւէ զգացմունք չունէին դէպի նա· ոչ սէր, ոչ ատելութիւն, ոչ յարգանք, ոչ արհամարհանք: Այնպէս, անտարբեր մի տրամադրութեամբ էին համակուած բոլորն էլ: Եւ այդ առաջ էր գալիս մասամբ նրանից, որ Գրիգորիյ Եւանգուլիչն ինքն անտարբեր ու սառը երեւոյթ ունէր:

Գր. Եւանգուլիչը շատերի առաջին ուսուցիչն է եղել, որ սովորեցրել է օտար այբուբենը, վարժութեան համար, փոքրիկ երեխաներին, ամբողջ երկու ժամ, ամենայն բարեխղճութեամբ ռուսերէն լեզուով, պատմելով Սիբիրի գրաւումը ռուսների կողմից···

Խօսում էր նա արագ, աչքերը հաստլիկ մատերի յօդերի կնճիռներին յառած ու մերթ ընդ մերթ, կարծես

ապացուցանելու համար իր պատմածների ստուգությունը, կարդում էր էջեր, պատմության դասագրքից: Նա չէր ժպտում, չէր պայքարում, դէմքը որեւէ կնճիռ չունէր, նրա շաղանակագոյն մազերը տարօրինակ կերպով ներդաշնակում էին վարդագոյն այտերին ու մուգ սրճագոյն վերարկուի թաւիշ օձիքին, որ նա երբեք չէր հանում իր վրայից: Ամառ ժամանակ դեղին կտաւէ մի հագուստ ու յարդեայ գլխարկ ունէր նա: Միշտ դեղին կտաւէ հագուստ ու մի՛շտ յարդեայ գլխարկ:

Դպրոցում դասերից դուրս Գրիգորիյ Եւանգուլիչը ոչ մի բոպէ չէր մնում: Ներքին եւ ու գեղին, ուրախութիւններին ու տաղնապներին ոչ մի մասնակցութիւն չէր ցոյց տալիս: Խուսափում էր դպրոցական բոլոր հանդէսներից եւ խմբական զբօսանքներից:

Երեք հսկայ բարդիների դեղեցկութիւնը նրա հոգուն ոչինչ չէր ասում: Նա մի վայրկեան զարմացած կանգ էր առնում ամեն անգամ, երբ դասարանից դուրս գալիս, տեսնում էր թէ ինչպէս հայոց լեզուի ուսուցիչը, ցածլիկ աթոռի վրայ նստած, շրջապատուած մի քանի աշակերտներով, ժպտուն ու քաղցր դէմքով, շոյում էր նրանց գլուխները, զանազան բաներ էր պատմում, հարցեր էր տալիս՝ աշխատելով թափանցել իւրաքանչիւր երեխայի հոգու մէջ, որոշել նրանց ձգտումները, բռնել դեռ չզարգացած վատ յատկութիւնների ծայրը, ժամանակին արմատախիլ անելու համար չարիքը:

Անուշը տուն ընկաւ գլուխը կորցրած, գլխարկը ձեռքին, դրքերի պայուսակը հագիւ թեւի տակ պահելով, որ վայր չընկնի: Նրա այտերը կարմրել էին եւ աչքերը պսպղում էին:

— Վաղը, մայրիկ, վաղը, տատիկ, վաղը, փիսօ...

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, չար կրակ:

— Վաղը, վաղը բոլորս... բոլորս... գնո՛ւմ ենք:

Տատիկը, երկու ձեռքերը կրծքին ծալած, ծիծաղը դէմքի վրայ խաղացնելով, հարցական բարի աչքերով նայում է Անուշին: Նա չի հետաքրքրւում կարծես Անուշի բացագանչութիւններով, այլ աւելի հիացած դիտում է նրա վառվռուն դեղեցկութիւնը: Իր հոգու խորքում հարազատ զգացումներ են ծնւում ու վաղուց ի վեր անգործութեան մատնուած մի լար սկսում է ծանօթ մի եղանակ նուագել: Փիսիկը, բակի բարակ պատի վրայ թաթիկները հաւաքած ու մի կերպ տեղաւորուած, աչքերի բիբերը կլորցրած, նայում է դիտուն մէկի պէս, ասես ինքը նախապէս տեղեակ լինի բոլոր գալիք անակնկալներին: Մանին գլուխը լուսամուտից հանած նայում է բակ ու լսում Անուշին:

— Ո՞ւր ես գնում, ո՞ւր:

Անուշը ձեռքով հեռո՛ւ-հեռուներն է ցոյց տալիս:

— Մայիսեան տօնն է, Մայիսեան տօնը,— բացատրում են Տիգրանն ու Վարդենին, հագիւ լռեցնելով Անուշին:

Քիչ յետոյ, խոհանոցում տաշտի մէջ խմոր է պատրաստւում գաթայի համար: Կինամոնի ու մեխակի բուրմունքը բակը լցնում է, սկաւառակի մէջ տստը «արդար իւղ»ով հալւայ է պատրաստում, խոհարարը երկու հաւ ջրի մէջ թաթախած՝ արագօրէն վիտրատում է: Կողքի կրակի վրայ, պտուկի մէջ հաւկիթներ են խաշւում, Մանին թրջած լաւաշները ծալում է, դարսում սեղանին, ճերմակ պանրի քառակուսի կտորների հետ միասին:

Անուշը քիթը ցցած վազվզում է այս ու այն կողմ, աշխատելով օգտակարութիւն ցոյց տալ ընդհանուր այդ պատրաստութեան: Սեղանից գդալը առնելով տատին է

— Վաղը, մայրիկ, վաղը, տատիկ, վաղը, փիսօ...

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, չար կրակ:

— Վաղը, վաղը բոլորս... բոլորս... գնո՛ւմ ենք:

Տատիկը, երկու ձեռքերը կրծքին ծալած, ծիծաղը դէմքի վրայ խաղացնելով, հարցական բարի աչքերով նայում է Անուշին: Նա չի հետաքրքրւում կարծես Անուշի բացագանչութիւններով, այլ աւելի հիացած դիտում է նրա վառվռուն դեղեցկութիւնը: Իր հոգու խորքում հարազատ զգացումներ են ծնւում ու վաղուց ի վեր անգործութեան մատնուած մի լար սկսում է ծանօթ մի եղանակ նուագել: Փիսիկը, բակի բարակ պատի վրայ թաթիկները հաւաքած ու մի կերպ տեղաւորուած, աչքերի բիբերը կլորցրած, նայում է դիտուն մէկի պէս, ասես ինքը նախապէս տեղեակ լինի բոլոր գալիք անակնկալներին: Մանին գլուխը լուսամուտից հանած նայում է բակ ու լսում Անուշին:

— Ո՞ւր ես գնում, ո՞ւր:

Անուշը ձեռքով հեռո՛ւ-հեռուներն է ցոյց տալիս:

— Մայիսեան տօնն է, Մայիսեան տօնը,— բացատրում են Տիգրանն ու Վարդենին, հագիւ լռեցնելով Անուշին:

Քիչ յետոյ, խոհանոցում տաշտի մէջ խմոր է պատրաստւում գաթայի համար: Կինամոնի ու մեխակի բուրմունքը բակը լցնում է, սկաւառակի մէջ տստը «արդար իւղ»ով հալւայ է պատրաստում, խոհարարը երկու հաւ ջրի մէջ թաթախած՝ արագօրէն վիտրատում է: Կողքի կրակի վրայ, պտուկի մէջ հաւկիթներ են խաշւում, Մանին թրջած լաւաշները ծալում է, դարսում սեղանին, ճերմակ պանրի քառակուսի կտորների հետ միասին:

Անուշը քիթը ցցած վազվզում է այս ու այն կողմ, աշխատելով օգտակարութիւն ցոյց տալ ընդհանուր այդ պատրաստութեան: Սեղանից գդալը առնելով տատին է

տալիս, դանակը գետնից վերցնում խոհարարի ձեռքն է մտցնում, մատերով հուի թրջած փետուրները շոյում, կախ ընկած գլուխները վեր բարձրացնում եւ աշխատում բանալ գոցուած կտուցները:

Եւ երեկոյեան դէմ ամեն ինչ պատրաստ է արդէն:

Կարմիր բծաւոր երկար մի տոպրակ բերելով տատը, առանձին հանդիսաւորութեամբ, տեղաւորում է իւրաքանչիւր կողոց՝ թարձրաձայն անուանելով մէջի եղածները:

Անհամբերութիւնից Անուշն այդ դիշեր չի կարողանում քնել. հանւում է, մտնում անկողին, որ «լոյսը շուտ բացւի»:

Յաջորդ առաւօտ շատ կանուխ, ողջ դպրոցը իր երկսեռ աշակերտութեամբ, ուսուցիչ, ուսուցչուհիներով հաւաքւել էին դպրոց:

Եւ Մայիսեան առաւօտը հազիւ էր սկսել շառագունել, երբ գոյդ-գոյդ աշակերտութիւնը փողոց դուրս եկաւ:

Մայիսեան առաւօտ...

Ամեն կողմ ծաղկած նշենիներ ու սալորենիներ... Ամեն կողմ կանաչած պարտէզներ ու անուշարոյր յասմիկներ... Յասմիկներ, որոնք իրենց բաց մանիշակագոյն աչքերով շեշտակի սրտիդ մէջ են նայում, հազար ու մի խոստում, հազար ու մի երդում անում ու գողդողալով շարժում են իրենց երկարաւուն ճիւղերը: Խոտերի արանքից գլուխները բարձրացրած մանիշակները ժպտում են նշենիների բաց վարդագոյն թերթիկներին, որոնք գիտեն շատ շուտով վար պիտի թափւեն ու խամրեն, դարնան բռնկած պատանիների ճերմակաթեւ սէրերի նման... «Ի՞նչ փոյթ,— այսօր մենք գեղեցիկ ենք, մերն է այսօր սէրն ու երգը կապոյտ թռչունի...» Ճերմակին տուող բաց վարդագոյն թերթիկների քնքոյշ երակների մէջ քաղցր մի դող է ընկնում ու խոտերի արանքից գլխիկոր բարձրացած մանուշակները թարթում են երազային իրենց կոպերը:

Ուսուցիչներն անընդհատ կարգադրութիւններ էին անում, իսկ տեսուչը քայլում էր խումբի յետեւից լուռ գոհունակութեամբ: Այդ օրը տեսչի խնդիրը չմերժելու համար, Գրիգորիյ Եւանդուլիչը վճռել էր, վերջապէս, մի անգամ մասնակցել մայիսեան այդ զբօսանքին և այժմ ակնյայտ դժգոհութեամբ քայլում էր նրա կողքից, մի քիչ շորւրուռ իր քայլւածքով, գլուխը ուսերի մէջ թաղած ու յարդեայ գլխարկը ձեռքին:

— Սիրանոյշ, դու առաջ անցիր Շողերի հետ միասին, առաջին կարգերին հսկելու: Իսկ դուք երկուսդ միջին կարգերի հետ եղէք:

— Պարո՛ն, կարելի՞ է երգել:

— Ո՛չ, դեռ ոչ: Սպասիր քաղաքից հեռանալ:

— Օրիորդ, Զաւէնը խփում է:

— Ես չեմ, օրիորդ, ինքն է որ...

— Սո՛ւս, շատ մի աղմկէք, մարդիկ դեռ քնած են:

Եւ խումբը, ուրախ զարթ խումբն աշակերտութեան, թեթեւ քայլերով, պայծառ աչքերով, ծիծաղկոտ ու կայտառ, կամաց-կամաց դուրս եկաւ քաղաքից եւ բռնեց Լալա տանող ճամբան: Ու յանկարծ, կարծես մի հոգի դարձած, բոլորը միասին սկսեցին երգել՝

« Ես Մայիսն եմ ցօղոտ շաղոտ
ամիսների թագուհին »:

Դաշտը թնդաց: Քուն մտած ծաղիկները շարժւեցին ու ջնջացին իրար ականջի, ցողաթաթախ խոտերը թափահարւեցին եւ երկինքը լցւեց ճնճղուկների դայլայլով:

Տիգրանը Շողերի մօտից չէր հեռանում: Դաշտի ծաղիկներից անհամար փնջեր էր կապում նա ու տալիս Շողերին: Եթէ կարողանար ողջ ծաղիկները նրա համար

պիտի հաւաքէր... Շողերը ժպտում էր, քրքջում, կարմրում եւ հաւատով ու սիրով լցած, անմեղ նազանքով ընդունում էր դոյնդոյն փնջերը:

Ամենքն ուրախ էին, ամենքը երջանիկ:

Մէկ էլ յանկարծ, վերջից քայլող ուսուցիչներից մէկին արագ մօտեցաւ վարժուհուն ու հաղիւ զսպելով ծիծաղը յայտնեց որ Գրիգորիյ Եւանգուլիչը չկայ...

— Ինչպէ՞ս թէ չկայ:

— Չկայ էլի, մարդը փախել է...

Զսպուած այդ ծիծաղն անմիջապէս համակեց բոլորին: Աշակերտներն սկսեցին իրար ականջի դանդաղ սրախօսութիւններ անել: Գրիգորիյ Եւանգուլիչի առաւօտ շատ կանուխ քնաթաթախ յայտնուելն արդէն ծիծաղ ու զարմանք էր առաջ բերել ու հիմա յանկարծ... փախել է մարդը... Բայց նոր մի երգ բարձրացաւ կրկին մոռացութեան տալու ամեն ինչ:

Դիմացը երեւում էին արդէն սուերախիտ ծառեր ու լսւում էր ջրվէժի շառաչը:

— Հառա՞նք, հասա՞նք...

Թումբն այլեւս առանց կարդի վազելով դիմեց դէպի մօտակայ ծառերը:

Շողերն ու Տիգրանը գանդաղեցրին իրենց քայլերը:

Շողերը Տիգրանի մանկութեան ընկերն էր: Դեռ մանուկ հասակից, Շողերը եւ իր եղբայր Արմաշը, Բեհեզ տատի հէքեաթների սիրահարներից էին: Նրանք գալիս էին Նուբարենց տուն եւ Վարդենու ու Տիգրանի հետ միասին, մտնում քուրսու տակ, աչքերն առանց թարթելու, ականջները սրած՝ ագահութեամբ լսում էին հանդարտ ու քաղցր ձայնը տատիկի:

Տիգրանը շատ էր սիրում Շողերին: Նրանք նստում էին կողք-կողքի, փոքրիկ ձեռքերն իրար կցած, դլուխները մէկն աջ, միւսը ձախ թեքած ու այնպէս երջանիկ էին, այնպէս երջանիկ...

Յանկարծ սենեակը լցւում էր ոգիներով եւ իւրաքանչիւր անկիւնից նրանց աչքին զանազան թեւաւոր էակներ էին երեւում... Եօթ գլխանի դեւը այնքա՞ն մեծ ու զարզանդեցուցիչ էր, որ սենեակի մեծութիւնը չէր բաւում նրա խոշոր մարմինը տեղաւորելու համար, այդ պատճառով նրանց թւում էր թէ դեւը տանիքի վրայ էր ման գալիս ու պարզ լսում էին նրա հսկայ ոտքերի տրոփիւնը:

— Եկաւ...

— Հիմա կերթայ...

— Լսում ե՞ս...

Թըփ... թըփ...

Նրանք վախենում էին իրար նայել: Նստում էին անշարժ, ականջները հէքեաթի խօսքերից կախուած, մինչեւ որ բարի ոգիների անսպասելի յայտնուումը նորից վարդագոյն լոյս էր սփռում նրանց մտքերի պատկերների վրայ եւ նորից զանազան անկիւններից ծիածանէ գօտիների մէջ փաթաթուած, յայտնւում էին թեւաւոր էակներ եւ հեռից երաժշտութեան մեղմ ձայն էր գալիս...

Իսկ ամեն տարի, ձմեռայ երկար ու ցուրտ ամիսներից յետոյ, երբ արեւի շողերի հետ միասին Բեհեզ տատի սիրտը բացւում էր ծառի ծիլի պէս, երեխաներն այլեւս դադար չէին տալիս նրան: Նրանք գիտէին, որ Բարիկենդանը տատի սիրած տօներից էր եւ որ առիթ կար կրկին ու կրկին լսելու «Շողերի Աստծու» հէքեաթը:

Տատն այդ օրը դեղին, մեծ ինքնաեռը պատրաստել էր տալիս եւ պատւիրում էր տանիք բարձրացնել ու դարնան առաջին տաք ճառագայթների հետ, եռացող ինքնաեռի կողքին, հաւաքւում էին նրա հէքեաթի սիրահարները:

պիտի հաւաքէր... Շողերը ժպտում էր, քրքջում, կարմրում եւ հաւատով ու սիրով լցւած, անմեղ նազանքով ընդունում էր դոյնդոյն փնջերը:

Ամենքն ուրախ էին, ամենքը երջանիկ:

Մէկ էլ յանկարծ, վերջից քայլող ուսուցիչներից մէկին արագ մօտեցաւ վարժուհուն ու հաղիւ զսպելով ծիծաղը յայտնեց որ Գրիգորիյ Եւանգուլիչը չկայ...

— Ինչպէ՞ս թէ չկայ:

— Չկայ էլի, մարդը փախել է...

Զսպւած այդ ծիծաղն անմիջապէս համակեց բոլորին: Աշակերտներն սկսեցին իրար ականջի զանազան սրախօսութիւններ անել: Գրիգորիյ Եւանգուլիչի առաւօտ շատ կանուխ քնաթաթախ յայտնուելն արդէն ծիծաղ ու զարմանք էր առաջ բերել ու հիմա յանկարծ... փախել է մարդը... Բայց նոր մի երգ բարձրացաւ կրկին մուսացութեան տալու ամեն ինչ:

Դիմացը երեւում էին արդէն սուերախիտ ծառեր ու լսւում էր ջրվէժի շառաչը:

— Հասա՞նք, հասա՞նք...

Խումբն այլեւս առանց կարգի վազելով դիմեց դէպի մօտակայ ծառերը:

Շողերն ու Տիգրանը զանգաղեցրին իրենց քայլերը:

Շողերը Տիգրանի մանկութեան ընկերն էր: Դեռ մանուկ հասակից, Շողերը եւ իր եղբայր Արմաշը, Բեհեղ տատի հէքեաթների սիրահարներից էին: Նրանք գալիս էին Նուբարենց տուն եւ Վարդենու ու Տիգրանի հետ միասին, մտնում քուրսու տակ, աչքերն առանց թարթելու, ականջները սրած՝ ագահութեամբ լսում էին հանդարտ ու քաղցր ձայնը տատիկի:

Տիգրանը շատ էր սիրում Շողերին: Նրանք նստում էին կողք-կողքի, փոքրիկ ձեռքերն իրար կցած, դլուխները մէկին աջ, միւսը ձախ թեքած ու այնպէս երջանիկ էին, այնպէս երջանիկ...

Յանկարծ սենեակը լցւում էր ոգիներով եւ իւրաքանչիւր անկիւնից նրանց աչքին զանազան թեւաւոր էակներ էին երեւում... Եօթ դլխանի դեւը այնքա՞ն մեծ ու զարդանդեցուցիչ էր, որ սենեակի մեծութիւնը չէր բաւում նրա խոշոր մարմինը տեղաւորելու համար, այդ պատճառով նրանց թւում էր թէ դեւը տանիքի վրայ էր ման գալիս ու պարզ լսում էին նրա հսկայ ոտքերի տրոփիւնը:

— Եկաւ...

— Հիմա կերթայ...

— Լսում ե՞ս...

Թըփ... Թըփ...

Նրանք վախենում էին իրար նայել: Նստում էին անշարժ, ականջները հէքեաթի խօսքերից կախւած, մինչեւ որ բարի ոգիների անսպասելի յայտնուումը նորից վարդագոյն լոյս էր սփռում նրանց մտքերի պատկերների վրայ եւ նորից զանազան անկիւններից ծիածանէ գօտիների մէջ փաթաթւած, յայտնւում էին թեւաւոր էակներ եւ հեռից երաժշտութեան մեղմ ձայն էր գալիս...

Իսկ ամեն տարի, ձմեռւայ երկար ու ցուրտ ամիսներից յետոյ, երբ արեւի շողերի հետ միասին Բեհեղ տատի սիրտը բացւում էր ծառի ծիլի պէս, երեխաներն այլեւս դադար չէին տալիս նրան: Նրանք գիտէին, որ Բարիկենդանը տատի սիրած տօներից էր եւ որ առիթ կար կրկին ու կրկին լսելու «Շողերի Աստծու» հէքեաթը:

Տատն այդ օրը դեղին, մեծ ինքնաեռը պատրաստել էր տալիս եւ պատւիրում էր տանիք բարձրացնել ու դարնան առաջին տաք ճառագայթների հետ, եռացող ինքնաեռի կողքին, հաւաքւում էին նրա հէքեաթի սիրահարները:

— Շողերիդ մատաղ, Աստուած, շողա՛, միշտ շողա՛, — դիմում էր տատը արեւին եւ յետոյ ցածրաձայն ու խորհրդաւոր եղանակով սկսում էր խրատել փոքրիկներին, որ չարութիւն չանեն, թէ չէ Շողերի Աստուածը կը բարկանայ ու իր սեւ ամպերի պալատը կերթայ:

« Այնտեղ, մութ-մութ ամպերի ետեւում սաֆիրի պէս ջինջ ու փայլուն մի գունդի մէջ է ապրում Արեւ Աստուածը: Հին, շա՛տ հին ժամանակներում, երբ երկինքն այնքա՛ն մօտ էր երկրին, որ ձէն տայիր ձէնդ կը լսէր, Արեւ Աստուածը տարին տասներկու ամիս տաքցընում էր մեր երկիրը: Իր շողերն այն ժամանակ վառ էին ու է՛լ աւելի տաք: Իր բոցէ կլոր դէմքն առաւօտից մինչեւ իրիկուն եւ իրիկւանից մինչեւ առաւօտ շողում էր փիրուզէ կամարի կենտրոնում ինչպէս հսկայ մի ադամանդ կապոյտ թաւշի վրայ:

« Այն ժամանակ մարդիկ երջանիկ էին՝ ծիծաղն ու ուրախութիւնը չրթներին եւ անմար կրակը աչքերի մէջ: Վարդերն ու ծաղիկները, ծառերն ու խոտերը, գունաւոր մաղադանոսները ծածկում էին մեր երկիրը: Աղբիւրները զարթ կարկաչով բխում էին իւրաքանչիւր բլրակի լանջից եւ հաղարագոյն թռչուններն իրենց նախշոտ թեւերով հովերի հետ պար էին սարքում: Եւ մարդիկ գոհ էին: Բարի Աստուածն էլ ժպտում էր նրանց վերից:

« Բայց մի օր էլ ագահութիւնը մոլէսի կերպարանք առած եկաւ եւ բուն դրեց մարդկանց մէջ, փարեց նրանց մարմիններին, սողաց եւ դդուչօրէն բարձրացաւ մինչեւ նրանց սրտերը: Մարդիկ դարձան պահանջկոտ, կուարար ու կոպիտ: Ժպիտը փախաւ նրանց դէմքից, աչքերի բոցը չքացաւ: Բազմաթիւ չտեմարաններ, բազմատեսակ մեծ ու փոքր անդուկներ շինեցին... Մայր հողի տակից մարդիկ ոսկի եւ արծաթ էին դուրս: Եւ սկսեց վայրի մի կռիւ, ծեծ, սպանութիւն եւ սիրուն

երկիրը բծաւորուեց արեան շիթերով: Ծառեր կտրատուեցին, ծաղիկներ կոխոտուեցին, աղբիւրներ ցամաքեցին...

« Այն ժամանակ Արեւ Աստուածը բարկացաւ. պտտուեց, դարձաւ ինքն իր վրայ, թնդացրեց երկինքը, ողջ կապոյտը մթին ամպերով խոժոռուեց ու մէկէն վեր քաշեց իր ոսկէ թեւերը: Աշխարհը մթնեց, մարդիկ ահ ու սարսափի մատնուած իրար վրայ ընկան, կծկուեցին: Ցուրտ քամին փչեց, հիմնայատակ քանդեց տները, արմատախիլ արաւ ծառերը եւ վշտի սաստկութիւնից, Աստծոյ ուռած սիրտը իր բիւրեղ արցունքները քամեց մեր աւեր երկրի վրայ:

« Այսպէս մնաց մեր երկիրը մութի եւ սուգի մէջ դալարուած, մինչեւ որ Աստծոյ ճրագները մէկիկ-մէկիկ վառուեցին երկնակամարի վրայ: Մարդիկ գլուխները վեր առան... Որքա՛ն բարձր էր այժմ երկինքը... նայեցին, նայեցին եւ բոլորը միասին ծունկի եկան:

« Այդ օրւանից սկսած մարդիկ ստրուկների պէս ծունկերի վրայ մնացին՝ աղաչական աղօթքը միշտ դողացող շրթներին:

« Եւ այդ օրւանից սկսած Արեւ Աստուածը նրանց դլխին ձմեռ ուղարկեց իբր պատիժ իրենց գործերի: Իսկ ինքը, այսպէս մէկ-մէկ երեւում է մեզ, իր տաք, իր բարի շողերը նետում երկրի վրայ, կեանք ու շունչ տալիս բոլոր մեռածներին եւ բոլոր քնածներին ու իր տաքուկ, իր պսպղուն շողերով մշտական երջանկութեան կարօտն է հրահրում սրտերի մէջ »:

Շողերի Աստծուն նուիրուած այդ պարզունակ հէքեաթը Տիգրանի հոգում նոյնացել, խառնուել էր փոքրիկ Շողերի պատկերի հետ: Հէքեաթների դիցուհին էր նա իր աչքին, որի անունն արդէն կախարդական մի բան ունէր իր համար::

— Տե՛ս, ինչ գեղեցիկ թերթիկներ ունի կապուտակ այս ծաղիկը, Շողեր։

Նրանք կանգնեցին ու սկսեցին դիտել։

— Շատ քնքոյշ է, չէ՞։

Շողերը չէր պատասխանում եւ ժպտում էր անդադար։

«Ի՞նչ գեղեցիկն է,— մտածեց Տիգրանը,— ինքն եւս մի ծաղիկ է կարծես։

Նրան թւաց, որ Շողերը, հակառակ իր ժպտին, շատ մտազբաղ երեւոյթ ունէր։

— Ի՞նչի մասին ես մտածում, Շողե՛ր։

Շողերը նայեց Տիգրանի ճիշտ աչքերի մէջ ու նորից ժպտաց։

— Դու այս տարի պէտք է մեկնես, այնպէս չէ՞, Տիգրան։

— Այո,— պատասխանեց Տիգրանը մի քիչ վարանոտ ձայնով։

— Ես մտածում եմ,—ասաց Շողերը հատ-հատ ու մեղմ, որ երբ դու մեկնես, դու շատ նոր ու սիրուն հէքեաթներ կը սովորես, բայց կը մոռանաս «Շողերի Աստծու» հէքեաթը... — եւ առանց սպասելու պատասխանի, թռչկոտալով ու քրքջալով վազեց դէպի Վարդենին ու Արմաշը, որոնք արդէն ստերախիտ ծառերի տակ նախաճաշի պատրաստութիւն էին տեսնում։

Տիգրանը ժամանակ չունեցաւ անդրադառնալու Շողերի խօսքերին. նա անդամ չկորցնեց վազել նրա ետեւից, բռնել նրան ու հարցնել թէ ի՞նչու է նա այդպէս մտածում։ Իր ականջների մէջ մնաց միայն նրա քրքիջի ձայնը... Ու դանդաղ իր քայլերն ուղղեց դէպի բնագիտութեան ուսուցիչը, որ մի խումբ աշակերտներ շուրջն առած, ինչ որ բան էր բացատրում։

Աշակերտներն սկսել էին վազվզել, խաղալ, ճչալ ու

երգել։ Մի քանի չարաճճիներ մագլցել էին ծառերի դագաթները։ Արմաշը յարմար մի ճիւղ էր փնտրում՝ թառը կախելու համար, ու մինչ ուսուցիչներն աշակերտների հետ խաղում էին, վազվզում, տեսուչը նստած մի ծառի հովանու տակ հպարտ ինքնաբաւականութեամբ իր շուրջն էր նայում ու չոյում գլուխը գանգրահեր մի մանկիկի։

Երդեցողութեան ուսուցիչը ծառի յարմար մի ճիւղ էր դտել եւ մարմնամարզական փորձեր էր անում. աշխատում էր բարձրանալ բազուկների ոյժով, բայց ոտքերն օդում ճօճւում էին ու գլուխը հազիւ ճիւղին հասած վայրկ էր ցատկում՝ ընդհանուր ծիծաղ առաջ բերելով։ Հերթով փորձում էին իրենց ուժերին վստահ աշակերտները, որոնցից շատերը ուսուցչից աւելի յաջող էին բարձրանում՝ միշտ նոյն քրքիջով ու բացագանչութիւններով։ Ստեղծուած ուրախ մթնոլորտն ակամայ դէպ իրեն էր դրաւում բոլորի ուշադրութիւնը։

Տիգրանը մի քանի բոպէ կանգ առաւ, դիտեց մարդանք անողներին, յետոյ ինքնավստահ քայլերով մօտեցաւ ծառին, երկու անդամ թեւերը ճօճեց օդի մէջ, թեթեւ թռիչքով բռնեց բարակ ճիւղն ու սկսեց դանդաղօրէն բարձրանալ։ Բոլորը նայում էին ուշադրութեամբ։ Ցանկարծ նա ոտքերն ուժեղ թափահարեց ու օդի մէջ մի շրջան կատարելով ցատկեց ճիւղի վրայ, այնպիսի վայելուչ ու գեղեցիկ շարժումով, որ բոլորը միաժամանակ սկսեցին ծափահարել։ Ապա, նոյնը կրկնեց երկրորդ, երրորդ անդամ, առանց յոգնելու, առանց ճիգ գործադրելու։ Յետոյ՝ միշտ ճիւղին կառչած՝ ցոյց տւաւ մարդանքի աւելի բարդ ու դժւարին ձեւեր։

Հեռւում, ծառերի տակ, աւարտողների մի խմբակ, լուրջ երեւոյթ առած, ծանր-ծանր զրուցում էր։ Ոմանք արդէն լուրջ ու մտահոգ արտայայտութեամբ կեանքի

«բովը» գիտցողի փորձառութեամբ, ուրիշները երազով ու հաւատով լեցուած:

— Առանց իդէալի անկարելի է ապրել,— խօսում էր Արմաշը ոգեւորուած — : Ամեն մարդ իդէալի մի ճամբայ պիտի ունենայ:

— Ճիշտ է, Արմաշ, շատ ճիշտ է, բայց ի՞նչպէս: Ահա շուտով մենք կաւարտենք, սակայն, ի՞նչ նոր ճամբաներ կան փուած մեր առջեւ, դեղեցիկ՝ դէպի իդէալը տանող ճամբաներ: Եթէ չհաշուենք մի քանի երջանիկներ, որոնք գնացին եւ պէտք է գնան արտասահման շարունակելու իրենց կրթութիւնը, մնացածներիս համար կեանքը անբովանդակ պիտի դառնայ: Ես աւելի երջանիկ կը լինէի, եթէ չաւարտէի,— ասաց Մամիկոնը յոռետեսութեամբ լցած, Արմաշին նայելով:

— Հրաժեշտ տալով դպրոցին, մեզ համար սկսելու է այլեւս հոգերով լի առօրեան, ուր մեռնում են երազներն ու ձգտումները, շարունակեց Մամիկոնը, — աւարտելուց յետոյ մենք պէտք է պատռենք մեր աչքերի կապոյտ քօղը ու տեսնենք կեանքն իր անճոռնի մերկութեամբ: Երբ ես մտածում եմ մեր ապագայի մասին, մութ ու խաւարի մէջ տարածուած մեր ապագայի մասին, սկսում եմ մեղքանալ մեզ... Մինչ ուրիշ, մեծ ազգերի, երջանիկ ժողովուրդների զաւակներն աւարտելով միջնակարգը, հնարաւորութիւն ունեն շարունակել իրենց կրթութիւնը համալսարաններում, նվիրուել սիրած որեւէ արւեստի եւ վերջն էլ քայլել ընդհանրութեան հետ՝ մտնելով մարդկութեան մէջ, իբր բարձր ու պատրաստի անհատներ: Մենք, դեռ պատանի մեր տարիքի մէջ, չեշտուած ենք ուժեղ անհատականութեամբ, մեզնից իւրաքանչիւրն իր ներքին կեանքն ունի, իր հոգու աշխարհն, իր ուրոյն մտածելակերպն ունի: Եւ սակայն, մեռնում է ամեն ինչ եւ խորտակւում է անհատը:

Նա լռեց ու տխրութեամբ կախեց գլուխը:

— Ու մեռնում են մէկիկ-մէկիկ բոլոր ընդունակութիւնները մեր,— հառաչեց Գուրգէնը:

— Այո՛, այստեղ, հեռաւոր Արեւելքում, դռներ չկան, որ բախես ու բացւեն: Եւ ի՞նչ պիտի լինի մեզնից իւրաքանչիւրի ապագան, եթէ չկարողանանք պատռել շղթան, դուրս գալ, հեռանալ այս քաղաքից... Երջանիկ Բարգէն... Գնալ, հեռանալ նրա պէս... գնալ Եւրոպա կամ Ռուսաստան...

— Չխօսենք Բարգէնի երջանկութեան մասին, ընկերնե՛ր...

Արշալոյսը բարկութեամբ նայեց Սիրուշին:

— Ի՞նչու, ի՞նչու, ասա՛ խնդրեմ: Բարգէնը, այսպէս թէ այնպէս, փարիզ գնաց: Նրա առաջ բացւեցին լայն հնարաւորութիւններ շարունակելու եւ նվիրուելու իր սիրած արւեստին:

— Բարգէնը երջա՞նիկ... շարունակում էր հեգնել Սիրուշը:

— Իսկ մենք, մենք, ի՞նչ պիտի անենք մենք, ու պիտի խամրեն մեր բոլոր երազները, պիտի խամրեն ու մեռնեն,— բորբոքւել էր Արշալոյսը:

— Ձգտող հոգիների մէջ երազները երբեք չեն մեռնում, իսկ կեանքը յաւէտ ձգտումի անծայր մի ճանապարհ է, ասաց Հայկը, ու բոլորը, ակամայ, նայեցին նրան: Բոլորը գիտէին, որ բանաստեղծական այդ հոգին լեցուած էր անհուն սիրով ու ձգտումով, որ կեանքը նրա համար «սքանչելիքներից, դեղեցկութիւններից» հիւսուած սիրուն մի սանդուխք էր, որի վրայից բարձրանում էին մարդիկ, «ձգտող հոգիները», դէպի վե՛ր, դէպի կատարելութիւն:

— Մի՞թէ դու ժխտում ես միջավայրի ազդեցութիւնը:

«բովը» գիտցողի փորձառութեամբ, ուրիշները երազով ու հաւատով լեցուած:

— Առանց իդէալի անկարելի է ապրել,— խօսում էր Արմաշը ոգեւորուած — : Ամեն մարդ իդէալի մի ճամբայ պիտի ունենայ:

— Ճիշտ է, Արմաշ, շատ ճիշտ է, բայց ի՞նչպէս: Ահա շուտով մենք կաւարտենք, սակայն, ի՞նչ նոր ճամբաներ կան փուած մեր առջեւ, դեղեցիկ՝ դէպի իդէալը տանող ճամբաներ: Եթէ չհաշուենք մի քանի երջանիկներ, որոնք գնացին եւ պէտք է գնան արտասահման շարունակելու իրենց կրթութիւնը, մնացածներիս համար կեանքը անբովանդակ պիտի դառնայ: Ես աւելի երջանիկ կը լինէի, եթէ չաւարտէի,— ասաց Մամիկոնը յոռետեսութեամբ լցած, Արմաշին նայելով:

— Հրաժեշտ տալով դպրոցին, մեզ համար սկսելու է այլեւս հոգերով լի առօրեան, ուր մեռնում են երազներն ու ձգտումները, շարունակեց Մամիկոնը, — աւարտելուց յետոյ մենք պէտք է պատռենք մեր աչքերի կապոյտ քօղը ու տեսնենք կեանքն իր անճոռնի մերկութեամբ: Երբ ես մտածում եմ մեր ապագայի մասին, մութ ու խաւարի մէջ տարածուած մեր ապագայի մասին, սկսում եմ մեղքանալ մեզ... Մինչ ուրիշ, մեծ ազգերի, երջանիկ ժողովուրդների զաւակներն աւարտելով միջնակարգը, հնարաւորութիւն ունեն շարունակել իրենց կրթութիւնը համալսարաններում, նվիրուել սիրած որեւէ արւեստի եւ վերջն էլ քայլել ընդհանրութեան հետ՝ մրտնելով մարդկութեան մէջ, իբր բարձր ու պատրաստի անհատներ: Մենք, դեռ պատանի մեր տարիքի մէջ, շեշտուած ենք ուժեղ անհատականութեամբ, մեզնից իւրաքանչիւրն իր ներքին կեանքն ունի, իր հոգու աշխարհն, իր ուրոյն մտածելակերպն ունի: Եւ սակայն, մեռնում է ամեն ինչ եւ խորտակւում է անհատը:

Նա լռեց ու տխրութեամբ կախեց գլուխը:

— Ու մեռնում են մէկիկ-մէկիկ բոլոր ընդունակութիւնները մեր,— հառաչեց Գուրգէնը:

— Այո՛, այստեղ, հեռաւոր Արեւելքում, դռներ չկան, որ բախես ու բացուեն: Եւ ի՞նչ պիտի լինի մեզնից իւրաքանչիւրի ապագան, եթէ չկարողանանք պատռել շղթան, դուրս գալ, հեռանալ այս քաղաքից... Երջանիկ Բարգէն... Գնալ, հեռանալ նրա պէս... գնալ Եւրոպա կամ Ռուսաստան...

— Զխօսենք Բարգէնի երջանկութեան մասին, ընկերնե՛ր...

Արշալոյսը բարկութեամբ նայեց Սիրուշին:

— Ի՞նչու, ի՞նչու, ասա՛ խնդրեմ: Բարգէնը, այսպէս թէ այնպէս, փարիզ գնաց: Նրա առաջ բացուեցին լայն հնարաւորութիւններ շարունակելու եւ նվիրուելու իր սիրած արւեստին:

— Բարգէնը երջա՞նիկ... շարունակում էր հեգնել Սիրուշը:

— Իսկ մենք, մենք, ի՞նչ պիտի անենք մենք, ու պիտի խամրեն մեր բոլոր երազները, պիտի խամրեն ու մեռնեն,— բորբոքուել էր Արշալոյսը:

— Զգտող հոգիների մէջ երազները երբեք չեն մեռնում, իսկ կեանքը յաւէտ ձգտումի անծայր մի ճանապարհ է, ասաց Հայկը, ու բոլորը, ակամայ, նայեցին նրան: Բոլորը գիտէին, որ բանաստեղծական այդ հոգին լեցուած էր անհուն սիրով ու ձգտումով, որ կեանքը նրա համար «սքանչելիքներից, դեղեցկութիւններից» հիւսուած սիրուն մի սանդուխք էր, որի վրայից բարձրանում էին մարդիկ, «ձգտող հոգիները», դէպի վե՛ր, դէպի կատարելութիւն:

— Մի՞թէ դու ժխտում ես միջավայրի ազդեցութիւնը:

— Ի հարկէ ո՛չ, սակայն, պէտք է ճեղքել, չպէտք է ենթարկուել։

— Առօրեան քեզ կը ստիպէ ենթարկուել, Հա՛յկ։

— Շատ ես յոռետես, Մամիկո՛ն։ Ինձ թւում է, որ Հայկն իրաւացի է, ձգտող հոգիների համար երազները վերջ չունին, ու նաեւ կեանքն անճոռնի ոչինչ ունի իր մէջ։ Արմաշը շատ ճիշտ նկատեց. պէտք է ծառայել որեւէ իդէալի։

— Այո՛, բայց կարեւորն այն է, Սիրուշ, որ աշակերտական նստարանների վրայ մենք գուրգուրում, վայելում ենք գաղափարներ, բայց յետոյ, երբ դէմ դիմաց ենք գալիս կեանքին ու իրականութեան, իսկոյն ամեն ինչ ցնդումէ,— Մամիկոնի փոխարէն խօսեց Գուրգէնը։

— Այդ էլ գաղափարիդ զօրութիւնից է կախուած,— ծիծաղեց Արմաշը։

— Ոչ այնչափ։ Տեսէք օրինակ մեզնից առաջ աւարտածները։ Ի՞նչ են անում նրանք այսօր։ Տանը նստած գիրք են կարդում միայն։ Մի քանի տարուց յետոյ այդ էլ չեն կարդայ, ինչպէս ուրիշները։ Ի՞նչի մէջ, ի՞նչ ասպարէզում ցոյց տուին իրենց։ Անորոշ ծրագիրներ են մըշակում միայն, որովհետեւ ուրիշ անելիք չկայ. կարծես թէ ճակատագրական մի բան կայ կախուած մեր բոլորի վրայ։

— Մեր կեանքի ընդհանուր պատկերն է այդ։

— Բայց ի՞նչու։

— Որովհետեւ ասպարէզ չկայ, մնայուն, վերելքների հնարաւորութիւններով լի ասպարէզի չգոյութիւնը կոտրում է մեր թեւերը։

Բոլորը գլուխները կախում են ու լռում։

— Ունենալ ասպարէզ, կայուն, մնայուն վիճակ... ինչպէս ուրիշ ազգերի երիտասարդներն ունին։

— Եւ ծառայել, ծառայել իդէալի, ձգտել մեծ ու բարձր մի իդէալի։

— Ձգտել մի բանի հոգով ու սրտով միայն, նախօրօք գիտնալով, որ չպիտի հասնես, նշանակում է սաւառնել երեւակայութեան առագաստով դէպի անորոշ ուղիներ, այսինքն սպառուել։

— Հոգուն եւ սրտին պէտք է միացնել եւ միտքը՝ առողջ, զարգացած, մշակուած միտքը,— ասաց Տիգրանը խելացի ու լուրջ դատողի շեշտով։

— Բայց ամենից առաջ պէտք է պայքարել ու ապրել յանուն այդ պայքարի, վճռական ձեւով արտասանեց Արմաշը։

Հայկը նորից տարածուեց խոտերի վրայ։ Սիրուշը գլուխը դրեց Արշալոյսի ծնկին ու նոյնպէս փռուեց խոտերի մէջ։ Շողերի աչքերը Տիգրանից չէին հեռանում։ Մամիկոնն անհանգիստ էր տակայն։ Նա փունջ-փունջ պոկում էր խոտերը ու ջղային շարժումով այս ու այն կողմ նետում։ Պարզ էր, որ հոգին հանգիստ չէր, ներսում ինչ որ բան էր կատարւում։

— Սիրուշը ինձ չհասկացաւ, ընկերնե՛ր, երբ ես խօսում եմ կեանքի մերկութեան մասին, ի նկատի ունեմ հոգու վիճակը։ Կեանքի առօրեայ հոգսերը, նիւթի յետեւից ընկնելու անհրաժեշտ պահանջը, ակամայ պիտի ճնշէ մարդու ներքին կեանքը եւ նա կը կորցնէ իր հոգու ոյժը։ Ինձ թւում է, որ «կապոյտ քօղից» այն կողմ այլ են մարդկային փոխյարաբերութիւնները։ Ինձ թւում է «կապոյտ քօղից» այն կողմ հոգին կը կորցնէ իր երբեմնի մաքրութիւնը եւ ձեր ատած բարձրութիւններին հասնելու ընդունակութիւնները։

Ամենքը լուրջ ու կենտրոնացած լսում էին Մամիկոնին, բայց յանկարծ թեթեւ դեփիւռը, բուրմունքով լեցուն, եկաւ ու շոյեց նրանց դէմքերը...

Կապոյտ սարսուռը պաչարեց բոլորին ու դարունը հնչեցրեց իր անսպառ, իր մշտական մեղեդին...

— Կեանքի գաղտնիքը սիրոյ մէջ է... Սէրն է գեղեցկութիւնն ու իդէալը կեանքի,—գոչեց Հայկը՝ հարբած ղեփիւռի բուրմունքից, գլուխը խոտերի մէջ մխրճելով ու ագահութեամբ ծծելով բոյրը հողի ու խոտի:— Սիրել ամե՛ն ինչ, երկինք, երկիր, հող, ջուր, սիրել մարդկանց, չարին ու բարին ու ամեն բան յաւիտեան կը ծածկէ կապոյտ քօղով, Մամիկոն: Սէ՛րը հիմքն է կեանքի:

Ու բոլորի աչքերից բոցեր ցայտեցին, երակների մէջ արիւնը յորդեց, դէմքերը կարմրեցին:

Գարունն էր խօսում...

Կապուտակ սիրուն, ու դեռ շատ կոկոն,
Որպէս աչուկներ բացուում են նրանք
Ու անցորդները նայում են նրա՛նց,
Մանիշակներին, լուռ ու երազուն,
Ու ժպտում կամաց...

Դեռ վաղ գարնանն էր, մի ցուրտ առաւօտ,
Այրող արեւի շողը չտեսած,
Սուս թառամեցին քամու համբոյրից
Դեռ այնքա՜ն կոկոն՝ ծաղիկ չը դառած...

Ափսոսանք նրանց:

Ու յիշում եմ ես, ցուրտ լուսաբացին
Ուզեցի քեզ տալ համբոյրն առաջին,
Բայց շրթունքներս սառած մնացին
Ու լացի կամաց... —

Ափսոսանք նրանց:

Արտասանեց Հայկը, աչքերը երկնքին յառած ու թախծոտ ձայնով:

«Իդէալներից ամենագեղեցիկը սէրն է», մտածեց Շողերը՝ երկար մի խոտի ծայրով շոյելով Սիրուշի այտը:

Աւարտական դասարանը վճռել էր այդ օրը լաւ ուրախանալ: Նրանց սիրոցը փուած էր մի քիչ հեռու ընդհանուր սիրոցներից եւ խոտերի վրայ, «սեղանի» դլխին նստել էր տեսուչը:

— Ֆո վերջին շարադրութիւնը մի կատարեալ գեղարուեստական գործ էր, Տիդրան, դիմեց հայոց լեզուի ուսուցիչը Տիդրանին, որ կռացած կանաչեղէնների կապոցի վրայ, աշխատում էր, առանց կտրելու, բանալ ամրացած հանգոյցը: — Ուրախ եմ, շա՜տ ուրախ եմ,— եւ ծերունի ուսուցիչը գոհունակութեամբ չփեց իր ճերմակած փոքրիկ մօրուքը եւ պատանիներին յատուկ՝ յստակ ու երազուն աչքերով նայեց Տիդրանին:

Տիդրանը համեստօրէն կախեց գլուխը:

Ուսուցիչը դարձաւ տեսչին ու մի քանի գովեստի խօսքեր ուղղելով Տիդրանի հասցէին, աւելացրեց ցած ձայնով.

— Պէ՛տք է երեխաներին մի քանի խօսք ասել:

Տեսուչը ժպտաց ու հայրական սիրով լի աչքերը դարձրեց աշակերտների վրայ:

— Կեցցէ՛ պարոն տեսուչը, կեցցէ՛ պարոն տեսուչը, թնդաց յանկարծ զարթ ու խանդավառ ձայնը պատանիների:

Տեսուչը յուզուած նշան արաւ, որ լռեն:

Լուռ նայեց նա ակնածանքով իրեն սպասող կայծկլտուն աչքերին, հազաց, գլուխը կախեց, յետոյ ձեռքերը ամուր սեղմեց սրտին ու թաւ ձայնով սկսեց.

— Ես սիրում եմ ձեզ: Սիրել եմ ձեզ բոլորիդ:

Տարիներ շարունակ հարազատ հօր պէս տանջւել եմ ամեն անգամ, երբ յանկարծ մէկն ու մէկիդ արարմունքի մէջ կեղծիք կամ սուտ եմ նկատել. պարծանք ու հպարտութիւն եմ զգացել, երբ դուք նայել էք ինձ ու ամենքին յստակ աչքերով ու մաքուր սրտով: Այսպէս է եղել միշտ, այսպէս կուզեմ լինի եւ ապագայում. միշտ անկեղծ ու ճշմարիտ, միշտ զեղեցիկ հոգիով, մաքուր ու անբիծ կուզեմ տեսնել ձեզ, լսել ձեր մասին ու պարծենալ ձեզնով:

Նա սկսեց մէկիկ-մէկիկ նայել իւրաքանչիւրի դէմքին, կարծես իր խօսքերի չօշափելի ու ցանկալի գրաւականը փնտռելիս լինէր: Նրա աչքերը լեցւած էին անհուն բարութեամբ:

— Կեանքի մէջ ամեն ինչ կարող են խլել ձեզնից, բայց ոչ ոք չի կարող խլել ձեր հոգին, ձեր անձը, ձեր ինքնութիւնը: Զանացէ՛ք միշտ բարձր, միշտ վեր պահել ձեր անհատը: Այսուհետեւ դուք կը կանգնէք մենակ կեանքի սեմին ու ձեր առջեւ կը բացւեն բազմաթիւ ուղիներ: Սիրեցէ՛ք գիրքն ու արուեստը, սիրեցէ՛ք գիտութիւնը: Աշխատեցէք հասկանալ մեծ մարդկանց ու հետեւել նրանց փառաւոր օրինակին, բայց չմոռանաք երբեք մեր դպրոցի նշանաբանը — միշտ բաց ճակատով, միշտ չիտակ աչքերով նայել կեանքին:

Նա լռեց ու քաղցր ժպիտը ցոլաց աչքերի մէջ:

Դեռ հազիւ էր լռել կեցցէների տարափը, երբ Արմաշը ոգեւորւած վերցրեց իր թառը իսկ Մինասը թիթեղեայ մատուցարանը թմբուկ դարձրած՝ միացաւ նրան:

Յետոյ սկսեցին մեներգներ, խմբական երգեր, կատակ ու ծիծաղ:

Միւս դասարաններն արդէն վերջացրել էին իրենց ճաշը եւ այս ու այն կողմ վազվզելով ծաղիկներ էին հաւաքում օրւայ թագուհուն զարդարելու համար:— Կարմիր կակաչների փնջեր, կապուտակ գանգակածաղիկներ, հիրիկներ եւ անմոռուկներ...

Իսկ օրւայ թագուհին Անուշն էր:

Նստել էր նա խոտերի վառման թաւիշի մէջ, հաւատացած լրջութեամբ, ծաղիկների փնջերով զարդարւած: Երեխաները գնում էին, դալիս, գլխին ծաղկեպսակներ էին դնում, վրան վարդեր թափում:

Թիթեռնիկների նման դառնում էին նրանք Անուշի շուրջը, երգում էին, թռչկոտում ու մերթ ընդ մերթ համբուրում նրա վառւած թշերը:

Եւ Անուշը երազի մէջ էր...

Նրան թւում էր, որ ինքը ոչ այլ ինչ էր, բայց եթէ երկնքի էն Արեւ աղջիկը, յանկարծակի վայր ընկած կառաչ այդ մարդաբնակ վրայ... որ կապոյտը ճեղքել էր իր կուրծքը, վար իջեցրել ոսկեմոյն մի սանդուխք ու այժմ մի ճիգ, պարզ մի ցանկութիւն էր հարկաւոր միայն ու նա թեթեւ ու սահուն կը բարձրանար վե՛ր, վե՛ր, ոսկեմոյն այդ սանդուխքներով... Կը սաւառնէր այնտեղ թռչունների երգերի հետ, թիթեռնիկների դունագեղ թեւերի վրայ կը նստէր, ծառերի էն բարձր ծայրերին կը թառէր...

Ինքն էր թագուհին դարնանային այդ օրւայ...

Նրա հոգին նոյնացել, խառնւել էր ծաղիկների բոյրի ու գոյների բոսորի հետ...

Բայց օրը երազի պէս թռաւ: Ու տակաւին չյագեցած երգ ու պարից, արեւը շեղակի իր ճառագայթները քաշեց դէպի ծառերի կատարները: Օդը գովանալ սկսեց ու ջրվէժի շառաչի ձայնը մելամաղձոտ մի թրթիռ աւելացրեց իր երաժշտութեան մէջ:

Շուտով այդու կանաչութիւնը կորցրեց իր գարթ երանգը, ծաղիկները կամացուկ կծկւեցին ու դադարեցին պատմել իրենց սիրուն պատմութիւնները: Պոկոտւած

Տարիներ շարունակ հարազատ հօր պէս տանջւել եմ ամեն անգամ, երբ յանկարծ մէկն ու մէկիդ արարմունքի մէջ կեղծիք կամ սուտ եմ նկատել. պարծանք ու հպարտութիւն եմ զգացել, երբ դուք նայել էք ինձ ու ամենքին յստակ աչքերով ու մաքուր սրտով: Այսպէս է եղել միշտ, այսպէս կուզեմ լինի եւ ապագայում. միշտ անկեղծ ու ճշմարիտ, միշտ դեղեցիկ հոգիով, մաքուր ու անբիծ կուզեմ տեսնել ձեզ, լսել ձեր մասին ու պարծենալ ձեզնով:

Նա սկսեց մէկիկ-մէկիկ նայել իւրաքանչիւրի դէմքին, կարծես իր խօսքերի չօշափելի ու ցանկալի գրաւականը փնտռելիս լինէր: Նրա աչքերը լեցուած էին անհուն բարութեամբ:

— Կեանքի մէջ ամեն ինչ կարող են խլել ձեզնից, բայց ոչ ոք չի կարող խլել ձեր հոգին, ձեր անձը, ձեր ինքնութիւնը: Ջանացէ՛ք միշտ բարձր, միշտ վեր պահել ձեր անհատը: Այսուհետեւ դուք կը կանգնէք մենակ կեանքի սեմին ու ձեր առջեւ կը բացուեն բազմաթիւ ուղիներ: Սիրեցէ՛ք գիրքն ու արուեստը, սիրեցէ՛ք գիտութիւնը: Աշխատեցէք հասկանալ մեծ մարդկանց ու հետեւել նրանց փառաւոր օրինակին, բայց չմոռանաք երբեք մեր դպրոցի նշանաբանը — միշտ բաց ճակատով, միշտ շիտակ աչքերով նայել կեանքին:

Նա լռեց ու քաղցր ժպիտը ցոլաց աչքերի մէջ:

Դեռ հաղիւ էր լռել կեցցէների տարափը, երբ Արմաշը ոգեւորուած վերցրեց իր թառը խակ Մինասը թիթեղեայ մատուցարանը թմբուկ դարձրած՝ միացաւ նրան:

Յետոյ սկսեցին մեներգներ, խմբական երգեր, կատակ ու ծիծաղ:

Միւս դասարաններն արդէն վերջացրել էին իրենց ճաշը եւ այս ու այն կողմ վազվզելով ծաղիկներ էին հաւաքում օրւայ թագուհուն դարդարելու համար:— Կարմիր կակաչների փնջեր, կապուտակ զանգակածաղիկներ, հիրիկներ եւ անմոռուկներ...

Իսկ օրւայ թագուհին Անուշն էր:

Նստել էր նա խոտերի վառման թաւիշի մէջ, հաւատացած լրջութեամբ, ծաղիկների փնջերով զարդարուած: Երեխաները գնում էին, դալիս, գլխին ծաղկեպսակներ էին դնում, վրան վարդեր թափում:

Թիթեռնիկների նման դառնում էին նրանք Անուշի շուրջը, երգում էին, թռչկոտում ու մերթ ընդ մերթ համբուրում նրա վառուած թշիկները:

Եւ Անուշը երազի մէջ էր...

Նրան թւում էր, որ ինքը ոչ այլ ինչ էր, բայց եթէ երկնքի էն Արեւ աղջիկը, յանկարծակի վայր ընկած կառնաչ այդ մարդագետնի վրայ... որ կապոյտը ճեղքել էր իր կուրծքը, վար իջեցրել ոսկեմոյն մի սանդուխք ու այժմ մի ճիգ, պարզ մի ցանկութիւն էր հարկաւոր միայն ու նա թեթեւ ու սահուն կը բարձրանար վե՛ր, վե՛ր, ոսկեմոյն այդ սանդուխքներով... Կը սաւառնէր այնտեղ թռչունների երգերի հետ, թիթեռնիկների դունագեղ թեւերի վրայ կը նստէր, ծառերի էն բարձր ծայրերին կը թառէր...

Ինքն էր թագուհին դարնանային այդ օրւայ...

Նրա հոգին նոյնացել, խառնւել էր ծաղիկների բոյրի ու դոյների բոսորի հետ...

Բայց օրը երազի պէս թռաւ: Ու տակաւին չյագեցած երգ ու պարից, արեւը շեղակի իր ճառագայթները քաշեց դէպի ծառերի կատարները: Օդը գովանալ սկսեց ու ջրվէժի շառաչի ձայնը մելամաղձոտ մի թրթիռ աւելացրեց իր երաժշտութեան մէջ:

Շուտով այդու կանաչութիւնը կորցրեց իր գարթ երանգը, ծաղիկները կամացուկ կծկւեցին ու դադարեցին պատմել իրենց սիրուն պատմութիւնները: Պոկոտուած

ծաղիկները տխուր ու տրտում թափթփուեցին այս ու այն կողմ, անզօր իրենց երբեմնի փառքը պատմելու մէկին: Թղթի կտորտանք, հացի փշրանք մնաց միայն այդու մէջ թափթփուած:

Ու չանցած կէս ժամ այդին մնաց մենակ ու լքուած: Ծառերն օրօրեցին իրենց ճիւղերը, իբր մնաս բարեւի նշան ու հեռուից, վերջին անգամ, լսեց ջրի կարկաչը:

Իրիկունն իջել էր եւ քաղաքի փողոցների վրայ:

Տեղ-տեղ, երկար ու բարակ սիւների դլխին, խանութների մէջ արդէն վառուում էին քարիւղի ճրագներ, որ իրիկնամուտի արծաթ լուսաւորութեան մէջ, ցայտուն, դեղին լոյսով, պսպղում էին անցորդների սրտերի մէջ վէտ-վէտացող անորոշ քաղցր զգացումի պէս՝ հանդարտ ու բնական ձեւով երջանկութիւնը ըմբռնող, խաղաղ խառնուածքով մարդկանց շրթունքների վրայ դողացող ժպիտի նման:

Ծառուղին կենդանութիւն էր ստացել:

Բոլոր խանութները լեցուած էին յաճախորդներով: Մօտակայ փողոցից լսւում էր երկու կոյրերի աղիողորմ կանչը, որ իրար բռնած, փայտով դետինը շօշափելով, քայլում էին ու ողորմութիւն խնդրում.

— Ալլա՜հ, օգնի՛ր...

Մարդիկ շտապում էին. ազանի ժամը մօտենում էր: Գիշերը պատրաստուում էր կախել իր մթագնած վէշերը եւ իւրաքանչիւր ընտանիքի, իւրաքանչիւր տան վրայ զատ-զատ ամպհովանիներ իջեցնելով՝ պոկել մարդն ընդհանուրից, քաշել իր պատեանի մէջ — սենեակում, կիսախաւար անկիւնի մի բազմոցի վրայ, բակի ծառերի տակ՝ լուսնի լուսով պարուրուած, տանիքի վրայ, երկնքին մօտիկ եւ թողնել նրան իր ներքին կեանքի հետ, թողնել նրան իր հետ, իր իսկական անձի հետ մեն-մենակ:

Երկինքն սպասողական վիճակի մէջ էր: Աստղերը դեռ չէին երեւում, բայց մութ քող էր փռուել արդէն կամարի վրայ ու ճերմակ լուսինն օգտուելով իր մենակութիւնից, փոքրիկ մի ամպի հետ անվերջանալի խաղ էր սկսել՝ ներքին, թագուն հուրը սպառել ցանկացող սիրահար կնոջ պէս...

Մինչեւ որ աստղերը դուրս գային...

Տների տափարակ տանիքների վրայ դիշերային երգչների ստուերները կամաց-կամաց սկսել էին երերալ ու փաթաթուել ծխնելոյզներին իջնել վար՝ լուսամուտների վրայ, կախուել անձրեւների ջրերի համար պատրաստուած խողովակներից, կառչել տան ճակատը զարդարող կարմիր աղիւսներին ու կամաց մի երդ սլսլացնել ծառերի կատարների մէջ:

Հեռուից, մի թէյատան խորքից, արեւելեան երաժշտութեան ձայն էր գալիս ու ապակէ լուսամուտների ետեւ նստած մարդիկ՝ ունայնութիւնը բռնող, անորոշը խուզարկող, թափանցող հայեացքներով, վարդաջրով համեմած թէյի բաժակները ձեռքերին, լուռ ու մունջ խմում էին ու նայում առաստաղին: Խոշոր աչքերով, դունատ ու դեղնած դէմքով դէրվիշը, սեւ երկար ծածկոցը ուսերն ի վար իջեցրած, գլուխը բարձր բռնած ու աչքերը ներշնչուած մարգարէի աչքերի նման՝ կոպերի վերի մասի մէջ մտցրած, ինքնարուխ երգեր էր յօրինում ու դժբախտ սէրերի ողբը հիւսում: Նա կանգնած էր թէյարանից ոչ հեռու, նեղ մայթի վրայ, գնում էր, գալիս, ձեռքով զանազան գեղեցիկ շարժումներ անում, հիանում, զմայլւում էր իր նկարագրած տղայի աչքերով, հասակով ու իրանով, երկար սրունքներով ու ջէյրանի

գլխի նման սիրուն գլխով՝ իր հերոսուհու այտի մանանեխի հատիկի պէս սիրտ այրող ու կծող սեւ խալով, կարմիր, ծփծփուն, խելք մաշող մազերով, վառ աչքերով, թունոտ նետերի պէս կեռ յօնքերով, որ երբեմն այնպէս մահաբեր են լինում:

Եւ սակայն, ամեն ինչ ունայնութիւն, ունայնութիւն է··· — Ֆանի՛, Ֆանի՛,— կանչում է երդիչը յուսահատ ու դողացող ձայնով ու յոգնած գլուխը յենում է պատին: Անցորդները մանր դրամ են նետում գետնին փռուած նրա թաշկինակի վրայ:

Զբօսանքից վերադարձող աշակերտները մոտն քաղաք այն ժամանակ, երբ մգկիթի գլխից լսեց մոլլայի ազանի ձայնը, մերթ կլկլացող, կոկորդի մէջ մի քանի անգամ ոլորուող ելեւէջներով, մերթ ձգւած ու անվերջանալի կանչով, մերթ պատմող ու խօսուն, մերթ յամր ու անզօր:

Թւում էր, թէ ձայնը ոչ թէ երկրից էր բարձրանում դէպի Անտեսանելին ու Ամենակալը, այլ երկնքից էր իջնում երկրի վրայ՝ թանձր, ծանր ու թախծալի: Սրբում է մի վայրկեան ցերեկւայ մէջ անցկացրած դարթ ժամերի յիշողութիւնը, անտարբեր ու միամիտ տպաւորութիւնները ու մի պահ մերկացած դիտակցութիւնը դէմ առ դէմ է կանգնում տիեզերքի լինելիութեան առջեւ: Բոլորի դէմքին առեղծւածը փռում է բարակ ու նրբին մի քող:

Աշակերտները հերթով մէկիկ-մէկիկ բաժանւում էին խմբերից, մնաս բարեւ ասում ուսուցիչներին ու ցրւում իրենց տները:

Տիգրանն Անուշի ձեռքից բռնած, Շողերի եւ Արմաշի հետ կատակելով առաջ էր ընկել:

Երբ հասան ծառուղուն, Վարդենին վճռեց չեղել ճամբան, մտնել տպարան եւ հայրիկի հետ միասին տուն վերադառնալ: Նա հեռից ձեռքով նշաններ արաւ Տիգրանին եւ հասկացնելով նրան իր ցանկութիւնը, ուրախուրախ սեղմեց ընկերուհիների ձեռքերը ու ժպիտը աչքերի մէջ եւ շրթունքների վրայ պահած, բաժանւեց նրանցից:

«Փարիզ» տպարանի լոյսերն արդէն մարած էին եւ Նուբարը կիսով չափ փակել էր փայտեայ փեղկերը:

Երբ Վարդենին մտաւ դրասենեակ, դրասենեակը դատարկ էր: Կանգնեց ու մինչ դարմացած աչ ու ձախ էր նայում, յանկարծ լսեց Նուբարի ձայնը, որ ետեւի սենեակի կիսախաւարի միջից էր գալիս:

Նուբարը ինչ որ բաներ էր ասում···

Պատասխանող չկար սակայն:

Ո՞վ կարող էր լինել··· Հայրիկը ինքն իրեն էր խօսում կարծես,— մտածեց Վարդենին վախեցած ու մօտեցաւ դռան:

Դուռը կիսաբաց էր···

Այնտեղ, ետեւի սենեակի կիսախաւարի մէջ, բազմոցի վրայ փռւած էր մի մարդ ու չէր շարժւում··· Նուբարը կռացած նրա վրայ, աշխատում էր արթնացնել նրան.

— Վեր կաց, աղա Գրիգո՛ր, վեր կաց: Տպարանը փակելու ժամն է արդէն: Խեղճ մարդ··· խե՛ղճ, թշւառ թշւառ մարդ···

Աղա Գրիգորը կարծես լսեց վերջապէս Նուբարի այդ կիսաղերսական, կիսահրամայական ձայնը ու գլուխը բարձրացրեց:

Յանկարծ սթափւածի պէս նա նստեց բազմոցին, արագութեամբ շտկեց հագուստն ու մազերը, վերցրեց

գլխարկը, հագնեալ «մնաս բարեւ» նետեց Նուբարին եւ օրօրուելով դիմեց դէպի դուռը:

Վարդենին անմիջապէս յետ-յետ գնաց... Ճանաչել էր...

Բաբդէնի հայրն էր... Աղա Գրիգորը... Բաբդէնն իր մօր ու քրոջ հետ միասին երէկ առաւօտ հեռացել էր քաղաքից՝ Փարիզ գնալու մտադրութեամբ եւ աղա Գրիգորը մնացել էր բոլորովին մենակ:

Բայց մէկ էլ յանկարծ աղա Գրիգորը վերադարձաւ...մօտեցաւ սենեակի մէջտեղում դեռ անշարժ կանգնած Նուբարին եւ դողդողացող ձեռքը մեկնեց նրան.

— Շնորհակալ եմ, Նուբար... շնորհակալ եմ քեզնից...

Աղա Գրիգորը հազիւ էր զսպում իր յուզմունքը:

— Պէտք չկայ, պէտք չկայ, աղա Գրիգոր... Ես ոչինչ չեմ արել քեզ համար... վրայ բերաւ անմիջապէս Նուբարը սաստիկ յուզուած ձայնով եւ ամուր սեղմեց իրեն մեկնած ձեռքը:

— Շնորհակալ եմ քեզնից... Քո մարդկային վերաբերմունքի համար, Նուբար: Գիտեմ, ես ինքս մարդ չեմ այլեւս... այլ մի կենդանի... մի անասուն... Յանկարծ, վայրկեանի արագութեամբ աղա Գրիգորը կռացաւ ու համբուրեց Նուբարի ձեռքը:

Նուբարը ցնցուեց:

Նա փորձեց բռնել աղա Գրիգորին, խօսել նրա հետ, լաւ բաներ ասել նրան, յուսադրել... Բայց աղա Գրիգորը վայրկենապէս հրեց դուռը ու շտապ նետուեց փողոց:

Մի քանի րոպէ Նուբարը մնաց կանգնած իր տեղում, առանց ուշադրութիւն դարձնելու դռների առաջ շարք կանգնած Վարդենուն: Նրա դէմքն այնպիսի վիշտ ու տխրութիւն էր արտայայտում, որ Վարդենին չհամարձակուեց մի բառ անգամ արտասանել:

Նրանք լուռ դուրս եկան տպարանից: Նուբարը լուռ իջեցրեց երկաթէ ճողերը, ամրացրեց փականքները եւ առանց մի բառ փոխանակելու, հայր ու աղջիկ ուղեւորուեցին դէպի տուն:

Ճանապարհին Նուբարը տխուր ու մտահոգ մնաց:

Վարդենին առաջին անգամն էր իր հօրն այդպէս տեսնում ու համոզուած էր, որ նրա եւ աղա Գրիգորի միջեւ տխուր մի դէպք էր պատահել:

Ու Վարդենու հոգին տխրեց, սաստիկ տխրեց: Ի՜նչպիսի ուրախութեամբ կը նետուէր նա հօր վրայ, կը գըրկէր, կը համբուրէր նրան, կը խնդրէր, կաղաչէր, որ պատմէ իրեն եղելութիւնը...

Նուբարը քայլերն արագացրեց, առանց ուրիշներին նայելու, եւ նրանք շուտով տուն հասան:

Տուն հասան եւ այն ինչ որ տեսաւ Վարդենին ոչ միայն զարմացրեց, այլ եւ ապշեցրեց նրան:— Նուբարը, քիչ առաջ այնպէս տխուր ու մտածկոտ Նուբարը, յանկարծ այլափոխուեց... Զւարթ ծիծաղով իջաւ նա աստիճաններից ու կատակներ անելով մտաւ սենեակ:

Ճրագի լոյսի տակ Վարդենին տարակուսած նայեց հօր դէմքին, բայց ոչինչ չգտաւ անբնական ու շինծու: Նուբարը ամենօրեայ բարի ու ժպտուն հայրիկն էր, որ տուն վերադառնալով իր հետ կեանք եւ ուրախութիւն էր մտցնում ամենքի սրտի մէջ:

Նուբարը մօտեցաւ, համբուրեց կնոջը, ապա կռացաւ, ոտքերին փաթաթուած Անուշին դիրկն առաւ ու կամացուկ նրա ականջին փսփսաց նոր բերած խաղալիկների մասին, յետոյ կատակեց Բեհեղ տատի հետ ու մօտեցաւ ընթրիքի սեղանին:

Ու տան մէջ ստեղծուեց ամենօրեայ ջերմ եւ ուրախ մթնոլորտը:

Վարդենու հոգու մէջ, սակայն, սեւ մի բիծ ընկաւ:

◆

Այն ժամանակ, երբ առաւօտ կանուխ Գրիգորիյ Եւանգուլիչը, անձնատուր իր մտածմունքներին, յարդեայ գլխարկը թեւի տակ, անքուն աչքերով հետեւում էր աշակերտներին, յանկարծ նրա ուշադրութիւնը գրաւեցին երկու ստուերներ...

Գրիգորիյ Եւանգուլիչը կանգ առաւ ու սկսեց դիտել: Այո՛, նրանք էին... Դէպի իրեն էին գալիս արդէ՞օք... Սակայն նրանք շարժւում էին չատ դանդաղ...

« Մօտենալ, թէ չմօտենալ » — մտածեց Գրիգորիյ Եւանգուլիչը ու շարունակեց կանգնած մնալ իր տեղում: Դարձաւ, նայեց հեռացող աշակերտներին, հեռից եկող երկու ստուերներին... Գլխարկը աջ թեւի տակից տեղափոխեց ձախ թեւի տակ, ոտքն առաջ նետեց ու յենւեց վրան ու վերջապէս քայլերն ուղղեց դէպի երկու եկւորները:

— Գրիգորիյ Եւանգուլի՛չ... Այ, այ, այ... գիւտ արածի պէս բղաւեց աղա Գրիգորը:— Գրիգորիյ Եւանգուլիչ... Դո՞ւք, այս ժամին... փողոցում... քաղաքի ծայրին... — Եւ աղա Գրիգորը սկսեց բարձրաձայն ծիծաղել, կարմրած աչքերը չռելով նրա վրայ: — Ձէ՞ր սխալւում արդեօք...

— Երեւի դուք էլ... էխ, Գրիգորիյ Եւանգուլիչ, ուրեմն դո՞ւ էլ...

Գրիգորիյ Եւանգուլիչը նայեց աղա Գրիգորին, նրա կարմրած եւ ուռած դէմքին, նրա փոչոտ, հնամաշ հագուստներին, ծուած օձիքին... Յետոյ աչքերը գցեց նրա կողքին օրօրւող Բագրատին, որ հազիւ էր պահում հաւասարակշռութիւնը, վայր չընկնելու համար...

— Ճանաչում ես սրան, Գրիգորիյ Եւանգուլիչ...

այնպէս չէ՞... Սա այն միակ մարդն է, որ հասկանում է ինձ: Ես ինչ որ ասում եմ, հասկանում է... Մինչդեռ ուրիշները, մինչդեռ դու, Գրիգորիյ Եւանգուլիչ, դու չես հասկանում ինձ, կշտամբում ես, կարծես թէ ես իսկապէս ինչ որ յանցաւորի մէկն եմ:

Բագրատը պիշ-պիշ նայեց Գրիգորիյ Եւանգուլիչին, կոպերը հազիւ հազ բանալով եւ ձեռքերի շարժումով աշխատեց հաստատել աղա Գրիգորի ասածները:

— Գնա՛նք տուն, աղա Գրիգո՛ր, գնանք տուն, պառկէք հանգստացէք, փորձեց համոզել Գրիգորիյ Եւանգուլիչը:

— Ո՛չ, ո՛չ, չգնանք տուն, չգնանք տուն... այլ նստենք այստեղ, Գրիգորիյ Եւանգուլիչ... Նստենք ա՛յ, այս քարի վրայ ու խօսենք... Առաջ ես, իմ կողքին դու: Ա՛յ, այստեղ: — Նա քաշեց Գրիգորիյ Եւանգուլիչի թեւից եւ նստեցրեց իր կողքին:— Յետոյ Բագրատը... Ու թեւը գցեց Գրիգորիյ Եւանգուլիչի ուսին: — Գրիչա՛, գոլուբչիկ... ես ուզում եմ այսօր քեզ պատմել իմ կեանքը... Նրանք գնացին: Երեքն էլ գնացին, Գրիչա... Ես նրանց համար ամեն ինչ արի, հիմա թող գնան... Գնան աշխարհից աշխարհ... Ապրեն ինչպէս որ կուզեն... չէ՞, Գրիչա... Ասա՛, գոլուբչիկ, ասա՛...

Արեւն արդէն սկսել էր բարձրանալ, բայց փողոցի անց ու դարձը դեռ չէր սկսել:

— Գնանք տուն, աղա Գրիգոր:

— Ես ուզում եմ քեզ իմ կեանքը պատմել, Գրիչա...

— Բայց ի՞նչու այստեղ, աղա Գրիգոր, ինչո՛ւ այստեղ: Գնանք տուն, հանգստացէք, յետոյ կը պատմէք, մի ուրիշ անգամ կը պատմէք:

— Ո՛չ, ո՛չ... հիմա, երբ ես այսպէս եմ, ուրիշ ժամանակ չեմ կարող պատմել, չեմ կարող... Ես ուրիշ

ժամանակ կեղծ ակնոցով եմ, Գրիշա... Կեղծ ակնոցով:

Գրիգոր աղան անգիտանում էր, որ իր կեանքի ողբերգութիւնը ծանօթ էր քաղաքի բոլոր բնակիչներին, բոլոր բարեկամներին, որոնց յարգանքը կամաց-կամաց ծաղրանքի էր վերածւել արդէն:

— Ղեկը կորցրած նաւ է դարձել աղա Գրիգորը, ասում էին շատերը, քիթն ուռել բիբարի պէս, աչքերը տոդել են:

— Ասում են... Ես ի՞նչ իմանամ, ասում են էլի՛, երբ թէ դիշերները մօտից ուրիշ-ուրիշ կնիկներ են դուրս գալիս...

— Ասում են, որ իր իսկական կնիկը հենց դրա համար ա որ... Մէկ էլ որ աղան էն տիկին Սաթենիկի...

— Մէկը ձեզանից չի հարցնում, ձեր ի՞նչ գործն ա որ...

— Ես բան չեմ ասում... Ասում են... Դէ՛ կասեն էլի՛:

Բայց Գրիգորիյ Եւանդուլիչը այն հաղւագիւտ մարդկանցից էր, որ պահել էր իր հոդու մէջ յարգանք եւ սէր դէպի աղա Գրիգորը: Նա յիշում էր նրա հարուստ կահաւորւած տունը՝ առատ ու հիւրընկալ, ինքը՝ աղա Գրիգորը, պետական պաշտօնեայ... Եւ այդ բոլորից յետոյ, այսպիսի անկում: Մոլութի՞ւնն էր պատճառը, թէ պատճառները սրան այսպէս մոլի դարձրին,— մտածում էր Գրիգորիյ Եւանդուլիչը, աշխատելով ազատւել նրա թեւից, որ այնպէս ծանր էր գալիս իր ուսին:

Բագրատը, որ մինչ այդ լուռ նստած էր Գրիգորիյ Եւանդուլիչի կողքին, աչքի տակով նայում էր նրան, յանկարծ ոտքի կանգնեց, թեւերը բարձրացրեց ու բարձր ձայնով սկսեց երգել պարի մի եղանակ՝

տրա՛յ, նայ-նայ, նայ-նայ, նայ,
տրա՛յ, նայ-նայ, նայ-նայ նայ·

բայց այնպիսի լրջութեամբ, որ կարծես թէ որոշ պարտականութիւն լինէր կատարելիս: Յետոյ, առանց որեւէ խօսք ասելու, սկսեց քայլել դէպի առաջ:

— Կա՛ց, կա՛ց... Բագրատ, դուռաց աղա Գրիգորը... Սպասի՛ր, մենք դեռ չենք վերջացրել...

Բայց Բագրատը կանգ չառաւ ու շարունակեց անհաստատ քայլերով առաջ գնալ:

Աղա Գրիգորը բարձրացաւ տեղից ու հետեւեց նրան: Նա այնպէս դժւարանում էր քայլել· անդադար երերում էր ու կորցնում հաւասարակշռութիւնը:

Գրիգորիյ Եւանդուլիչը բռնեց նրա թեւից:

Փողոցում երեւացին առաջին անցորդները: Բագրատը շարունակում էր քայլել առջեւից· նրա ետեւից, աւելի դանդաղ, քայլում էին աղա Գրիգորն եւ Գրիգորիյ Եւանդուլիչը: Նրանք հասել էին արդէն քաղաքի կենտրոնին, ուր անցորդների թիւը զգալիօրէն շատ էր: Այսպէս քայլեցին, քայլեցին, մինչեւ որ Բագրատի քիթը դէմ առաւ յանկարծ երկար մի սիւնի: Նա կանգնեց շւարած, նայեց սիւնին, չօշափեց, յետոյ նոյն լրջութեամբ յետ դարձաւ եւ մօտեցաւ աղա Գրիգորին:

Նրանք սկսել էին արդէն ուշադրութիւն դրաւել: Գրիգորիյ Եւանդուլիչի համար անյարմար էր աղա Գրիգորի ընկերակցութիւնն այդ վիճակի մէջ, բայց նա չէր ցանկանում նրան մենակ թողնել փողոցում: Մտածում էր մի կերպ տուն հասցնել եւ ապա վերադառնալով, արագ քայլերով գնալ, հասնել աշակերտներին, որոնց նա թողել էր քաղաքի ծայրին:

Նա փորձեց նորից համոզել աղա Գրիգորին տուն վերադառնալ, բայց աղա Գրիգորը միշտ իր կեանքն էր ուզում պատմել: Գրիգորիյ Եւանդուլիչը փորձեց բռնել նրան եւ ոյժով քարշ տալ դէպի տուն, բայց աղա Գրիգորը յամառում էր եւ ընդդիմանում, երբ յանկարծ,

Նրանց առջեւ իր ամբողջ հասակով կանգնեց Նուբարը։

Երեխաներին դաշտ ուղարկելու առթիւ, Նուբարը սովորականից շուտ էր արթնացել եւ գնում էր տպարան։

— Նուբա՛ր...

Նուբարը լուռ էր։

Զայրացած ու վշտացած, նա նախ նայեց Բագրատին, չափեց նրան ոտքից գլուխ, բայց Բագրատը յանկարծ, երեսը դարձրեց նրանից ու շտապ առաջ անցնելով թեքւեց մօտակայ փողոցն ու անյայտացաւ։

— Փուչ ու անպէտք տղայ,— չշնջաց Նուբարը չարացած նրա ետեւից ու դարձաւ աղա Գրիգորին։

— Ամօթ չէ, Գրիգո՛ր... Դու պատուաւոր մարդ ես։

— Պատուաւոր մարդ էլ...

— Այդ ի՞նչ է վիճակդ։— Նուբարը դառնութեամբ նայեց նրան։ Իր հին ընկերոջ խղճալի այդ վիճակը անկեղծ ցաւ էր պատճառում նրան։— Գնա՛նք, գնանք ինձ մօտ, այնտեղ կը սթափւես, յետոյ տուն կը գնաս, ասաց նա քիչ յետոյ ու բռնեց նրա միւս թեւից։

Նրանք լուռ առաջացան։

Ճանապարհին Նուբարը թէյատան ծառայողին թէյ պատուիրեց, ու երբ տպարանում, երեքով միասին սեղանի շուրջն էին արդէն, նա կարեկցութեամբ ու հարցական նայեց աղա Գրիգորին։

— Ես անիծեալ մարդ եմ... Ես դժբախտ մարդ եմ, Նուբար։

— Որովհետեւ հարբում ես։ Դու ընտանիքի հայր, կրթւած զաւակների տէր... Բայց կորցրիր արժանապատուութիւնդ նրանց աչքում։ Հայրը, ընտանիքի հայրը, շատ զգոյշ պէտք է լինի, շատ զգոյշ։ Հայրն օրինակ պէտք է լինի իր զաւակների համար։

Աղա Գրիգորը սաստիկ գլխացաւ էր զգում։ Նա յենւեց ձեռքին ու տխուր աչքերը ձգեց Նուբարի կամք ու վճռականութիւն արտայայտող դէմքին։ Հասկանում էր արդեօք Նուբարի խօսքերը։

— Դու, աղա Գրիգոր, ամեն բան արիր քո զաւակների համար։ Պահեցիր, մեծացրիր, ուղարկեցիր Եւրոպա, որ կրթւեն, սակայն,— բայց Նուբարը զգում էր, որ իր ասածներն աւելորդ էին։ աղա Գրիգորն այլեւս չէր լսում։ Նրա կոպերը կամաց-կամաց փակւում էին ու ծանրացած գլուխը վերջապէս ընկաւ սեղանին։

Նուբարը եւ Գրիգորիյ Եւանգուլիչը մի կերպ քարշ տւին նրան եւ տպարանի ետեւում գտնւող սենեակում, բազմոցի վրայ տեղաւորեցին։

— Խե՜ղճ Գրիգոր,— ասաց Նուբարը հառաչելով, ափսոս մարդ։ Նրանք մի բոպէ նայեցին իրար։ Գրիգորիյ Եւանգուլիչն իր պաշտօնը վերջացած համարելով, սեղմեց Նուբարի ձեռքն ու վարանոտ քայլերով դուրս եկաւ տպարանից։

Դուրս եկաւ տպարանից Գրիգորիյ Եւանգուլիչն ու սկսեց քայլել։ Սկսեց քայլել կարծես ակամայ, կարծես մոռացած ամեն կատարւած գէպք, ամեն ցանկութիւն, յարդեայ գլխարկը միշտ թեւի տակ ամուր բռնած։ Արեւը դեռ չծագած նա քաղաքի ծայրումն էր, աշակերտների հետ միասին... Հիմա պէտք էր գնալ, հասնե՛լ այն այդին... Մի ամբո՛ղջ ճամբայ...

Քայլում էր։ Ու յանկարծ... Կիսախարխուլ մի տուն, մի դուռ՝ վրան դեղնած այցետոմս...

« Գրիգորիյ Եւանգուլիչ Կարապետով։
Մասնաւոր դասեր եւ ամեն տեսակի
ռուսերէն ապսպրանքներ։ Մտէք »։

Գրիգորիյ Եւանգուլիչը կանգ առաւ զարմացած... Նայեց դռան, դեղնած այդ այցետոմսին... Յետոյ զգոյշ բացեց դուռն ու ներս մտաւ։

4

«Ձիւնապատ գագաթներով լեռների գեղածիծաղ լանջերին, Աստծու ձեռքով շաղ տուած մի բուռ ժողովուրդ է ապրում:

Իրենց եղունգներով մարդիկ փորել են հողը, մաքրել մացառներն ու փշերը եւ երկնային դրախտի պէս մի դրախտ շինել երկրի վրայ:

Առաւօտեան արշալոյսին, բարձր ու հպարտ այդ լեռները ողողւում են կարմիր շողերով եւ բարձրում ցցուած գագաթների ձիւնը պսպղում է՝ փշրուած ադամանդի պէս:

Անտարբեր ու հոյակապ է բնութիւնն այստեղ, ինքն իր մէջ, ինքն իր հետ: Երբեմն նա ժպտում է այդպէս կարմիր ճառագայթաւոր, երբեմն խոժոռում ու մութ ամպեր է կուտակում իր վրայ:

Գիշերը բաց երկնակամարի վրայ մենակեաց լուսինն է ճամբորդում եւ այդ ժամանակ լեռներն իրար տիեզերքի գաղտնիքն են հաղորդում:

Գարնան, յանկարծակի բռնկած փոթորկին, լեռներն իրար ձէն են տալիս, կչկչում, վշվշում են լեռն ի վար վազող հպարտաճիւղ առուակների ձայնից: Լեռ ու ձոր կեանք ու շունչ են առնում, խօսում, կանչում... Յետոյ վայրի ծաղիկներն իրենց թրջած գլխիկները բարձրացնում են, ամպերի տակից ժպտացող արեւին դէմ տալիս, կապոյտ-դեղին թերթիկները փռում եւ անուշ բուրմունքով օդը լեցնում:

Ձիւնոտ ու բարձր այդ գագաթների կողքին ծաղկազարդ բարձունքներ են փռւում՝ գոյն-գոյն ծաղիկներով երփներանգ. մերթ միագոյն կանաչ թաւիշի վրայ փունջ-փունջ վայրի շահոկրամներով, մերթ կապոյտ, միայն կապոյտ լուսածաղիկներով, ալ-կարմիր գինարբուքներով եւ հազար ու մի տեսակ անանուն ծաղիկներով զարդարուած... Այս բոլորի վրայ ինչած կամարը կապոյտի, որ երբեմն-երբեմն մոխրագոյն հարթ թիկնոցով ծածկում է յստակութիւնն իր, երբ յանկարծ սուլում է քամին, խուլ եւ միօրինակ սուլոցով, երբ յանկարծ զղրդում է որոտն ուժգին եւ ցնցում ամեն ինչ...

Գարունն այստեղ իր հմայքը լիովին է սփռում: Եօթ գոյն ծիածանն այստեղ է կապում իր աննման գօտին եւ միացնում երկինքը երկրին, մինչդեռ ճերմակ, ինչպէս գագաթները ձիւնոտ լեռների, դէպի արեւմուտք են չուում ամպէ գնդակները, իրար վրայ գալով, իրար հրելով, դարթ ու անհոգ, կարծես իրենք լինէին խորհրդանիշը յաւիտենութեան:

Բիւրեղեայ եւ կարկաչուն առուակների կողքին, քարերի արանքից ժայթքող աղբիւրների եզրին, ամրան երկրնքի թափանցիկ լազուրի եւ ճմեռը բուք ու բորանի տակ, մերթ ժպտուն ու խաղաղ, մերթ կծկւած ու դուսպ, ինչպէս բնութիւնն այդ, ցածլիկ տանիքներով խրճիթներն են փռւած:

Որը ժայռի գլխին ցցած, որը նրա լանջին յենած, որը դառիվայրն ի վեր տանող քարքարոտ ճամբան հրսկող, որը մենաւոր կաղնիներին ապաւինած:

Այս երկրի տղամարդիկ լեռների պէս հպարտ ու խրոխտ են, իսկ կանայք դաշտի ծաղիկների պէս՝ քընքոյշ ու երազուն: Իրենց կրկչան վտակների եւ բազմա-

զան թռչունների պէս նրանք գարթ ու կայտառ են, եւ երգի ու սրնդի արձագանդը բնաւ չի դադարում ձորերի միջից։

Առաւօտ շատ կանուխ, արեւի վառ շողերի տակ, լերան կրծքից դէպի վեր քայլող մարդը, այդ լեռներից ծնուած մի դիւցազն է կարծես, որ դունաւոր լայն դօտին սեղմած նրբակազմ իրանին, սեւ մազերը քամուն տուած, գերանդին ուսին եւ թրթռուն երգը շրթներին դէպ իր ցանած արտն է բարձրանում։

Դեռ աղբիւրներն իրենց գիշերային մրմունջը չաւարտած, հարս ու աղջիկ կուժերն ուսին քրքջալով ձորն են իջնում՝ ջրերի գիշերային դաղտնիքը հաւաքելու իրենց սափորների մէջ։

Ահա դէպի ձորը կախուած ժայռի վրայ կանգնած մեն-մենաւոր տղան... Թաւ յօնքերի տակից կայծկլտացող աչքերով, կուրծքը բաց, ձեռքը ճակատին, վարի աղբիւրն է դիտում...

Այնտեղ, երկնքի լաղուրից մի կտոր դլխին գցած, դաշտի կանաչ ատլասից, կարմիր ծաղիկներով նախշած հագուստը մինչեւ բորիկ ոտքերն իջած, լուսաթաթախ դէմքով, ինչպէս մարդի մէջ բացուած կակաչ, կանգնել է աղջիկը...

Սլսլում է հովը, բուրում են ծաղիկները բոլոր...»

Դրասեղանի առաջ նստած Տիդրանը դանդաղութեամբ թերթում էր իր հին տետրակները։

Ամբողջ մի կեանք էր անցել... Մանկութիւն, պատանեկութիւն։ Կոհակ առ կոհակ իրար էին յաջորդել, թրթռացել, կայծկլտել ու սահել նրա աչքերի առջեւից հոսուն առուակի ջինջ ջրի պէս, օրերը կապտաթեւ, գիշերները երաղուն եւ տեսիլները շողշողուն ապագայի։

Իր վերջին շարադրութիւնն էր այդ... որի մասին հայոց լեզուի ուսուցիչը դովեստի խօսքեր էր ասել։ Այդ տետրակի իւրաքանչիւր էջը, իւրաքանչիւր տողը քաղցր էր հիմա Տիդրանի համար... Հիմա, երբ աւարտել էր այլեւս...

Ու կրկին ու կրկին թերթում էր նա խնամուած ու մաքուր գրուած էջերը եւ նրա սիրուն աչքերը լեցւում էին պղտոր թախիծով — թախիծ, որի զգացողութիւնը հաճելի թրթիռ էր առաջացնում սրտի անորոշ մի անկիւնում։

Գեղեցիկ էր Տիդրանը։

Աչքերը սեւ՝ հասած ձիթապտուղի նման, մազերը խճուճ՝ գանդուր ամպերի նման, շրթները թարմ ու անուշ՝ հասած փշատի նման։ Այտերից շող էր թափւում, աչքերից բոց էր կաթում, ժպիտն՝ ասես տրաքած նուռ։

Գայլում էր նա գլուխը բարձր բռնած մատաղ ջէյրանի նման, մէջքը պինդ էր ու նազուկ՝ ջահէլ կաղնիի նման։

Մեծացել, հասակ էր նետել Տիդրանը՝ Բեհեղ տատի խորհուրդներով լի, հէքեաթներով պարուրուած մըթնոլորտի մէջ, նրա կեանքի ու հոգու գաղտնիքները խուզարկող հայեացքի ներքոյ։

Հեթանոս մի բան կար Բեհեղ տատի մէջ, որ նա ներարկել էր իր թոռներին։

Իր անթիւ հէքեաթների, իր հէքեաթային կեցուածքի հետ միասին, Բեհեղ տատը շատ յաճախ խօսել ու պատմել էր մանաւանդ Արեւի մասին։ Նա ասել էր, որ առաջ, շատ հին ժամանակ, մեծ էր Արեւի զօրութիւնը, նրա ճառագայթները մարդկանց հոգիների խորքն էին թափանցում եւ ամեն ինչ այնքա՜ն յստակ էր, այնքա՜ն զօրաւոր, որ կեանքը հիմիկւայ երազած երազն էր՝ իր կորցրած հրաշալիքներով առլեցուն, զգացմունքները հո-

սուն ու վառվռուն էին, հասկացողությունները ջինջ ու խոր։

— Լույս էր, լո՛յս ամեն տեղ։ Արեւը մարդկանց հոգիներում էր, բնությունը լի էր հրաշալիքներով։ Գիշերն այնքան խորհուրդներ ունէր իր ծոցի մէջ, ցերեկն այնքան անակնկալներ։ Ձկար ոչինչ երազային, երազն ինքն իրականություն էր եւ կեանքը՝ երազ ղեղեցկություեան։

Շատ հին մի ժամանակ...

Դաժան, ձմեռային ձիւնոտ օրերից յետոյ, գարնան սկիզբը, Տիգրանի աչքին արեւն այնպէս էր փայլում, այնպէս պսպղում... Իր նետած անհամար ճառագայթները ջերմություն, ուրախություն էին սփռում աշխարհի վրայ։ Նրա զօրությունից ծառ ու ծաղիկ նոր կեանք էին ստանում, բոլոր եղրեւանները բացւում էին ու յաստիկագոյն իրենց աչքերով անծանօթ բաներ պատմում մարդկանց, ուրիշ աշխարհից բերած ինչ որ խոստումներ անում... Եւ այս ու այն կողմ փռւած աստղածաղիկներն իրենց քնքոյշ բուրմունքով կեանքի խորհուրդների մասին էին մրմնջում՝ ու վարդերն էին կոկոնում, կանաչ երկար ծայրերով, որ կամաց-կամաց մեծանալով՝ մի առաւօտ յանկարծ ճեղքւում էին ու ժպտում երկնքին։ Իսկ ամրան, երկար՝ դէպի արեւը ձգտող ցօղունով, արեւածաղիկն իր կլոր դէմքն էր պտտեցնում պարտէզի վերայ, որի սեւ միջուկը ոսկի ճառագայթող նարնջի թերթեւանքներով, բնության զարմանահրաշ աչքի էր նմանում։

Դեռ մանուկ հասակից Տիգրանի հոգում արեւն էր ապրում։ Եւ այդ էր պատճառը, որ ամեն առաւօտ լուսաբացի մթնշաղին, երբ դեռ բոլորը քնած էին լինում, Տիգրանը սովորություն ունէր բարձրանալ իրենց տան ամենաբարձր տանիքն ու սպասել արեւի ծագման։

Այդ պահին օդը լի էր մոռացած աստուածների դոյությամբ։

Երբ հորիզոնը կարմրատակում էր եւ շառագունած երկնակամարը թեթեւ վարդագոյն շղարշ էր հագնում, Տիգրանը երեսը դարձնում էր դէպի արեւելք ու սպասում... Սպասում էր արեւի կենսատու ու լուսատու ճառագայթներին, ինչպէս ծաղիկն իրենց պարտէզի, ինչպէս ծառը իրենց երկրի եւ իր հոգու ամենահեռաւոր խորքում դիտակցության անծանօթ թրթիռներ էին առաջանում։

Այժմ Տիգրանը տասնըեօթ տարեկան պատանի էր։ Իր արեւապաշտ խառնուածքի մէջ նոր հոսանքներ էին մուտք գործել ու միտքն արթնացած՝ սկսել էր նեղել նրան։

Երկինքը թէեւ միշտ ժպտուն էր ու խոստմնալի, սակայն, սրտի մէջ այրող մի մրմուռ էր առաջացել եւ անհասկանալի ու խորը մի թախիծ կար իր մէջ։

— Տեսնո՞ւմ ես դրասեղանիս դլխին կախուած աշխարհագրական քարտէսը, տեսնո՞ւմ ես այս հաստ ու բարակ գրքերը, դրանց մէջ է գաղտնիքը, տղա՛ս։ Դրանց մէջ լուսէ ճառագայթներ կան թաղուած։

Եւ Տիգրանի հոգին՝ լեցուած ուսման անյագ ծարաւով, իր ճառագայթները դէպի օտար ափեր էր նետում։ Նա ցանկանում էր ըմբռնել խորհուրդները, հասկանալ դեղեցկությունները...ու նրա միտքը թափրտում էր. «պէտք է հասնել կատարելության» — մտածում էր նա։

— Հոգու ճամբաներով, — շշնջում էր կարծես տատը նրա ականջին։

— Մտքի ճամբաներով, ասում էր հայրը իր վճռական ու հաստատուն ձայնով։

Իսկ Արտօի եւ հօրեղբայր Համբարձումի հեռաւոր

իդէալի գեղեցկութիւնը Տիգրանի հոգու մէջ նորանոր թրթիռներ էր առաջացրել:

Արտօն, որ պատմել էր Տիգրանին... Պատմել իր հեռու Երկրի մասին, իր սար ու ձորի մասին, իր աղբիւրների մասին... Նրա աչքերը լեցուել էին կարօտի արցունքներով եւ ճակատը կնճռոտուել էր:

Արտօի պատմածների ազդեցութեան տակ էր, որ Տիգրանը միացել էր իր տարեկից ընկերների «Սուրբ Ուխտին»: Նրա աչքերի առջեւ ցցւում էին լեռներ ու ժայռեր, լսւում էր ջրվէժների շառաչ... Նրան թւում էր, որ հեռաւոր այդ երկրի լեռների ու մարգերի լեղուն ինքը վաղուց գիտէր արդէն... Ու Տիգրանը սիրել էր այդ երկիրը, սիրել էր ու նուիրել նրան իր գեղեցիկ շարադրութիւնը:

Վերջին ամիսներն էին արդէն:

Տիգրանն աւարտել էր ու շուտով պէտք է մեկնէր: Տան մէջ ամենքն այդ մասին էին խօսում ու պատրաստութիւններ տեսնում: Մնողական զգացմունքները պէտք է պատրաստուէին զոհարերելու, զսպելու եւ աննկուն կամք ցոյց տալու, յանուն գաւակի երջանիկ ապագայի...

Բաժանման տխուր քողը կամաց-կամաց փռուել էր բոլորի դէմքերի վրայ: Երկար ամիսներ մարդանքից յետոյ, Մանին առաւօտները երգը շրթունքներին էր պտտում, կարծես իր սեփական ձայնի մէջ թաղել ջանալով հոգու ալեկոծումը: Երեկոները Նուբարը խիստ բարձրաձայն էր կարդում ստացած թերթերը՝ տան լռութիւնը լեցնելու համար: Վարդենին ջինջ աչքերով դիտում էր բոլորին ու մտածում, որ երբ հերթն իրեն հասնէ օտար երկիր գնալու, ի՞նչ պէտք է անէ զսպելու համար յուզմունքը:

Խնդրագիր, խնդրագիր...

«Նորին Գերազանցութեան, Կայսերական Մեծութեան ազնուատոհմ գիմնազիայի վերատեսչին.

«Ձեր բարձր ուշադրութիւնն եմ խնդրում իմ երկրորդ գաւակիս վրայ: Կեանքի խաստարի մէջ, գիտութեան եւ Ձեր քաղաքակրթութեան լոյսը...

«Կուզեմ հաւատալ, որ չէք մերժի...»

Ձերմակութիւնը վաղուց կորցրած պատեր, գարդարուած ցարի, ցարուհու, բարձրաստիճան չինովնիկների նկարներով: Ցարն ու ցարուհին գունաւոր, փայլփլուն թղթի վրայ, շքանշաններով, մարգարիտի շարաններով, աղամանդեայ թագերով... Գրասեղանը փոշոտ ու թանաքամանը լեցուն ճանճերով:

— Եթէ ուզէք, բացատրեմ նաեւ ձեր մնտեսական վիճակը, նաեւ ձեր տեսակէտը ռուս քաղաքակրթութեան մասին,— հարցնում էր Գրիգորիյ Եւանգուլիչը,— յետոյ՝ նաեւ ցարին միշտ հաւատարիմ մնալու հանդամանքը...

Եւ խնդրագիրը դառնում էր չորս մեծագիր էջ:

— Տէր հայր, կրթութեան համար է, գաւակիս ապագայի հարցն է, մեղք գործած չես լինի, մի տարի եւս պակասեցրու տարիքը...

— Պարոն հիւպատոս, ահա անցագիրս, մենք հին հպատակներ ենք...

Մինչ պարոն հիւպատոսը, բաճկոնի փայլուն, դեղին կոճակին նայելով, իր ո՛վ եւ ի՛նչ լինելն է գերադնահատում: — Թող կրկին անդամ դայ, թող կրկին խնդրէ,— մտածում էր նա: Եւ այդ կրկին անդամը դառնում է մի քանի օր, մի քանի շաբաթ:

Եւ Նուբարը կրկին ու կրկին գնում էր, կրկին ու կրկին խնդրում:

Այդ տարի Տիգրանը վերջին անգամ էր իր ծնողների հետ դիւղ գնում: Մանին ու տատը չտապում էին տունը լեցնել. պահածոյ միսը պատրաստել, իւղ հալել, հացը թխել: Տիգրանը հետեւում էր բոլոր այդ աշխատանքներին, պատում տատի ետեւից մտնում ամեն տեղ... Զէ՞ որ վերջին անգամն էր տեսնում այդ բոլորը ու այնուհետեւ տարիներ, տարինե՛ր հեռու պիտի լինէր: Ու նրա աչքին ամեն բան այնքա՛ն հրապուրիչ, այնպէ՛ս հարազատ էր երեւում:

Իսկ որքա՛ն զեղեցիկ էր հաց թխելը... Տիգրանն ամենից աւելի հաց թխելն էր սիրում:

Տունը ամբողջովին եռ ու դեռի մէջ էր: Փողոցի դռան փեղկերը «ոտքի վրայ» բաց էին:

— Համեցէ՛ք, համեցէ՛ք, անուշ արէք, տեսէք ի՞նչ լաւ հաց է:

— Մանի, պանիրը մօտ դիր, թէյի բաժակները լցրու:

Բակը լեցուած էր հացի անուշ բուրմունքով: Մանին նստած ինքնաեռի կողքին, թարմ լաւաշները երկար ու տափակ մի զամբիւղի մէջ դրած, պանրից եւ կարագից պատառներ էր պատրաստում ու խնդրում հարեւաններին, որ անուշ անեն: Հարեւանները, որը աստիճանների վրայ, որը դետնին, կապերտի վրայ նստած, ուրախ ու հանդարտ կատակում էին եւ շաքարած թէյի բաժակները խառնելով ընդունում մեկնած պատառները:

Հարսնուկ բաջին առաւօտը շատ կանուխ էր եկել, թոնիրը վառել էր, պատրաստել, որ «մութ ու լուսին» սկսեն թխել:

— Վարպետ է, վարպե՛տ մեր Հարսնուկը, յիսուն

լիտրը կրակի պէս թխեց,— գովում էր Բեհեզ տատը, լաւաշները մէկ-մէկ դետին փռելով:

Բակի չորս կողմը կապերտներ եւ խսիրներ էին տարածուած, որոնց վրայ փռւում էին լաւաշները չորանալու համար: Յետոյ հաւաքում, ներս էին տանում, ու չորս անկիւններից երկար թոկերով առաստաղից կախուած լայն մի տախտակի վրայ դարսում:

— Դէ՛, քանի տաք-տաք է հարեւաններին բաժին տարէք: Ամեն մէկին տաս հատ: Աղջի, կերէ՛ք, մի ամաչէք, թէյ լցրէ՛ք:

— Տունդ լեցուն, Բեհեզ տատի, շնորհակալ ենք, Աստուած մէկդ հազար անի:

— Տիգրա՛ն, որդիս, առ, քեզ իմ ձեռքով պատառ տամ. տես ի՞նչ լաւ հաց է, մեղր ու խունկ է բուրում:

Տատի ձեռքից պատառն առնելով Տիգրանը մտաւ թոնրատուն:

— Աստուած օգնական, Հարսնուկ բաջի:

— Վա՛յ, դու ես, Տիգրան ջան, Աստծու բարին գլխիդ:

Հարսնուկի կրակից կարմրած դէմքը, նրա պայծառ աչքերը, թոնրի հոտը, ծխոտ պատերը, այս ու այն կողմ նետուած լաւաշները՝ այս բոլորը Տիգրանի սրտին այնպէս հարազատ էին, այնքա՛ն սիրելի...

Տիգրանը միշտ սիրել էր հացթուխ այդ կնոջը, իր ժիր ու եռանդոտ բնաւորութեան համար, իր անուշանուշ խօսելու, պատմելու եղանակի ու հաց թխելու չուրջ ստեղծած զեղեցիկ մթնոլորտի համար:

Դռնից մտնելուն պէս Հարսնուկը կպչում էր գործի:

— Հա՛, դէ, չուտ արէք, չուտ արէք: Խմորը կը թթի կը մնայ, թոնիրը վառէք, չո՛ւտ, չո՛ւտ:

Աճապարանքի մատնուած, ամենքն իրար էին նայում: Հարսնուկի ձեռքից պրծում չկար:

— Էն պսակի աթլաղ չորերիս կապոցը ուէք տես-նեմ։

«Պսակի աթլաղ» չորերը, հնամաշ, տասնեակ կար-կատաններով երկար մի հաղուստ էր, որ Հարսնուկը հագնում էր Թոնրի շրթին նստելուց առաջ։

— Աղջի, շուտ արէք, Թոնիրը լաց ա լինում։

Հարսնուկը նստում էր, գլխի թաշկինակը բացում եւ երկու անկիւնները իրար վրայ բերելով, բարձրացնում դնում էր դագաթին, ապա թեւերին կապում էր փա-թաթները ու թեւերով պինդ ամրացնում։

Թոնիրը փարատելուց յետոյ, նրա հրամանով, օգ-նական կինը Թոնրի վրայ խաչերկաթ էր ձգում ու վրան ամանով ջուր դնում, որ տաքանայ։

— Գունդը դցա՞ր, Նաղլու։

— Հա՛ է, հա՛, համբերիր, այ Հարսնուկ։

— Դէ՛, դէ՛, ձեզ մատաղ, շուտ դրոնակէք, ինձ դցէք։

Ուրիշ մի կին խմորից գնդակներ շինելով՝ նետում էր կողքինի ալիւրոտ տախտակին։ Սա իր հերթին դըրո-նակով մի քիչ բացելուց ու լայնացնելուց յետոյ դցում էր խմորը աջ թեւից ձախ թեւին, ձախ թեւից աջ թեւին, մինչեւ որ լաւաշի մեծութիւն էր ստանում, ապա մէկ հարւածով փռում էր մարզըկանի վրայ, ձեռքը թաթխում ջրի մէջ ու «երկնքի գօրութիւնը շատ», ասելով, մէջքից վար կռանում, կպցնում էր խմորը Թոնրի տաքացած պա-տին։

Առաջին հացի վրա Հարսնուկը խաչ էր հանում, աղօթք չշնչում։— Արտին, կալին հազար բերք, առնո-ղի արեւին երկարութիւն, ամենքին լաւ օր, երկրին ա-ռատութիւն... Աղջի Նաղլու, գունդերը մէկ-մէկ դցիր, հացը հարամ չանենք... Երկնքի գօրութիւնը շա՞տ...— Ու կռանում էր նորից, կրկին ու կրկին կարմրած, քրտնած երեսով, ուղղում նստած տեղը, նետած խմորը բռնում, մէկ աջ, մէկ ձախ թեւին խփելով, բացում լա-ւաշ դարձնում ու խփում էր մարզըկանին։

— Ինչի՞ հէքեաթ պատմեցիր այսօր Թոնրի գլխից, Հարսնուկ բաջի, հարցրեց Տիգրանը։

Հացթուխը մուշ-մուշ ծիծաղեց, հաստլիկ ուսերը վեր-վեր թափահարելով։

— Ես ինչ գիտեմ, որդիս, խօխէքի գլուխը փաթա-թեցի էլի՛... Ես պատմեցի, Նաղլուն խաղ կանչեց։ Էր-ւի Նաղլուն, լաւ ձէն ունի։ Դէ՛, հիմա նոր Թոնիր պէտք է վառենք, հա՛ դէ, շուտ արէք։

Տիգրանը նստեց չորացրած ճիւղերի մի խուրձի վրայ ու սկսեց դիտել բորբոքւող Թոնիրը։

— Նետի՛ր, էդ մէկ կապոցն էլ մէջը նետի՛ր։

Կրակը արծարծւեց ու կլոր բերանը Թոնրի բոցերով բռնւեց։ Կայծերն այնպէս ուժեղ էին, որ Տիգրանն ակամայ նայեց առաստաղի գերաններին։

Ի՞նչ գեղեցիկ էր այդ պահին Թոնրատունը...

Հարսնուկը ձեռքերը կողերին դրած, վառվռուն դէմքով, քրտինքից փայլող մորթով, հրամաններ էր արձակում։ Կարծես հեթանոս քրմուհի լինէր՝ ներշնչման վայրկեանի մէջ... Նրա երկար ու հնամաշ հագուստի իւրաքանչիւր կարկատանը կրակի փոփոխական բոցերի տակ զանազան երանգներ էր ստանում։ Ծփում էր կար-ծես Հարսնուկը, մոխրագոյն մի մշուշի մէջ կանգնած, եւ իր արւասանած բառերը պատգամի արժէք էին ստանում։

Վառւող ու բոցակէզ Թոնրի շուրջ ստեղծւել էր տարօրինակ լուսաւորութիւն։ Մոխրագոյն ու ճերմակ գոյների խառնուրդ, որ այնպէս համապատասխանում էր սեւացած պատերին ու առաստաղին։ Վերից, անկիւնում գտնւող նեղլիկ մի փայլից, դրսի լոյսից սպիտակ մի քու-

— Էն պսակի աթլաղ շորերիս կապոցը տէջ տես-նեմ։

«Պսակի աթլաղ» շորերը, հնամաշ, տասնեակ կար-կատաններով երկար մի հագուստ էր, որ Հարսնուկը հագնում էր թոնրի շրթին նստելուց առաջ։

— Աղջի, շուտ արէք, թոնիրը լաց ա լինում։

Հարսնուկը նստում էր, գլխի թաշկինակը բացում եւ երկու անկիւնները իրար վրայ բերելով, բարձրացնում դնում էր գագաթին, ապա թեւերին կապում էր փա-թաթները ու թեւերով պինդ ամրացնում։

Թոնիրը փարատելուց յետոյ, նրա հրամանով, օգ-նական կինը թոնրի վրայ խաչերկաթ էր ձգում ու վրան ամանով ջուր դնում, որ տաքանայ։

— Գունդը գցա՞ր, Նաղլու։

— Հա՛ է, հա՛, համբերիր, այ Հարսնուկ։

— Դէ՛, դէ՛, ձեզ մատաղ, շուտ դրոնակէք, ինձ գցէք։

Ուրիշ մի կին խմորից գնդակներ շինելով՝ նետում էր կողքինի ալիւրոտ տախտակին։ Սա իր հերթին դրոն-նակով մի քիչ բացելուց ու լայնացնելուց յետոյ գցում էր խմորը աջ թեւից ձախ թեւին, ձախ թեւից աջ թեւին, մինչեւ որ լաւաշի մեծութիւն էր ստանում, ապա մէկ հարւածով փռում էր մարզըկանի վրայ, ձեռքը թաթխում ջրի մէջ ու «երկնքի զօրութիւնը շատ», ասելով, մէջքից վար կռանում, կպցնում էր խմորը թոնրի տաքացած պա-տին։

Առաջին հացի վրա Հարսնուկը խաչ էր հանում, աղօթք չչնչում։— Արտին, կալին հազար բերք, առնո-ղի արեւին երկարութիւն, ամենքին լաւ օր, երկրին ա-ռատութիւն... Աղջի Նաղլու, գունդերը մէկ-մէկ գցիր, հացը հարամ չանենք... Երկնքի զօրութիւնը շա՛տ...— Ու կռանում էր նորից, կրկին ու կրկին կարմրած, քրտնած երեսով, ուղղւում նստած տեղը, նետած խմորը բռնում, մէկ աջ, մէկ ձախ թեւին խփելով, բացում լա-ւաշ դարձնում ու խփում էր մարզըկանին։

— Քանի՞ հէքեաթ պատմեցիր այսօր թոնրի գլխից, Հարսնուկ բալի, հարցրեց Տիգրանը։

Հացթուխը մուշ-մուշ ծիծաղեց, հաստլիկ ուսերը վեր-վեր թափահարելով։

— Ես ինչ գիտեմ, որդիս, խօխէքի գլուխը փաթա-թեցի էլի՛... Ես պատմեցի, Նաղլուն խաղ կանչեց։ Էր-լի Նաղլուն, լաւ ձէն ունի։ Դէ՛, հիմա նոր թոնիր պէտք է վառենք, հա՛ դէ, շուտ արէք։

Տիգրանը նստեց չորացրած ճիւղերի մի խուրձի վրայ ու սկսեց դիտել բորբոքւող թոնիրը։

— Նետի՛ր, էդ մէկ կապոցն էլ մէջը նետի՛ր։

Կրակը արծարծւեց ու կլոր բերանը թոնրի բոցերով բռնւեց։ Կայծերն այնպէս ուժեղ էին, որ Տիգրանն ակամայ նայեց առաստաղի գերաններին։

Ի՜նչ գեղեցիկ էր այդ պահին թոնրատունը...

Հարսնուկը ձեռքերը կողերին դրած, վառվռուն դէմքով, քրտինքից փայլող մորթով, հրամաններ էր արձակում։ Կարծես հեթանոս քրմուհի լինէր՝ ներշնչման վայրկեանի մէջ... Նրա երկար ու հնամաշ հագուստի իւրաքանչիւր կարկատանը կրակի փոփոխական բոցերի տակ զանազան երանգներ էր ստանում։ Ծփում էր կար-ծես Հարսնուկը, մոխրագոյն մի մշուշի մէջ կանգնած, եւ իր արւասանած բառերը պատգամի արժէք էին ստանում։

Վառւող ու բոցակէզ թոնրի շուրջ ստեղծւել էր տարօրինակ լուսաւորութիւն։ Մոխրագոյն ու ճերմակ գոյների խառնուրդ, որ այնպէս համապատասխանում էր սեւացած պատերին ու առաստաղին։ Վերից, անկիւնում գտնւող նեղլիկ մի փայլից, դրսի լոյսից սպիտակ մի քու-

լա չեշտակի ներս էր ընկել ու փուել էր Հարսնուկի կլոր դէմքի վրայ... Կարծես վրան լոյս էր իջել... Իր գլխի թաշկինակը, որի երկու անկիւններն իրար էին միացել գագաթի վրայ, նրա լուսաւորուած դէմքին աւելի գեղեցկութիւն էր տալիս՝ կարծես հողի տակից հանած երբեմնի տաճարների մէջ կանգնեցրած հին մի արձան լինէր:

Բոցերի ճարճաթոցի տակ, երկու կին, արագ ու լուռ, կատարում էին Հարսնուկի հրամանները:

Բոլէն կախարդական էր... Տարօրինակ լուսաւորութիւն, լռութիւն ու աշխատանք, Հարսնուկի ցցուած հասակը թոնրի գլխին ու կրակը...

Տիգրանը նայում էր հմայուած:

Ինչ ու ինչ տարօրինակ զգացմունքներ, յոյզեր էին պաշարել նրան...

Կրակի հետ կապուած գեղեցկութիւնը, նրա բոցոտ շունչը, այրող ու այրուող դոյութիւնը, կախարդել էին նրան:

Դեռ փոքրիկ տղայ էր Տիգրանը, երբ առաջին անգամ յիշում էր կրակի հետ կապուած գեղեցիկ մի օր իրենց տան պարտիզում:

Այդ օրը պարտէզը հնոցի պէս վառւում էր: Ողջ բակը ողողուած էր կարմիր լոյսով եւ լուսամուտները պլպլում էին հալուած ոսկու պէս:

Բեհեղ տատը լուռ, կարծես անբացատրելի մի բընազդից դրդուած, դէմքը հէքեաթների մէջ ապրող բարի ողիների արտայայտութեամբ պայծառացած, բակի լայն սաքուի վրայ մեծ մի խարոյկ էր պատրաստել...

Եկեղեցու զանգերն այդ երեկոյ երկար, շատ երկար էին զօղանջել: Տատիկը Տիգրանին հաղորդել էր իր ամենալաւ հաղուստը: Տիգրանը պէտք է գնար եկեղեցի ու

մինչեւ իր վերադարձը տան մէջ լոյս չպէտք է վառուէր: Ամենքը պէտք է սպասէին նրան:

Լռելեայն ու երկիւղած, վառ մոմը փոքրիկ ափերի մէջ առած, որ հովը չմարէ, Տիգրանը վերջապէս կարողացել էր ապահով հասնել տուն եւ իր խոկ ձեռքով վառել՝ նախ բակի խարոյկը, ապա եւ ճրագի պատրոյգը:

Ողջ թաղը Բեհեղ տատի խարոյկի շուրջն էր հաւաքուել այդ դիշեր: Կրակը վառւում էր, բորբոքւում եւ տղայ ու աղջիկ, հարս ու կին, բոլորն ուրախ բացագանչութիւններով, խնդ ու ծիծաղով ցատկում էին կրակի վրայից՝ ոմանք ճարպիկ ոստիւնով, ուրիշները հագիւ ապատուելով կարմիր բոցերից:

Յետոյ, բոլորը միասին, շուրջպար էին կազմել ու կրակը մէջ առած, թրթռուն մի երգ լցրել էր ողջ բակը... Բեհեղ տատի երգն էր այդ... Ինքը նստած հեռու, քարերի վրայ, իր խուլ ու թաւ ձայնով երգում էր տող առ տող, իսկ միւսները կրկնում էին ուժեղ ու կենսալի շունչով:

Տիգրանը մոռացութեան մէջ ընկած, նստած տատի կողքին, նայում էր զարմացած այդ տեսարանին ու լսում էր հմայուած նրա երգած «Կրակի երգը»:

... Եւ ի՞նչու էր վառւում այդ խարոյկը:

— Դրընդէզն է, ասել էին:

Կրակը... Արեւը... Դրընդէզը...

Տիգրանն անէացել էր: Իր երակների մէջ հոսող արիւնը կրակի բոցերից, արեւի ճառագայթներից մասնիկներ չունէ՞ր իր մէջ... Իր միսը, ջղերն իր, Հարսնուկի թոնրի ցայտող կայծերից ու Բեհեղ տատի հէքեաթների ապրշում թելերից չէի՞ն հիւսուած... Ի՞նչն էր այդպէս յուզում, այդպէս հմայում նրան...

Դրսում, բակի մէջ, փոքրիկ մի քարի վրայ մի հաւ կանգնել նայում էր աշխարհին: Թեթեւ մի հով ան-

ձայն չարժում էր ծառերի տերեւները։ Թթենուն յենած ջրով լի կուժը մտածմունքի մէջ էր ընկել ու դիմացի պատի կարմիր աղիւսները չնչում էին կարծես...

Իր մանկութեան, իր ողջ կեանքի, տան սովորութիւնների, բոլոր բոլոր առարկաների վրայ, աներեւոյթ ու գօրաւոր մի ոյժ կար սփռուած՝ անըմբռնելի, անչափելի մի ոյժ, որի գաղտնիքը թաղուած է ոսկեհիւս հոգիների շղարշէ ծալքերի մէջ։

5

Այդ երեկոյ բակում, ընկուզենու տակ, թէյի սեղանի շուրջ երկար նստած մնացին Նուբարը, Մանին, Համբարձումը, Արտօն եւ Բեհեղ տատը։ Եկել էր եւ Վասիլ խանը, ու պարտէզի խաղաղութեան մէջ, ներսից եկող ճրագի լոյսի տակ, մեղմ զրուցում էին։

Ինչպէս միշտ, այս անգամ էլ հերոսն Արտօն էր։ Համբարձումը պատմում էր, որ Արտօն քէֆերի մէջ անփոխարինելի թամադա էր՝ գիտէր քէֆի «կարգ ու կանոնը», «բոլոր օրէնքները»...

— Կռւի մարդը,— ասում էր Արտօն,— քէֆ անել պէտք է իմանայ. որվհետեւ,— բացատրում էր նա մատը վերեւ բարձրացնելով,— կռիւն էլ քէֆի պէս մի բան է։ Քէֆն էլ կռւի պէս իր օրէնքներն ունի, կարգապահութիւնն ունի։

— Լա՛ւ, լա՛ւ, Արտո, դու որպէս քաջ մարդ, քաջ գինւոր կարծում ես, որ կռիւն անհրաժեշտ մի բան է։ Սակայն լաւ կը լինի առանց կռւի գործ կարգադրել։

— Էդ մէկը իմ խելքին չի դալիս, պարոն Նուբար, էդ մէկն անկարելի է։

— Անկարելի չէ՛, Արտո։ Տես, մեծ պետութիւններ կան, դիւանագէտներ կան... Եւրոպան մեռած չէ, ի՞նչպէս կարող է նա անտես առնել մի լուսաւոր ու քրիստոնեայ ժողովրդի ապագան, իսկ դուք միայն՝ կռիւ, կռիւ...

— Ազգը, պարոն Նուբար, պէտք է ցոյց տայ, որ ինքն արժանի է ազատութեան է՛...

— Մենք փոքր ազգ ենք, Արտօ, եւ մեր թշնամիները շատ են, կուի մէջ տուժողը միշտ մենք պէտք է լինենք:

— Սխալ է, պարոն Նուբար, սխալ է: — Արտօն սկսում էր այլայլուել՝ կարծես թէ մէկը ուզում էր կասկածի տակ առնել իր հոգում ստեղծուած ճշմարտութիւնները: — Բա՛ Խանասորը, բա՛ Ֆիդայիների էն աննման կռիւները... Մէկը տասի դէմ... էսքան յաղթութիւններ, էս բոլորը ի՞նչ են: Մենք քիչ ենք, պարոն Նուբար, մեր թշնամիները շատ են, բայց մենք արդար գործի ու դաշտարի համար ենք կռւում, մեր ոյժն էլ դրա մէջ է:

— Լաւ, ձեր ուզածն ի՞նչ է, Արտօ:

— Արդարութիւն, պարոն Նուբար, արդարութիւն ու ազատութիւն... Որ հայը իր երկրում իր վաստակի տէրը լինի, որ ապրի ազատ մարդու պէս, որ չբռնադատուի իր իրաւունքների մէջ: Մեր ուզածը շատ բան չէ: Կրթուած եւ ուսումնական ազգեր կան ու նրանց կողքին հայ ժողովուրդն էսպէս տառապում է ու տանջւում: Սա օրէ՞նք է: Իսկ անօրէնութեան դէմ ի՞նչ պէտք է անես, պէտք է պայքարես, պէտք է կռւես:

— Կայ մէկ ուրիշ ճամբայ, Արտօ, ուրիշ մէկ ճամբայ կայ:

Վասիլ խանը յենած իր ձեռնափայտին, լուռ լսում էր եւ մերթ մէկին, մերթ միւսին գլխով հաւանութեան նշաններ էր անում: Նրա կարծիքով Արտօի բերած փաստերը ճշմարիտ էին, բայց միեւնոյն ժամանակ նա մեծ հաւատ ու վստահութիւն ունէր Նուբարի վրայ: Եթէ նա ուրիշ ճամբաների մասին էր խօսում, ուրեմն մի բան կար, ուրեմն մի բան գիտէր:

— Մենք փորձեցինք բոլոր ճամբաները, փորձեցինք, պարոն Նուբար, բայց օգուտ չտեսանք: Մնաց պայքարի ու կռւի ճամբան: Ազգովին պէտք է ընդվզել, պարոն Նուբար, ազգովին պէտք է դուրս գալ՝ ապացուցելու համար, որ մենք ազատութեան արժանի ազգ ենք: Եւրոպան կարծում է, որ մենք չարչի ենք, մեր մանր հաշիւներով զբաղուած ու մեզ թողել է մեր ճակատագրին:

Նուբարը գլուխը բարձրացրեց ու վստահութեամբ ու հաւատով լցուած իր աչքերը գցեց Արտօի վրայ:

— Մեր փրկութիւնը, Արտօ,— ասաց նա ծանրութեամբ,— մեր փրկութիւնը կրթութեան մէջ է: Դարեր շարունակ մեր ազգը վառ է պահել լուսաւորութեան ջահը Արեւելքում: Հայը միշտ լոյսի ճամբաներով է քայլել եւ եթէ այսօր մենք կանք, ապրում ենք, եթէ չենք ձուլւել ու կորել ասիական բարբարոս ժողովուրդների նման, շնորհիւ նրա, որ սիրել ենք գիրն ու դրականութիւնը: Պէտք է կրթւել, զարգանալ, լուսաւորել մեր միտքը եւ կանգնել մարդկութեան առաջ որպէս հաւասար անդամ: Կրթութիւնը ոյժ կը տայ խեղճերին, կամք՝ անկամներին, հաւատ՝ թերահաւատներին: Մտածե՞լ էք դուք այդ մասին, Արտօ:

Վասիլ խանը հաղայ ի նշան հաւանութեան եւ շեշտակի նայեց Արտօին:

— Ի՞նչպէս չենք մտածել, պարոն Նուբար, ախր ընդհանուր ժողով կայ, ձայների մեծամասնութիւն կայ, ծրագիր-կանոնագիր կայ, չէ՞:

Արտօն բոլորովին յուզւել էր, բայց աշխատում էր զսպել իրեն: Նա յարգում էր Նուբարին, գիտէր, որ հակառակ իր յայտնած կարծիքներին, Նուբարը գործնականի մէջ ուրիշ մարդ էր. նրա մառանում էին պահւում Երկիր փոխադրուող զէնքերը, քանի-քանի հայդուկներ ապաստան էին գտնում նրա հիւրընկալ տան մէջ:

Նա բարձրացաւ տեղից ու գոպաւած յուզմունքով կըռացաւ Նուբարի կողմը.

— Այնքան կոտրած, ջարդ ու սարսափ... եւ յանուն ի՞նչի... Իրաւունք չո՞ւնի ուրեմն հայը իր հայրենիքի մէջ ապրելու. ապրելու մարդու նման, իրաւունք չո՞ւնի տէր լինելու իր վաստակին... Էլ ի՞նչքան լռենք, էլ մինչեւ ե՞րբ համբերենք... Մենք ասում ենք, հայ ժողովո՛ւրդ, արթնացիր ու գա՛րկ՝ քեզ դարկողին, դուցէ ազատուես... Եւ կազատուէ, պարոն Նուբար, մենք հաւատում ենք, որ կազատուէ...

— Հայ դատը, Արտո՛, քաղաքակրթական եւ մարդասիրական հարց է: Դու գիտե՞ս ինչ է Եւրոպան, գիտե՞ս ինչ է քաղաքակրթութիւնը — մարդկութիւնը դէպի լուսաւոր ապագայ տանող ոսկէ այդ կառքը, որին լծած են եւրոպական ազնիւ պետութիւնները... Հայ դատը գենքի ու կուի հարց չէ... Խոհեմ պէտք է լինենք եւ դիւանագէտ... Եւ մեր փրկութիւնը այնտեղից պէ՛տք է գայ, Արտո, արեւմուտքից պէտք է գայ, իսկ մեզ համար միայն մի ուղի կայ այսօր՝ կրթուել ու կրթուել:

Նուբարն ոգեւորուել էր:

— Պէ՛տք է ամեն գոհողութիւն յանձն առնել, պէ՛տք է ծախել տուն, այգի եւ երիտասարդներին ճամբել Եւրոպա, ճամբել Ռուսաստան, որ գնան ու վերադառնան գինուած նոր ու նոր գիտելիքներով, զարգացած ու կրթուած:

— Պէ՛տք է ծախել տուն, այգի եւ գենք գնել, պարոն Նուբար, որպէսզի մեր կրթուած զաւակները վերադառնալով, իրենց տները դեռ կանգուն գտնեն եւ օջախները վառ:

Նուբարը սիրում էր Արտօի անխարդախ հայրենասիրութիւնը, մանկունակ մի բան էր գտնում նրա զգացմունքների մէջ ու երբ նայում էր նրա խոշոր, առնական

կազմուածքին, հաստ յօնքերի տակից պսպղացող աչքերին, փարթամ ու գեղեցիկ մազերին, խորը ցաւ էր ըզգում,— մի օր անիմաստ պայքարի մէջ պէտք է գնայ ու զոհուի թշնամու գնդակին,— մտածում էր Նուբարը ափսոսանքով:

— Արեւելքը խարխափում է խաւարի մէջ, Արտո՛: Հապա դու ազատիր այստեղի մարդուն ծանր աշխատանքներից, տուր նրան մեքենայ, տուր նրան կեանքը շահելու հեշտ միջոցներ... Մենք դեռ այնքան հեռու ենք քաղաքակրթութիւնից: Քաղաքակրթութիւնը, մեքենայի զարգացումը, կրճատում, դիւրացնում է կեանքի դժուարութիւնները. տե՛ս, հիմա կօշիկները մեքենայով են կարում, եւրոպացի գիւղացին մեքենայով է արտը ցանում, կալը կալսում: Իսկ մե՞նք... Հրացանով ու սրով կառավարութիւնների դէմ չես կարող դուրս գալ, մինչ եթէ իմ ասած ճամբան ընդունես, կը տեսնես, որ հայ դատը ինքնըստինքեան կը լուծուի: Եթէ դու այնքան գրքեր կարդացած լինէիր ինչքան ես եմ կարդացել, եթէ դու այնքան երկիրներ տեսած լինէիր, ինչքան ես եմ տեսել՝ քաղաքակիրթ, յառաջադէմ երկիրներ, դու ուրիշ կերպ կը մտածէիր: Մի՛ նեղանայ, Արտո՛, բայց քո մտքի հորիզոնը նեղ է:

— Եթէ, պարոն Նուբար, դու տեսնէիր այն բոլորը, ի՛նչ որ ես եմ տեսել. մարդկային անասելի տառապանքը, ոտնահարուած պատիւը, եթէ դու մտնէիր խըրճիթներից ներս, ուր մարդիկ վախից դողացել են մինչեւ լոյս, դուցէ դու էլ ուրիշ կերպ մտածէիր... Ես հաւատ ունեմ, պարոն Նուբար, հաւատ ունեմ, որ յեղափոխութիւնը էնպէ՛ս, մէկ անգամից պէտք է չուռ տայ մեր ազգի վիճակը է՛... Ես էլ մի խոնարհ գինուոր եմ հայ յեղափոխութեան. .

— Յեղափոխութիւնը կարող է չուռ տալ մեր ազ-

գի վիճակը, բայց վախենում եմ, Արտո՛, մենք տակը մնանք...

— Մենք արդէն տակն ենք, պարոն Նուբար... Երբ մեզ խփում են ու մենք լռում ենք, կը նշանակէ մենք տակն ենք, երբ մեզ պակասում է նամուսն ու թասիբը, կը նշանակէ մենք տակն ենք, վերը ուրիշներն են ու մեզ կոխոտում են...

Ամբողջ խօսակցութեան ընթացքին, անձնատուր իր մտածմունքներին, Բեհեղ տատը համբիչն էր քաշում: Համբարձումն ըստ իր սովորութեան լուռ, ժպիտը դէմքին, իրենց գործի «պաշտպանութիւնը» լիովին յանձնել էր Արտօին: Նա երբեմն-երբեմն նայում էր մօրը, աչքերով հետեւում համբիչի հատիկներին, ու կարծես աշխատում էր դուշակել նրա մտածմունքները:

« Ով կիմանայ, մտածում էր ինքն իրեն Բեհեղ տատը, ով կարող է իմանալ... Մեքենան կօշիկ կը կարէ, հող կը հերկէ, բայց հօ չի՞ կարող այնպէս անել, որ մարդը երջանիկ լինի, որ մարդու սիրտը չմղկտայ, հոգին չցաւի... Մարդու գլխաւոր բանը ներսում դտնուող ջիդեարն է, հոգին: Հոգու գործը դժուար է, ասել չի լինի, իսկ միտքը, որ կայ, ինչքան էլ դիրք կարդայ, դարձեալ չի կարող իմանալ իսկական բանը... »

— Ես, պարոն Նուբա՛ր, մի կեանք ունեմ, էն էլ իմ ազգին մատաղ կանեմ,— դոչեց Արտօն:

Նուբարը ժպտաց: Ի՞նչպիսի անձնազոհութիւն, ի՞նչպիսի խորը հաւատ ունէր Արտօն... Նա մեղմութեամբ դարձաւ Արտօին.

— Քաջ ես, Արտո՛, ու անձնուէր, բայց հաւատա՛, որ մեր ազգին աւելի մեծ ծառայութիւն արած կը լինէիր, եթէ, օրինակ՝ քու ունեցած մատաղ այդ կեանքդ զոհելու փոխարէն, ամուսնանայիր ու զաւակներ պարգեւէիր ազգիդ:— Նուբարն սկսեց ծիծաղել:— Քեզ պէս դեղեցիկ, առողջ երիտասարդներն են, որ պէտք է աւելացնեն ազգի համբանքը: Դու, եղբայրս՝ Համբարձումը, մի մոռացէք, որ մեր հարցը եւ համբանքի հարց է...

Սակայն Նուբարի ծիծաղով արտասանած այս խօսքերը անսպասելի կերպով յուզեցին Արտօին: Նրա դէմքը կարմրեց, սիրտը կծկւեց, աչքերը լեցուեցին դուրդուրանքով...

Արտօն կամաց մի յոգւոց հանեց, բայց լռեց անմիջապէս:

— Հայդուկը չպէտք է ամուսնանայ,— ասաց Համբարձումը,— հայդուկը նուիրուած է իր ժողովրդին, մի օր այստեղ է, մի օր սարի գլխին, հայդուկը ուրիշի մեղքի տակ չպէտք է մտնէ: Ու նա նայեց Արտօին:

Բայց Արտօն լուռ էր այլեւս:

Ու մինչ Բեհեղ տատը քաշում էր համբիչի հատիկները, իսկ Նուբարը շարունակում էր համոզել Արտօին իր առածների մէջ, պարտէզից դէպի փողոց տանող դուռը բացւեց ու շտապ քայլերով ներս ընկաւ Վարդենին:

Ամենքն իսկոյն դարձան նրա կողմը: Նուբարն ընդհատեց խօսակցութիւնը, բայց Վարդենին կանգնեց յանկարծ ու առանց մի բառ արտասանելու անհամարձակ աչքերով նայեց հօրը:

— Հայրի՛կ...

Նուբարը հարցական նայեց նրան:

— Հայրի՛կ... Բաղրատը...

Հազիւ էր Վարդենին արտասանել այս դոյդ բառերը, երբ Արտօն յուզած վեր թռաւ տեղից...

— Բաղրա՞տը...— հարցրեց նա:

Վարդենին հաւանութեան նշան արաւ ու գլխով փողոցի դուռը ցոյց տուաւ:

Նուբարի դէմքը մթագնեց ու յօնքերը կիտուեցին:

—Ի՞նչ է ուզում, — հարցրեց նա սառնութեամբ։ Ամբողջ եօթ օր է գործի չի գալիս...

— Նա դարձեալ կուռեց իր եղբօր հետ,— պատասխանեց Վարդենին տխուր ձայնով։

Տիրեց տհաճ մի լռութիւն։

— Խնդրեցի, որ դայ մեզ մօտ դիշերէ։— Վարդենին մօտեցաւ հօրը ու փաղաքշանքով գրկեց նրան։

— Պարոն Նուբար... — խօսեց յանկարծ Արտօն,— պարոն Նուբա՛ր, իմ սենեակում ապատ բազմոց կայ...

Նուբարը նայեց Արտօին, յետոյ հանդարտութեամբ ազատուեց Վարդենու թեւերից։

— Թող ներս դայ, ասաց նա մեղմութեամբ, բայց ինքը վեր կացաւ տեղից ու բոլորին բարի դիշեր մաղթելով՝ հեռացաւ բակից։

Շուտով դէպի փողոց տանող աստիճաններից դանդաղ քայլերով ցած իջան Տիգրանն ու Բագրատը։

Լուսամուտի ետեւից թափանցող ճրագի լոյսն այնպէս շեշտակի էր ընկել Բեհեզ տատի երեսին, որ բակ մտնելով Բագրատին միայն այդ երեւաց։ Արտօն քաշուել էր մութի մէջ, Մանին ու Համբարձումը յենուել էին պատին։ Բագրատն ինքնաբերաբար մօտեցաւ տատին։ Երբ նա կուզաւ համբուրելու տատի ձեռքը, ճրագի դեղին լոյսի տակ նրա դէմքը աւելի գունատ երեւաց։

« Հոգու բանը դժուար է,— մտածեց Բեհեզ տատը,— հոգու բանը ասել չի լինի... » Նա լուռ գրկեց Բագրատին, քաշեց դէպի իրեն ու ջերմագին համբուրեց նրան։

Բագրատը մնաց գլխիկոր եւ Բեհեզ տատը սկսեց մեղմօրէն շոյել նրա կախ ընկած գլուխը։

Նրանք մնացին այդ վիճակի մէջ երկար մի րոպէ։

Հեռու թաղի փոս մի բակի մէջ էր ապրում Նուբարի մեծ քոյրը, այրի Մարջանը։ Սեւ ու խոր աչքերով բարձրահասակ մի կին, որի բոլոր շարժումների մէջ կախարդական ու հմայող մի բան կար։

Նրան նայելիս թւում էր միշտ, որ այնտեղ, քառակուսի պատուհանով իր սենեակի խորքում, Մարջանն անպայման թաղցրած պէտք է լինէր խորհրդաւոր շատ իրեր, որ ունենում են բարի կախարդները։ Երկաթեայ եռոտանի, ճաղարաձեւ ամաններ, երկար եղէգներ, ապօթած սիսեռի հատիկներ ու անմահական ջուրը բերող կապտաթեւ թռչունների քնքոյշ փետուրներ...

Իր տունն այնքա՛ն մաքուր էր, այնքա՛ն մաքուր, որ չոփի կտոր իսկ դժուար էր գտնել։ Ինքնաեռը ոսկու պէս դեղին էր, ապակիները փայլփլուն... Իսկ կիսախաւար սենեակի մէջ, լուսամուտի ճիշտ դիմացը կախած հայելին, որի մէջ անդրադառնում էին բակի մանր քարերից շինուած սաքուն, գունաւոր կապերտը, դեղին ինքնաեռը ու նրա կողքին նստած ինքը Մարջանը, այնպիսի խորհրդաւորութիւն էր ներշնչում, որ մարդ ակամայ սկսում էր մոռանալ իրականութիւնը, ամեն բան անվերջանալի տարածութեան մէջ տեսնելով։

Մարջանի մեծ տղան, Արսէնը, դերձակ էր։ Բագրատը նրա փոքր տղան էր — Մարջանի ցաւն ու դարդը։

— Աստուած վերջը բարի անի,— ասում էր նա յաճախ տխուր-տխուր նայելով Բագրատին։

Քանի՞ քանի՞ անգամներ էր Մարջանն ուխտ արել, ոչխար մորթել, որ դուցէ ապատէ իր տղային այդ անիծուած սովորութիւնից, բայց ի զուր։

Հարեւանները խորհուրդ էին տուել « դիր » անել տալ։—

— Հերու, Զաւ-Ղալամենց տղան հիւանդ էր, էլ բժիշկ, է՛լ դեղ, ոչինչ չօգնեց, վերջը գնացին դէրվիշ

Բաբի մօտ։ Գիր արաւ, աղօթք արաւ, տղան լաւացաւ։

— Խօլերի տարին էր, աղջի։ Մօրքուրս եկաւ մեր տունը, թէ ես խօլերա-մօլերա չեմ հասկանում, էն ճմերուկը դրէք առաջս։ — Այ մօրքո՛ւր, մի կեր, կը հիւանդանաս... Էս կողմ, էն կողմ, թէ չէ՛ որ չէ՛։ — Հէ՞ր չուտեմ,— ասաւ ու կերաւ։ Որ կերաւ հա՛, Մարջան, մի քիչ անցաւ-չանցաւ տեսանք գոյնը նեռաւ... Էն էր երեսի վրայ գետին ընկաւ։ Ի՞նչ անենք, ի՛նչ չանենք, վազ տուինք դէրուիշ Բաբին կանչեցինք։ Դէրուիշ Բաբէն եկաւ, սեւ հաւը մորթել տուաւ, նրա արիւնով թղթի վրայ բան-ման գրեց, աղօթք արաւ, ձեռքերը վրան թափ տուաւ, գրած թուղթը կպցրեց ճակատին... Բա չլաւացա՞ւ։

— Թիզ բացող Ուսկին էլ լաւ ա, թասին նայող Խոջէն էլ վատ չի... Ո՛ր չի նայում ջրին, ամեն բան տեսնում ա։ Գլխիդ եկածը պատմում, գալիքդ հասկանում ա... Մեծ հիւնար ունի, պայծառ ա տեսնում։ Հա՞մմա դէրուիշ Բաբի գրքերը ամենից գօրաւոր են։

Եւ Մարջանը վճռեց գնալ դէրուիշ Բաբի մօտ։

Երբեմն գիւղի քահանայ էր դէրուիշ Բաբէն, ծեր մի մարդ, որին հրաժարեցրել էին իր պաշտօնից « սատանաների » հետ գործ ունենալու պատճառով... — Սուրբ մարդ չի, եկեղեցու մարդ չի, թող գնայ իր գործին, — ասել էին գիւղացիք,— վերջը գլուխս վտանգ կը բերէ։

Փոս ու կիսախաւար մի նրբուղու խորքում գտնուող միակ տան մէջ էր ապրում դէրուիշ Բաբէն։ Նրա բակում այնքան շատ ծառեր կային, որ ամառ ժամանակ, տերեւներն ու ճիւղերն իրար գալով բացարձակապէս ծածկում էին երկինքը՝ բակի գլխին մի կատարեալ ամպհովանի ստեղծելով։ Իրար մէջ բացուող գոնեերով երեք փոքրիկ սենեակներ ունէր նա, զարդարուած բազմաթիւ գորգերով։ պատ, առաստաղ, յատակ բոլորը գորգապատ ու գորգածածկ էին։ Կապերտներից չինուած վարագոյրները լրացնում էին պատկերը՝ սենեակները միշտ կիսախաւար մթութեան մէջ պահելով։

Դէրուիշ Բաբի գօրութեան շատ մարդ չէր հաւատում, ոմանք մինչեւ իսկ արհամարհում էին նրան, բայց կային մարդիկ, որ ցանկանում էին հաւատալ նրա բախտաչէն լինելուն, նրա հմտութեան եւ կատարում էին նրա բոլոր հրամանները։ Սակայն, այս բոլորը կատարւում էր քօղարկուած։ Ինքը դէրուիշ Բաբէն երբեք սովորութիւն չունէր խօսելու իր դիտցած գօրութիւնների մասին եւ մարդիկ կարծես իրարից թագուն էին յաճախում նրա մօտ։— Քրիստոնեայ մարդիկ ի՞նչ պէտք ունէին բախտագուշակի...

— Չէ՛, ջանըմ, ինչ ես խօսում, հրաշահոս գրքեր ունի մարդը, ինքն էլ հօ կռապաշտ չէ, հեթանոս չէ, մարդը քահանայ է։ Սողոմոն Իմաստունի գիրքն ունի, Վեցհազարեակ ունի, Աւետարան, Աստուածաշունչ ունի։

Իր գրքերը, որոնց ուժի մասին շատ էին խօսում, դէրուիշ Բաբէն պահում էր մառանում, երկաթեայ մի սնդուկի մէջ։ Ասում էին, որ նա ամեն առաւօտ ժամերով փակւում էր իր մառանում, կարդում էր կարդում ու երբ դուրս էր գալիս, որ հոգին ու միտքը պատրաստ են արդէն, բարձրանում էր սենեակ, ուր սպասում էին իր յաճախորդները։

— Հապա՛, տգիտութիւն, ինքնամոռացութիւն, մենութիւն, ջերմեռանդութիւն է հարկաւոր։ Ասում էին խորհրդաւոր կերպարանք առած նրա մօտից դուրս եկողները աշխատելով հաւատալ մարդկային մտքի ու աչքերի առաջ ելած մութ վարագոյրի ետեւ գտնուող գաղտնիքների գոյութեան, որոնց բանալին դէրուիշ Բաբի մօտ էր, նրա գօրաւոր գրքերի մէջ։

Լուծել առեղծուածը, գտնել գաղտնիքը, թափանցել եղածի մէջ...

Դէրվիշ Բաբէն ամէն տեսակի գիր ու թալիսման անել գիտէր: Զանազան նշաններով, տառերով, երբեմն գունաւոր թանաքներով, յատուկ թղթերի վրայ երկարերկար բաներ էր գրում, եօթ գոյն արբշում թելերով թալիսմաններ հիւսում:

— Հաւատա՛ ու գնա՛,— ասում էր նա ներշնչող ձայնով,— հաւատա՛ եւ ցանկութիւնդ կը կատարուի:

— Դէ, ի հարկէ, Մարջան խանում, ի հարկէ, որ խմելն էլ մի հիւանդութիւն ա, հա՛մմա էտիկը մի բան ա, որ մարդուս իր ձեռն ա. ուզի կը խմի, ուզի չի խմի:

— Չի կարողանում, դէրվիշ Բաբա, չի կարողանում ձեռք քաշել: Մի լաւ գիր արա՛ իրեն համար, գործութիւնդ շատ լինի:

— Աղօթք էլ կանեմ, Մարջան խանում, գիր էլ կանեմ որդուդ համար:

Եւ տակայն, ո՛չ գիր, ո՛չ աղօթք, ո՛չ թալիսման չօգնեցին: Բագրատն իր խմացածն էր անում:

Մարջանը դժգոհ էր, սաստիկ դժգոհ:

— Տանը հասած քոյր ունես... Արսէնի պատուի համար էլ լաւ չէ:

Բագրատն շտապում էր տանից շուտ հեռանալ, չլսելու համար մօր խօսքերը ու մանաւանդ խուսափելու համար մեծ եղբօր հետ հանդիպելուց:

«Խե՜ղճ երեխայ», մտածեց Բեհեղ տատը չարունակելով շոյել Բագրատի գլուխը:

Բագրատը կռացաւ ու նորից համբուրեց տատի ձեռքը:

Մինչ այդ Վարդենին արդէն վազել Արտօի սենեակում Բագրատի համար անկողին էր պատրաստել, վառել էր ճրագը, փարչը ջուր լցրել:

Արտօն ուղեկցեց Բագրատին իր սենեակը:

Բակում կամաց-կամաց լռեցին խօսակցութեան ձայները: Վասիլ խանը փայտը թրխկ-թրխկացնելով հեռացաւ, գնաց: Մանին ուղեկցեց նրան մինչեւ փողոցի դուռը, Համբարձումը քաշուեց իր սենեակն ու լուսամուտի եռեւի լոյսը մարեց:

Արտօն ու Բագրատը մնացին մենակ:

Սենեակի առաստաղի վրայ ճրագի տաղակու կլոր ծայրը բազմաթիւ օղակներ էր շինել, անկիւններում ստուերները շատացել էին եւ պատրոյդի երերուն ցոլքերի տակ պատերին կախուած հայդուկների նկարները կենդանութիւն էին ստացել:

Բագրատը լուռ էր:

Լուռ մօտեցաւ նա լուսամուտին ու սկսեց նայել դրսի մութին:

— Լոյսը մարեմ, ախպէր ջան,— հարցրեց Արտօն ցած ձայնով:

Բագրատը երեսը դարձրեց:

— Գիշերը դեռ շատ չէ յառաջացած, շարունակեց Արտօն, կարող ենք պառկել ու իրար հետ զրուցել: — Նա ժպտաց իր մաքուր, իր շողարձակ ժպիտով:

Այդ ժպիտը կարծես սթափեցրեց Բագրատին:

— Գիտես ի՞նչ, Արտո,— ասաց նա յենելով լուսամուտի փեղկին,— հաւատա՛, որ ես երբեք այս տունը չէի գալ գիշերելու, երբեք չէի համաձայնի գալ, եթէ Վարդենին չլինէր... Բայց անկարելի եղաւ նրան մերժել...

Բագրատի ձայնի մէջ յուզմունք կար: Նրա հոգին լցուած էր ու վիրաւորուած:

Արտոն մօտեցաւ նրան, ձեռքը դրաւ ուսին ու քընքշութեամբ նայեց աչքերին:

— Շատ երիտասարդ ես, Բաղրատ, եւ շատ տաքարիւն: Չէ՞ որ այս տունը քեզ համար օտար չէ:

— Դու չգիտես, Արտո՛, դու չգիտես... Տունն օտար չէ, բայց քեռիս... Նա ինձ վրայ այնպէս վերից է նայում... Գիտեմ, զգում եմ, իր աչքում ես կորած, փչացած մէկն եմ այլ եւս...

— Բայց նա քո լաւն է ուզում, Բաղրա՛տ:

Բաղրատը չպատասխանեց, մօտեցաւ իր մահճակալին ու անփոյթ ընկաւ, նստեց նրա վրայ:

— Դու նրան չես ճանաչում, Արտո՛:

— Նա քեզ սիրում է:

Բաղրատը բորբոքւած վեր կացաւ տեղից:

— Կուզէի, որ դայլը տղարան ու տեսնէիր նրան այն ժամանակ, երբ խիստ ու բարկացած աչքերով կանգնում է կողքիս, մինչ ես ծանր այն անիւն եմ դարձնում... Գիտեմ, զգում եմ, նրան թւում է, որ մեծ լաւութիւն է անում ինձ, գործ է տալիս, հաց է տալիս ինձ... Ու յետոյ՝ անվերջ խրատ ու նկատողութիւն...

— Ի զուր ու աւելորդ մտածումներ չե՞ն քո մտածումները, Բաղրա՛տ:

Բաղրատը լռեց: Մնաց անշարժ կանգնած իր տեղում... Մտածմունքի մէջ ընկաւ կարծես... Նա յիշեց իր մանկութիւնը, քեռի Նուրարի խնամքոտ ձեռքերի տակ անցկացրած իր մանկութիւնը, երբ նա Զաւէնի հետ միասին յաճախում էր դպրոց... Յիշեց Զաւէնին, իր ամենասիրելի ու մտերիմ ընկերոջ...

Անցաւ մի քանի րոպէ: Նա կրկին նստեց մահճակալին...

— Զաւէնն ու ես միասին աւարտեցինք, շարունակեց Բաղրատը տխուր ու ընկճած ձայնով... Յետոյ

Զաւէնը դնաց շարունակելու իր կրթութիւնը, իսկ ես մնացի: Ես էլ էի ուզում գնալ, հեռանալ այս քաղաքից... Բայց չկարողացայ ու մնացի այս ճահճի մէջ: Մնացի մէկ տարի, երկու տարի, երեք տարի... Ի՞նչ անէի: Եղաւ ժամանակ, որ յուսահատութիւնը պաշարեց ինձ... Ուզեցի մի լաւ գործ անել, ուզեցի բարձրանալ, մարդ դառնալ... Շուրջս ամեն ինչ մեռած էր սակայն. չկար ո՛չ գործ, ո՛չ հետաքրքրութիւն: Եւ ուժերս կամաց-կամաց սպառուեցին: Յետոյ կորցրի հաւատս, կորցրի յոյսս...

Բաղրատին թւում էր, որ ինքը մենակ էր այդ սենեակի մէջ ու կարծես թէ իր սրտի հետ հաշուեյարդարի էր նստել:

— Ես զգում էի իմ մէջ թաղնւած ոյժեր, որ չէի կարողանում որեւէ նպատակի ծառայեցնել, որ չէի կարողանում օգտագործել... Անճարակ էի, անզօր էի... Եւ թաղեցի ամեն ինչ... Ես իմ մէջ ամեն ինչ թաղեցի...

Արտոն մարել էր լոյսն ու թեք ընկել իր անկողնու վրայ:

Մթութեան մէջ, դիմացի պատի մօտից եկող, յուզմունքով ու բողոքի շեշտով լցւած այդ ձայնը տարօրինակ ձեւով էր ազդում նրա վրայ: Սկզբում նա մեծ ուշադրութեամբ էր լսում, բայց կամաց-կամաց միտքն սկսեց աւելի հեռուները սաւառնել...

— Յե՞տոյ:

— Գլուխս այս ու այն կողմ տուի, բայց բան դուրս չեկաւ: Վերջն ասացին. արի, գնա՛ Մարաղա...Կարապետի տղան այնտեղ է, Մարկոսի տղան այնտեղ է, գնա՛, ասացին, դու էլ մի գործ արա, դրամ աշխատիր: Իսկ Մարաղան, Արտո՛, մի վոս է...Սիրտ պէտք է, որ դիմանայ... Իսկ իմ խեղճ սիրտն այն ժամանակ հազիւ քսան տարեկան էր... Այնտեղ էր ահա, որ ես սկսեցի խմել:

Մենակ չէի, շորս-հինգ հոգի էինք, բոլորս էլ նոյն հոգեկան վիճակի մէջ...

Լռեց:

Տունն ու պարտէզը լիովին թաղուել էին լուութեան մէջ: Մութն իջել, պարուրել էր ամեն ինչ, ու տիրում էր այնպիսի մի խաղաղութիւն, որ քնածների շնչառութեան ձայնը լսելի էր կարծես: Ծառերն ու թփերն անշարժ կանգնած բնութեան հետ հաղորդակցութեան մէջ էին մտել ու մոռացել էին իրենց երկրային գոյութիւնը: Ծաղիկները քնել էին՝ լուսաբացը երազելով: Լսւում էր միայն ջրամբարի ծորակից կաթ-կաթ թափուող ջրի ձայնը, որ համաչափ կերպով ու հաւասար միջադադարներով կաթում էր, հա կաթում՝ թա՛ք-թա՛ք-թա՛ք...

Արտօն լսում էր Բագրատին, բայց չէր անդրադառնում նրա ասածներին, հոգին լցած էր մի ուրիշ զգացմունքով...

Վաղուց, շատ վաղուց էր արդէն, որ Արտօն առիթ էր փնտրում խօսել Բագրատի հետ այդ նիւթի մասին...

Վաղուց էր, որ նա ցանկանում էր իմանալ նրա կարծիքը... Կը յաջողէ՞ր արդեօք իրեն... Կարելի՞ էր նման մի առաջարկութիւն անել...

Մթութեան մէջ, բաց լուսամուտից եկող դիւերային կիսախաւար լուսաւորութեան տակ, Արտօի վառած երեւակայութեան առջեւ այժմ միայն մի պատկեր էր պտտում ... Դա Բագրատի քրոջ, Մարօի նրբակազմ հասակն էր... Եւ մթութեան մէջ կայծկլտում էին նրա սեւ ու փայլփլուն աչքերը...

Քանի-քանի անգամներ քիչ մնաց ընդմիջէր Բագրատին, խօսէր, հարց ու փորձ անէր Մարօի մասին... Բայց զսպեց ինքն իրեն: Մի բան կաշկանդում էր նրան. « Մի քիչ էլ սպասենք, տեսնենք, դեռ մի քիչ էլ սպասենք... »:

Արտօի սիրտը կրակ էր ընկել, վառւում էր:

— Ի՞նչ աղջիկ է՛... մտածել էր նա հենց առաջին հանդիպումին: Իսկ հանդիպել էր նա Մարօին շքեղ մի հարսանիքում, զուռնայի ու դաւալի, թառի ու երգի մէջ ու մի քիչ էլ տաքացած գլխով:

— Էս ինչ աղջիկ է՛, կրկնել էր դարձեալ, ու նրա հոգու մէջ նոր մի բան էր ծնւել:

Վասիլ խանի կրտսեր որդու հարսանիքն էր... Արտօն շատ լաւ յիշողութիւն ունէր պահած այդ հարսանիքի մասին: Նախ, որ այնտեղ էր տեսել Մարօին եւ յետոյ՝ երկար տարիներ իր երկրից հեռացած, նա վաղուց էր, որ այդպէս սրտանց չէր ուրախացել, քէֆ արել ու երգել:

Ինչ դեղեցիկ դիշեր էր այդ դիշեր... Փողոցի մութի մէջ պսպղում էին հարսնեւորների վառ լաքաները, երկար մոմերն ու փայտեայ ջահերը, որոնց միջից երեւում էր ինքը հարսը, կանաչ-կարմիր հաղուստներով, վարդագոյն քօղով եւ երեսն ի վար, երկու կողմերից կախւած ոսկէ թելերով... փայլփլուն, պսպղուն: Վառւող մոմերի եւ ջահերի միջից, նորահարսը, ամօթից չիկնած, կաս-կարմիր երեսով եւ փայլփլուն իր հաղուստներով, վառւող, բոցոտ կրակի զգայութիւն էր տալիս:

— Արմաղ-չարմաղ աղջիկ:

— Թէֆ թոնրի կրակ աղջիկ:

— Մի տե՛ս է, տօ Արտօ՛, մի տես, հե՛նց ա արեւի կտոր:

Օդի մէջ հրճիղներ էին պայթում: Զուռնան չարունակ նուագում էր, ու Արտօն երիտասարդների հետ միացած « Ա՛յ Ջան, ա՛յ Ջան, քեզ մատա՛ղ », գոռալով հարսը ժամ էին տանում:

Այս տեսարանի վերյիշումը կամաց-կամաց այնպէս էր կլանել Արտօին, որ նա այլեւս չէր լսում Բագրատի

խօսքերը եւ նրան թւում էր մինչեւ իսկ, որ Բագրատը երազի մէջ էր խօսում, այնպէս ցածր էր հնչում նրա ձայնը:

Հարսանիքին մասնակցում էր ողջ քաղաքը: Եկեղեցու բակը, տների տանիքները, փողոցները լեփ լեցուն էին բազմութեամբ: Բոլորն սպասում էին հարսի դալըստեան: Բէֆ սիրող մարդիկ, դեղեցիկ տիւթից օգտուելով, իրենց տան դռան առջեւ սեղան էին բացել. դինի, օղի վրան դրել, խմում էին ու երգում, եւ բաժակները լեցրած միանում էին հարսնեւորներին, խանդարում նրանց երթը, շրջան էին բացում, հարսի առաջ պարելու համար, ծափ էին տալիս եւ ձեռների բաժակն, ուժով, փեսային խմեցնում:

— Այ ջա՜ն, այ ջա՜ն...

Իսկ այնտեղ, Վասիլ խանի գորգերով ծածկուած դեղեցիկ սենեակի մէջ... Արտօի սիրտը սկսեց արագ-արագ բաբախել...

— Այ շաբա՜շ, ա՛յ շաբա՜շ... Խաղացողի երեսը պարզ լինի, ա՛յ շաբաշ, ա՛յ շաբա՜շ...

Մարօն էր պարողը... Էն ի՜նչ հասակ էր... Ի՜նչ աչքեր ունէր անիրաւ աղջիկը: Վա՜խ-վա՜խ, կարծես թէ էս սիրտս տեղից պոկեցին ու նրա ոտների տակ դրին... Զէ՛, էդ աղջկան Աստուած ինձ համար է ստեղծել, մտածեց Արտօն: Ցանկարծ նա յիշեց Համբարձումին:— Հայդուկը չպէտք է ամուսնանայ, ուրիշի մեղքի տակ չպէտք է մտնէ... Իրօք, հը՞: Ես սարի-չոլի մարդ, բա մեղք չէ էդ ջէյրանը... Բայց Մարօն շարունակում էր պտտցնել նրա աչքերի առաջ իր երկար, ճկուն իրանը, իր սիրուն աչքերը՝ ամօթխած ժպիտով լեցուն: — Դէ՛, ինչ անեմ, սիրտս չի լսում, խրատ չի լսում... Ցետոյ, դէ մինչեւ էս կողմ, մինչեւ էն կողմ, ո՞վ է իմանում, հալբաթ մի

ճար կը լինի, մեր էս սուրբ գործը մի վախճանի կը հասնի, հալբաթ, չէ՞...

Արտօն գիտէր, որ ամիսներ, երբեմն նոյն իսկ մի ամբողջ տարի էր պէտք հարսանիքի պատրաստութեան համար: Հեշտ չէր: Նախ հարսնախօսը, Էլչին, հաղնւում էր, գարգարւում եւ գնում աղջկայ ծնողների մօտ թէ՝

— Եկել եմ՝ ձեր պարտէզից մի վարդ քաղեմ:

— Բայց մեր պարտէզի վարդը լաւ պահուած վարդ է, քոյրիկ ջան:

— Մեր տղան էլ արուռով, նամուսով տղայ է, միամիտ եղէք: Միայն էն ասէք, թէ ի՞նչ պէտք է բերենք նշանտրուքի համար:

Բայց դեռ երկար հարց ու պատասխանից յետոյ էր միայն որ աղջկայ տէրը վերջապէս խօսք էր տալիս.

— Հը՞... դէ որ եօթը հատ խոնչա բերէք, կը տանէք:

Եւ փեսան պէտք է եօթը հատ խոնչա պատրաստէր: Խոնչաները պէտք է լեցուած լինէին բուռմա-բուռմա չաքարեղէններով, ծաղկի ձեւով շինուած նարաթով, կապոյտ թղթի մէջ փաթաթած երկար ու սրածայր չաքարով ու այդ բոլորը ծեփուած պէտք է լինէր զան թղթով:

Հարսի տանը այդ առթիւ մեծ հիւրասիրութիւն էր լինում: Քահանան մուրճով չաքարն էր ջարդում, օրհնում էր խոնչաները: Ցետոյ բոլոր ներկաներին պնակներով չաքարեղէն էին բաժանում, որ տուն տանեն եւ տնեցիներին բաժին հանեն:

Ահա այդ օրւանից սկսած էր միայն, որ երկու կողմերը հարսանիքի պատրաստութիւն էին տեսնում եւ վերջապէս մէկ ամիս առաջ «կնիկ կանչող»ը նախշուն, ծաղկաղարդ թաշկինակի չորս անկիւնները իրար կապած, մէջը ծաղկեփնջեր եւ կարմիր խնձորներ լեցրած դռնէ-դուռ էր ընկնում.

— Զորս կիրակի յետոյ, հինգերորդ կիրակին, լոյս երկուշաբթի օրով, վախտով, տնով տեղով կը հաւաքուէք, կը գաք հարսնիք:

Հապա՞, հեշտ չէր, ժամանակ էր պէտք:

— Մէկ տարի չէ, եօթը տարի էլ կը սպասեմ, մտածեց Արտօն: Բայց խոնչանները ի՞նչպէս պիտի պատրաստեմ: Նա մտաբերեց եւ այն դեղեցիկ տեսարանը, երբ Վասիլ խանի նորապսակ հարսի խոնչաններն իր հօրենական տնից զուռնով ու աղմուկով տուն էին բերել: — Հարսի օժիտն է, հարսի օժիտն է... Ու մարդիկ թափուել էին փողոց:

Երկար մի շարան երեսներին քօղ քաշած խոնչաններ, որ թիկնաւէտ տղամարդիկ գլխներին դրած տանում էին հարսի տնից դէպի փեսայի տունը, զուռնայով ու «հարայ-հրոցով»:

Ամենից առաջ քայլում էր հայելի տանողը՝ հայելին գլխին դրած: Այս մարդը յատուկ նէր ունէր եւ յատուկ պատիւ: Հայելին նորապսակների կեանքի անդրադարձման խորհրդանիշն էր, նրանց երիտասարդ սրտերի նման փայլուն ու մաքուր. վա՛յ թէ յանկարծ կոտրուէր... դժբախտութիւնը պատրաստ էր ուրեմն:

Ահա առաջին խոնչան, հարսի հագուստները, նախշուն խաս բուխչաների մէջ դրած, բուխչաների ծայրերը գունաւոր դնդասեղներով ամրացրած: Երկրորդ խոնչան զոյգ լաչաներն էին, ապակեայ գլուխներով, տասներկու հատ մոմեր շուրջը դրած, երկու զոյգ «կլոր փորով» արծաթէ ճրագներ: Առանձին խոնչա էր յատկացուած պատին խփելու ձեռագործ բարձերի համար: Իսկ խոնչանների վերջում երեք ճերմակ ձիեր, ահագին գանգակներ վզներից կախուած, զրը՛նգ հա զրը՛նգ, զրը՛նգ հա զրը՛նգ, հարսի սնդուկներն էին տանում:

— Հա՛յ հո՛ւյ ճամբայ բացէք, դէ՛ս անցէք, դէ՛ն անցէք, եկանք, բերինք:

Այդ օրը բոլոր բարեկամները հաւաքուել էին Վասիլ խանենց տունը, հարսի օժիտը բանալու:

— Զառով, զանջիլով, ծրով, ծփծփով, էս մէկ ձեռք հարսի հագուստ:

— Շահիսասանդով գարդարուած մէկ շապիկ:

— Բաղդամչա նախշերով երկու շապիկ:

— Էս հարսի բաղնիքի սարքը: Երկու թաս, Զանջանի սանր, Ղազինի ֆիսա:

— Էս հարսի տասներկու ձեռք հագուստ-կապուստը:

Տան ամենամեծ սենեակում, պատերի տակ շարուած աթոռների վրայ նստած էին հանդիսականները: Մէջտեղը, գորգածածկ դետնին փռուած սիւզանու վրայ մի կին օժիտն էր բացում ու ժպտալով նայում բոլորին, որոնք զոհունակութեամբ գլուխներն էին օրօրում, ոմանք իրենց անցեալը յիշելով, ոմանք ապագան երազելով:

— Զորս-հինգ հոգի էինք... Բոլորս էլ տասնինը, քսան տարեկան... Մարաղա...

Արտօն երազից սթափուածի պէս բռնեց Բագրատի վերջին խօսքերը...

— Քունս չի տանում, Բագրատ,— ասաց նա քիչ յետոյ:

— Իմն էլ, Արտո՛:

Նրանք միաժամանակ վեր կացան պատկած տեղից ու նստեցին մահճակալին:

— Բագրա՛տ... դարձաւ յանկարծ Արտօն Բագրատի կողմը ցած ու դղոյչ ձայնով... Ու այդ ձայնն այնպէս տարօրինակ հնչեց Բագրատի ականջին: Նա մթութեան մէջ փորձեց նայել Արտօնին:

— Բագրա՛տ, քո քրոջը ինձ կը տա՞ն... Բայց Ար-

տօն լռեց խսկոյն, կարծես ինքն իսկ վախեցաւ իր ձայնից, յանկարծակի իր առաջարկից:

Բագրատը շարժեց նստած տեղը:

— Մարօի՞ն... հարցրեց նա:

— Մարօին...

— Կուզե՞ս... ասաց Բագրատը չշնչալով:

Արտօն ելաւ, նստեց Բագրատի կողքին:

— Դու կը խօսե՞ս իրեն հետ... Առանձին... Իրեն հետ...

Նրա ձայնը դողում էր յուզմունքից: Բագրատը գգացուեց: Արտօն սիրահարուել էր...

— Կը խօսեմ, Արտո՛,— պատասխանեց Բագրատը ջերմօրէն սեղմելով նրա ձեռքերը:

Ցանկարծ Արտօն կանգնեց Բագրատի առաջ... Նրա խոշոր հասակը սենեակի կիսախաւար մթութեան մէջ աւելի հսկայ երեւաց Բագրատի աչքին: Արտօն երկու ձեռքերով գրկեց նրան՝

— Լսպէս, սիրտս, ինչպէս ասեմ, փշուր-փշուր է լինում...

Դրսում ջրամբարի ծորակի ջուրը շարունակում էր իր միապաղաղ երգը: Ծառերն սկսել էին արդէն կամաց-կամաց սլսլալ եւ օդը լեցւում էր արթնացող թռչունների ծլւլոցով: Թեթեւ մի զեփիւռ շոյում էր ծաղիկների կախ ընկած դլխիկները եւ երկինքը դողում էր կարծես, դիշերւայ կախարդանքներից չսթափուած երիտասարդ կնոջ սրտի պէս:

Լուսաբաց էր:

6

«Սպասում եմ պատասխանիդ...» —

Վերջացրեց Տիգրանը կարճ ու պարզ իր նամակը եւ շտապ դուրս եկաւ փողոց:

Անցաւ ոլորապտոյտ նրբուղիները, ծռւեց մեծ փողոցով, կտրեց, անցաւ միջնաբերդի ծառաստանն ու երբ հասնէն առաւ Շողերենց տան դռան առաջ, սիրտն սկսեց բաբախել:

Շողերենց տան դուռը բաց էր, եւ Տիգրանն առանց աղմուկ հանելու մտաւ նախասենեակ:

Ամենքին ծանօթ ու ամենքին սիրելի նամակաբեր Սէթն ապրում էր քաղաքի ծայրում, հին ճաշակով շինուած սիրուն մի տան մէջ:

Պարտէզի բոլոր պատերը ծածկուած էին խաղողի փարթամ որթերով, աջ ու ձախ կողմերում դռնուում էին երկու շատրւաններով աւազաններ, որոնց շուրջը միշտ անպակաս էին քրքում, շահպրակ եւ անուշաբոյր սուսամբարներ:

Վարդագոյն աղիւսներով շինուած շէնքը, որ քարէ ցանկապատերով շրջապատուած աստիճաններ ունէր, դընտնուում էր պարտէզի ճիշտ կենտրոնում: Աստիճանների

գլխին, լայնօրէն բացուող դռներն ու լուսամուտները զարդարուած էին բազմագոյն ապակիներով:

Առաւօտեան արշալոյսի եւ երեկոյեան վերջալոյսի պահին կանաչ, կարմիր, դեղին, մանիշակագոյն այդ ապակիները ծիածանի գոյների շլացուցիչ խաղով, տունը լցնում էին պսպղուն ճառագայթներով եւ հեռից, ծառերի արանքից դիտելիս, թւում էր թէ արեւի դունդը եկել, տան մէջ էր մտել:

Ինքը՝ Սէթը, բարձրահասակ, սեւ աչքերով, բրոնզէ դէմքով արեւելքցու մի տիպար էր: Իր համեստ արտաքինի ու հասարակ շարժ ու ձեւերի տակ թաքնուած էր կեանքի գեղեցկութիւնները լիովին ըմբռնող ու գնահատող մի հոգի:

Նստում էր նա ամեն երեկոյ իր պատշգամբում վեր մագլցած խաղողի որթերի տակ, թէյի բաժակը ձեռքին, խաղաղ ու անդորր եւ նրա հոգին անհունի հետ հաղորդակցութեան մէջ էր մտնում: Նա չէր խօսում, նայում էր ու զգում եւ ըմբռնում էր զգալով: Չէր յուզւում եւ հիացմունքի բացագանչութիւններ չէր անում. թափանցում էր ու հալւում շրջապատի գեղեցկութեան հետ. հալւում էր ու նոյնանում: Նրա հոգին չէր ալեկոծւում վերջալոյսի թրթռուն շողերից, շատրւանի շառաչից: Նա խաղաղ ու բնական, արեւելքցուն յատուկ անձիգ ըմբռնումով հասկանում, խորասուզւում էր կեանքի մէջ ու նրա միտքը փիլիսոփայում էր.— «Հոգին ամեն տեղ է, հոգին անմահ է»:

Իսկ երբ Արմաշը հնչեցնում էր իր թառը, ամեն ինչ կատարեալ էր այլեւս... Ունայնութիւն արձագանգող այս գործիքը Սէթի մարմնի մէջ մի տեսակ սարսուռ էր առաջացնում եւ նա ինքնամոռացութեան մէջ ընկած՝ ցած ձայնով սկսում էր երգել որդու նուագի հետ միասին, աչքերը յառած վերեւ, ձեռքը ծնօտին:

Ցեղոյ գալիս էր Շողերը, նստում գորգին, գլուխը յենում փայտեայ ցանկապատին ու երազանքի մէջ ընկած՝ ճայնակցում էր հօր ցածրաձայն երգին: Ու նրանց անբիծ հոգիներն իրենց պապակած շրթունքները մի պահ երջանկութեան բաժակի եզրին էին հպում:

Տիգրանը յաճախ էր այցելում հեռու, քաղաքի ծայրում ապրող այս ընտանիքին: Նրանց պարզութեամբ ու բանաստեղծութեամբ շաղախուած կեանքը ձգում, քաշում էր նրան: Գունաւոր ապակիները, պարտէզի մէջ շառաչող շատրւանների ձայնը, ամեն-ամեն բան սիրելի էր Տիգրանի սրտին: Ամեն անգամ, երբ նա գալիս էր այդտեղ, չէր մոռանում մանաւանդ մօտենալ սուսամբարների թփերին ու պոկելով նրանցից քնքոյշ մի թերթ ճզմել իր ափերի մէջ... Կախարդական մի բոյր էր սուսամբարը Տիգրանի համար: Նա փակում էր աչքերը, խորը, շատ խորը շնչում նրա բուրմունքը ու մտածում էր ակամայ, թէ տարօրինակ այդ բոյրը աւելի շատ բան չէ՞ր պատմում արդեօք, քան այն հաստ գրքերի մէջ «ապացուցած» գաղտնիքները, որոնց վրայ նա կռացած տքնում էր ու տքնում...

Այդ օրը Սէթը սովորականից շուտ էր վերադարձել տուն եւ քաշել էր իր փոքրիկ սենեակը հանգստանալու: Շողերն ու Արմաշը վարի սենեակում նստած կարդում էին: Ուրախ ընթերցանութեան ազդեցութիւնն էր արդեօք, թէ քմահաճոյք, Արմաշը յանկարծ վեր կացաւ տեղից, իջեցրեց պատից կախուած թառը եւ սկսեց նուագել պարի ուրախ մի եղանակ: Շողերը, որ նստել էր լուսամուտի տախտակին, բարձրացրեց գլուխը, եղբօր ուրախ տրամադրութիւնն անմիջապէս վարակեց նրան ու իրեն իսկ համար անսպասելի կերպով, նա գիրքը հրեց, վեր թռաւ տեղից... Արմաշը զարմացած նայեց նրան: Շողերը քըր-

քլաց ու յանկարծ մի ոստիւնով նետուեց մէջտեղ ու սկսեց պարել։

Նաղանք էր ու բռնկում։

Շեմքի վրայ հմայուած ու քարացած կանգնել էր Տիգրանը։

Երբ վերջապէս Շողերը յոգնած փուեց բաղմոցին, Արմաշը, որ վաղուց նկատել էր Տիգրանին, ծիծաղելով մօտեցաւ նրան ու թեւից բռնելով ներս բերաւ։

Շողերը երեսին իջած խոպոպների տակից բոցոտ աչքերը Տիգրանին դարձրեց։ Այտերը վառուում էին եւ թուխ դէմքն անտառներում ապրող արեւավառ պարմանուհի էր յիշեցնում։ Լեռների եղնիկների հետ մեծացած, ծմակներում վայրի թփերի տակ դազաններից ապաստանած ոգի... Մի հէքեաթ... Երկնքից կաթած մի շող...

Տիգրանը մօտեցաւ Շողերին, նայեց նրա աչքերի մէջ, ուզեց խօսել, արտայայտել իր հիացմունքը, իր սէրը... «Հոգի ո՞ւնի, չո՞ւնի,— մտածեց Տիգրանը,— հուր ու բոցից է շինուած...կարո՞ղ է սիրել ինձ այնպէս, ինչպէս ես եմ իրեն սիրում»։ Նա զգուշութեամբ շօշափեց գրպանում պահած նամակը։

Նրանք երեքով նստեցին ցածլիկ բաղմոցին։

Խօսեցին։ Լռեցին։ Ցետոյ սենեակը պարուրուեց մոխրագոյն մի ամպով, ամեն առարկայ ձեւափոխուեց, մթագնեց։ Պատերն ու առաստաղն աղօտուեցին... Ու կամաց-կամաց նրանց սկսեց թւալ, որ իրենք պոկուում են աշխարհից... Ուշ երեկոյեան այդ ժամին, խոշոր մի ամպի մէջ տեղաւորուած իրենք երեքով ու բաղմոցն այդ կանաչ սաւառնում էին նրանք երկնքի վրայով ուր արեւի ոչ մի շող կար արդէն եւ ուր գիշերն այտերն ուռցրած պատրաստուում էր փչել սեւ շունչն իր։

Ամպը քանի գնում թանձրանում էր, երկինքն աւելի ու աւելի բարձրանում, բակի ծառերը կամաց-կամաց

դէպի վեր ցցուած հսկայ թեւերի էին նմանուում, թփերը աւելի կարճանում էին, լայնանում։

Ամեն ինչ լուռ էր... եւ գիշերն այնքան մօտիկ...

Գիշերը, լի խորհուրդներով եւ արհաւիրքով՝ երկնքից թափուող աստղերի լոյսով բայց անծանօթ գաղտնիքներով։ Ո՞վ գիտէ վաղը արե՞ւ կը ծագէ, անձրե՞ւ պիտի գայ, փոթորկաբեր ամպե՞ր պիտի ծածկեն երկինքը, թէ՞ կապոյտ ծաղիկներ պիտի բացուեն...

Ո՞վ կարող է իմանալ, թէ լոյսն ինչպէս կը բացւէ։

Բաղմոցի բարձերից մէկը թեւերը փռած թռչող աղաւնի է դարձել ու կպել պատին. միւսը կծկուած կատու է՝ դունչը դէմ տուած։

Աթոռները մութ սաւերների են վերածուել, պահարանը գիտակից պահուածքով կանգնած է շնչաւոր մէկի պէս, պատուհանների վարագոյրները փռել են իրենց երկար փեշերը ու ձեռքերը գօտիների օղակներին սեղմած, օրօրւում են իբր դիմակաւոր պարուհիներ, իսկ դրսի մութից չար մի ոգի աչքով է անում...

Դանդաղ ու զգոյշ Տիգրանը վեր կացաւ տեղից... Ինքնաբերաբար ձեռքը մեկնեց հրաժեշտի համար... Ու լուռ մնացած Շողերի ափի մէջ սահեցրեց նամակը։

Ցանկարծ ջերմ մի դող ցնցեց Տիգրանին։ Կարծես ժամանակի ընթացքում շինուած անուշաբոյր բիւրեղեայ մի անօթ տրաքեց սրտի մէջ ու թանկագին հեղուկը տաք յորձանքով թափուեց Շողերի ոտքերի տակ... —

Ամեն ինչ ասուած էր արդէն։

Դեռ մէկ ամիս առաջ Պետրոս դաշն ու Մեսրոպ դաշը, փափախները գլուխներին, տրեխները ոտքերին,

երկար տմբտմբացող մօրուքներով եկել, Նուբարի հետ պայմանաւորուել էին:

— Քանի՞ ձի, աղա Ջան, քանի՞ էշ:

— Մի քաջափա, Մեսրոպ դաշ, հինգ թամբած ձի եւ հինգ բեռնատար աւանակ: Բայց տես, պէտք է ապահով տեղ հասցնես:

— Դու լաւ արխէին կաց, աղա Ջան: Նոր չէ՛, խամ չե՛մ: Եա քո օղբլուշաղը, եա իմ օղբլուշաղը, ինձի համար տարբերութիւն չի անի: Ամեն մէկի կողքին մի-մի չարուադար կը դնեմ: Արխէին, արխէին կաց հա՛...

Գիւղը Մուժումբարն էր:

Ցերեկւայ շողից խուսափելու համար հարկ էր գիշերով ճամբորդել: Ու ահա գիշերւայ կէսն էր: Վառ լապտերներով ու լալաներով հինգ ձիապաններ, հինգ թամբած ձիերով դուռը թակեցին:

— Դէ՛, դէ՛, հա դէ՛, շուտ արէք, ձեզի մատաղ բալէքս շուտ արէք: Ձիերի կերը նոր եմ տուել, զօռները տեղն ա: Հա դէ մի ուշացէք...

— Ա՛ռ, Պետրոս դաշ, ձիերը բարձիր: Անկողին, աթոռ, սեղան:

— Ջանըմ, էս աթոռ սեղանը աւելնորդ ա, աղա Ջան, հաւատա՛, որ աւելնորդ ա:

— Ա՛ռ, սնդուկներ, պայուսակներ:

Գիշերւայ խաւարի մէջ լապտերների լոյսերի տակ ձիաններն էին բարձում, քաջափի մէջ նստացնելով երեխաներին:

Քաջափաները պատգարակներ էին, վարագոյրներով ծածկւած փոքրիկ պատուհաններով, որ կապում էին ձիու աջ ու ձախ կողմերից, մէջը անկողին փռում, բարձեր դնում ու երկու կողմերի հաւասարակշռութիւնը քարերով շտկում: Մեծերի համար թամբած ձիեր էին պատրաստել, իսկ ձիապանները պէտք է քայլէին ոտքով:

Ու շուտով քարաւանը գիշերւայ խաւարը պատռելով, վառ լապտերների լոյսերով ողողւած եւ ձիերի դանդակների զօղանջների տակ երերալով ու շորորալով դուրս եկաւ քաղաքի լուռ փողոցներից ու բռնեց դէպի դաշտ տանող ճամբան:

Ամենից առաջ գնում էր պատգարակը, յետոյ ձիաւորները, վերջում բեռները — ջորիներ եւ էշեր: Իւրաքանչիւր ձիու կողքին վառ լապտերը ձեռքին մի ձիապան՝ սանձից բռնած՝ հսկայ քայլերով, խրախուսանքի ու դուրդուրանքի զանազան խօսքեր շռայլելով ձիու հասցէին, քայլում էր շատ բան տեսած ու շատ բան դիտցող մարդու պէս:

— Աղա Մեսրո՛պ, էդ երեխէքից ղդոյշ կաց, հա՛...

— Իսաի եմ, իսաի, ձիու կողքին եմ հէ՛... Ճամբադ գնա՛, ճամբադ...

— Աղա Պետրոս, էն կճուճ պանիրը ի՞նչ արիր հէ՛...

— Էն ա հէ՛, Զալօի մէջքին ա հէ՛... Էն ջուխտ ձմերուկները ո՞ւր են, աղա՛...

— Իշի վրայ ա, իշի վրայ:

Լոյսը կամաց-կամաց սկսում էր բացւել:

Քարքարոտ ու ամայի այդ ճանապարհի վրայ, ուր ջրի նշոյլ իսկ չկար, չոր ու դորշ լեռների ու դաշտերի վրայ, հեռու հորիզոնից կարմիր արեւը իր ծիրանին էր փռում:

Անուշը քնաթաթախ պատգարակի վարագոյրի միջից, կարմիր թաշկինակով փաթաթած դլուխը դուրս հանեց ու սկսեց դիտել լուսաբացը:

Անուշը երբեք այդպիսի լուսաբաց չէր տեսել.— բաց մի դաշտ, ձիերի ու ջորիների ոտնաձայների հետ

խառնված ձիապանների երգը, գանգակների համաչափ զողանջը...

Լույսը ծաղելու հետ միասին նրա մտքի մէջ ամեն ինչ կամաց-կամաց որոշ կերպարանք էր ստանում: Միղճը հանգիստ էր ու սիրտը թեթեւ:— Նախընթաց երեկոյ բոլոր-բոլորի հետ իր անկեղծ մնաս-բարեւն էր արել՝ համբուրել, համբուրել էր տատի ու հայրիկի ձեռները ու այտերը, խոստացել էր չարութիւն չանել, չնեղացնել մայրիկին ու «խելօք, խելօք աղջիկ դարձած վերադառնալ»: Հիւրանոցի, ննջարանի ու տատի սենեակի բոլոր գորգերի հետ մէկիկ-մէկիկ համբուրուել էր... Ե՛ւ այն զոյգ ծաղկեփնջերի հետ, որ կախուած էին մեծ ժամացոյցի երկու կողմերից, ե՛ւ խնոնջի վրայ նկարուած ձկնորսների, անտառի տեսարանի, խոշոր աչքերով անծանօթի հետ, որ գունաւոր շորեր ունէր հագած եւ ձեռքը գօտուն կապած դաշոյնի վրայ ամուր սեղմել էր... Այդում դըրկել, ամուր-ամուր համբուրել էր խնձորենին ու տանձենին, թթենին ու սիրուն նռենին: Գգւել, խօսել, խոստումներ էր արել բոլոր ծաղիկներին ու վարդի թփերին, հաւերին ու աքաղաղներին, թոնրատան բոլոր առարկաներին:

Բոլորին, բոլորին ասել էր՝

— Մնաս բարեւ, մնաս բարե՛ւ:

Եւ նրանք բոլորն էլ նրան պատասխանել էին.

— Գնաս բարեւ, գնաս բարե՛ւ: Շո՛ւտ, շո՛ւտ վերադարձիր:

Զաւրուած սրտերի հայելիների մէջ անդրադարձած բիւրեղ կեանք...

Կեանք՝ ողողուած պայծառ լոյսերով, ճերմակ յոյսերով ու գալիքի կապոյտ ակօսների մէջ ցանած բերրի սերմերով՝ ապագայի թափանցիկ միջոցի մէջ Հաւատոյ արտի ոսկեգլուխ հասկերով ծփծփուն...

Գիւղ...

Մանուկների խաղալիկների նման թրթռուն երեւակայութեամբ ու գեղեցիկ պատրանքներով առլեցուն քոտնակներով ու դաշտերով, արծաթէ գետակով ու պըսպղուն առուակով, տեղ-տեղ արածող կովերով ու ոչխարներով, բլրի լանջին, ծառին յենած հովւի մշտական դիրքով — սրինգը շրթին, տրեխը ոտքին... Խաղալիկի պէս պարզ ու անմեղ:

Այսպէս է, որ մոգական գաւազանի զօրութեամբ մանուկների վառ ու չխամրած երեւակայութեան մէջ խաւակարտէ տուփից հանուած ու սեղանի վրայ շարուած գիւղական տեսարանը յանկարծ կենդանութիւն է ստանում, շնչում է, ապրում... Ոչխարներն արածում են, կովերը՝ բառաչում ու հովւի սրինգն սկսում է կլկլալ, կլկլալ...

Այնտեղ՝ վարը, արծաթէ գետակն է խօսում, վերում՝ առուակը շշնջում:

Գիւղն, Անուշի համար գաղտնիքներով ու հրաշալիքներով լեցուն յանկարծակի բացուած կախարդական մի տուփ էր: Եւ Անուշը սիրեց գիւղը:

Սիրեց այծերին ու գառնուկներին, սիրեց կաղն ու արտը, աղբիւրները բոլոր, գիւղը շրջապատող բլրակները, որոնց գագաթներին նայելիս նրա փոքրիկ հոգին ուռչում էր ու մեծանում...

Սակայն, Մուժումբարում ամենից աւելի Անուշին գրաւողը Աներեւոյթն էր... Աներեւոյթն ու իր տարօրինակ առասպելը:

Չէ՞ որ, ասում էին՝ մի գիշեր, անաստղ ու խաւար

մի գիշեր, երկնքից կապույտ լույս է իջել այն բլրի վրայ, խաչաձեւ մի լույս, որ վերից վար ճեղքելով սեւ ամպերը, եկել, կանգնել է բլրի ճիշտ գագաթին: Ծերունի քահանան, որ գիւղամէջը շրջելու էր դուրս եկել,— կալի տակով դառնալիս, յանկարծ շարած ու վախեցած երկնային այդ երեւոյթից, նախ մի առ ժամանակ քարացած մնացել է իր տեղում կանգնած, յետոյ ծնրադրել, երկրպագել է լուսէ խաչին: Շուտով ողջ գիւղը քնատեղից վեր կացել, կալերի կողմն է վազել ու քահանայի առաջնորդութեամբ, խարխափելով ու սայթաքելով, բլուրը բարձրացող կածանը բռնել: Բայց դեռ ճանապարհի կէսին երկնային լույսը մէկէն չքացել, անհետացել է:

Ու մի քանի շաբաթ յետոյ բլրի գագաթին փոքրիկ մի մատուռ էր շինուել, որ եւ կոչուել էր Աներեւոյթ: Անշուք մի տաճար՝ համեստօրէն կանգնած հայկական մենաւոր այդ գիւղի ամայի բնութեան մէջ:

Անուշը սիրում էր բարձրանալ սուրբ այդ բլուրը· այնտեղից երկինքն այնքան մօտիկ էր թւում նրան... Չէ՞ որ ասում էին, մի գիշեր, անասող ու խաւար մի գիշեր երկնքից կապույտ լույս էր իջել նրա վրայ... որ վերից վար ճեղքելով սեւ ամպերը՝ եկել կանգնել էր նրա գագաթին... Անուշը չոգում էր մատուռի չոր քարերի վրայ, ձեռքերը երկինք տարածում ու բարձրաձայն աղօթում: Ի՞նչ էր խնդրածը, ինքն էլ չգիտէր:

Այդ Աներեւոյթն էր ահա, որ այդ տարի Անուշի հոգու կազմութեան մէջ մեծ անկիւնադարձ եղաւ... Ու առաջին անգամ լինելով՝ Անուշը հասկացաւ յանկարծ, որ ինչ որ մի Սարսափ կար փուած աշխարհի վրայ...

Սարսափ... Մահ...

Այնտեղ, Աներեւոյթի քարքարոտ լանջին, մի երեկոյ Շահի խաթունն առաջին անգամ պատմեց Անուշին մահուան պատմութիւնը...

Շահին երկար բարակ մի կին էր: Երբ խօսում էր ծնօտը հիմքից երերում էր, մէկ աջ շարժւում, մէկ ձախ թեքւում: Նա ամբողջապէս մոխրագոյն էր,— հագուստը, ուսերի շալը, գլխի թաշկինակը, անգամ մազերը:

Ամեն երեկոյ նախքան ընթրիքը, Անուշը սովորութիւն էր դարձրել տանից փախչել ու բլուրն ի վեր, Շահի խաթունի մօտ վազել:

Շահին խօսում էր դանդաղ ու ցածրաձայն: Իր ձայնի մէջ չարախինդ, ծիծաղկոտ ու հեգնոտ մի շեշտ կար, որ տարօրէն էր առաջացնում: Անուշը վախենում էր այդ ձայնից, բայց եւ ուզում էր լսել նրան:

— Մեռնելը,— ասում էր Շահին,— Աստծու գործ չէ: Աստուած էդպէս բաների մէջ չի խառնւում:

— Մարդ ի՞նչ է լինում, որ մեռնում է,— հարցնում էր Անուշը, վախից գոյնը նետած, նայելով Շահու մոխրագոյն դէմքին:

— Մեռնե՞լը, չքանալ, ոչնչանալ է: Էս սարերն ու դաշտերը, քո հօրն ու մօրը չես տեսնի երբ որ մեռնես: Ոտքերդ կը տնկես, գլուխդ յետ կը դցես ու աչքերդ կուլ կերթան: Յետոյ ասում են՝ Աստծու գործ է: Աստծո՞ւ... Չէ, էստէղ մէկ ուրիշ գօրութիւն կայ:

Հորիզոնից ամարային վերջալոյսը կամաց-կամաց չքանում էր: Նրա արդէն թոյլ ճառագայթները տեսարանի միայն մի մասի վրայ ճերմակ լուսաւորութիւն էին սփռել:

— Մեռելի արեւ է: Տեսնես գիւղամէջում դարձեալ ո՞ր ասուորն է շունչը Անիմանալուն յանձնում: Հոգի տալն էլ հեշտ չի: Կան, որ եօթը հոգի ունեն՝ եօթ անգամ կերթան մահւան դուռը, ետ կը դան, կերթան ետ կը դան, մինչեւ որ ոտքերը կը տնկեն: Իմ ողորմածիկ պապս եօթը հոգի ունէր: Հոգէառը գալիս էր, բուխարիկի միջից կամ երթիկից պապիս դէմ դիմացը կանգ-

նում, հոգին էր ուզում։ Զէր տալիս։ «Աղջի Շահի, — կանչում էր,— էն դուռը բաց, էս անիծեալին դուրս արա՛»։ Դէ ես էլ հօ բան չէի տեսնում։ «Ո՞ւմ, պապի, ո՞ւմ մասին ես ասում»։ «Դու դուռը բա՛ց, դուռը, — ասում էր, — քշէր, քշէր, դուրս արա՛, ասում եմ»։ Ես էլ ի՛նչ անեմ, ճար չունէի, շորի կտորը ձեռքս առած դատարկ օդի մէջ՝ քըշ հա քըշ, քըշ հա քըշ։ «Ապրի՛ս, աղջիկս, ապրիս, դէ էն փարչը ջուր լցրու, տուր խմեմ։ Ու երկրորդ օրը պապս ոտքի էր։ Բայց մէկ անգամ էլ, էս անգամ արդէն եօթներորդ անգամն էր, պապս հարիւր տարեկան էր, ո՛չ աւելի, ո՛չ պակաս. էս անգամ արդէն լեզուի մէջ հալ չէր մնացել։ Ձեռքով ոտքով ինձ հա նշան արաւ, բաներ ասաւ, չհասկացայ։ Մէկ էլ էն տեսնեմ, էլ չկայ... Փո՛ւհ արաւ եւ հոգին շրթունքների վրայով դուրս եկաւ, թռաւ... Այս կողմ, այն կողմ, պապս չկար այլեւս... Մնացել էր միայն մեռելը։

Անուշը վախից կծիկ էր դարձել, բայց հետաքրքրված լսում էր Շահու պատմութիւնը։

— Շահի, այ Շահի՛, հապա ի՞նչ անեմ, որ չմեռնեմ։

— Հէչ։ Պէտք է մեռնես։

— Բայց ես չեմ ուզում, չեմ ուզում։

— Հա, համա քո ուզելով չուզելով չի։ Օրէնք ա։

Սարսափն ընկել էր Անուշի սիրտը։

Անուշը դարձել էր մտածկոտ ու տխուր։ Զէր խաղում այլեւս ու չէր վազվզում։ Բայց ոչ ոքի ոչինչ չէր պատմում. ոչ իսկ իր խաղընկեր Ռուբիկին... Եթէ տատը դիւղում լինէր... Բայց տատը մնացել էր քաղաքում եւ Անուշը ոչ ոքի չէր վստահում։ Խուսափում էր միայն ոտքերը տնկելուց... Սեղանի մօտ նստելիս ամենաբարձր աթոռն էր ընտրում, անկողնու մէջ աւելորդ բարձեր հաւաքում դլխի տակ ու աշխատում էր նստած քնել։

Մի օր էլ հարեւան դիւղացու աղջիկն ասաց, որ մահւան դէմ պայքարելու համար գոյութիւն ունին յատուկ թալիսմաններ, որոնց գօրութիւնն այնքան ուժեղ է ազդում կրողի վրայ, որ ուղղակի հրաշքի պէս մի բան է։ Անուշը չափազանց ուրախացաւ։ Բայց ի՞նչպէս պէտք էր ձեռք բերել։ Հէ՞չ էր։ Ո՞ւմ միջոցով կարելի էր ստանալ հրաշալի այդ իրը։ Ո՞վ կը բերէր կամ ո՞վ յանձն կառնէր ուղեկցել նրան կախարդ այն մարդու մօտ, որ ասում էին, ապրում էր դիւղի ծայրում, որ մինչեւ գօտին երկարած մօրուք ունէր, լայն-լայն ականջներ ունէր...

Անուշն օրեր շարունակ մտմտուքի մէջ էր։ Դիւղի սիրուն դաշտերի դոյն-դոյն ծաղիկները քաղելիս, թէ առւակի ափին, ձեռքերը ջրի յատակի յղկած քարերին հպած, խակ պտուղները դողանալիս՝ շարունակ ու շարունակ, նոյն միտքն էր անում,— ի՞նչպէս ձեռք բերել թալիսմանը... Ու մի օր էլ վերջապէս վճռեց խօսել այդ մասին մայրիկի հետ... Առաջարկել, որ նա նման թալիսմաններ անել տայ իրեն, հայրիկի, տատի ու բոլորի համար... Սակայն, մայրիկը յօնքերը կիտեց ու բարկացած ձայնով ասաց՝

— Ցիմար բաներ ես խօսում։

Անուշը սաստիկ վիրաւորուեց։ Ի՞նչումն էր կայանում իր յիմարութիւնը... Բայց յետոյ վճռեց, որ երեւի մեծերն առհասարակ չեն վախենում մահից, իսկ քանի որ ինքը վախենում է, պէտք էր ուրեմն միայն իր համար այդ գործը դլուխ բերել։

Մուժումբարի, քաղաքի բնակիչներից այնքան տարբեր այդ բնակիչների մէջ, ապրում էր Սուլթան բաջին՝ Անուշի սիրելիներից մէկը։

Սուլթան բաջին Մանիի բարեկամուհիներից էր։ Թուխ, քնքոյշ դէմքով, գոյդ իմաստուն աչքերով, հայ-

կական այդ դիւղում ապրող հազուագիւտ պարսիկ մի կին, որ յաճախ տեսութեան էր գալիս նրան:

Սիրում էր նա գալ դիշեր ժամանակ, նստել ծալապատիկ պատի տակ դորգի վրայ, մշտական իր տեղում:

— Սուլթան բաջի՛, մի հէքեաթ, երկար, սիրուն մի հէքեաթ:

Սուլթան բաջին նախ մի քիչ նաղ էր անում, օրօրւում, շորորւում էր, յետոյ սակայն, դէմքը ներքին լոյսով ողողւում էր, ու նա սկսում էր ստեղծագործել՝

— Դիւնեանը բիր գիւնդա, Շահ-Աբբասն դուրբընդա, վարիդի, հոխիդի···

Գետնին դրած փոքրիկ ճրագը դեղին մի լոյս էր սփռում նրա դէմքի վրայ ու Սուլթան բաջին իրականութիւնից դուրս մի էակի էր վերածւում:

Նրա պատմածներից Անուշը շատ բան չէր հասկանում, բայց այնքան քաղցր էր խօսում, բառերն այնքան քնքշութեամբ էին թափւում բարակ շրթունքներից, որ նա լսում էր հմայւած:

Որքա՜ն տարբեր էր Սուլթան բաջին Շահի խաթունից···

Սուլթան բաջու հէքեաթների ժամանակ, Անուշն իրեն բոլորովին ուրիշ մթնոլորտի մէջ էր զգում: Անծանօթ, բայց խիստ մօտիկ զգացմունքներ էին վէճովէտում սրտի տակ եւ իւրաքանչիւր անհասկանալի բառ մտքի մէջ վայրկենական հէքեաթ էր հիւսում իր շուրջը···

Բայց այդ դեռ բոլորը չէր: Իր ամենամեծ հմտութիւնը սիսեռով փալ բանալն էր:

Ծոցի փոքրիկ գրպանում քսանմէկ հատ չորացած սիսեռ ունէր պահած Սուլթան բաջին, որ երբեմն-երբեմն Մանիի խնդրանքով, կը հանէր զգուշութեամբ, առջեւի դորգը ափով կը հարթէր ու ինչ որ բաներ մրմնջալով սիսեռները վեր կը բարձրացնէր ու վերից մէկէն գետին

կը նետէր, դորգի վրայ ցրիւ կը տար: Ապա, կռանալով ուշադրութեամբ կը դիտէր նրանց դիրքերը ու մարմինը, գոտիից վեր, յետ ու առաջ օրօրելով՝ երկիւղածութեամբ կը սկսէր խօսել. կը պատմէր եղած չեղածը,— բախտ կը բանար:

Այս Սուլթան բաջու պատկերն էր ահա, որ մի դիշեր ցցւեց Անուշի աչքերի առջեւ, երբ նա անկողնու մէջ նստած մտածում էր այն հրաշալի թալիսմանի մասին:

Պէտք էր, սակայն, յարմար առիթի սպասել: Յարմար առիթն այն էր, որ մենակ մնար նրա հետ, որպէսզի առանց քաշւելու, իր գիտցած մի քանի բառերով, ձեռք ու ոտքով բացատրէր ցանկացածը եւ նրա անհրաժեշտութիւնը:

Մի օր, վերջապէս, առիթը ներկայացաւ:

Իմաստուն աչքերով Սուլթան բաջուն դժւար չեղաւ հասկացնել գործի էութիւնը. բաւական եղաւ երկու բառ միայն եւ նա անմիջապէս գլխի ընկաւ — թալիսման եւ մեռնել··· Իր վայելուն աչքերն ինքնաբաւական արտայայտութիւն ստացան, գոհ էր, որ փոքրիկ խանումն իրեն էր ընտրել այդ անհրաժեշտ գործն իրագործելու համար: Ու չանցած մէկ շաբաթ, Սուլթան բաջին կանաչաւուն մի կտորի մէջ քառակուսի ծալած «գիրը» բերաւ ու թելի կտորով կախեց Անուշի վզից: Յետոյ պատուիրեց, որ զգաստասահ լինի եւ վզից երբեք չհանէ:

Այդ դիշեր Անուշը հանգիստ քնեց:

Ժամանակն այդ ամառ շատ արագ էր թռչում: Ամեն շաբաթ Նուբարը քաղաքից գիւղ էր գալիս, ամեն տեսակի պտուղներով եւ ուտելիքներով ծանրաբեռնւած, ամեն օր դաշտ էին գնում, ուր հաւաքւում էին քաղաքից եկած բոլոր ընտանիքները:

Գիւղական կեանքը դերել էր եւ Վարդենուն:

Պարզ ու թափանցիկ բնութիւնը, նրա անստուեր ու

վճիտ հոգու ու սրտի հետ կատարեալ ներդաշնակութիւն էր ստեղծել:

Ամեն առաւօտ լուսաբացին իրենց տան փոքրիկ պատշգամբի ծառերի միջից վառուող արշալոյսի հետ կրկին ու կրկին վառւում ու բացւում էր եւ նրա կոկոն առաւօտը... Կարմրում, շիկնում, բռնկւում յանկարծ, ապա նետում էր բաց վարդագոյն իր ճառագայթները վարի խշխշուն առուակի ջրին, ուր իջնում էր նա՝ լւալու իր երեսը: Զբաղատրւող, տակաւին չասւած զգացմունքները էին եռում նրա սրտի տակ, առուակի մանրիկ կոհակների պէս, որոնց մէջ փչրւած գեղն իր ժպտուն դէմքի, խառնւում էր անդոյն ջրի արեւից ոսկեգծւած փայլի հետ: Ծառերն օրօրւում էին, խոտերի վրայ իջած ցօղը աղամանդի պէս պսպղում էր, ջուրը քշում, տանում էր ճերմակ փրփուրը ձեռքի իր օճառի, կանաչ բղեղները ցատկրտում էին այս ու այն կողմ ու լուռ ու խաղաղ անկնճիռ, անբիծ Վարդենին նստում էր մի կոճղի վրայ ու բանում էր ծնկներին դրած գիրքը:

Գրքի իւրաքանչիւր բառը, իւրաքանչիւր դարձւածքը, միտքն ու դաղափարը, շաղախւած վաղորդեան այդ թարմութեամբ, ոնդկնդում էր նրա ականջին եկեղեցի հրաւիրող զանգակների զօղանջների պէս ու մեծ ու հոյակապ տաճարի մէջ կանգնած աղօթողի ջերմեռանդութիւնը պարուրում էր նրան:

Տխուր, տխուր էր միայն Մուժումբարը Տիգրանի համար:

Ոչ տառնօրակ աղբիւրները, ոչ կանաչ ձորերի ու ծմակների գեղեցկութիւնը, ոչ ամենօրեայ գրօսանքները, սեւաչեայ ու արեւխաչ դէմքերով դեռատի հովւուհիների հմայքը, ճկուն մարմիններով, սլաձիգ հասակով, թարմ սոճիի պէս գեղեցիկ ու ջահել հովիւների սրինդի ձայնը՝ դառների մայունը, գեղին բծերով զարդարւած, անտարբեր ու պաղ աչքերով աշխարհը դիտող կովերի ծանր-ծանր օրօրւելը, հորթերի թրթռուն վազքը՝ ոչի՛նչ, ոչի՛նչ նրան չէր ուրախացնում, չէր հանգստացնում: Սիրտն արդէն բաժանւել, երկու կէս էր եղել եւ միւս կէսը հեռու էր իրենից...

Գիշերները, պատշգամբում պառկած ժամանակ լուսինն էր նրան սիրոյ հէքեաթը պատմում, առաւօտ կանուխ դիմացը փռւած բլրակների շարանն էր հոգին յուզում ու դիւթում ու մինչ բարձրացող արեւի լոյսը կաթիլ-կաթիլ մաղւում էր իր վրայ, սիրտը թեւաւոր թռչուն լինելու կարելիութիւնն էր երազում:

Անցնում էին օրեր ու օրեր... Գալիս էր քաղաքի քարաւանը շաբաթը երկու անգամ, բայց Տիգրանը նամակ չունէր... Սէրը՝ չիկացած երկաթի մի գնդի նման ընկել էր սրտի մէջ ու այրում էր ներսը... Աչքերը թախիծ ու երազ ունէին հաւաքած, ճակատը մեղմ դունաթափութիւն էր ստացել ու շիկնում էին այնտեղն անդադար ներքին, թաղուն յուզմունքից:

Անհանգիստ էր Տիգրանի հոգին եւ կասկածներով լի· խախտւած էր ներդաշնակութիւնը ներաշխարհի:

Բնութեան գեղեցկութիւնը, արտերի ծփանքը, ջրերի վճիտ թափանցիկութիւնը, առուակների կարկաչը, ամեն-ամենը նրան Շողերին էին յիշեցնում՝ ամեն-ամեն տեղ նա Շողեր էր տեսնում...

Լերան լանջին, թէ արտին մօտիկ, թեք ընկած գետնին, ականջն ունկնդիր հովին, գեփիւռին, առուակի ջրին՝ նա փնտռում, թափում էր թերթիկները իր սիրոյ ու սփռում ամեն կողմ... « Մի՞թէ չի գալիս », մտածում էր ու շրթունքները հպում զուլալ ջրին· « մի՞թէ չի իմանում », դիմում էր ցորենի հասկին, հեռու Աներեւոյթին, մօտիկ բլրակին, ձորին, գետակին, շուքերին ու

թփերին... Տիգրանն անդադար նոյն հարցն էր տալիս. « Մի՞թէ չի տեսնում »...

Ու մի օր վերջապէս...

Շտապ առաւ նա իր նամակն ու դուրս փախաւ սենեակից:

Երեկոյ էր:

Դաշտ ու բլուր ողողուած էին դեղին լոյսով: Թեթեւ անձրեւից յետոյ ծառերի վրայ մնացած ջրի կաթիլները պսպղում էին: Ներքեւում ջրաղացի ջուրը հոսում էր աղմուկով իր մէջ խաղացնելով փչրուած վերջալոյսը: Իսկ նրա գլխի ծառերի ճիւղերը ցնծղաներով ու դանդակներով բնութեան դեղեցկութիւնն էին երգում: Հեռուում, ծանրացած գլուխները հողին հակած՝ ոսկէ արտերն էին բռնկւել ու լսւում էր արդէն տուն վերադարձող հօտի բառաչը, այծերի մկկոցը, շների հաչոցը...

Երկար վազելուց յետոյ, վերջապէս նա յենւեց մի ծառի ու նամակը դողաց ափի մէջ:

Ա՜հ, որքան շատ բան կար գրւած, որքան շա՜տ բան կար ասւած փոքրիկ թղթի այդ կտորի վրայ... Հրաբուխէ սրտի զգացմունքներից ժայթքած լաւա, բոցերի հեղեղ, վերից թափւող այրող շողերի անձրեւ...

« Ես սիրում եմ քեզ, Տիգրան »...

Բնութիւնը համակ փայլուն մի գնդակ էր դարձել: Անձրեւի կաթիլները կանաչ-կարմիր երանգներով ջահեր էին վառել ամեն կողմ: Բռնկւել էին ծառերը, բռնկւել էին թփերը բոլոր, ու դաշտի առուն հալած կրակ էր վազեցնում դէպի ձորակը մօտիկ:

. . . . . .

Մնաց կանգնած երկար, երկար... Յենւած ծառին, նամակն ափի մէջ սեղմած:

Բնութիւնն սպասողական վիճակի մէջ էր: Նա նայեց իր շուրջը ու յանկարծ... — Մեծ ու լայն ծիածանն իր

աննման գօտին կապեց նրա գլխի վրայ... Նա ձեռքերը սեղմեց կրծքին, պոկեց վառւող իր սիրտը, նետեց երկնային եօթը գոյներին ու ծիածանէ գօտին մետաքսէ իր թելերի մէջ պարուրելով նրան, առաւ ու տարաւ, նոյն բոպէին իրենց բակի մէջ կանգնած ու նոյն բնութեան հետ նոյնացած, Շողերին:

7

— Խա՞նո՛ւմ...

— Ի՞նչ կայ, Շուշան:

— Խանում, Միրզա-Ղուլին ա եկել, ասում ա թէ՝ Սաթենիկ խանումը շատ բարեւ ա ղրկում ամենքիդ, քէֆներդ ա հարցնում ու լուր ա տալիս, որ էդուց չէ մէկէլ օրը, ժամը հինգին դալու ա տեսութեան. տո՞ւնն էք, ես տունը չէք, ժամանակ ո՞ւնէք, ես չունէք:

Նուբարի ընտանիքը դեռ նոր էր գիւղից վերադարձել եւ Մանին ամեն օր հիւրեր ունէր: Տիգրանի մեկնելու պատճառով նա սովորականից շուտ էր հեռացել գիւղից, բայց այստեղ էլ ծանօթներն ու բարեկամները հանգիստ չէին տալիս:

— Մեր Մարգարիտը մի կատարեալ բօնբօն է,— ասաց տիկին Սաթենիկը, վիզը ոլորապտոյտ կերպով ծռելով ու իր խօսքերի ճշմարտութիւնը հաստատող ժպիտով նայեց աղջկան:

Ամենքը նայեցին Մարգարտին: Մանին ժպտաց, Բեհեղ տատը ժպտաց, Վասիլ խանի աղջիկները ժպտացին:

— Մեր Նորան Մադոննայի գեղեցկութիւն ունի:

Ամենքը նայեցին Նորային ու ամենքը նորից ժպտացին:

— Ձեր առողջութիւնն ի՞նչպէս է, տիկին Նախշուն:

— Շնորհակալ եմ: Դո՞ւք ինչպէս էք:

— Դոկտորն ի՞նչպէս է:

— Ձեր մօրաքոյրը ի՞նչպէս է:

— Merci: Ձեր եղբայրը ի՞նչպէս է:

— Իսկ դու, Մանի, ամուսնուդ քոյրը, ամուսնուդ եղբայրը:

— Պիէռից նոր նամակ ունի՞ք:

— Այո՛, երեկ ստացանք:

— Ի՞նչ է գրում:—

— Այս տարի աւարտում է:

— Ուրեմն շուտով կը վերադառնա՞յ:

Տիկին Սաթենիկը նորից վիզը ոլորապտոյտ կերպով ծռեց ու զարմանալի հպարտ երեւոյթ ընդունեց:

— Ձեմ կարծում այսպէս շուտ վերադառնայ, — ասաց:

— Ի՞նչու:

— Այնտեղ իրեն պաշտօն են առաջարկում: Փաստաբան է, չէ՞ cousin -ս:

Ու տիկին Սաթենիկը յաղթական նայեց բոլորին:

— Այժմ մեր Pierre ը մի կատարեալ եւրոպացի է:

Մարգարիտը մետաքսէ շրջազգեստի փեշերը փռած աթոռին, կարմիր մի ժապաւէն գօտին փաթաթած, սեւորակ աչքերով նայում էր: Նորան թեքուած դէպի իր քոյրը, ուսը մօտեցրել էր նրա ուսին: Լսում էին:

— Ցե՞տոյ, ուրիշ ի՞նչպէս էք:

— Այնպէս էլի:

— Ոչինչ, էնպէս...

— Կամաց-կամաց, մինչեւ տեսնենք:

— Բամբասանք չլինի, ասում են Միսաք խանի տղան ամուսնանում է: Լսե՞լ էք:

— Ո՞ւմ հետ, տիկին Սաթենիկ:

— Ես ճիշտն ասած, ուրիշների կեանքով շատ չեմ

հետաքրքրուում, բայց դէ, կան մարդիկ, որ ասում են իբր թէ հայրը վաղուց արդէն խօսք է տուել, խօսք է առել իր ընկեր Սաղաթել աղի աղջկայ համար: Ամենքը պախարակում են հօրը. տղան կրթուած է, մինչ աղջիկը...

Տիկին Սաթենիկը քիթը վեր է քաշում:

— Աղջիկը հարուստ է կարծեմ, չէ՞:

— Այո՛, իբր թէ: Ասում են հայրը մի առաւօտ կանչել է տղային թէ՝ դէ էսպէս, էսպէ՛ս... — Ինչպէս, հայրիկ: — Դէ՛, էսպէս, էնպէս: — Բայց, հայրիկ, նա միանգամայն ապուշ է: — Ո՛չ, միանգամայն չի՛, լաւ բնաւորութիւն ունի: Տղան գայրացել է: — Ես չեմ ուզում,— ասել է ու սենեակից դուրս եկել:

— Ցետո՞յ:

— Ցետոյ՝ հայրը էս կողմ, էն կողմ թէ՝ — դու գիտես, բայց կը փոշմանես, աղջիկը դրամ ունի:

— Դրա՞մ, դու ինձ դրամի մասի՞ն ես խօսում... Ես իմ սկզբունքներն ունեմ, ես սոցիալիստ եմ, հայրիկ:

— Աղջիկը դրա մէջ ի՞նչ մեղք ունի,—ասել է հայրը:

— Վերջը տղան մտածել է, չի մտածել, յայտնի չի, բայց, ասում են, հիմա իբր թէ սիրահարուել է աղջկայ վրայ: Դէ՛, ասում են մարդիկ, գիտէք, որ այս քաղաքում ուրիշ անելիք չունեն: Է՛հ, մեղ ի՛նչ, ով ինչ ուզում է թող անէ: Այնպէս չէ՞, Մանի: — Ու տիկին Սաթենիկը բարեկամաբար նայեց Մանիին:

Տիկին Սաթենիկը Մանիի դպրոցական ընկերուհին էր: Միասին էին սովորել, միասին աւարտել: Մինչեւ ամուսնանալը նրանք ապրել էին կողք-կողքի, երկու հարեւան տների մէջ եւ նրանց իրարից բաժանողը եղել էր միայն հողէ մի պատ: Նրանց ընկերական կապը շարունակւում էր զարմանալի յարատեւութեամբ:

— Անցեալ օրն այն ռուս նկարիչն էր եկել մեզ մօտ...

— Ռուս լուսանկարի՞չը:

— Նա լուսանկարիչ չէ:

— Բայց մենք միշտ նրա մօտ ենք լուսանկարւում:

— Լուսանկարչութիւնը նրա համար, այսպէս ասած, կեանքը հայթայթելու մի միջոց է միայն: Եւ սակայն նրա փօնը նկարիչ է, իսկական նկարիչ: Այժմ սկսել է Նորային նկարել... Շատ սիրուն է: Իմ թելադրանքով, նա Նորային դրեց այնպէս, մի քիչ mélancolique դիրքի մէջ... — Նորան իբր թէ մոլորուած նստած է անտառում, պարզ հովուուհու հագուստով, հերարձակ ու տրխուր... Նրա ոտքերի մօտ, գետնին, խոտերի վրայ ընկած է մի մանդոլին, որի լարերը կտրատուել են ուժեղ քամուց: Լուսինը վերից, ծառերի միջից լոյս է տալիս եւ հեռից երեւում է փոքրիկ մի ջրվէժ... Սիրուն է չէ՞:

— Սքանչելի է:— Բացագանչեցին տիկին Նախշունն ու տիկին Ազնիւը միաժամանակ, որոնք միշտ լուռ լսում էին նրան: Ի՞նչ կարող էին խօսել, աշխարհ տեսած, ձեւ ու պահւածք ունեցող տիկին Սաթենիկի մօտ... Մարգարիտը եւ Նորան մի քանի տարի Ռուսաստան էին մնացել, մի քանի տարի՝ Ֆրանսիա, շրջել էին եւրոպական մի քանի երկրներ — ու տիկին Սաթենիկը շատ գոհ էր իր տուած դաստիարակութիւնից ու կրթութիւնից:

Բեհեղ տատը, քաղցր ժպիտը դէմքին, յորդորում էր հիւրերին, որ թէյը տաք-տաք խմեն, որ անուշ վերցնեն՝ ինքն էր պատրաստել, լաւ, համով անուշ էր: Մինչ Անուշը, երկար վազվզելուց յոգնած՝ բազմոցի բարձերի մէջ թաղւել, մնացել էր:

Լուռ նայում էր Անուշը մերթ տիկին Սաթենիկին, մերթ պատի մեծ հայելու երկու կողմերին խփած երկաթեայ շրջանակների մէջ գտնւող Շիլլերի, Շէքսպիրի, Գէօթէի ու Տոլստոյի նկարներին, որ այդ օրն աւելի

խիստ, աւելի սառն ու չոր հայեացքով էին նայում իրեն, քան ուրիշ անգամ...

Հայրիկը յաճախ էր ասել Անուշին, որ այդ մարդիկ աշխարհիս ամենամեծ մարդիկն էին, բայց որ հայ չէին... Եւ որ դրանց հասկանալու համար պէտք էր շատ կրթուած լինել, շատ, շա՜տ բան իմանալ, շատ բան կարդալ ու սովորել, հեռու երկրներ գնալ, ուսում առնել:

Յաճախ, երբ Անուշը մենակ էր մնում սենեակում, աթոռը դնում, բարձրանում էր վրան եւ մօտից դիտում այդ մեծ մարդկանց: Օ՜, որքա՜ն տգեղ էին... Ու Անուշը մատը թքոտելով կպցնում էր նրանց երեսներին...

— Այդ ի՞նչ ես անում:

— Ոչի՛նչ, մայրիկ, ճանճն եմ քշում...

Բարձերի մէջ թաղուած Անուշին ոչ ոք չէր նկատում. ինքն էլ դոհ էր իր դիրքից: Սեւորակ աչքերը պատեցնում էր նկարների վրայ ու ոչինչ չէր հասկանում տիկին Սաթենիկի պատմածներից:

Անընդհատ ժպտացող տիկին Սաթենիկի դէմքը թաղուն վախ էր ազդում նրան, կարծես թէ երազի մէջ էր, ու միօրինակ այդ ձայնը հեռուից, շատ հեռուից էր գալիս: Մինչ տիկին Սաթենիկն այդտեղ նստած՝ անընդհատ՝ բերանն էր շարժում, ժպտում, վիզը ծռում, աչքերն էր փակում ու բացում, խօսողը սակայն ուրիշ մէկն էր՝ աներեւոյթ մէկը, լարած մի մեքենայ... Ու նրա ձայնը այնպէ՜ս միօրինակ էր հնչում Անուշի ականջին... Կարծես Յակոբ ապին, իրենց հիւսնը, որ երեկ բակում հաւերի համար տնակ էր շինում, չոր մի փայտ էր սղոցում, սղոցում, սղոցում... Իսկ մնացած բոլորը ծուխի մէջ պարուրուած ստուերներ էին: Ու թւում էր Անուշին, որ այդ ստուերներից եւ ոչ մէկն իրական չէր, այլ պղտոր ջրի մէջ անդրադարձած պատկերներ էին: Մի աւազան, սենեակի մեծութեամբ մի ջրհոր եւ ինքը վերից, ձեռքերը ճա-

կատին հովանի չինած՝ դիտում է... Ու յանկարծ ջուրը շարժւում է, նորից փայտ են սղոցում... —

— Բամբասանք չլինի:

— Չէ՛, տիկին Սաթենիկ, ինչեր էք մտածում. միթէ մենք ձեզ չենք ճանաչում:

— Ես ճիշտ ասած աղատամիտ եմ եւ մարդկանց քննադատել չեմ սիրում, բայց մի աստիճան կայ, որից այն կողմ այլեւս անկարելի է: Այն խեղճ, այն դժբախտ Արմենուհու մասին եմ ասում: Հիմա էլ վրան բամբասում են... Կինը, որ իր ամուսնուն ազատ թողնէ, գործը այդպէս կը վերջանայ: Ես, օրինակ, իմ ամուսնու իւրաքանչիւր քայլը գիտեմ. այսպէս են բոլոր եւրոպացի կանայք:

Ամբողջ խօսակցութեան ընթացքին տիկին Սաթենիկը մի քանի անգամ կռացաւ իր աղջիկների կողմը, որ Վարդենու հետ միասին, դլուխ-դլխի տուած, լուսանկարների ալբօմով էին զբաղուած:

— Այս իմ մեծ հայրիկն է, այս միւսը մօրեղբայրս է,— ծանօթացնում էր Վարդենին Մարգարիտին ու Նորային իրենց բարեկամների հետ:

— Այս մէկն ո՞վ է:

— Այս Բեհեղ տատի պապն է:

Տիկին Սաթենիկն անմիջապէս դլուխը մօտեցրեց նկարին:

Խոշոր կապմուածքով, միջին տարիքով մի տղամարդու լուսանկար էր դա, որ հպարտօրէն կանգնել էր դետնին փռուած առիւծի գլխով մորթու վրայ ու ոտքը առաջ նետած դրել էր կենդանու գլխին:

— Նայիր, նայիր, մամա՛, աղա Գրիգորը Բարգէնի եւ Ռօզի հետ միասին,— ասաց Նորան, նկարը դէմ անելով տիկին Սաթենիկին, բայց լռեց իսկոյն, երբ նկատեց մօր դէմքի յանկարծակի փոփոխութիւնը: Տիկին

Սաթենիկը, սակայն, շուտ գտպեց իրեն ու թեթեւ մի հայեացք նետելով լուսանկարի վրայ, արհամարհական ձեւով ասաց՝ ջանալով խղճահարութիւն մտցնել իր ձայնի մէջ.

— Խե՜ղճ աղա Գրիգոր, ի՜նչ սիրուն տղամարդ էր մի ժամանակ, բայց այս շատ հին նկար է չէ՞, Մանի:

Ու փորձելով Նորայի ձեռքից առնել նկարն ու յետ՝ իր տեղը դնելով, փոխել խօսակցութեան նիւթը, տիկին Սաթենիկը ձեռքը մեկնեց դէպի ալբոմը, բայց այդ ժամանակ յանկարծ Մարգարիտի ձեռքը յետ մղեց նրա երկարած թեւը... Տիկին Սաթենիկը ցոյց տուեց, որ չի նկատում աղջկայ այդ շարժումը, իսկ Մարգարիտը գլուխը կախեց լուսանկարի վրայ ու սկսեց նայել լարուած ուշադրութեամբ:

— Այո՛, աղա Գրիգորի այդ նկարը հին նկար է,— պատասխանեց Մանին:

— Այս երիտասարդն ո՞վ է:

— Չե՞ս յիշում: Այս այն տղան է, որ հին ժամանակ, այսինքն երբ դեռ մենք դպրոց էինք գնում, եկել էր այստեղ եւ երիտասարդներին ֆրանսերէն դասեր էր տալիս:

Տիկին Սաթենիկն աչքերը սեւեռեց նկարի վրայ:

— Յիշում ես չէ՞, որքա՜ն էինք ծիծաղում նրա գլխարկի վրայ...

Ու երկու ընկերուհիներն անցեալի յիշողութիւններով տարուած, սկսեցին ծիծաղել՝ հին կատակներ, դէպքեր, դէմքեր վերյիշել:

— Իսկ այս Զաւէնն է՝ նկարուած Մոսկւայում,— ասաց Մանին, երբ Վարդենին դարձնելով ալբոմի էջը, ժպտալով կանգ առաւ իր եղբօր լուսանկարի վրայ:

Տիկին Սաթենիկը նշանակալի մի հայեացք գցեց Մարգարիտի վրայ,— դեղեցիկ տղայ է Զաւէնը, ասաց՝

դառնալով Մանիի կողմը: Ի՜նչ սիրուն աչքեր, սիրուն մազեր ունի, ու նկարը մեկնեց Մարգարիտին:

Մանին երջանիկ մօր ժպիտով նայեց իր ընկերուհուն:

Ալբոմի երկրորդ մասը յատկացուած էր զանազան նկարների: — Մի քանի ռուս դերասանուհիներ, որ Նուբարի երիտասարդ ժամանակ Ռուսաստանից բերած հաւաքածուի մասն էին կազմում՝ հոլանդացի մի որսորդ՝ յենուած երկար իր հրացանին, կարճ անդրավարտիկով, երկարավիզ կօշիկներով, հին մի բարեկամ, պարսիկ երգչուհի՝ հաստ սիրմայած յօնքերով եւ խոշոր աչքերով. յետոյ կային թռչունների, կենդանիների նկարներ, ծաղկեփնջեր եւ այլն:

Շուտով երեք երիտասարդ աղջիկներն ակամայ առանձնացան՝ թողնելով ալբոմը մեծերին, ու Նորան՝ ֆէրուզէ աչքերը խոշորացրած սկսեց պատմել մեծ քաղաքներում իր տեսած հրաշալիքներից: — Պանթէոնը, Նապոլէոնի դերեզմանը, Լուվրը...

— Ա՜խ, սիրելի Վարդենի, Լուվրը, Ջիոկոնդան, նրա ժպիտը... Կոտրուած թեւերով Աֆրոդիտէն...

Մարգարիտը, գունատ դէմքով, երազներով լի սեւ աչքերով նայում էր իր քրոջը, բայց խօսակցութեան չէր մասնակցում: Նրա լուռ այդ դիրքը այնպէս սիրելի էր Վարդենուն: Վարդենին մի քանի անգամ առիթ էր ունեցել լսելու Մարգարիտի նուագը դաշնամուրի վրայ ու ճանաչում, զգում էր նրա նուրբ հոգին: Թարմ մի շունչ կար երկու այդ աղջիկների մէջ, որ գերել էր Վարդենուն:

— Հապա կառքերը՝ հին, թագաւորական ոսկեզօծ կառքերը...

— Մեր դօքտորը միշտ, մի՛շտ գրաղած է, շարունակում էր խօսել տիկին Սաթենիկը, հէնց այսօր գեր-

մանական հիւպատոսը հրաւիրել էր իրեն կօնսիլումի... Դէ, մեր դօկտորը բոլոր հիւպատոսների տնային բժիշկն է... Եւ բժշկի գործը շատ դժուար է. նրա խղճի վրայ պատասխանատուութիւն կայ: Մարդկութեան ծառան է նա, որի համար իր անձը, իր անձնական հանգիստը գոյութիւն չունի այլևս: Ի հարկէ, շատ կան այնպիսի բժիշկներ, որ աշխատում են միայն դրամի համար, որոնց համար մարդկային կեանքերը արժէք չունեն, սակայն, մեր դօկտորը այդպիսիներից չէ:

Ուշ երեկոյեան պատշգամբում ուրախ ընթրիք սկսուեց: Ծառան վազեց տիկին Սաթենիկի ամուսնուն հրաւիրելու: Տատի կարգադրութեամբ պատշգամբի վրայ գորգ փռեցին, սփռոցը վրան բացին, իսկ Նուբարը ոգեւորուած ձեռնարկեց խորոված ի պատրաստութեան: Եւ շուտով դօկտորն ու Նուբարը իրար կողքի նստած կենացներ էին խմում ու մաղթանքներ անում: Մանին ու տիկին Սաթենիկը իրար ականջի ինչ որ բաներ էին փսփսում, աղջիկները երգում էին, իսկ Տիգրանը ձայնակցում էր նրանց: Կլոր, հասած լուսինը լուսաւորում էր այս տեսարանը, մինչ սենեակի սեղանի վրայ մենակ մնացած ճրագը տխուր մի լոյս էր սփռում իր շուրջը:

— Ուրեմն շուտով գնում ես, Տիգրան, հարցրեց դօկտորը:

— Այո՛, տղաս գնում է, պատասխանեց Նուբարը հպարտ-հպարտ նայելով որդուն: Իր հերթն է եկել արդէն, իսկ յետոյ հերթը աղջիկներինս է:

— Ուրախ ե՞ս, Տիգրան,— կամաց ձայնով հարցրեց Մարգարիտը, ո՞ւրախ ես, որ գնում ես:

Տիգրանը դէմքը դարձրեց Մարգարիտի կողմը.

— Այո՛,— ասաց, ուրախ եմ, Մարգարիտ, չափազանց ուրախ:

Եւ իրօք, ուրախութիւնից Տիգրանի սիրտը թրթռում էր... Մէկ-երկու շաբաթ ևս եւ նա հեռու-հեռու կը լինի այս բոլորից...

Նա ակամայ նայեց չորս կողմը,— բակին, տան լուսամուտներին, սենեակում վառուող ճրագին, մայրիկի քնքոյշ դէմքին, հայրիկին, տատին. դլուխը յետ գցեց տեսաւ լուսինը, խորհուրդներով լի երկինքը եւ ուրախութեան հետ միաժամանակ տխուր մի զգացում սառը հոսանքի նման թափուեց նրա սրտի մէջ... Զար նախազգացումի պէս մի բան մխրճուեց հոգու մէջ... « Ու այս բոլորը, բոլորը այլևս չպիտի տեսնեմ, անցաւ նրա մտքով, չպիտի զգամ հարազատ սիրոյ գուրգուրանք, չպիտի լսեմ տատի ձայնը, չպիտի տեսնեմ հայրիկի խոհուն ճակատը, խելացի աչքերը, Անուշի քրքիջն ու Շողերին... Չպիտի տեսնեմ այլևս... » Ու յանկարծ նրան թւաց, որ ի զուր, ի զուր են այդ բոլորը՝ որ աւելի լաւ է չգնալ, չսովորել ոչինչ. ապրել ա՛յ պարտէզի նշենիների նման, մնալ այնպէս ինչպէս որ կաս, մնալ այն ինչ որ ես, ճիդ չանել, չտանջուել ու ապրել խաղաղ, ապրել հանդարտ, բարի երկնքի նման...

— Դօկտոր, ես խմում եմ մեր ընտանիքների բարեկամութեան կենացը: Ասում են սրտից սիրտ ճանապարհ կայ: Ես գիտեմ, ես զգում եմ, որ մենք իրար կապուած ենք ոչ թէ արտաքին բարեկամական կապով, այլ կայ աւելի ամուր, աւելի տաք մի կապ մեր սրտերի միջեւ:

— Անկեղծ բարեկամութիւնից թանկ բան չկայ, պարոն Նուբար:

— Ես այնքան եմ կապուած ձեր ընտանիքի հետ, որ իմ եւ ձեր զաւակների մէջ տարբերութիւն չեմ կարողանում դնել: Մանին իմ ընկերուհին չէ, իմ քոյրն է, ասաց տիկին Սաթենիկը:

— Ուրեմն, մեր այս կենացի վրայ...— ու Նուբարը քաղցրութեամբ նայեց իր կնոջը:

— Ինչու չէ, պատասխանեց անմիջապէս Մանին ամուսնու հայեացքին:

— Տիգրան Ջան, թառը տուր մայրիկին:

Նուրարի դէմքը ցոլաց երջանկութեան շողերով: Երաժշտութիւնը նրա համար անպատմելի զգացմունքների, անբացատրելի ապրումների, թագուն յոյզերի լեզուն էր, որ կարող էր վերացնել մարդուն, կտրել նրան այս կեանքից ու նետել երազային մի աշխարհ: Լուռ յենուեց նա պատին ու սկսեց լսել:

Բարձրօձիք, կապոյտ շրջազգեստ հագած Մանին, իր մարմարէ դէմքով, իր խորն աչքերով, աչքեր, որոնց մէջ բնութիւնն իր ամենանրբին ու ամենավառ կայծերն էր թաղել, նստած ցածլիկ թաւշէ բարձին, քնքոյշ մատներով թրթռացնում էր պարսկական թառի մեղամաղձոտ լարերը:

Ամենքը լուռ լսում էին:

Անուշը, գլուխը դրած տատի ծնկին, երազի մէջ էր զգում իրեն, Տիգրանը տխուր կախել էր գլուխը, իսկ Վարդենին՝ յենուած հօր վրայ՝ աչքերը դամել էր տան լայն բացուած լուսամուտներին, որոնք իրենց չռած բիբերը յառել էին մութին:

Վարդենու մարմինը հալւում էր, չքանում եւ չւարած հոգին թփրտում էր: Ցանկարծ նրան թւաց, որ սենեակի պատին խփած դորգի թռչունները սկսում են շարժել իրենց դունաւոր թեւերը եւ կլոր շրջագծերի մէջ կլոտուց-կտուցի են տալիս: Ճիշտ նրանց դլխին փռուած բազմաթերթ վարդի թփերը դողում են կարծես թեթեւ քամուց եւ աջ ու ձախ խոնարհում իրենց ցածլիկ ճիւղերը: Դորգի եզրին հիւսուած հազարադոյն նշաձեւ նախշերը երեւակայական ձեւաւորումներ են ստանում եւ արագարագ դարձնում իրենց շրջագծերը:

Նա փակում է աչքերը ամուր, շատ ամուր եւ այդ

նրբին նախշերը է՛լ աւելի բարդ, է՛լ աւելի գունագեղ փռւում են իր առաջ... Ու թւում է նրան, որ ընկել է հոդինների պարտէզի մէջ, ուր բոլորի հոդիներն իրեն հետ միասին, թփրտում են ձեւերի եւ նախշերի յարատեւ փոփոխականութեան մէջ:

Արեւելեան երաժշտութիւնը յուզել էր բոլորին:

— Հրաշալի երեկոյ անցկացրինք այս դիշեր, c'était magnifique, ասաց տիկին Սաթենիկն անկեղծ ոգեւորութեամբ:

— Բայց ժամանակ է տուն դնալու:

— Անուշիկը տատի գրկում մուշ-մուշ քնել է արդէն:

Հիւրերը վեր կացան:

Մանին պատուիրեց ծառաներին լապտերները վառել, պատրաստել:

— Դէ՛ ցտեսութիւն:

— Ցտեսութի՛ւն:

— Մենք բոլորս ձեզ շատ ենք սիրում...

— Մենք նոյնպէս:

— Բարի գիշեր, բարի գիշեր: Զգոյշ, փողոցում քարեր ու փոսեր շատ կան: Հասա՛ն, լապտերը խանումի առջեւից կը տանես: Դոկտոր, ձեր ձեռնափայտը:

— Ցտեսութիւն, աղջիկս:

— Ցտեսութիւն, դոկտոր:

— Մանի, չմոռանաս Զաւէնին իմ մայրական համբոյրներն ուղարկել:

8

Տօնելու համար Մարգարիտի տասնութամեայ տարեդարձը, տիկին Սաթենիկն իր գեղեցիկ տան մէջ ծրագրել էր սարքել չքեղ մի հիւրասիրութիւն:

Տիկին Սաթենիկը դեռ անցեալ տարուանից յոյս ունէր, որ իր ամուսինը՝ դոկտոր Դաւիթը պէտք է նշանակուէր պետական հիւանդանոցի կառավարիչ, բայց հակառակ, որ իր սպասումները չէին իրագործուել եւ նա մի փոքր հիասթափ ու մի փոքր էլ յուսախաբ վիճակ էր ապրում, այնուամենայնիւ վճռել էր չհրաժարուել իր ծրագրից: Մանաւանդ որ բոլոր այն մեծամեծները, որոնցից կախուած էր բժիշկ Դաւիթի պաշտօնի յաջողութիւնը արդէն մի քանի անգամներ, գանազան պատրուակների տակ, հրաւիրուել էին տիկին Սաթենիկի մօտ, հիւրասիրուել ընտիր կերակուրներով եւ եւրոպական քաղցր խմիչքներով, խոստացել էին « ամէն միջոց գործադրել »··· « եւ քանի որ, — աւելացրել էին նրանք՝ իւղոտ շրթունքները ճերմակ անձեռոցով սրբելով ու ձեռները լեցուն ապակեայ բաժակներին տանելով,— «եւ քանի որ ձեր ամուսինը միանգամայն արժանի է այդ պաշտօնին···»··· «Ու մինչեւ անդամ, աւելացրել էր մէկ ուրիշը, որի վրայ բացի խմիչքից ու փլաւից ազդել էին նաեւ տիկին Սաթենիկի քաղցր ժպիտները, մինչեւ անդամ այստեղ, այս քաղաքում ուրիշ հմուտ մէկը չկայ արդէն···», պէտք էր միայն համբերել ուրեմն:

Ճիշտ է, որ այդ հիւրասիրութիւնը մեծ ծախսերի հետ էր կապուած, բայց դէ ի՞նչպէս կարելի էր··· Արդէն ամիսներ առաջ տիկին Սաթենիկն ամեն հանդիպողի այդ մասին ակնարկութիւններ էր արել··· Արդէն բոլորը գիտէին, որ Մարգարիտի տասնութ տարին էր լրանում··· Ու բոլորի սրտերի մէջ թագուն կասկածն արդէն բոյն էր դրել՝

— Այդ հիւրասիրութիւնը ուրիշ մի նպատակ կունենայ···

Տիկին Սաթենիկն այլեւս ոչ մի բոպէ ժամանակ չունէր:— Պէտք էր հրաւիրեալների ցանկը պատրաստել, մտածել խոհարարի մասին, որովհետեւ թէեւ սառն ուտելիքներ պէտք է մատակարարուէին, իր ունեցած միակ խոհարարը բաւական չէր տակաւն: Մէկ-երկու երիտասարդ տղաներ էին հարկաւոր սպասարկութեան համար: Յետոյ անհրաժեշտ էր մտածել աղջիկների արդուզարդի մասին: Հասած աղջիկներ էին. Նորային արդ «monsieur Jean-ը cour» էր անում··· Եւ յետոյ՝ մեծ այդ տունը, սենեակները, պարտէզը հիմնովին մաքրել էր պէտք··· Օ՜, տիկին Սաթենիկը շատ, շա՜տ գործ ունէր:

Արդէն քանի օր էր ողջ տունը տակն ու վրայ էր եղել:— Մարգարիտի ու Նորայի սենեակներում, տիկին Սաթենիկի ննջարանի մէջ, ճաշասենեակում, թափթփուած էին մետաքսի կտորներ, ժանեակներ, ժապաւէններ: Տիկին Հռոմը, երբ մի օր ճաշից յետոյ, «այնպէս պատահմամբ», այցելեց տիկին Սաթենիկին, տեսաւ, որ երկու կարուհիներ Մարգարիտի եւ Նորայի հագուստներն էին փորձում. տիկին Սաթենիկն օգնում էր նրանց:

— Բարե՛ւ, տիկին Սաթենիկ, ներեցէք այսպէս անսպասելի այցելութեանս համար: Անցնում էի ձեր դռան առաջից, բոլորովին պատահմամբ: Մտածեցի մի քանի

բոպէով ներս մտնել, տեսնելու համար թէ արդեօք ի՞նչ վիճակի մէջ էք։

Տիկին Սաթենիկը մի քիչ շփոթուեց, մի քիչ էլ զայրացաւ իր բարեկամուհու այդ յանկարծակի այցելութեան համար, սակայն ժպտաց ու սիրալիր մի շարժումով աթոռ առաջարկեց նրան։

— Ах, милая моя, չեմ կարողանում հաշուել այս անպիտան քաղաքի նիստ ու կացի հետ, ասաց տիկին Հոռոմը տեղաւորուելով առաջարկած աթոռի վրայ, ужасно, ужасно... կան միայն մի քանի ընտանիքներ, որոնց հետ կարող ես, ն՛ու, այսպէս քիչ ու շատ սրտաբաց լինել։

— Ձերոնք ի՞նչպէս են, տիկին Հոռոմ, Միշան հաշուել է՞ վերջապէս կեանքի նոր պայմանների հետ։

— Իմ Միշա՛ն... Դի՞տէք, իմ Միշան այժմ մի կատարեալ բժիշկ է։

— Դեղատան մէջ չի՞ աշխատում ուրեմն։— Հարցրեց տիկին Սաթենիկը թերահաւատ, բայց խիստ հետաքրքրուած նայելով տիկին Հոռոմին։

— Դեղատան մէջ է աշխատում, բայց հիմա բոլոր անալիզների քննութիւնները Միշան է կատարում։ Միշաս այժմ միկրոբներ է բռնում։ Դա, դա, միկրոբներին մէկ-մէկ բռնում է եւ գցում շիշերի մէջ։ Եւ տիկին Հոռոմը բութ մատը ցուցամատին կցելով եւ միւս մատները լայն բացած, ցոյց է տալիս իր որդու միկրոբներ բռնելու ձեւը։

Տիկին Սաթենիկը շրթունքները ամուր սեղմում է իրար, գլուխն աջ ու ձախ է շորորում ու վեհանձնօրէն լռում է։

— Ցաւալին այն է սակայն, милая моя, եւ շատ-շատ ցաւալի, որ փոքրիկներս ռուսերէն խօսելն են մոռանում։ Պրակտիկա չունեն այստեղ եւ եթէ տան մէջ ես ռուսերէն չխօսեմ, բոլորովին կը մոռանան։

Տիկին Հոռոմը լռում եւ ուշադրութեամբ նայում է իր շուրջը։

Տիկին Հոռոմը շատ էր հետաքրքրուում իմանալ, թէ ինքը, տիկին Սաթենիկը ի՞նչ պէտք է հագնէ երեկոյթի դիշերը։ Ի՞նչպէս պէտք է կահաւորէ տունն ու մանաւանդ ի՞նչով պէտք է հիւրասիրէ իր հիւրերին։

— Անցեալ տարի տիկին Մառին ինչ որ տօնակատարութիւն ունէր, յիշում էք չէ՞, տիկին Սաթենիկ։

— Այո՛, ինչպէս չէ։

— Ա՜խ, ես այնպէս վատ յիշողութիւն ունեմ... Երեւակայեցէք, չեմ յիշում թէ, դուք ի՞նչ հագուստ էիք հագել այն դիշեր... Ես իմ շաքանակագոյն հագուստն էի հագել, բայց ձե՞րը... Դէ, ի հարկէ, ինչպէս կարելի է ամեն ինչ նկատել, մանաւանդ ես... Ամենքը դիտեն... Ռուսաստան եղած ժամանակս էլ բոլոր բարեկամներս ու ծանօթներս գիտէին, որ ես մանր-մունր բաներով չեմ զբաղւում։ Կան ի հարկէ մարդիկ, որ հետաքրքրւում են, որ տեսնում ու յիշում են իւրաքանչիւրի հագուստը, իւրաքանչիւրի գլխարկը... Ինձ համար սակայն ոչ մի նշանակութիւն չունի, ինձ համար մարդն է կարեւորը։

— Ճիշտ ու ճիշտ ինձ պէս... Բոլորովին չեմ սիրում ուրիշների կեանքով հետաքրքրուել։ Երեւակայէք, մէկ անգամ հօրաքոյրս հրաւէր ունէր։ Այնպէս պատահեց, որ ճիշտ այդ օրերին, բոլորովին պատահմամբ, անցնում էի նրանց տան առջեւից, սակայն մտքովս անգամ չանցաւ ներս մտնել, հարցնել, հետաքրքրուել, թէ ի՞նչ են անում, ի՞նչ վիճակի մէջ են։ Իմ բաժակներս ու պնակներս ուղարկեցի իրեն, որովհետեւ, խօսքը մէջներս, իրենք խեղճերը շատ չունեն, բայց ինքս չգնացի մինչեւ հրաւէրի օրը։

Ու տիկին Սաթենիկը ժպտում է շատ քաղցր մի ժը-

ժպիտով։ Տիկին Հոռոմը պատասխանում է այդ ժպտին է՛լ աւելի քաղցր ժպտով՝ երբ ոչինչ չկայ։

— Այո՛, աշխարհիս երեսին շատ զարմանալի մարդիկ կան։ Ուզում են իմանալ թէ ո՞վ ուր գնաց, ո՞ւմ հանդիպեց, ի՞նչի մասին խօսեցին։

— Ուղղակի ծիծաղելի է։

— Եւ մինչեւ անգամ հետաքրքրւում են իմանալ, թէ ով ի՞նչ է ուտում... Ում ի՛նչ գործն է... Ի դէպ, քանի որ խօսք բացւեց ձեզ մի հետաքրքրական բան պատմեմ. բամբասանք չլինի, ի հարկէ... Անցեալ տարի իր այդ հիւրասիրութեան ժամանակ, տիկին Մառին իր հիւրերին սառը կօտլետներ էր տւել... Ցիշում էք չէ՞՝ եւ երեւակայեցէք, կային մարդիկ, որ ուղղակի յուզւել էին։ — Ի՞նչու, ասում էին, ի՞նչու օրինակ միայն սառը կօտլետներ... — Հապա ի՞նչ կուզէիք, որ տար, հարցնում եմ։ — Թող, ասում են, мозги տար, языки տար։ Այդ էլ խո՞սք է, այդ էլ պա՞հանջ է...Հիմա օրինակ դուք...

Այստեղ տիկին Հոռոմը ժամանակ համարեց լռել։ Նա ենթադրեց, որ խօսակցութիւնն արդէն բերել հասցրել էր այն կէտին, ուր տիկին Սաթենիկը ինքնաբերաբար պէտք է պատմէր, խօսէր իր մասին, իր ուտելիքների մասին։

Սակայն տիկին Սաթենիկը նայեց իր աղջիկներին ու վարի շրթունքը կծեց։

— Մարգարիտը դեղեցկացել է, տիկին Սաթենիկ, — ասաց տիկին Հոռոմը, կարճ լռութիւնից յետոյ։ — Գարնանը բաւական նիհարել էր... Դէ, ի հարկէ, խեղճ աղջիկը... Տիկին Հոռոմը կռացաւ տիկին Սաթենիկի կողմը,— Բարգէնի մեկնելուց յետոյ, փսփսաց նա, բայց երիտասարդ է, կը մոռանայ։ Եւ դուք իրաւունք ունէիք, տիկին Սաթենիկ, իրաւունք ունէիք...

Մարգարիտը, որ քաշւել կանգնել էր դաշնամուրի

մօտ ու դլուխը յենել նրան, ջղայնացած ու դայրացած նայեց տիկին Հոռոմին։ Բայց տիկին Հոռոմը հանդարտութեամբ մօտեցրեց լօռնէտը աչքերին ու սկսեց վերից վար չափել նրան։ Յետոյ, նոյն հանդարտութեամբ դարձրեց լօռնէտը բոլոր ներկաների վրայ ու, ի վերջոյ, սենեակի խառը վիճակը տեսնելով ասաց՝

— Խեղճ տիկին Սաթենիկ, երեւակայում եմ որքան էք չարչարւում։

— Շատ ի դուր էք երեւակայում, բոլորովին չենք չարչարւում,— լսւեց յանկարծ Մարգարիտի դայրացած ձայնը։

Տիկին Սաթենիկն այլայլւեց։ Նա կշտամբանքով նայեց աղջկան, չփոթւեց ու որովհետեւ չդիտէր ինչ անել, ժպտաց։ Յետոյ անմիջապէս ձեռքը տարաւ պատին ամրացրած դանդի կոճակին...

— Շուտ, մի լաւ բաժակ բալի օշարակ բերէ՛ք մեր սիրելի տիկին Հոռոմի համար։

Բոպէն փրկւած էր։

— Մեր նեղութիւնը մի քանի օր է, սիրելի տիկին Հոռոմ։ Ի՞նչպէս անեմ, մի տեսակ սովորութիւն է դարձել այլեւս... Ու յետոյ Մարգարիտիս տօնն է, չեմ կարող մոռացութեան տալ։ Ես որ չյիշեմ ուրիշներն ինձ կը յիշեցնեն։

Մարգարիտն իր դեղեցիկ աչքերը դարձրեց մօր կողմը։ Տխուր մի ժպիտ անցաւ նրա նուրբ դէմքի վրայից. նա ակամայ մատները սահեցրեց դաշնամուրի սեւ ու ճերմակ ստեղնաչարի վրայից։ Կամաց ու մեղմ նւագեց մի բոպէ, յետոյ դանդաղ իջեցրեց կափարիչը։

Տիկին Հոռոմը երկար չնստեց ու թէեւ մի փոքր վիրաւորւած էր Մարգարիտից, սակայն, դոհունակ դէմք չինելով ցտեսութիւն արաւ եւ օրօրւելով դուրս եկաւ սենեակից։

— Ես քեզ հազար անգամ ասել եմ, որ այդ կնոջ հետ զգույշ վարուես,— դարձաւ տիկին Սաթենիկը Մարգարիտին, երբ տիկին Հոռոմը մեկնել էր արդէն,— նա վտանգաւոր կին է:

— Եւ ինչ կարող է անել, ուսերը վեր քաշելով պատասխանեց Մարգարիտը, ես տիկին Հոռոմին չեմ սիրում եւ գիտեմ իր այստեղ գալու նպատակը:

— Վնաս չունի, աղջիկս, տիկին Հոռոմը բամբասող է, գործ կը փչացնէ, մարդու վնաս կարող է տալ:

Նորան գլխի շարժումով հաստատեց մօր խօսքերը, բայց Մարգարիտը ոչինչ չպատասխանեց:

Այդ օրերը, ինչպէս ասում էր ինքը տիկին Սաթենիկը, երազի պէս էին անցնում: Տանից դուրս գալու ժամանակ չունէին: Մէկ կողմից կարը, միւս կողմից տան մաքրութիւնը, գնումների կարգադրութիւնը... Ու դեռ կային բաներ, որ տիկին Սաթենիկն ինքը իր ձեռքով պիտի գնէր: Այնուամենայնիւ երեկոյթին մէկ օր մնացած, ամեն ինչ պատրաստ էր արդէն:

— Մօրաքոյր, ծաղիկները ո՞ր սեղանին պէտք է դնել, փոքրիկ սալոնի, թէ՞ մեծ սենեակի: — Լսուեց նախասենեակից Շողերի ձայնը:

— Ծաղիկներն այստեղ բեր, Շողեր,— գոռաց Նորան ներսից ու ցածրաձայն աւելացրեց,— օ՜, ինչ անճաշակ աղջիկ է մեր Շողերը, սալոնում ծաղիկ կը դնե՞ն:

— Աղջիկնե՛ր, թողէք ամեն բան, ի սէր Աստծոյ եւ հագնուե՛ք, ժամը եօթն է արդէն:

Հիւրերը կամաց-կամաց սկսեցին հաւաքուել:

Տիկին Սաթենիկն իր մուգ մանիշակագոյն հագուստի փեշերը շորոր-շորոր անելով, մանրիկ քայլերով սենեակից սենեակ էր պտտում: Ժպտալով ու երջանիկ մի արտայայտութիւն դէմքին՝ նա մօտենում էր իւրաքանչիւր նոր ներս մտնողին, քաղցր խօսքեր ասում ու հրաւիրում էր նստել:

— Ո՛ւր որ կուզէք, սիրելիս, ուր որ ձեզ հաճելի է:

Մարգարիտն ու Նորան ժպտալով բարեւում էին հիւրերին:

Հրաւիրուել էին քաղաքի բոլոր աչքի ընկնող մարդիկ...

Հրաւիրուել էին հիմնարկութիւնների ու խանութների մէջ աշխատող եւրոպացիները...

— Մարգարի՛տ, աղջիկս, վազիր ընդառաջ, պարոն Նուբարն է գալիս,— դիմեց տիկին Սաթենիկն իր աղջկան եւ ինքն իր հերթին քայլերն ուղղեց դէպի դուռը:

— Բարեւ, բարեւ, թանկագին պարոն Նուբար, համեցէք, համեցէք, եւ տիկին Սաթենիկը զոյգ ձեռքերով ջերմօրէն սեղմեց Նուբարի ձեռքը:

— Իսկ Անո՞ւշը, իսկ Բեհեզ տատը:

— Անուշն ու տատը մնացին տանն իրար հէքեաթներ պատմելու,— պատասխանեց Տիգրանը ծիծաղելով, ու անցնելով սենեակ՝ դնաց դէպի այն անկիւնը, ուր ինքնաբերաբար հաւաքուել էին բոլոր երիտասարդները:

— Մանի՛, սիրելիս, այս կողմն անցիր, այդտեղ դուռը շատ մօտիկ է, քեզ կանհանգստացնեն:

— Դու քո հիւրերին տեղաւորիր, Սաթենի՛կ, ես օտար չեմ:

Տիկին Սաթենիկը ծիծաղեց բարեկամաբար, կռացաւ ու տաք-տաք համբուրեց Մանիի երկու այտերը, ձեռքերով նրա ուսերը շոյեց, բաներ փսփսաց, յետոյ անմիջապէս հասաւ Նուբարի ետեւից, տեղաւորեց նրան բազկա-

թոռի վրայ, կանգնեց մօտը, քաղցր ձայնով հարցեր տուաւ ու մի լաւ ժպտաց:

— Նորան դեղեցիկ է, չէ՞:

— Այո՛, դեղեցիկ է: Սակայն իմ ճաշակով Մարգարիտն աւելի ինքնատիպ է: Նորան հայուհու նման չէ:

— Նայի՛ր, Ֆրանսական բանկի հաշւապահը եկաւ: Տե՛ս, ի՞նչ լաւ է հագնուած:

— Իսկ միւսն ո՞վ է:

— Կարծեմ կառավարչի օգնականն է: Սմոկինգ է հագել, տեսնում ե՞ս:

Երկու երիտասարդներն ակամայ համեմատեցին լրենց պարզ, մուգ կապոյտ շապիկները ներս մտնող օտարների հետ եւ նրանց անմեղ դէմքերի վրայով նախանձի ու տխրութեան պէս մի բան անցաւ:

— Տիկին Հոռո՛մ, դուք անպայման կը ճանաչէք, ովքե՞ր են այդ երկու սեւազգեստները,— դիմեց հաստ թեւերը մինչեւ ուսերը բաց, կարմիր ներկուած մի կին, իր հարեւանուհուն:

Տիկին Հոռոմն անմիջապէս լոռնետը տարաւ աչքերին:

— Հա՛, դէ նրանք են էլի՛, неужели չդիտէ՞ք:

— Գիտեմ այո, սակայն կասկածում էի: Ո՞ր մէկն է Նորային ուզողը, հաշւապահը չէ՞:

— Այո՛, ի հարկէ, հաշւապահը, միւսը կանոնաւոր մարդ է: Թէեւ ասեմ ձեզ, որ Նորան վատ աղջիկ չէ, Մարգարիտն է սոսկալի... Այստեղ տիկին Հոռոմը ծաղկացրած ու մեծացրած պատմեց իր անակնկալ այցելութիւնը տիկին Սաթենիկին, Մարգարիտի «անդաստիարակ եւ անվայել» վերաբերմունքը:

Բժիշկ Դաւիթը, որ մինչ այդ Մարկոս խանի հետ

խօսելով էր զբաղուած, մօտեցաւ անմիջապէս երկու եւրոպացիներին.

— Bonsoir mes amis.

Նրանք ժպտացին փոխադարձաբար ու հպարտօրէն աջ ու ձախ նայելով տեղաւորուեցին դաշնամուրի մօտ:

Լսուեց երաժշտութեան ձայնը:

Նուագում էր քաղաքի լարաւոր նուագախումբը: Բացի այդ նուագախումբից տիկին Սաթենիկը հրաւիրել էր նաեւ սազանդարների մի խումբ...

— Թող մէջ ընդ մէջ նուագեն. շիկ է չէ՞,— երկու ժանո-ի երաժշտութիւն կունենանք:

Բժիշկը չէր հակառակել: Նա իր կնոջը բացարձակ ազատութիւն էր տուել: « Աւելի լաւ, մտածում էր բժիշկ Դաւիթն ինքն իրեն, աւելի լաւ, թող կարդադրէ, ինչպէս որ ինքը յարմար կը դատէ »: Եւ բժիշկը գոհ էր իր վճռակից:

Երաժշտութեան ձայնը զարթութիւն ու աշխոյժ մտցրեց ներկաների մէջ: Սկսուեցին զարճալի խօսակցութիւններ, կատակներ, հարց ու փորձ, ծիծաղ, սրախօսութիւններ:

Մարգարիտը սեւ մազերի հիւսերը փաթաթած դըլխին, վարդագոյն շրջազգեստով ամենքի ուշադրութիւնն էր դրաւում:

— Նորան արտասանէ՛, թող Նորան արտասանէ՛:

Նորան մօտեցաւ դաշնամուրին ու գլխով Մարգարիտին նշան արաւ:

— Allons enfants de la Patrie,— սկսեց բարձրաձայն Նորան, խիստ հանդիսաւոր ու խիստ լուրջ արտայայտութիւն տալով իր դէմքին:

— Le jour de gloire est ar-ri-vé...

Մարդարիտը հաստատեց արտասանած խօսքերը դաշնամուրի բազմաձայն մի ակկորդով··· est ar-ri-vé.

— Contre nous de la ty-ra-ni-e...

Տիկին Հոռոմը լռութեամբ դիտում էր հաշուապահին, որի դէմքը որեւէ արտայայտութիւն չունէր այդ պահին: Տիկին Հոռոմը թեւով հրեց հարեւանուհուն.

— Էշացել է մարդը···

— Marchons, marchons, զոռաց յանկարծ Նորան ոգեւորուած qu'un sang impure, abreuve nos sillons.

Ծափահարութիւն:

— Bravo, bravo.

— Դա խսկական déclamation է··· Ցայտնի է, որ Փարիզ էք սովորել:

— Merci, merci.

Երիտասարդ սպասաւորները սկսեցին թէյ մատուցել: Ու տեսակ-տեսակ ուտելիքներ, անուշներ, մրգեր, խմորեղէններ շարուեցին սեղանների վրայ: Բժիշկը քաղցր ըմպելիքի շիշը ձեռքին, մօտենում էր բոլորին, խնդրում չմերժել — մի փոքրիկ բաժակ··· Տիկին Սաթենիկն անձամբ հիւրասիրում էր բոլորին ու յորդորում որ ուտեն, որ իրենց ազատ զգան:

Հիւրերը շատացել էին: Մթնոլորտն արդէն տաքացել էր: Ներսի սենեակում մի խումբ շրջապատել էր սազանդարներին ու ոմանք գինու բաժակը ձեռքին ճառեր էին ասում ու մաղթանքներ անում:

Թառ նուագող Ղեւոն, մի աչքը կոյր, միւսը ոգեւորութիւնից լայն բաց, խփում էր կատաղած թառի լարերին ու գլուխն եղանակի չափի հետ շարժելով, երգում միաժամանակ:

Նրա համար մի տեսակ մրցակցութիւն էր սկսել իր եւ լարաւոր նուագախմբի միջեւ···

— Տղերք, ձեզ զուրբան, ինձ ամօթով չթողնէք էս

գիշեր: Ես ձեզ զուրբան, տաքացրէք, հա՛, տաքացրէք:

Ղաւալ խփող Սարօն, իր ողջ հմտութիւնն էր թափում բոժոժներով զարդարուն ղաւալի վրայ: Նա մէկ ծածկում էր երեսը նրա ետեւ ու ականջը դէմ տալիս թառին, կարծես չափը լաւ բռնելու համար, մերթ փակում էր աչքերն ու վերանում ձայների ելեւէջների մէջ կորսւելու համար, մէկ ձեռքի ողջ ափն ուժգնօրէն չրփացնում էր ձգւած կաշու կենտրոնին եւ մէկ յանկարծ երկար մատներով թեթեւ ու արագ հարուածներ էր տալիս եզրին, որից յետոյ զգուշօրէն շարժում էր թեւերն ու ղընդղնդացնում փոքրիկ զանգակները: Երբեմն-երբեմն ոգեւորութեան պահին, նետում էր յանկարծ ղաւալը դէպի վեր, որ մի անգամ ինքն իր վրայ դառնալով, ընկնում էր նորից իր վարպետի ձեռքերի մէջ ու շարունակում կենդանութիւն տալ նուագին:

— Սարօ՛, քեզի մեռնեմ, ջա՛նս, գա՛րկ··· Թշնամու սիրտը չհովանայ, գա՛րկ···

Օտարականներից մի քանի հոգի, հետաքրքրուած այդ սենեակի աղմուկից, եկել դիտում էին այս տեսարանը:

— Սրանց խելքը բան չի կտրում, Սարո, դու քո գործին կաց, ախպէր:

Սարօն բան չէր ասում: Տարուած իր նուագով, նա ոչ տեսնում էր իր շուրջ գտնուողներին եւ ոչ լսում ընկերոջ խօսքերը:

Մարդարը, ջութակը քեամանչայի ձեւով բռնած, քաշում էր աղեղն ու ժպտում ամենքին:

Այնպիսի անկեղծ ու տաք մթնոլորտ էր տիրում այդ սենեակում··· Հիւրերի մեծ մասը, կամաց-կամաց տեղափոխուեց այդտեղ:

— Շողե՛ր, մի անգամ միայն··· Մի անգամ միայն, — աղերսագին նայելով նրա աչքերի մէջ, խնդրում էր Տիգրանը:

— Ես պարել չգիտեմ, Տիգրան։

— Իսկ այն երեկոյ... ձեր տանը... յի՞շում ես։

— Օ՛, այն երեկոյ...

Բայց Տիգրանը շարունակում էր խնդրել։ Նրանց մօտեցաւ Արմաշը։ Նա անբաւական դէմք ունէր։

— Ինչու այսօր Գրիգոր աղային չեն հրաւիրել... Գրիգոր աղան, տարիներ շարունակ այս տան մտերիմ բարեկամն է եղել... Հիմա, երբ նա բոլորովին մենակ է... Ես հանդիպեցի Բագրատին փողոցում։ Բագրատը դայրացած էր եւ իրաւունք ունէր։

— Աղա Գրիգորն ինքը չէր գայ, Արմաշ, եթէ անդամ նրան հրաւիրէին։

— Այդ ուրիշ հարց է, Տիգրան, բայց խոստովանիր, որ Բագրատն իրաւացի է։ Մարդը մենակ մարդ է, երբեմնի բարեկամ...

— Համոզիր քրոջդ պարել, Արմաշ։

Արմաշը յանկարծ ոգեւորուեց։ Նա վեր թռաւ տեղից, մօտեցաւ Ղեւօնին ու փսփսաց նրա ականջին։ Ղեւօն միակ աչքը չռեց մի բոպէ, ժպտաց մեծ վարպետներին յատուկ ներողամտութեամբ ու թառը տուաւ Արմաշին։

Արմաշը սկսեց նուագել։

Շողերը նախ մի քիչ վարանեց, բայց ընդհանուր ծափերի տակ՝ կարմրած այտերով, մէջտեղ նետուեց։ Արեւելեան պարի նազանքն այնպէս հրապուրիչ էր, այնքան բնական ու անկեղծ... Բոլորը հիացած ու զմայլուած նայում էին սարդուհու ճկուն մարմնին, համաչափ շարժումներին, սահուն վազքին, թեթեւ կիսաշրջաններին ու. ասես միշտ դէպի վեր թռչելու համար բացուած թեւերին։ Ղեւօն նայում էր իր մէկ աչքի անթարթ նայուածքով եւ հոգու մէջ ափսոսում, որ թառը իր ձեռքին չէր... Մարդարն ողջ մարմնով օրօրուելով շարժում էր աղեղը, իսկ

Սարօն ինքն իրեն մոռացած, դաւալի հետ նոյնացած աչքերը չէր հեռացնում Շողերի ոտքերից։

Շողերի պարելը կատարեալ նորութիւն էր։ Նորան նայում էր նրան ակնյայտ նախանձով։ — Է՛հ, արեւելեան պարն ի՞նչ բան է որ... — փսփսում էր նա իր ֆրանսացի բարեկամին։

Ֆրանսացին սակայն հմայւած էր։

— Ի՞նչ արտասովոր դեղեցկութիւն, elle est belle votre cousine, mademoiselle Nora...

Նորան չէր հասկանում թէ ինչի մէջ էր կայանում Շողերի դեղեցկութիւնը՝ թուխ մորթով, սեւ աչքերով սովորական մի հայուհի...

— Originale է, շատ originale է ձեր cousine ը, mademoiselle Nora.

Հիւրասիրութիւնն աւելի մտերմիկ ու միեւնոյն ժամանակ աւելի չքեղ դարձնելու համար, տիկին Սաթենիկը օգտագործել էր նաեւ պարտէզը։

Այնտեղ, մեծ աւազանի եզերքին շարուած էին աթոռներ, բազկաթոռներ ու ցածլիկ սեղաններ։ Պարտէզի միւս ծայրին զանւող փոքրիկ աւազանի շուրջ, կարմիր ու ճերմակ վարդենիների կողքին, փռուած էին դեղեցիկ պարսկական գորգեր ու այս ու այն կողմ փափուկ թաւիշէ բարձեր էին նետուած։ Աւազանի դլխին դունաւորասպակէ լապտերներ էին ամրացրած, որոնց լոյսն անշարժ ու վճիտ ջրի մէջ, յատակից ծլած երագային ծաղիկների էին նմանւում։ Ողջ պարտէզը լուսաւորուած էր երկար սիւների վրայ ամրացրած ճրագներով ու արուեստական այդ լոյսերի տակ ծաղիկներն ու տերեւները զարմանալի թափանցիկ կանաչութիւն էին ստացել։

Մի քանի երիտասարդ զոյգեր, արդէն երեկոյթի սկզբից քաշւել, ծւարել էին վարդերի կողքին։ Երկինքը պարտէզի լոյսերի արանքից լաւ չէր նշմարւում ու թւում

էր թէ երկիրն էր տէրը բնութեան այդ երեկոյ... Ծաղիկների գիշերային բուրմունքն այնքան ուժեղ էր ու այնպէս հաճելի, որ միտքն ու գիտակցութիւնը անդոր, զիջել էին իրենց արթուն հսկողի դերը եւ զգացմունքները ազատօրէն տարածել էին իրենց նրբին թեւերը:

Հակառակ կողմում փոքրիկ մի խումբ զարհուրելիքներ եւ հանելուկներ պատմելով էր զբաղւած:

Ներսից լսւում էր Ղեւոյի ուժեղ ձայնը՝

— Հոգուդ մեռնեմ, մէջ թառս ինձ տուր... էս գիշեր էրւած սիրտս գովացաւ...

Սարօն վարժ մատները ահեցնում էր դաւալի վրայ:

— Այո՛, այո՛, պարոն Նուբար, դուք բացարձակապէս իրաւունք ունէք, եթէ ամեն մարդ ձեզ պէս մտածել կարողանայ, այն ժամանակ հիւանդութիւնները կը պակասեն:

— Վարակիչ հիւանդութիւններից միշտ պէտք է զգոյշ լինել: Ժողովուրդն այդ մասին հասկացողութիւն չունի, անհրաժեշտ է կազմակերպել հանրամատչելի դասախօսութիւններ՝ ասել, բացատրել, պարզել իրողութիւնը, ցոյց տալ միջոցներ չվարակւելու համար, ինչպէս անում են Եւրոպայում:

— Մեր դոկտորը ճիշտ ու ճիշտ ձեր կարծիքին է, պարոն Նուբար:

— Որովհետեւ դոկտորը գիտութեան մարդ է, նա հասկանում է թէ որտեղից է առաջ գալիս չարիքը: Բայց հասարակութեան դաստիարակութեան մասին մեզ մօտ ոչ ոք չի մտածում, իսկ ի՞նչ կարելի է պահանջել հասարակ ժողովրդից:

— Ու երեւակայեցէք այդ ձեւի տգիտութեան գոհերը մեզ մօտ... Ցետոյ հիւանդ գաւակներ են տալիս եւ այդ հիւանդ գաւակները իրենց հերթին ընտանիք պէտք է կազմեն... Ա՜հ, ծնողը շատ զգոյշ պէտք է լինի իր գաւակի ամուսնութեան հարցում... Այնպէս չէ՞, պարոն Նուբար:

— Պէտք է գաւակներն իրենք այդ հասկանան:

— Այո՛, պարոն Նուբար, դուք շատ ճիշտ էք ասում, բայց երեւակայեցէք, օրինակ, մի տղայ՝ կրթւած, խելօք մի տղայ ուզում է ամուսնանալ: Մեր այս միջավայրի մէջ պէտք է ընդունէք, որ դժւար է կրթւած ու հասկացող աղջիկ գտնել: Աղջիկ, որ ձեր ասած այդ տարբրական բաներն իմանայ, որ գիտութիւնից, գրականութիւնից, դեռ չեմ ասում նաեւ երաժշտութիւնից, որովհետեւ շատերի կարծիքով երաժշտութիւն աւելորդ մի բան է, դաղափար ունենայ: Եւ սակայն, տղան կրթւած է, հասուն է, խելացի է եւ ուզում է ամուսնանալ: Դժուար հարց է չէ՞, պարոն Նուբար:

— Անտարակոյս, հեշտ հարց չէ:

— Պէտք է ճանաչել ոչ միայն աղջկան, այլ եւ ամբողջ ընտանիքն, չէ՞ որ աղջիկը կարող է ժառանգական որեւէ հիւանդութիւն ունենալ... Օ՜, այս բոլոր հարցերը դժւար են, շատ դժւար: Հաւատացէք, պարոն Նուբար, անկեղծօրէն հաւատացնում եմ ձեզ, որ այդ հարցերը ինձ օր ու գիշեր հանգիստ չեն տալիս: Դէ, ես էլ հասած աղջիկներ ունեմ... ու... գիտէք թէ ի՞նչ աղջիկներ...

Տիկին Սաթենիկը լռեց: Հիացած իր աղջիկների արժանիքների վրայ, աչքերը փակեց, յօնքերը վեր բարձրացրեց ու գաղտագողի նայեց Նուբարին:

Նրանք նստած էին պարտէզում, աւազանի մօտ, ցած իջած ճիւղերով երկու դէմ-դիմաց գտնւող ծառերի արանքում: Հետաքրքիր աչքերից մասամբ պաշտպանւած լինելու համար, տիկին Սաթենիկը սիրուն այդ անկիւնն էր ընտրել պարոն Նուբարի հետ մի քանի րոպէ «սիրտսրտի» խօսելու համար: Եւ նա յատուկ սիրալիրութեամբ

բենեդիկտինի ուռած շշից լցնում էր Նուբարի դատարկ բաժակը:

— Գեղեցիկ երեկոյ է, այնպէս չէ՞, պարոն Նուբար:

Նուբարը գլխով հաւանութեան նշան է անում եւ հաճոյքով դատարկում առաջարկուած բաժակը:

— Զմայլելի է· ջուրը, վարդերը, այս ծառերը:

Նա նայում էր վեր՝ իրենց գլխին վրանի պէս իջած ծառերի ճիւղերին:

— Ամուսնութիւնը լուրջ բան է, պարոն Նուբար: Ես կարծում եմ, որ ծնողները պարտաւոր են ուղղութիւն տալ իրենց զաւակներին: Երիտասարդներն առհասարակ անփորձ են լինում: Հիմա, օրինակ, իմ աղջիկները, կամ ինչու հեռու գնանք, ձեր տղաները, աւելի շուտ Զաւէնը, որ շուտով պէտք է վերադառնայ: Գլուխս դովելու համար չէ, ամենքը տեսնում են ու գիտեն, իմ աղջիկները եւ կրթուած են ե՛ւ գեղեցիկ են ե՛ւ փառք Աստծոյ ժառանգական որեւէ բան չկայ, բայց ասէք խնդրեմ, իմ պարտականութիւնը չէ՞ հսկել նրանց, աշխատել որ չխաբուեն, չդժբախտանան... Նոյնը եւ դուք: Ճիշտ է, որ Զաւէնը խելացի տղայ է, կրթուած է, չափահաս է, եւ սակայն ծնողի պարտականութիւնն է մինչեւ վերջը հսկել նրան: Ի միջի այլոց Զաւէնը ե՞րբ պէտք է վերադառնայ:

— Զաւէնս մէկ տարի ունի միայն, տիկին Սաթենիկ:

Տիրեց կարճ լռութիւն:

— Մարգարիտը քանի՞ տարեկան է հիմա, հարցրեց Նուբարը զգոյշ ու կամաց ձայնով:

— Մարգարի՞տս... տասնութը տարին է լրանում այսօր: Տիկին Սաթենիկը թեւը զգուշօրէն գնում է Նուբարի աթոռի կամարին ու բարեկամաբար շօշափում նրա ուսը:

— Դուք նոյնն էք մտածում ինչ որ ես, այնպէս չէ՞, պարոն Նուբար:

— Հը՞մ... Այո՛, վատ չի լինի: Բոլորովին վատ չի լինի: Լաւ կը լինի: Եւ շատ լաւ կը լինի:

— Այդ երեխաները ծնուած են մէկը միւսի համար: Երկուսն էլ գեղեցիկ, երկուսն էլ կրթուած ու դաստիարակուած: Երկուսն էլ լաւ ընտանիքի զաւակներ... Ա՜խ, պարոն Նուբար, իմ սիրելի պարոն Նուբար...

Նուբարը լսում է տիկին Սաթենիկի խօսքերը, խմիչքի բաժակը շրթունքներին սեղմում ու ներքին խորը մի հաճոյք զգալով, կաթիլ առ կաթիլ ծծում է քաղցր հեղուկը:

Նրանք խօսում են շշուկով:

— Հարսանիքն արտասովոր շուքով կը կատարենք.. Կը հրաւիրենք բոլոր մեծամեծներին, կը պատուիրենք շամպայն, բերել կը տանք ռուսական նուագախումբը...

— Նրանք կանցնեն թեւ-թեւի մեր առջեւից... Մենք կը նայենք նրանց հպարտութեամբ, կը հիանանք մեր թափած ջանքերի գեղեցիկ վախճանի վրայ...

— Նրանք կը նստեն կողք-կողքի, կը նայեն մեզ շնորհակալութեամբ լցուած աչքերով, կը փայփայեն իրար ու կը ժպտան երջանիկ երեխաների պէս...

Երկուսն էլ ընկնում են երազների գիրկը...

Երկուսն էլ լռում են:

Բայց յանկարծ Նուբարն ոգեւորուած բացագանչում է՝

— Ուրե՞մն...

— Ուրեմն,— տիկին Սաթենիկը լցնում է բաժակները:

— Իմ աղնիւ բարեկամս... — Նուբարը չի կարողանում շարունակել... Մի խօսքով... Եմենք մեր զաւակների ապագայ երջանկութեան կենացը:

Ոգեւորված նրանք բարձրացնում են իրենց ձայնն ու անզգուշօրէն շարժում ծառերի ճիւղերը։

— Ապագայ երջանկութեան կենացը...

... Երկու բարեկամների բաժակներն այսպէս իրար խփելու րոպէին էր ահա, որ տիկին Հոռոմի աչքն ընկաւ յանկարծ երերուող ճիւղերին... Նուբարը կանգնել էր ոտքի, աթոռը յետ դրել։ Կախ ընկած ճիւղերը տեղի էին տուել լայն մի բացուածքի։

Տիկին Հոռոմը շորորալով ճեմում էր պարտէզում։

— Օ՜.՛.՛. Օ՜..՛.՛ Պարոն Նուբարն ու տիկին Սաթենիկն իրար հետ բաներ են քչփչում... Կենաց են խըմում... դա, դա, դա, դա... այստեղ մի բան կայ։ Եւ մի շատ լուրջ բան,— տիկին Հոռոմը աշխատում է պահել իր սառնասրտութիւնը։— Եթէ ասեմ դոկտորի գործի համար է՞... Նուբարը ոչ մի կապ չի կարող ունենալ այն մարդկանց հետ, որոնք կարող են բժշկի գործը յաջողցնել... Նու, եթէ ասեմ թէ առեւտրական գործ է... տիկին Սաթենիկի հետ ի՞նչ առեւտրական գործ... Եթէ ասեմ թէ... — Բայց այդ ժամանակ որտեղից որտեղ, ներքին պայծառատեսութեան շնորհիւ, թէ ուղղակի երջանիկ մի պատեհութիւն, նրա աչքն ընկնում է լուսամուտի առաջ կանգնած Մարգարիտին... — Հը՞, աղջի՛, չլինի թէ... А может быть... Ի հարկէ, որ այդ է, միայն եւ միայն այդ... Հիմա եմ հասկանում, հիմա եմ հասկանում... Ես էլ ինձ ու ինձ մտածում եմ թէ ի՞նչու է Նուբարը էդպէս երկար նայում էդ աղջկան։ Հիմա եմ գլխի ընկնում թէ էս հիւրասիրութիւնը...

Ու տիկին Հոռոմը, իբր պատահմամբ, անցնում է տիկին Սաթենիկի եւ Նուբարի մօտից, շատ մօտից...

— Ամեն բան մեր մէջ է՞, պարոն Նուբար, աւ այժմ ամեն բան մեր մէջ։

Լսում է տիկին Հոռոմն ու այնպիսի տարօրինակ մի

ուրախութիւն է զգում, որ քիչ է մնում ծափ տայ։ Ինչպէս էլ սատանան իրեն այդ բոչէին պարտէզ առաջնորդեց... Ինչպէս էլ նախախնամութիւնն ինքն օգնեց տեսնել գեղեցիկ ու վճռական այդ դիրքը... Ինչպէս էլ ինքը գուշակեց, հասկացաւ անմիջապէս թէ գործն ինչումն է։ Չէ, ինչպէս երեւում է տիկին Հոռոմը խելացի կին է... խելացի եւ թափանցող միաժամանակ...

Ներսի տաքից մի փոքր գովանալու ու մի փոքր թարմ օդ շնչելու համար, հիւրերից շատերն արդէն պարտէզ էին իջել ու խումբ-խումբ պտտում էին կարմրահող արահետներով։ Մեծ սենեակից լսւում էր երաժշտութեան ձայնը, ու պարի սիրահարներն օգտուելով սենեակի դատարկութիւնից, զոյգ-զոյգ պտտւում էին փափուկ գորգերի վրայ։

Տիգրանը Շողերի ձեռքից բռնած խենթացած քարշ էր տալիս նրան դէպի աւազանը։

Գերմանիայից նոր վերադարձած Սանասարի տղան, երիտասարդ Պասկալը, խարտեաշ մի օրիորդի գրկած, պտտում էր վալսի եղանակի հետ ու վայելուչ շարժումներով աշխատում էր գրաւել բոլորի ուշադրութիւնը։

— Հաւատացէ՛ք, սիրելի օրիորդ, ինչ վերաբերում է սիրոյն, այդ զգացմունքն այս երկրում անգոյն մի բան է։ Նկատել է՞ք, բոլոր այն երիտասարդները, որ հեռացել են այստեղից, բոլորովին ուրիշ տեսակ են զգում, ուրիշ տեսակ նայում կեանքին։ Զյոդնեցիք արդէ՞օք։

— Օ՜, ոչ, դուք այնպէս թեթեւ էք պարում։

— Նրանց մտքի հորիզոնը լայն է, հետեւապէս լայն են եւ նրանց զգացմունքները։ Նրանք գիտեն ազատ սիրոյ, անկաշկանդ սիրոյ բարձրութիւնը։ Որովհետեւ, սիրելի օրիորդ, սիրել դա չի նշանակում անպատճառ ամուսնանալ, կապել կեանքը մէկի հետ ընդմիշտ... Ա՜հ, ինչ տըխուր պատմութիւն...

— Ի՜նչ լաւ են նաւագում այսօր։ Եթէ կարելի է, ձեր ձեռքը այդպէս մի սեղմէք։

— Այստեղ թօշնում են զեղեցիկ զգացմունքները, սիրելի օրիորդ։

— Ի՜նչ նուրբ են Շողերի մատները։ — Մտածում է Տիգրանը աւազանի քարին նստած։

Տիգրանի աչքին ամեն ինչ հեքեաթային է երեւում այդ գիշեր... Ե՛ւ այն ճիւղը, որով Շողերը աւազանի ջուրն է խառնում Ե՛ւ ծաղիկներն ու լոյսերը... Ներսից, հոսուն գինիի նման լսւում էր զոյգ երաժշտութիւնների ձայնը։ Լարաւոր նաւագախումբը Ֆաուստի վալսն էր նուագում՝ այնքան սահուն, այնքան զեղեցիկ... Միւս սենեակում Ղեւոն, լացակումած տխուր մի եղանակ էր սկսել՝ ելեւէջներով ու խաղերով գունագեղ, սիրուն մի քայեաթի... Պարտէզի զովութեան մէջ, բանաստեղծական այդ լուսաւորութեան տակ, երկու հակառակ կողմերից լսւող երկու տարբեր այդ եղանակները, Տիգրանի հոգեկան վիճակի մարմնացումը լինէին կարծես։— Մէկը խօսում էր սրտին, յուզում ու նրա ելեւէջների մէջ հարազատ չեչտ էր թրթռում, միւսը՝ կատարելութեան հասած, քաշում, բարձրացնում էր հոգին։ Մէկը մտածել էր տալիս Շողերի կապոյտ շրջազգեստի ու Բեհեղ տատի աչքերի մասին, միւսը գնում կապւում էր իրենց ճաշասենեակի պատին կախած Շիլլերի, Գեոթէի նկարներին։

— Շողե՛ր... — Տիգրանը արագութեամբ բռնում է նրա ձեռքն ու սեղմում իր այրող ափերի մէջ։ Նա վերյիշում է իր մանկութիւնը, տատի հէքեաթները, ձմեռւայ ցուրտ գիշերներին վառարանի հրապուրիչ աղմուկը, նախշոտ վերմակով քուրսին... ձիւնը, ճերմակ ու մեծ փաթիլներով, եւ այն ճնաղնդին, որ նա առաջին անգամ խփել էր Շողերին, երբ առաւօտ կանուխ հանդիպել էին նրանք դպրոց տանող ճամբին...

— Շողե՛ր... Երբ ես հեռու կը լինեմ, դու միշտ, միշտ մտածիր իմ մասին։ Մեր հոգիներն այդպիսով իրար կը հանդիպեն։ Ամեն գիշեր, երբ ես վերջացնեմ պարապմունքներս, կը մարեմ լոյսն իմ սենեակի, կը նստեմ մենակ ու կը մտածեմ քո մասին։ Իմ մտածունքներն այնքան բոցոտ կը լինեն, որ կը ձգեն դէպի ինձ քո հոգին։ Այն ժամանակ մեր զգացմունքների թելերն իրար կը հանդիպեն, իրար կը միանան եւ դու կը զգաս իմ սիրոյ իւրաքանչիւր թրթիռը։ Ա՜հ, մարդկային հոգին, որ կարող է թռչել յետ, դէպի անցեալի յուշերն ու առաջ՝ դէպի ապագայի վառ յոյսերը... Մարդկային հոգին, որ կարող է զգալ թէ ով է իրեն սիրում, որ կարող է տանջւել եւ ուրախանալ։ Հոգու ուժը շատ մեծ ուժ է, Շողեր, շատ մեծ ուժ... Ինչ վատ կը լինէր, եթէ հոգին զոյութիւն չունենար եւ կամ եթէ հոգիներն անընդունակ լինէին իրար հետ հաղորդակցութեան մէջ մտնելու։

Տիկին Հոռոմի աղջիկն անդադար վազում էր նախասենեակ ու կանգնում հայելու առաջ. մազերն էր հարթում, երեսի փոշին աւելացնում։ Տիկին Հոռոմի աղջիկը շատ երջանիկ էր։

— Գիտե՞ս, մամա, կառավարիչի օգնականն այսօր երկու անգամ ինձ հետ պարեց...

Տիկին Հոռոմը յաղթական մի հայեացք է գցում տիկին Սաթենիկի կողմը. « Տեսա՞ր... կառավարչի օգնականն է եւ ոչ թէ հաշւապահ... Է՜հ, ինչ արած սիրելիս... կեանքը այսպէս է... » ու արագօրէն դարձնում է լոռնետը հակառակ կողմ։

— Բարեւ, Սարգիս խան։

— Բարեւ, տիկին Հոռոմ, ինչպէս է՞ք։

— Լաւ եմ, շատ լաւ եմ։ Ի՞նչ նորութիւն։

— Առանձին ոչինչ։ Դուք ի՞նչ գիտէք։

Տիկին Հոռոմը ժպտաց խորհրդաւոր իր ժպիտով ու

նորից մի ակնարկ նետեց տիկին Սաթենիկի կողմը: Տիկին Սաթենիկը թէեւ զբաղուած էր ուրիշների հետ, բայց բռնեց անմիջապէս նրա հայեացքը:

— Նորութիւնն այն է՝ որ ասում են իբր թէ Նուբարի տղան Զաւէնը նշանուել է Մարգարիտի հետ: — Շնչաց տիկին Հռոմը խանի ականջին եւ աւելացրեց, — ուրիշ տեղ չասէք սակայն, դեռ խօսք է: Ասում են:

Տիկին Սաթենիկը չկարողացաւ հասկանալ թէ տիկին Հռոմն ինչ փափաց Սարգիս խանի ականջին... « այդ կինը վտանգաւոր կին է... »

— Տիկին Հռոմ՞, սիրելիս, դուք այս երեկոյ ոչինչ չկերաք:

— Շատ շնորհակալ եմ, տիկին Սաթենիկ, ինչպէս չէ, կերայ:

— Մարգարիտ, աղջիկս, տիկին Հռոմին կոնեակ լցրու եւ քաղցրաւենու տուփն այս կողմ դիր:

Մարգարիտն, թէեւ առանց ժպտալու, բայց կատարեց մօր պատուէրը: Տիկին Սաթենիկը տեղափոխուեց, տիկին Հռոմի կողքին տեղ դրաւեց ու խիստ մտերիկ տոնով սկսեց զրուցել նրա հետ: Տիկին Սաթենիկն ուշացել էր սակայն... Սարգիս խանը, առանց ժամանակ կորցնելու վեր կացաւ տեղից եւ դիմեց դէպի միւս սենեակը, իրեն հաղորդուած նորութիւնը «ծածկաբար» իր բարեկամներին յայտնելու համար: Տիկին Հռոմը նայեց նրա ետեւից ու ժպտաց գոհունակութեամբ:

— Էդ Նուբարն էլ կարծում է թէ իր Զաւէնը մի չտեսնուած փահլեան դարձած յետ պիտի դայ: Էն ա էլի, Աւետիսի տղան աչքներիս առաջին ա... Հայրը եօթը տարի դրամ ուղարկաւ թէ էս ա, էսօր-էգուց տղաս բժիշկ դարձած կը վերադառնայ... Վերադարձաւ տեսանք:

— Սարգիս խան, ամօթ չլինի հարցնել, էդ տեղեկութիւնը դու ո՞րտեղից իմացար:

— Իմացայ էլի: Ես քեզ ասացի, բայց դու ուրիշ տեղ մի ասա՛:

— Ա՛խ, սիրելի օրիորդ, եթէ դուք իմանայիք թէ ի՛նչ մեծ տարբերութիւն կայ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ...

Շարունակում են պարել:

— Ինչպէս ասեմ... Արեւմուտքը լոյս է, Արեւելքը՝ խաւար: Այնտեղ մարդու միտքը թռիչքներ է ստանում, այստեղ մեռնում է ամեն ինչ...

Օրիորդը նայում է նրան հմայուած: Ի՞նչ մաքուր շապիկ ունի, ի՞նչ զեղեցիկ է փողկապը: Իսկ երեսը՝ այնպէս լաւ է սափրուած...

Ու թեթեւ անուշահոտութեան բուրմունքը չոյում է օրիորդի զգայարանքները:

— Մանի՛, տեսնում ես, Վարդենին ֆրանսերէն ինչպէս է բլբլացնում: — Ասաց Նուբարը մօտենալով իր կընոջը: — Զարմանի, չարմանի, ի՞նչ լաւ էլ խօսում է:

— Mademoiselle, ասում է չէկ մազերով եւ անդոյն աչքերով օտարականը, աչքերը չեշտակի դցած Վարդենու հարուստ մազերին, mademoiselle, vous parlez presque sans accents, mes compliments: Նա կրքոտ սեղմում է տասնհինգամեայ դեռատի աղջկան իր թեւերի մէջ՝ ջանալով ոտքերը հպել նրա ոտքերին:

Նա նայում է իր շուրջը: Ամեն կողմ կայծկլտող, կրակոտ սեւ աչքեր, կարմիր շրթունքներ, ծովի ալիքների պէս ծփծփուն մազեր: « Ի՞նչ զարմանալի հմայք ունին Արեւելքի կանայք » — շարունակում է պտտել՝ — que vous êtes charmante, ma petite...

— Դո՛ւ ի՛մ... մո՛ւ-սաև- -ես,
Առանց քի-զի՛ ա՛պ-րել չեմ կարող...
Ա՛փ-ս-ոս ջահե՛լ ես
Նո՛ր ես բաց-ւել փնջի՛կ ես դառել...

— Ադա, թեւերդ թուլացա՞ն, տղայ:

— Նո՛ր ես բացել, փնջի՛կ ես դառել...

— Ղեւո Ջան, քո հոգուն մեռնեմ: Ես էլ խմում եմ քո ապնիւ կենացդ...

— Անուշ ախպէր Ջան, անուշ:

Կէս գիշերն անցել էր արդէն, երբ տիկին Սաթենիկի հիւրերն սկսեցին ցրւել: Թւում էր թէ բոլորն ուրախ էին, բոլորը գոհ: Տիկին Սաթենիկն ուղղակի երջանիկ էր: Նուրարի հետ ունեցած մտերմիկ խօսակցութիւնը յուզելու չափ ուրախացրել էր նրան:

Երջանիկ էր եւ տիկին Հռոմը... այնքան՝ որ մեկնելիս ամենայն անկեղծութեամբ երկու ջերմ համբոյրներ դրոշմեց տիկին Սաթենիկի այտերին եւ բարձրաձայն ծիծաղեց.

— До свидании, душка Ջան, до свидании.

Ամրան գիշեր...

Ցուզող ու գիւթող ամրան գիշեր՝ շղարշւած թովիչ կախարդութեամբ...

Երկինքը խաղաղ ու տարօրինակօրէն անհասկանալի, լայնատարած ու անեղր ծովի պէս, որ արտաքին հանդարտութեան մէջ անասելի յոյզեր ու խորհուրդներ ունի, իջեցրել է իր փեղկերը երկրի վրայ: Կլոր ու խոշոր լուսինն այնքան է բարձրացել, կարծես կոնաձեւ գմբէթի կենտրոնում ամրացրած անգին գոհար լինի:

Ամեն ինչ խօսում է միայն հոգու հետ. անհուն ցանկութիւն կայ գրկել ամեն ինչ՝ ողջ երկինքը թեւերի մէջ պարփակել, որպէսզի չթռչի, չչքանայ չքնաղ բոպէն այդ:

Գիշերը չնչում է:

Երկիրն, ամբողջապէս արծաթ լոյսով ողողւած, հեւում է կարծես կրքից բռնկւած սիրահարի պէս: Օդը տաք է ու հեշտանքով լեցուն:

Ծաղիկները դողում են իրենց ցօղունների ծայրին այրւող շրթերի նման:

Բաց լուսամուտի առաջ, սեւ դանդուրները ճերմակ բարձին, կուրծքը բաց, թեւերը գլխի տակ, պառկած է Տիգրանը:

Լուսինը նեղում է նրան: Նա մերթ փակում է աչքերը, մերթ բացում, նայում է երկնքին...

Սուսամբարի հոտ է գալիս...

Հալւած կրակի պէս տաք մի հոսանք սկսում է վազել նրա երակների մէջ, այտերը բռնկւում են ու շրթունքներն սկսում են վառւել:

Հասել էր ժամը:

Նա այլեւս ոչինչ չի տեսնում, ոչինչ չի լսում: Բարձրանում է անկողնուց ու իջնում պարտէզ:

Թեթեւ զեփիւռը շոյում է նրան... Ծառերը սկսում են մեղմիւ սլսրալ...

Վարդերի թփերի տակ, տերեւների ու ծաղիկների մէջ թաղնւած, կանգնած է Շողերը...

— Կամաց... մարդիկ կը լսեն...

— Շողե՛ր, ի՛մ Շողեր...

Շողերի աչքերը պսպղում են լուսնի լոյսի տակ:

— Ես գողում եմ, Տիգրա՛ն...

— Ինչ լուռ է աշխարհը...

Նրանք յենւում են ծառին ու սեղմւում իրար:

— Երբ դու նայում ես ինձ, Տիգրան, ինձ թւում է թէ հասկանում եմ գաղանիքը երկնքի ու լուսնի։

Նրանք միաժամանակ բարձրացնում են իրենց գլուխներն ու նայում երկնքին։

— Երկար, երկա՛ր սանդուխքներ կան կախուած երկնքից մինչեւ երկիր։ Մի օր մենք միասին կը բարձրանանք այդ սանդուխքներից, ես ու դու, այսպէս իրար գրկած ու կը բռնենք արեւը...

— Նայի՛ր, նայի՛ր, աստղեր ընկան երկնքից։ — Շշնջաց Շողերը, գլուխը դնելով Տիգրանի ուսին։— Ինչ կը լինէր, եթէ մարդ թեւեր ունենար, Տիգրան... թռչել այնտեղ, վերեւ, վերեւ...

— Վերե՛ւ... վերե՛ւ...

Տիգրանը թեթեւ շարժում է անում, բարձրացնում է գլուխը, թեւերն ազատում։

Գրկում է Շողերին...

Նրանց դողացող շրթունքները...

— Շ–ը՛շ– –շտ...— սուլում է յանկարծ զեփիւռն ու անզգուշօրէն փիսւում լուսամուտի բաց փեղկին։

Տիգրանը ցնցւում է ու արթնանում...

— Երազ է՞ր...— մտածում է։

Տիգրանի գլուխը այրւում է, Տիգրանի սիրտը լցւում է լալու ասելիքներ։

Իր գոյութիւնը չի զգում այլեւս։ Զգում է միայն Շողերի շունչն իր շունչին այնքան մօտիկ... Նրա մազերի բուրմունքը... Ու շրթունքներն այրւում են։

Կարօտը սկսում է տանջել նրան։ Իջնում է անկողնուց, մօտենում գրասեղանի գզրոցին... Շողերի լուսանկարը... Նա նստում է լուսամուտի տախտակին, գլուխը յենում երկաթեայ ձողին... դիտում է։

— Շողե՛ր... կանչում է համարեայ լսելի ձայնով։

— Տիգրա՛ն...

Նա վախեցած յետ է նայում...

. . .

Ամրան դիշեր... Ցուցող ու դիւթող ամրան դիշեր, շղարշւած թովիչ կախարդութեամբ...

Շողերը պառկած է իր անկողնում։

Դիմացի տանիքների վրայ լուսինը ալիւր է մաղել։ Բակի շատրւանի շառաչը լցրել է օդը խենթացնող հրապոյրով։

— Դու եկել է՞ս, Տիգրան։ Իմաացա՞ր, լսեցիր սրրտիս կանչը։ Մօտեցիր... Աւելի մօտեցիր... Շողերը նրստում է մահճակալին։ Մօտեցիր, չե՞ս զգում բուրմունքը հասնող մրգերի, երգը ջրի ու ծաղիկների...

Նա կամաց ու հանդարտ բարձրանում է նստած տեղից։

— Տիգրա՛ն...

Նրանք գրկում են իրար ու...

— Այրւում եմ, այրւում եմ... — դողում է յանկարծ Շողերը։

Արթնանում է յուզւած ու տաքացած։

. . .

— Պատրանք էր ուրեմն... — մտածում է Տիգրանը պատուհանի տախտակին նստած։

— Երազ էր, ուրեմն... — շշնջում է Շողերն անկողնու մէջ պառկած։

— Ի՞նչ զեղեցիկ է Շողերը։ — Ասում է Տիգրանը ինքն իրեն ու նայում լուսանկարին։

— Ի՞նչ լաւն է Տիգրանը։ — Խօսում է ինքն իրեն Շողերը, աչքերը վերստին փակելով։

— Ե՞րբ պէտք է լուսանայ։— Տրտնջում է մէկը ու ճակատը դնում լուսամուտի սառը երկաթին։

— Ե՞րբ պէտք է լուսանայ։— Հառաչում է միւսը, անհամբեր շարժումով շտկելով ծռուած վերմակը։

Շողերենց պարտէզից լսւում է շատրւանի շառաչը։

Տիգրանենց բակում աքլորը կանչում է երեք անգամ։

9

— Տո՞մսը... Այո՛, արդէն գնել եմ։ Այս անգամ յարմար ընկերներ կան, պէտք է ճանապարհել։ Փողերը կարէ շապիկին, յանձնարարական նամակները թող ծոցը դնէ, որ հասնելուն պէս յանձնէ... Վաղն առաւօտ...

Ու վաղն առաւօտ, արեւոտ ու պայծառ, սիրուն առաւօտ, Տիգրանը խսիրէ գլխարկը գլխին, երջանկութեան պէս վառ ու թրթռուն, հպարտութեան պէս վեհ ու խրոխտ, անդադար գրպանի յանձնարարականներն է շօշափում ու սենեակից սենեակ վազվզում։

Տատի սենեակում Տիգրանը երկար է մնում։ Նըստում է բազկաթոռին, դիտում, գննում է իւրաքանչիւր առարկայ, նայում է Բեհեղ տատին այնպիսի կարօտով, այնպէս հաւատով... Կարծես աշխատում է նրա չքնաղ պատկերը յաւէտ ամփոփել իր յիշողութեան մէջ... — Զէ՞ որ այդ սենեակում էր հիւսւել իր ողջ մանկութիւնը...

Ու այն դորգը, գեղեցիկ, գունագեղ այն դորգը, որի վրայ հմտօրէն հիւսւած զոյգ առիւծներ կային... Զոյգ առիւծներ՝ երկար ու ոսկեգոյն բաշերով, որ ահագին բերանները լայն բացած եւ յետեւի երկու թաթերի վրայ ծառացած, վայրագօրէն մռնչում էին, իրենց երկուսի մէջտեղ կանգնած կարմիր այտերով ու բոցոտ աչքերով երիտասարդի վրայ։ Մինչ երիտասարդը յաղթա-

կան ժպիտը դէմքին, բաղուկները դէմ տուած, համարձակօրէն զսպում էր դաղանները։ « Կարողանալ կանգնել այսպէս, ուժեղ եւ ընդդիմադիր երկու տարբեր զօրութիւնների միջեւ, քաջ ու անվեր։ Ջանալ չկորցնել հոգու ուժը։ Երկու հոգի առիւծներ... մէկը աջից, միւսը ձախից, մէկը ներսից, միւսը դրսից... »

— Ցանձնարարական նամակները ծոցդ պահիր, որ հանձնելուն պէս տաս... Շատ մի ուշացիր, կառքը սպասում է...

Գնում են։

Ցուցած են, բայց ժպտում են, ժպտում են, բայց արցունքի կաթիլները փայլում են աչքերի մէջ։

— Զգոյշ, չհիւանդանաս,— լացակումած խօսում է Մանին։

Նուբարը շրթունքներն է սեղմում։

— Ու մանաւանդ լա՛ւ, լաւ սովորիր։

Տիգրանը խոստումներ է անում։ Մայրիկի երեսը, հայրիկի ձեռքերը համբուրում, կառապանին ժպտում, դլխարկը շակում, նորից ժպտում, նորից դունատւում։

Ահա եւ կայարանը։ Լսւում է սուլիչի ձայնը։

Բաժանման բոպէն մօտենում է ու Տիգրանն աւելի է դեղնում։ Մանին թաշկինակն աչքերից չի հեռացնում։

— Գնալիք ճամբիդ թող վարդեր թափուեն, բալա ջան, վերադարձիդ պարկով լուս բերես, Տիգրան ջան։— Օրհնում է Բեհեզ տատը հաւատով լի ձայնով։

Դպրոցական ընկերները խմբով մօտենում են Տիգրանին։ Որը ծաղկեփունջ, որը մի գիրք է նէր բերել։

— Մեզ չմոռանաս...

Տասը հոգի են մեկնողները, տասը մատղաշ պատանիներ, որոնք բոլորն էլ հաւատով ու ծարաւով լցած, յառել են իրենց տենչալի աչքերն երկաթուղու երկար գծին...

Գնում են... —

Որը Ռուսաստան, որը Ֆրանսիա, որը Գերմանիա։

Գնում են Արեւելքի բոցոտ հմայքներով լեցուն էութեամբ...

Լալիս են։

— Իրերը հաչէ, որ չկորչի։ Գլուխդ գնացքի լուսամուտից դուրս չհանես։ Քաջ եղիր։ Առ այս թաշկինակը ճակատդ սրբիր։ Դէ՛, տղերք, իրար ուժ ու քաջութիւն տուէք...

Սուլիչը վերջին անդամ սուլում է։ Սո՛ւր, սո՛ւր մի սուլոց...

Նուբարը դարձնում է երեսը։

— Աստուած օգնիր ու պահպանիր։ — Մղկտում է Մանին։

Թաշկինակներ, թաշկինակնե՛ր...

Տիգրանի դեղնած դէմքը... Տիգրանի խսիրէ դըլխարկը... Տիգրանի թաշկինակի ծայրը...

. . . . . .

Այն ի՞նչ երկու կախ ընկած թեւեր են... —

Պատի վրայ, պահարանի կողքին, մոխրագոյն հին վերարկուն...

— Հիմա գնացքի մէջ մութ է արդէն։ Հիմա Զուլֆա են։

Մոխրագոյն վերարկո՛ւն... —

Իր վրայ դեռ նրա շունչը կայ... անշարժ ու անխօս կախ ընկած երկու թեւերի մէջ...

— Ի՞սկ եթէ հիւանդանայ։

Բայց Նուբարն աշխատում է ժպտալ։

— Լոյս եւ գիտութիւն։

Անուշը մելամաղձոտ աչքերը լայն-լայն բացած դիտում է իրենց համար տանջանք ստեղծած ծնողների վշտահար դէմքերին:

Բոլորի աչքերը մոխրագոյն վերարկուի վրայ են:— Պահարանի կողքին, իր ձեռքով կախած նրա հին վերարկուն... Ու արցունքները բոլորի կոկորդների մէջ քարէ գնդակներ են դառնում, իրար վրայ շարուում, շարուում...

Սեղանի վրայ ամեն իրիկուայ պէս պլպլում է կլոր լուսամփոփով ճրագը: Կամաց-կամաց ամեն ոք մի անկիւն է քաշւում, ծնկները գրկում կամ ձեռքը ճակատին յենում:

Եւ լռութիւն... լռութիւն...

. . .

Խոնարհած գլուխները մէկ-մէկ բարձրանում, մոխրագոյն վերարկուի անշարժ կախ ընկած թեւերին են նայում:

Մէկ ամիս յետոյ Նուրբարը նստած իր դրասեղանի առաջ գրում էր:

«1913 թիւ, սեպտեմբեր.

Իմ սիրելի որդի Տիգրան.

Հայրդ երջանիկ ու հպարտ է քեզնով: Իմ կեանքն արդէն անցել է, որդի ջան, ու ես ապրում եմ ձեզ կըրթելու, ձեզ մարդ դարձնելու յոյսով: Ուրեմն այնպէս արա՛, որ իմ նեղութիւններն ի դուր չանցնեն:

Դու չափահաս տղայ ես արդէն, դիտես քո չարն ու բարին. ստորեւ մի քանի հայրական խրատներ կուզեմ միայն դրել քեզ եւ խնդրել, աղաչել, որ ուշադրութեամբ կարդաս եւ կատարես:

Պատիւդ, վարքդ բարձր պահիր: Սա ամենամեծ դանձն է:

Առողջութիւնդ խնամիր:

Բոլոր խելքդ, ուժդ եւ ուշադրութիւնդ դարձրու ուսմանդ վրա: Ուսումն է, որ պիտի փրկէ քեզ ամեն վըտանգից եւ նրա շնորհիւ է, որ մարդ պիտի դառնաս:

Ճշմարտախօս եւ արդար եղիր:

Պարել կամ թատրոն յաճախել առայժմ թող, սոքա քեզ արդելք կը դառնան ուսմանդ եւ յետոյ խեղճ ու ողորմելի մարդ կը դառնաս:

Որեւէ կուսակցական աշխատանքի չմասնակցես, եթէ ուզում ես, մէկ-մէկ ռուս կաղետների կազմակերպած դատախօսութիւններին գնա՛, ինչպէս ասում են, այնտեղ յաճախ դիտութեան վրայ են խօսում, դոքա քեզ օգտակար կարող են լինել:

Գաղտնապահ եղիր: Ինչ որ մտածում ես ուրիշները պէտք չէ որ իմանան:

Տանից դուրս գալիս նախ մտածիր թէ ո՛ւր ես գընում եւ ի՛նչ պէտք է անես:

Այսպէս բաներ շատ կան գրելու, բայց մտածում եմ, որ դու խելօք տղայ ես. որդիս, ինքդ լաւ ես հասկանում: Նորէն կրկնում եմ, բոլոր խելքդ, միտքդ հաւաքիր միայն եւ միայն ուսմանդ վրայ: Փրկիչդ ուսումն է:

Ցաւով եմ, որ արդէն մէկ լաւ, կրթուած ընտանիք դտած կը լինես ապրելու համար, միայն թող ռուսական լինի, այդ քեզ շատ կարեւոր է:

Սպասում ենք նամակիդ

հայրդ Նուրբար »:

10

Աշուն է։ Երկինքը ոսկի է թափել։ Ծառերի վրայ տակաւին ամուր մնացած տերեւները մոմերի պէս վառւում են կայծկլտում։ Բոլոր ծառերը բոց են դառել այրւում են։ Աշնանային նարնջագոյն ու կարմիր ծաղիկները փռել են իրենց տալասը թմբերին եւ երեկոյեան դեղին արեւը հուր է մաղել բակի աղիւսների վրայ։

Երկինքը ծածկւած է արծաթափայլ ամպերով, մինչ հեռւից սեւ ու մութ մի դանդւած, արագօրէն լողալով բաց կապոյտ թաւիշի վրայ, սպառնալի կերպով դալիս է դէպի պսպղուն արեւը։ Արեւը, կարծես դիտակից անխուսափելի այդ վտանգին, իր թեք ճառագայթների ամբողջ ուժն ու փայլը ցոյց տալու համար, շտապ մարդկանց աչքերի բիբերի մէջ է ընկնում ու երերում, ծակոտում։ Ամպը սակայն շարունակում է իր ընթացքը։ Ահա, ահա՛ եւ արեւը մէկէն ծածկւում է։ Իր ճերմակ շողերը սեւ ամպի եզրին երիզ են կապում եւ թաւիշ կապոյտը կախարդական բնոյթ է ստանում։ Հաւերն սկսում են կըրկչալ, հնդկահաւերը պոչերը ցցել, ընկուզենին գիտունի պէս ծանրօրէն երերում է իր լայն ճիւղերը եւ կարմիր ու դեղին տերեւները օրօրւելով ընկնում են ցած։

Քիչ յետոյ, գայրոյթից կարմրած հրէ գնդակ արեւը՝ բռնկւած սիրտ, որ ճակատագրական մի վայրկեանի պոկւել մարդկային կրծքից ու նետւել է երկինք, պտտելով դուրս է սահում սեւ ամպի պատուածքի միջից ու փչրւելով ու հալւելով հոսում է երկրի վրայ, դեղին մեղրամոմի պէս։

Փոթորկի ժամին պայթում է երկինքը. ամպերը տրաքում, կայծակն է ժայթքում... Կարմիր աշնան սիրուց խելագար քամին, սուլում է յանկարծ, ինքն իրեն կորցրած, լուսամուտների փեղկերը դայրոյթով իրար է զարնում, ծառերն արմատից շարժում եւ քնքուշ ծաղիկների նրբին ցողունների մէջ դող է առաջացնում... Վերից՝ արդէն մթագնած ամպերի միջից, արծաթ գիդ-գադով կայծակն է փայլում, երերում մի բոպէ ու հոգուդ խորքը խորասուզւելով, չքանում...

Ուզում ես ամուր, ամուր սեղմել ձեռքերդ կրծքիդ ու... հո՛ւ... հո՛ւ... հո՛ւ, զոռալ խենթի պէս, այդ խենթ քամու հետ։

Աշուն է, աշուն։

— Շախ սէ՛յ, վա՛խ սէ՛յ...

— Շախ սէ՛յ, վա՛խ սէ՛յ...

— Հայրի՛կ, հայրի՛կ, այս ի՞նչ է։ Այդ ո՞վ է լալիս, այդ ո՞ւմ են ծեծում։ Արիւն, արիւն ճերմակ շապիկների վրայ թափւած, թրով ճեղքւած գլուխներ...

Խումբ-խումբ անցնում են մոլեռանդհաւատացեալները փողոցից, փողոց։— Գլուխ պատռողներ, կուրծք ծեծողներ, մոխիր ցանողներ, բոլորը, բոլորը Անուշենց փողոցը խաչաձեւող ճանապարհներով են անցնում։

Անուշը վախեցած փաթաթւել է հօր պարանոցին ու դողում է։ Հեռւից, չա՞տ հեռւից, ուրիշ աշխարհից, սիրտ կտրատող քայլերդ է լսում... Ու լսում է ածիլած գլուխներին իջնող թուրերի հարւածների ձայնը՝

— Շախ սէյ, վախ սէ՛յ...

Այդ աղմուկը, արիւնոտ տեսիլներն այդ, ամբողջ քաղաքում ծանր ու ճնշող մի դրութիւն են ստեղծել: Կարծես թէ ողջ աշխարհի ունայն ներկան են դղրդացնում ու ողբում, կարծես թէ ամէն կողմից բողոքի եւ անզօր համակերպումի կանչեր են լսւում...

Եւ որքա՜ն հեռից են գալիս այդ ձայները...Որքա՜ն հեռից... Անդի՞ աշխարհից...

Գայլերդը պլլւում է փոքրիկ Անուշի էութեան, սեղմում է կոկորդը եւ սիրտը ուզում է ճաքել:

— Փակէ՛ք դռներն ու լուսամուտները, իջեցրէ՛ք ծանր ու հաստ վարագոյրները:

Ի՞նչ փոյթ:

Սարսափելի մի հրէշ դէմքը մօտեցրել է Անուշի դէմքին, նայում է աչքերի մէջ մօտիկ, մօտիկ ու Անուշը տեսնում է նրա մէջ ձեւ ու մարմին առած անպատմելի ու անասելի իր զգացմունքները...

Ահա Աներեւոյթի քարերի վրայ թառած մոխրագոյն այն կինը... Շահին... «Մեռնե՞լ, չքանալ, ոչնչանալ է: Գլուխդ յետ կը դցես եւ աչքերդ կուլ կերթան... օրէնք ա... » Մի բան կայ, անխուսափելի, սարսափելի մի բան ... Անուշը այդ լաւ է զգում: Զգում է եւ վախից գլուխը հօր կրծքից չի կարողանում բարձրացնել:

Ա՛հ, այդ տարի Անուշի համար շատ, շա՛տ բան էր փոխւել: Նրա էութեան, նրա հէքեաթային կեանքի մէջ Տխրութիւնն ու կեանքի Առեղծւածն իր սերմն էր նետել: Ու Անուշը զգում, հասկանում էր, թագուն, շատ թագուն կերպով, բայց հասկանում էր, որ կար սեւ, սեւ մի վարագոյր, որից այն կողմ ոչ ոք ոչինչ չգիտէ, որից այն կողմ անզօր են բոլոր «թալիսմանները»...

Ի՞նչ են ուզում այդ մարդիկ, ի՞նչու են այդպէս լալիս ու կանչում...

Գիշեր է: Հայրիկը պառկեցնում է Անուշին իր փոքրիկ մահճակալի մէջ, լարում է պատի ժամացոյցը, ամրացնում է դռները, մարում է մեծ ճրագը...

Անուշն անհանգիստ է: Անուշը վախենում է:

Գիշերն արդէն բաւականի յառաջացել էր: Բակում ծղրիթն իր սովորական երգն էր սկսել եւ մերթ ընդ մերթ տանիքի վրայ հաւաքւած կատուներն էին մլաւում:

Քո՞ւն էր, քո՞ւն չէր, յանկարծ Անուշի աչքերի առաջ բացւում է կանաչ, անծայր կանաչ, մի դաշտ ու այդ դաշտի մէջ մեն-մենակ կանգնած նռան մի ծառ...

Անուշը տեսնում է, որ ինքն ու Բեհեղ տատը նստած են այդ ծառի տակ: Տատն ուսերն ի վար ցրւած արծաթ մազերն է սանրում ու ժպտալով նայում իրեն: Բայց մէկ էլ յանկարծ, Անուշը տեսնէ, ի՜նչ տեսնէ... — Հեռւից բազմաթիւ մեծ ու փոքր սնտուկներ, երկաթէ կողպէքներով ամրացւած, յետ ու առաջ, յետ ու առաջ օրօրւելով, տընկ-տընկ, դէպի իրեն են գալիս...

Անուշն երբեք, երբեք քայլող սնդուկներ չէր տեսել ... Իր անցկացրած ամբողջ կեանքի եօթը երկար տարիների ընթացքում, այդ մի նոր հրաշք էր:

Սնտուկների շարանը մեծ էր: Երբ առաջինը մօտեցաւ իրեն, խկոյն կողպէքը բացւեց, դուրս նետւեց շղթայից ու սնդուկի կափարիչը յետ ընկաւ... —

— Տասներկու ձեռք կարած զգեստ, տասներկու ձեռք չկարած փեշ...

Բոլորը մէկիկ-մէկիկ դուրս են գալիս սնդուկի միջից, ուրւագծւում միջոցի մէջ:

— Մի հովանոց, որ այն ժամանակ ոչ ոք չունէր...

Հովանոցը տրաքելով բացւում է ու Անուշի շւարած աչքերի առաջ պտտելով, աստիճանաբար խոշորանում, խոշորանում է եւ երկնքի չափ դառնալով անհետանում:

— Մի քիւլաչա գառով զարդարած,

— Մէկ ուրիշն առանց գառի...

Ցետ ու առաջ, յետ ու առաջ տընկտընկալով սնդուկները մէկ-մէկ մօտենում են, բացւում, ցոյց են տալիս իրենց միջի եղածն ու մշուշով պարուրւելով անհետանում...

Բայց ահա, ահա հեռից ուղտերի կարաւանը, ոսկիների տոպրակները սապատներին... Նրանք անցնում են դաշտի եզրով, բարձր ու ցածր երերալով ու երկար պարանոցները նազանքով շարժելով: Անուշը տեսնում է, որ նրանց բոլորի վզին, կարմիր ակներով զարդարւած մէկ-մէկ հատ մանեակ կայ կախւած...

—Տո՛ւր, տատի, տո՛ւր, խաղամ, էլի կը վերադարձնեմ...

Բայց տատը չի պատասխանում ու մատով երկինքն է ցոյց տալիս: Անուշը նայում է վեր ու... Ա՜հ, ինչ ուրախութիւն, ի՜նչ երջանկութիւն... Նա վերջապէս տեսնում է իր այնքան սիրած Թռչունին, Թաւար ղուշին...

— Թաւար ղուշ, սիրուն ղուշ,— կանչում է Անուշն ու ձեռքով նշաններ անում, որ վար իջնէ: Բայց Թաւար ղուշն իր կապոյտ թեւերը թափահարելով, դեղին կտուցը լայնլայն բաց, կլոր ու փայլուն աղամանդի պէս աչքերով նայում է ներքեւ: Անշուշտ, մի բան է ուզում ասել, բայց Անուշը ոչինչ չի կարողանում լսել:

Զինգ... զանգ, զի՜նգ... զա՜նգ: — Լսւում է եկեղեցու զօղանջների պէս տխուր ու միօրինակ զանգակների ձայնը...

Մէկ, երկու,

Տասնըմէկ, տասներկու:

Կէս դիշեր է:

Անուշը գլուխը վեր է բարձրացնում, վերմակը յետ անում: Նայում է...

Սեղանի վրայ գիշերային փոքրիկ ճրագը շարունակում է մեղմ իր լոյսը սփռել առարկաների ու պատերի վրայ: Աթոռները քնած մարդկանց երեւոյթ ունեն, վարագոյրները, ինչ որ դաւադիր խորհրդակցութիւն՝ դրսից եկող խաւարի հանդէպ: Պատի մեծ հայելին պսպղում է սեւ, մութ մի փայլով:

Անուշը վեր է կենում: Կամաց-կամաց մօտենում է հայելուն: Մօտենում է, մօտենում է, ուզում է շօշափել... Նայում է ու տեսնում, որ հայելու մէջ իրեն հետ կողք-կողքի քայլում է եւ տատը: Անուշը ժպտում է, բռնում տատի ձեռքից եւ նրանք երկուսը միասին մօտենում են հայելուն... Բայց յանկարծ տատը շտապ թողնում է Անուշի ձեռքը, գնում, մտնում է հայելու մէջ ու անյայտանում... — Վա՜յ... — կանչում է Անուշն ու լսում ուժեղ մի շըփոց... Կարծես պատից կախւած մեծ հայելին ընկնում է ցած եւ փշուր-փշուր լինում:

Անուշը զարհուրած արթնանում է ու սկսում է բարձրաձայն լալ... բղաւել...

— Ինչ կայ, բալիկ, ի՞նչու ես արթնացել:

— Հայրի՛կ, հայրի՛կ... հայելին փշրւեց...

— Հայելին չէր, ջրի դոյլն էր ձեռքիցս վայր ընկաւ, քնիր բալի՛կ:

— Հայրի՛կ, ի՞նչու ես չորերդ հագել: Դու ի՞նչու չես քնում:

— Վաղը, վաղը կասեմ, հիմա քնի՛ր, քնիր:

Նուբարը հանդստացնում է Անուշին, շոյում, փայփայում է նրան ու շտապ հեռանում:

Անուշը սակայն, այլեւս չի կարողանում քնել: Ի՞նչու էր հայրիկը չորերը հագել... Տան մէջ մի բան էր կատարւում... Կողքի սենեակից լոյս էր երեւում... Անուշը լսում է եւ Մարջան հօրաքրոջ ձայնը...

Առաւօտեան տունը խունկ էր բուրում:

Ամենքը սեւ էին հագել: Ամենքի աչքերը կարմրել եւ այտերը ճերմակել էին:

— Սո՛ւս, մի խօսի՛ր, մեռել է...

— Թաւա՜ր ղուշ, սիրո՜ւն ղուշ...

— Տատը մեռել է, սո՛ւս, ձայն մի հանիր,— ասաց Վարդենին:

Անուշը խսկոյն նայեց պատի մեծ հայելուն... Հայելին չէր փշրուել սակայն:

— Հայելի՜ն...

Անուշը նստեց անկողնում:

Անուշը վեր կացաւ անկողնուց:

Իր սենեակում, մահճակալի վրայ պառկած էր տատը, սեւ մի շորով ծածկուած: Նրա գլխի ու ոտքերի մօտ վառ մոմեր կային դրուած եւ սեղանի վրայ ջուրով լի մի բաժակ՝

— Որ հոգին լողանայ:

Անուշը նայում է ջրին... Նայում է անթարթ աչքերով... Տատի հոգին... Ու նրան թւում է, որ ինքը տեսնում է այդ հոգին... Ա՛յ, ա՛յ, լողանում է, կապոյտ գոյն ունի...

Հարսնուկ բաջին թեւերը քաշած, կարգադրութիւններ է անում ու ամեն եկւորի պատմում, որ տատը երէկ գիշեր երազին սպիտակ հրեշտակներ էր տեսել, որոնք ա՜յ էն պահարանի մօտի անկիւնից երդել, երդել, տատի համար երդ էին ասել ու նա խաղաղութեամբ փակել էր աչքերը:

— Լաց եղիր, Անուշ, լաց եղիր, թէ չէ տատդ կը վշտանայ:

Անուշը հոնգուր-հոնգուր լալիս է: Քաշւում է մի անկիւն ու լալիս է: Նրա ականջին հեռից, շա՜տ հեռից, ուրիշ աշխարհից, սիրտ կտրատող քայլերգ է լսւում...

— Շախ սէ՛յ, վախ սէ՛յ...

— Ամենքը պէտք է մեռնեն,— ասում է հայրիկը թաշկինակը լացակումած աչքերին սեղմելով,— ամեն մարդու հերթը կը գայ, բայց իմ հոգու մէջ մի սիւն փշրւեց...

Անուշը սկսում է վախենալ: «Ամենքի հերթը կը գայ... կը դան սպիտակ հրեշտակները՝ պահարանի մօտի անկիւնից կերդեն, կերդեն ու տունը կը դատարկւի...

— Վա՜խ սէ՛յ...

Մինչ Ռուբիկն անտարբեր պտտում է նրա շուրջը:

— Ի՜նչ վախկոտն ես: Ես ամեն գիշեր հրեշտակների հետ երկնքի վրայով թռչում եմ: Նրանք ինձ ճանաչում են, որովհետեւ ես արդէն մի անդամ մեռել եմ...

— Ե՞րբ:

— Այն ժամանակ դու դեռ չէիր ծնւել: Ես մեռայ, գնացի դեռնի տակ, այնքա՜ն բաներ տեսայ, այնքան բաներ... Եօթ գլխանի դեւեր առիւծի գլուխներով, բերանները, ի՞նչ ասեմ, էս բակից էլ մեծ... Ինձ որ տեսան, բոլորն ոտքի ելան, գլուխ տւին, կեցցէ՛ գոռացին: Ես սուրս քաշեցի ամեն մէկին մի հարւած... Ցետոյ սրիս արիւնը մաղերովս սրբեցի ու յետ եկայ:

— Ցետոյ դեռնի տակն է ապրում նաեւ ամենամեծ եզը — դեղին եզը: Էնքան մեծ է, էնքան մեծ, որ նրա գլխի մէջ ողջ տունը կը տեղաւորւի: Ինքն էլ դեղին, դեղին նարինջի պէս, պոզերն էլ մինչեւ երկինք հասած: Երկնքի ծիածանն ինչ է ո՞ր,— էն դեղին եզի պոչն է:

— Հապա հրեշտակներն ո՞րտեղ են ապրում:

— Հրեշտակները երկնքումն են: Էն կապոյտից էլ, էն սպիտակ ամպերից էլ այն կողմ: Երբ որ նրանք իջնում են աշխարհ, ապմերը հաւաքւում, գոռում են եւ կայծակ է առաջանում: Այդ ժամանակ հրեշտակները մեռցնում են մարդուն եւ նորից վեր թռչում:

Ամենքը սեւ էին հագել։ Ամենքի աչքերը կարմրել եւ այտերը ճերմակել էին։

— Սո՛ւս, մի խօսի՛ր, մեռել է...

— Թաւա՛ր ղուշ, սիրո՛ւն ղուշ...

— Տատը մեռել է, սո՛ւս, ձայն մի հանիր,— ասաց վարդենին։

Անուշը խսկոյն նայեց պատի մեծ հայելուն... Հայելին չէր փշրուել սակայն։

— Հայելի՛ն...

Անուշը նստեց անկողնում։

Անուշը վեր կացաւ անկողնուց։

Իր սենեակում, մահճակալի վրայ պառկած էր տատը, սեւ մի շորով ծածկուած։ Նրա գլխի ու ոտքերի մօտ վառ մոմեր կային դրուած եւ սեղանի վրայ ջուրով լի մի բաժակ՝

— Որ հոգին լողանայ։

Անուշը նայում է ջրին... Նայում է անթարթ աչքերով... Տատի հոգին... Ու նրան թւում է, որ ինքը տեսնում է այդ հոգին... Ա՛յ, ա՛յ, լողանում է, կապոյտ գոյն ունի...

Հարսնուկ բաջին թեւերը քաշած, կարգադրութիւններ է անում ու ամեն եկւորի պատմում, որ տատը երէկ գիշեր երազին սպիտակ հրեշտակներ էր տեսել, որոնք ա՛յ էն պահարանի մօտի անկիւնից երգել, երգել, տատի համար երգ էին ասել ու նա խաղաղութեամբ փակել էր աչքերը։

— Լաց եղիր, Անուշ, լաց եղիր, թէ չէ տատդ կը վշտանայ։

Անուշը հոնգուր-հոնգուր լալիս է։ Թաչւում է մի անկիւն ու լալիս է։ Նրա ականջին հեռից, շա՛տ հեռից, ուրիշ աշխարհից, սիրտ կտրատող քայլերգ է լսւում...

— Շախ սէ՛յ, վախ սէ՛յ...

— Ամենքը պէտք է մեռնեն,— ասում է հայրիկը թաշկինակը լացակումած աչքերին սեղմելով,— ամեն մարդու հերթը կը գայ, բայց իմ հոգու մէջ մի սիւն փշրուեց...

Անուշը սկսում է վախենալ։ « Ամենքի հերթը կը գայ... կը դան սպիտակ հրեշտակները՝ պահարանի մօտի անկիւնից կերգեն, կերգեն ու տունը կը դատարկւի...

— Վա՛խ սէ՛յ...

Մինչ Ռուբիկն անտարբեր պտտում է նրա շուրջը։

— Ի՞նչ վախկոտն ես։ Ես ամեն գիշեր հրեշտակների հետ երկնքի վրայով թռչում եմ։ Նրանք ինձ ճանաչում են, որովհետեւ ես արդէն մի անգամ մեռել եմ...

— Ե՞րբ։

— Այն ժամանակ դու դեռ չէիր ծնւել։ Ես մեռայ, գնացի դեռնի տակ, այնքա՛ն բաներ տեսայ, այնքան բաներ... Եօթ գլխանի դեւեր առիւծի գլուխներով, բերանները, ի՞նչ ասեմ, էս բակից էլ մեծ... Ինձ որ տեսան, բոլորն ոտքի ելան, գլուխ տւին, կեցցէ՛ գոռացին։ Ես սուրս քաշեցի ամեն մէկին մի հարւած... Ցետոյ սրիս արիւնը մաղերովս սրբեցի ու յետ եկայ։

— Ցետոյ դեռնի տակն է ապրում նաեւ ամենամեծ եղը — դեղին եղը։ Էնքան մեծ է, էնքան մեծ, որ նրա գլխի մէջ ողջ տունը կը տեղաւորւի։ Ինքն էլ դեղին, դեղին նարինջի պէս, պոզերն էլ մինչեւ երկինք հասած։ Երկնքի ծիածանն ինչ է ո՞ր,— էն դեղին եզի պոչն է։

— Հապա հրեշտակներն ո՞րտեղ են ապրում։

— Հրեշտակները երկնքումն են։ Էն կապոյտից էլ, էն սպիտակ ամպերից էլ այն կողմ։ Երբ որ նրանք իջնում են աշխարհ, ապմերը հաւաքւում, գոռում են եւ կայծակ է առաջանում։ Այդ ժամանակ հրեշտակները մեռցնում են մարդուն եւ նորից վեր թռչում։

Անուշն այլեւս չի ուզում լսել Ռուբիկին։ — Ի՞նչու մեռաւ, ի՞նչու մեռաւ... մտածում է անդադար։

Իսկ ի՞նչ եղաւ գունաւոր ու թանկագին քարերի, կարմիր ակներով զարդարուած մանեակի արկղի բանալին ... Հապա հէքեաթնե՞րն իր... Ո՞ւմ յանձնեց իր վզից կախուած փոքրիկ բանալին...

Այցելուների շարանը քանի գնում շատանում էր։ Ամենքը գալիս էին տխրոսանք, ցաւակցութիւն յայտնելու, ամենքն աշխատում էին անձամբ սեղմել Նուբարի ձեռքը։

— Տանս արեւն էր, օջախիս կրակն էր... Գնաց... ընդմիշտ գնաց...

— Զաւակներդ ողջ լինեն։ Ամենքս եկեւորներ ենք։

Նուբարը հեկեկում էր։ Անուշը երբեք այդ վիճակի մէջ չէր տեսել իր հօրը։ Հայրիկը լալիս էր, հայրիկը դժբախտ էր։ Խեղճ, խեղճ հայրիկ...

Այդ օրը տատին տարան եկեղեցի, թողին այնտեղ ու յետ եկան։

Ամբողջ գիշեր տան մէջ մոմեր վառեցին ու լացին, ամբողջ գիշեր Անուշը վերմակի տակ ոտքերը գրկած մընաց... Ա՛խ, այնքան լինէր, լոյսը շուտ բացուէր, որ տատին եկեղեցուց դուրս հանէին։ Մենակ ի՞նչպէս կը մնայ այնտեղ այս մութ գիշերին։

. . .

Յաջորդ օրը բեհեղ տատին թաղեցին ու մեծ հայելու վրայ սեւ մի քող քաշեցին։

Աշուն է։ Ծառերը ոսկի են հագել։ Նուբարենց պարտէզը դրընդէզի պէս վառուում է, ծաղիկները բացուել, չորս կողմը պսակ են կապել։

Գեղեցիկ է Նուբարենց պարտէզը։ Կարծես ապակեայ ծաղկամանի վրայ նկարուած տեսարան լինի։ Լայն փեղկերով լուսամուտներ, երկյարկանի սպիտակ շէնք։ Բակից դէպի պատշգամբն ի վեր մագլցած նուրբ ու անհոգ զանգակածաղիկներ, պարզ ու կրքոտ։ Տանիքի վրայ շինուած փայտեայ տաղաւար, խաղողի փարթամ որթերով զարդարուած։

— Իսկ ի՞նչ եղաւ տատի վզից կախուած Ոսկէ Բանալին... Ոսկէ դռան ոսկէ Բանալին...

(Վերջ առաջին մասի)

ՊԵՏԿՈՄ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Հ. Մ. Մասիսյան անվան

Imp. de Navarre, 5, rue des Gobelins, Paris XIII

ՀՀ Ազգային գրադարան
NL0325902

7235

20430

Գրկ

Sp

ԳԻՆԸ 10 ՖՐ.

PRINTED IN FRANCE